ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Վնտարես
Երևան
2023

Գիրքը հրատարակվել է
Հայաստանի արդյունաբերողների և
գործարարների միության նախագահ,
«Ապավեն» ընկերության ղեկավար **Արսեն Ղազարյանի** և
«Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի
մեկենասությամբ

Խմբագիր՝
Ռոբերտ Սարինյան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սարգսյան Հայկ

Տնտեսաքաղաքական հրապարակային խոսք/Հայկ Սարգսյան:– Երևան, Անտարես, 2023.– 284 էջ:

Ժողովածուն ներառում է նորանկախ Հայաստանի զարգացման ընթացքին վերաբերող տարաբնույթ հոդվածներ և հարցազրույցներ: Դրանք բերված են ժամանակագրական կարգով և ընթերցողին հնարավորություն են տալիս կատարել սեփական վերլուծությունները՝ հասկանալով նաև, թե տարբեր տարիների իրադարձությունների ազդեցությամբ ինչ վերափոխումներ են արձանագրվել երկրում:

Հեղինակը խնդիրներն արծարծելիս առաջնորդվել է «լապտերիկի ոչ թե ճառագայթային, այլ ցրված լուսարձակման» սկզբունքով, այն է՝ համընդգրկուն մոտեցմամբ:

Ժողովածուն նախատեսված է հետազոտողների, պետական ծառայողների, ուսանողների և տնտեսական քաղաքականությամբ հետաքրքրվողների համար:

ISBN 978-9939-98-039-3

© Սարգսյան Հ., 2023
© Անտարես, 2023

Անտարես

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի խոսք 7

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ 10

КОНЦЕПЦИЯ ИНТЕРЕСОВ. Советы и проблемы управления 15

ПОМОЖЕТ ХОЗРАСЧЕТ 19

ԶԱՐԳԱՆԱԼ ՀԱՄԱՁԱՓ, ՆԵՐԴԱՇՆԱԿ 20

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ 26

ՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԴԻՎԵՐՍԻԱ Է ՀԵՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ 36

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 40

ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ 46

ՊՐՈԲԼԵՄԸ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԻՆԴՐՈՄՆ Է 49

ՇԱՏ ԱՎԵԼԻՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՏԵՂԾԵԼ 54

ԽՆԴԻՐԸ ՎԵՐԵԼՔԻ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է 56

ԳԵՐԽՆԴԻՐՆ Է՝ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՈՐԱԿՅԱԼ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐ 61

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՏԵՍԱԿԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ 65

ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԸ ՃԱՆԱՉՎԵԼ Է ԼԱՎԱԳՈՒՅՆԸ 68

ՍՑԵՆԱՐ՝ ԸՆԴԴԵՄ ՀՀ ՃԳՆԱԺԱՄԻ 70

ՀԱՅԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ԿԼՈՐ ՍԵՂԱՆ 73

ՎՍՏԱՀԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 76

НЕОБХОДИМА НОВАЯ ПРОГРАММА РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА И АРМЯНСКОГО СЕЛА 78

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԵՎ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 84

ԷԺԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՉԷ 85

ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ ՈՐՈՇԱԿԻ ՇԵՐՏԻ ԶՐԿԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՎ 88

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 91

ՈՉ ԹԵ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՇԱՀԵՐ 94

ԵԹԵ ՏԱՏԻԿԸ ԿՌԱՆՈՒՄ Է, ՔԱՂՀԱՆ Է ԱՆՈՒՄ, ՄԵՆՔ ՆՐԱՆ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆՔ ԶԲԱՂՎԱԾ 97

«ԹԱՐՄ ՈՒՂԵՂՈՎ»՝ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ 101

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ «ԱԿԱՆԸ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿՆ Է 102

ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵՍԻՋՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻՆ 107

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԴԻԿ՝ 18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 110

ՆԱԽԱԳԻԾԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԶՄԱԹԻՎ ԾՈՒՂԱԿՆԵՐ 113

ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ,ՈՐՊԵՍԶԻ ՎԱՂԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՊՐԵՆՔ. ՏՆՏԵՍԱԳԵՏԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ 116

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 117

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳԱՂՏՆԻՔԸ ԹԱՔՆՎԱԾ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 119

2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱԿՆԿԱԼԵԼ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 128

ԻՆՉՈՒ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՉԷ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ «ԹՌԻՉՔՈՎ» ԴՈԿՏՈՐ ԴԱՐՁՆԵԼԸ 130

ԱՌԱՆՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԽԱՐԽԼԵԼ ՄԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ 131

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՇԱՃ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԼԱՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԱՎ ԱԺ ՈՒՆԵՆԱՆՔ 135

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՇՈՒՐՋ 140

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱԴԱՐՄԱՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է 141

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1/3 ՄԱՍՆ ԱՂՔԱՏ Է, ԱՌԿԱ Է ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԵՐԲԵՎԵՌԱՑՈՒՄ, ՈՐԸ ՀԱՍՏԱՏԱԳՐՎՈՒՄ Է 148

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ 149

ՏՆՏԵՍԱԳԵՏԸ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄԸ 151

ՄԵԿՆԱՐԿԻՑ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ 153

ՄԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵՋ ԱՌԱՆՑՔԱՅԻՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է 157

ԹԱԼԱՆԱԾԸ ՊԵՏՔ Է ՀԵՏ ԲԵՐԵԼ, ԲԱՅՑ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՉՊԵՏՔ Է ԿԱՌՈՒՑՎԻ ՀԱՎԱՔԱԳՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՐԱ 159

ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԹԱՔՆՎԱԾ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԵՋ 162

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝ ԳԱՂԱՓԱՐԸ ԿԵՆՍԱԿԱՆ ԵՎ ՇԱՀԵԿԱՆ Է 163

ԳԵՐԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է 166

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ 173

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 179

ԿՈՒՅՐ ՊԵՏՔ Է ԼԻՆԵԼ՝ ՉՏԵՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ, ԲԱՅՑ ՄԵՆՔ ՀԵՏ ԵՆՔ ՄՆՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ 184

ՃԱՆԱՉՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐԸ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՊՏԱԿԻ, ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՋՈՂԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԱՍԻՄՊՏՈՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ 185

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՏԱՐԱՆՋԱՏԵՆՔ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՇԵՐՏԻՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԵՐՏԻՑ 188

ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԵՆՔ. ՊԵՏՔ Է ՀԱՆԳԻՍՏ ԼԻՆԵԼ, ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ Է 190

ՉԱՓԱՋԱՆՑՎԱԾ ԵՆ ԱՅՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ, ԹԵ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈԼԱՊՍ ԿԱՐՈՂ Է ԱՌԱՋԱՆԱԼ 191

ՈՐԴԵԳՐՎԱԾ ԿՈՒՐՍԸ ՃԻՇՏ Է, ԱՅՆ ՊԵՏՔ Է ԱՆՇՐՋԵԼԻ ԼԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ 193

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՉԿԱՆ ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ 194

«ԽԵԼՔՆԵՐՍ ԳԼՈՒԽՆԵՐՍ ՊԵՏՔ Է ՀԱՎԱՔԵՆՔ». ԻՆՉՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՉԿՈՉՎԵՑ 195

ԲԵԿՎԱԾ ԿՈՐԸ ԴԵՌ ԿԱՐՈՂ Է ՇՏԿՎԵԼ. ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈԿԱՈՒՏԻ ՄԵՋ Է 196

ԽԱԹԱՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԻՑ ԵԼՔ ԳՏՆԵԼՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔԸ 201

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ ԳԻՏԱԿՑՈՒՄ, ՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ Է.....204
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՃԳՆԱԺԱՄ Է.....205
ԱՎԵԼԻ ԼԱՎ Է՝ ՋԵՐԾ ՄՆԱՆՔ ՊՍԵՎԴՈԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻՑ.....206
ԽՈՍՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼ Է ՊՐՈՖԵՍՈՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆԸ.....208
ԵՊՀ-Ի ՎԻՃԱԿԸ ԵՐԿՐԻ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է.....209
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ.....211
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐ.....212
ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԱՆԿԱՐԱՅԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՅԼԸ.....215
«ԻՆՉ ԱՆԵԼ»-Ի ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ. ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՈԳԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄ.....217
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՈՒՂԵԳԾԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ.....226
ԻՆՉ ԱՆԵԼ ԵՎ ԻՆՉ ՉԱՆԵԼ.....234
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԲԽԵՆ ԵՐԿՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՑ.....245
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԵԼԻ ՉԷ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՀԵՏ.....251
ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ԱՐԱԳ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՑՈՐԵՆԻ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ.....255
ԱՊՐԱԾ ԿՅԱՆՔԸ ԼԻ ԷՐ ԱՐԱՐՈՒՄՈՎ.....257
ԵԱՏՄ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ՄԵՐ 13 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ Ի ՉԻՔ ԿԴԱՐՁՆԻ.....260
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ. ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ «ԱՌԵՐԵՍՈՒՄ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐՈՒՄ.....263
ՎՏԱՆԳՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ.....264
ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻՆ.....265

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ.....267

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանի «Տնտեսաքաղաքական հրապարակային խոսք» ժողովածուում տեղ են գտել ոչ միայն մեր երկրի՝ շուկայական տնտեսության անցմանը վերաբերող, այլ նաև խորհրդային շրջանի որոշ հոդվածներ: Հեղինակը, զերծ մնալով անցյալի գործունեությունը խմբագրելու միտումից և տնտեսական մի շարք հարցերի լուծումների մեջ ունենալով իր մասնակցությունը՝ «գրեթե չորս տասնամյակում երկրի տնտեսական քաղաքականության և դրա շուրջ դիրքորոշումներում շարունակել է մշտապես մնալ նույն տեսակետներին՝ տեղի չտալով հարցադրումների վերաբերյալ կոնյունկտուրային ձևակերպումներին»: Բնականաբար, խոսքը չի վերաբերում նոր տնտեսական համակարգում առանձնահատկությունների տարբերություններին, այլ հանրապետության առանցքային նշանակության հարցերին, որոնք ժամանակի հոսքի մեջ պահպանել են իրենց արդիականությունը:

Ինչ խոսք, հնարավոր չէ անդրադառնալ գրքի բոլոր արծարծումներին, մանավանդ որ դրանց հիմնավոր վերլուծությունները տրված են հեղինակի մենագրություններում, որոնք նվիրված են տնտեսական զարգացման արդյունավետության ու օպտիմալության, տարածաշրջանային կառավարման, անցման ժամանակաշրջանի տնտեսական վերափոխումների ու կառավարման կատարելագործման և վերելքի հեռանկարների, սահմանադրականության մակարդակի ախտորոշման և կառավարման հիմնահարցերին:

Առհասարակ, արդյունավետության խնդիրը տնտեսագիտական միտքը միշտ մղել է նոր որոնումների: Այս տեսադաշտում Հ. Սարգսյանը ցույց է տալիս խորհրդային կառավարման համակարգում տեղ գտած ճեղքվածքները՝ տնտեսագիտական միտքն ուղղորդելով գործող տարածքային-ճյուղային փոխհարաբերությունների կատարելագործման նոր լուծումների:

Շուկայական տնտեսության անցման հատկապես սկզբնական շրջանում մի կարծիք էր շրջանառվում. որպես թե՝ նոր համակարգի լինելիությունը պիտի ակնթարթային լուծումներ տար նախկին համակարգում տեղ գտած հակասություններին: Սակայն մի փուլում, երբ նախկին համակարգերն ու կառուցվածքները փոխարինվում են նորերով, օրակարգի անհրաժեշտություն է դառնում երևույթները քննել նոր կապակցություններում: Եվ տնտեսագետը իրավացիորեն նկատում է, թե «պետք է տարբերել տնտեսությունը վարելու,

կառավարելու անկախությունը տնտեսական անկախությունից», թե որքան էլ «քաղաքական անկախությունը» անհրաժեշտ «նախադրյալ է անկախ տնտեսավարման համար», միևնույն է՝ էկոնոմիկայում գործում է «իներցիոն պրոցեսների» գործոնը, որը պահանջում է ժամանակ, որի չգիտակցումը պիտի ծայր տար նոր հակասությունների: Այդ դիտակետից էլ Հ. Սարգսյանը մի զգալի մասով դա պայմանավորում է որոշակի «սկզբունքների և բազմաչափանիշ նպատակներով պայմանավորված տնտեսական մոդելի բացակայությամբ»՝ գոնե միջին տևողությամբ ժամանակահատվածի (3-5 տարի) կտրվածքով, որում պիտի հաշվի առնվեր «ինչպես առկա հնարավորությունների, այնպես էլ օբյեկտիվ սահմանափակումների» գործոնների բազմազանությունը: Իսկ իրողություն է, որ որոշակի «արդյունաբերական քաղաքականություն չի տարվել»: Այդպես է եղել նաև հողերի մասնավորեցման դեպքում: Դա աստիճանաբար մշակում է մարդու հասարակական պահվածքի որոշակի նորմեր, սովորություններ, փոխանցելիության հատկանիշներ և, եթե ընդհանուր ձևով բնութագրելու լինենք՝ նրա տնտեսական մշակույթը: Հողի մասնավորեցումը որքան էլ որ ճիշտ քայլ էր, սակայն գործնական իրացումներում հանգեցրեց ծայրահեղությունների, որը, կարծես, ասոցիացիա էր դասագրքերից սերտած կոլեկտիվացման արդյունավետության դասերից: Որպես հետևանք, ինչպես նկատում է Հ. Սարգսյանը, գյուղատնտեսության մեջ ունեցանք 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնք երկրագործություն են իրականացնում շուրջ 1,2 մլն՝ իրարից անջատված հողակտորների, լոսկուտների վրա: Պատկերավոր ասած՝ «եթե տատիկը կոանում է, քաղհան է անում, մենք նրան համարում ենք զբաղված» սկզբունքը պիտի հակասություն դրսևորեր և՛ արտադրողականության, և՛ զբաղվածության, և՛ մրցակցության ակնկալիքների նկատմամբ, հանգեցներ «տիրոջ զգացումի» և ավանդներ չունեցող ֆերմերների գոյությանը և սոցիալական բևեռացումների:

Տնտեսական էվոլյուցիան երկարատև գործընթաց է, որը հաճախ տասնամյակներ է տևում: Եվ բնական է, որ ձևավորման ուղիներում գտնվող անցման շրջանի տնտեսությունը, որի այդպիսի ընթացքը շարունակվում է այսօր, ձգտում է նոր տնտեսական ճարտարապետության:

Սույն ժողովածուն լայն է իր թեմատիկ ընդգրկումներում՝ երկրի պաշտպանունակություն, կրթություն և գիտություն, հարկային համակարգ, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, պետական պարտք, տնտեսական քաղաքականություն և այլն, և «Միայն ճշգրտորեն հաշվարկված զարգացման սցենարները կկարողանան ապահովել ... բաղադրիչների օպտիմալ փոխներգործությունն ու մեր երկիրը դուրս բերել անվտանգային ու ինքնիշխանության բնական և բանական ուղեծիր»:

Հեղինակի տեսակետների շարադրանքը կառուցված է տեսության ու պատմության փորձի հաստատումներով, իսկ լուծումների բանալին Հ. Սարգսյանը կապում է սահմանադրականության հետ՝ որպես գերխնդրի, որպես ժամանակակից զարգացած հասարակությունների հանրային կեցության իրավակարգավորման հիմնարար սկզբունքի: Այն իր տարողությամբ լայն հասկացություն է, որի ուսումնասիրումը և անհրաժեշտ լուծումները առանձնահատուկ նշանակություն ունեն զարգացող և անցման շրջանում գտնվող երկրների համար, քանի որ սահմանադրական հռչակված դրույթների և գործող կանոնների միջև խզումները կարող են արգելակներ դառնալ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացման հարցում և սոցիալական ցնցումների պատճառ լինել:

Հայկ Սարգսյանի «Տնտեսաքաղաքական հրապարակային խոսք» ժողովածուն հեղինակի մոտ չորս տասնամյակի մտորումներն են հանրապետության տնտեսական փոխակերպումների մասին, որտեղ լավատեսական հայացքով ասվում է նաև՝ «ինչ անել և ինչ չանել»:

Ռոբերտ Սարինյան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
փետրվար, 2023

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկայացվող ժողովածուն պարունակում է վերլուծություններ ու տեսակետներ անցյալ ու ներկա զարգացումների և ապագայի տեսլականի մասին: Հոդվածները վերաբերում են Հայաստանի Հանրապետության վերջին տասնամյակների տարաբնույթ վերափոխումներին: Որպես մեծ քաղաքականության անքակտելի մաս՝ տնտեսագետը չէր կարող անհաղորդ մնալ վարվող տնտեսական քաղաքականությանը:

Ժողովածուում տեղ են գտել նաև սովետական վերջին ժամանակաշրջանին վերաբերող որոշ հրապարակումներ: Վերջիններիս ընտրությունը պայմանավորված էր ռեգիոնալ տնտեսաշվարկին վերաբերող գաղափարի հրապարակայնացման անհրաժեշտությամբ: Մեր հարցադրումը՝ «Ինչ ես տալիս, ինչ՝ ստանում» ռեգիոնալ (նաև միութենական հանրապետությունների) կտրվածքով, հետագայում ունեցավ իր ոչ ակնհայտ հատկորոշումը՝ դառնալով թեժ քննարկումների առարկա ամենատարբեր հարթակներում: Հատկանշական են հետևյալ միջադեպերը:

1989 թվականին բնութագիր տալու խնդրանքով դիմեցի ՀԿԿ ԿԿ երկրորդ քարտուղար Օլեգ Լոբովին: Այն ներկայացվելու էր Մոսկվայի կենտրոնական տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտ՝ դոկտորական ատենախոսություն պաշտպանելու համար: Հետաքրքրվեց աշխատանքով՝ խոսքի բռնվելով ռեգիոնալ տնտեսաշվարկի հարցի շուրջ, որի քննարկման ընթացքում չուշացավ նրա մտահոգ արձագանքը՝ «а как будут делить звёзды кремля …»: Հարգարժան Օլեգ Իվանովիչը դեռևս համոզված չէր, որ անկախության զորեղ ու լուսե գաղափարը այդքան շուտ կիրագործվեր:

«Դելյոժի պրոբլեմը» և՛ գիտական և՛ քաղաքական առումներով գնալով սրվեց: Հիշարժան են տարբեր հանրապետությունների պատգամավորների ելույթները ԽՄԿԿ վերջին համագումարում: Դրանցում չէր շրջանցվում նաև «տալ-առնելիքի» ասպեկտը: Էստոնիայի պատվիրակը դժգոհում էր, որ իր մեկուկես միլիոն բնակիչ ունեցող երկրին սպառնում է էթնիկ բնակչության ազգային փոքրամասնություն դառնալու վտանգը (ազգային խնդիր) և ոչ համարժեք հատույցը (տնտեսական խնդիր): Սրան ընդվզում-հակադարձում էր մեկ այլ բանախոս՝ նշելով, որ միայն «Ուրալմաշը» միութենական կաթսային է տալիս գրեթե այնքան, որքան մերձբալթյան բոլոր հանրապետությունները …: Այսպիսին էր խոսույթը: Եվ գնալով թեժացող նման բանավեճերում

հնչող ու չբարձրաձայնվող այդ երկու գործոնները՝ ազգային հարցերն ու անարդյունավետ տնտեսական միջավայրն ու կապերը, վերաճեցին ու դարձան ԽՍՀՄ փլուզման լրջագույն ազդակներ: Հետագայում եղավ այն, ինչի ականատեսը դարձան անկախացած երկրների՝ խորհրդային հանրապետությունների քաղաքացիները՝ ստանալով անկախություն, ինչպես նաև ԽՍՀՄ միասնական ժողովրդատնտեսական համալիրից՝ իրենց հասանելիք մասնաբաժինը: Երկրներից յուրաքանչյուրն ընտրեց զարգացման սեփական ուղեգիծը...

Հետահայաց կարևորում եմ, թե ինչպիսին են եղել իմ դիրքորոշումները մեր երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության վերաբերյալ՝ առաջնորդվելով, ինչպես կատակով ասում են, важны не позы, а позиции... դիրքորոշմամբ:

Տնտեսագետի ասելիքը հիմնավորելիս լավագույն խոսուն փաստարկը թվերի ու փաստերի վկայակոչումն է: Այդ ամենի պակասը չեմ ունեցել, երբ գրավոր և բանավոր հրապարակումներում խնդիր է դրվել պատկերացում կազմելու ներկայիս հարափոփոխ աշխարհի տնտեսական իրողությունների մասին, բացահայտելու մեր երկրի սոցիալ-տնտեսական վերելքի հեռանկարները կամ պատկերելու վերելքի տեսլականը:

Առաջին և կարևոր եզրահանգումն այն է, որ մեր երկրի տնտեսության շեշտակի վերելքն իրատեսական է, և դրա հասանելիությունը պայմանավորված է բացառապես մեր կազմակերպվածությամբ: Եթե մեր կազմակերպվածությամբ ի զորու լինենք լուծելու երկմիասնական, այն է՝ Հայաստանի և այլ երկրների արդյունավետ համագործակցության և արդյունավետ տնտեսվարման խնդիրները, դրանով իսկ մեր տեղը կգտնենք առաջավոր հասարակությունների ընտանիքում: Եվ այսպես՝ այդ խնդիրներն են.

- ✓ Հայաստանի՝ այլ երկրների հետ համագործակցության կտրվածքով ինքնիշխանության և կոմպլեմենտարության ճիշտ զուգորդումը:
- ✓ Արդյունավետ տնտեսության կառուցումը:

Համոզված ենք, որ հասարակական ընտրության հիմքի վրա կառուցվող համընդհանուր զարգացման համատեքստում կարող ենք իրականացնել երկարատև կայուն տնտեսական աճին միտված տնտեսական քաղաքականություն:

Համոզված ենք նաև, որ խնդրո առարկա նման քաղաքականությանը հետամուտ լինելու պարագայում տնտեսական քաղաքականության մեթոդների, ներազդման գործիքակազմի ընտրությունը, համընդհանուր զարգացմանը միտված կանխագծումների, հայեցակարգերի մշակումն ու իրագործումը հնարավոր կդառնան, եթե **ձերբազատվենք կարճաժամկետ էֆեկտ ապահովող մոտեցումներից** (որոնք սովորաբար երկարաժամկետ

առումով հանգեցնում են կորուստների, չեն ձևավորում ռազմավարական կարողություններ), և որ ամենակարևորն է՝ տնտեսական քաղաքականությունն իրագործվի **պատշաճ գիտական սպասարկմամբ:**

Երկրի հեռանկարային զարգացման տեսանկյունից մեր կողմից կարևորվող երկու առանցքային հիմնախնդիրների լուծումները տեսանելի հորիզոնում անհրաժեշտ պայմաններ կստեղծեն աղքատության ու արտագաղթի էական կրճատման, ներգաղթի խրախուսման, տարածքների համաչափ զարգացման ու կուտակված բազում սոցիալական խնդիրների մեղմման և կանխարգելման հարցում:

Հիմնական նպատակադրումն ու գաղափարն ընդգծելու համար տեղին է մեջբերել իսլանդացի տնտեսագետ Թրայն Էգերսթոնի «Քոուզի թեորեմի ընդհանրացումը», ըստ որի՝ «Տնտեսական աճը և երկրի զարգացումը հիմնականում կախված չեն գոյություն ունեցող կառավարության տիպից, եթե գործարքային ծախսերը տնտեսական և քաղաքական ասպարեզում հավասար են զրոյի: Սակայն եթե գործարքային ծախսերը դրական են, ապա իշխանության բաշխումը երկրի ներսում և նրա իրավաստեղծ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքը նրա զարգացման կարևորագույն գործոնն են»[1]:

Նոր ինստիտուցիոնալիզմի դրույթներին առանձնապես չիրազեկվածների համար նշենք, որ գործարքային ծախսերը, այլ կերպ՝ գործառնական վերադիր ծախսերը կամ, փոխաբերական իմաստով, շփման ուժի հաղթահարման ծախսերը տնտեսական և քաղաքական ոլորտներում ունեն մի շարք բաղադրիչներ: Դրանք առաջանում են շուկայում և կառավարության մակարդակում:

Կարծում ենք, որ առանձին լուրջ գիտական հետազոտության առարկա կարող են լինել տնտեսական կառավարման արդյունավետության և քաղաքական բնույթի գործարքային ծախսերի փոխկախվածության բացահայտումն ու գնահատումը: Չենք անդրադառնում այնպիսի եզակի իրողություններին, որոնք հատուկ են մեր երկրին արդեն տևական ժամանակահատված: Դրանք պատերազմական իրավիճակն ու շրջափակված լինելու հանգամանքներն են, որ պարտադրվել են մեզ: Յուրօրինակ վերադիր ծախսեր պարտադրող իրավիճակներից օպտիմալ ելքեր որոնելու ու հետևողականորեն վերելքի տանող ճանապարհները հաղթահարելի են **ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու մեր ունակությամբ և մեր կազմակերպվածությամբ:**

Որքան էլ հրատապ են մեր առջև ծառացած օպերատիվ և մարտավարական խնդիրները, երկարատև անվտանգության ապահովմանը միտված իրատեսական լուծումներին վերաբերող համապարփակ առաջարկությունները պետք է զերծ մնան արկածախնդրությունից, գործողությունները լինեն

[1] Տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/теорема_Коуза

հավասարակշռված՝ անորոշությունների ու ռիսկերի առավելագույն չեզոքացմամբ, քանզի գտնվում ենք «համաշխարհային անկարգություններով» («World disorder») լեցուն ռազմաքաղաքական իրադարձությունների հորձանուտում:

Լաչինի միջանցքի պարբերական շրջափակումը հղի է Արցախի բնակչության հայաթափման վտանգով, որը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների միջազգային քաղաքականության անօգնականության՝ կոչերի ու խոր մտահոգությունների բարձրաձայնումից ոչ ավելի, երկակի ստանդարտների կիրառման ցցուն օրինակ է: Չպետք է միամտաբար կարծել, թե աշխարհում ավարտվել է կապիտալի վերաբաշխման և ազդեցությունների գոտիների ճշգրտման ժամանակաշրջանը:

Միայն ճշգրտորեն հաշվարկված զարգացման սցենարները կկարողանան ապահովել վերը թվարկված անվտանգային բաղադրիչների օպտիմալ փոխգործակցությունն ու մեր երկիրը դուրս բերել անվտանգային և ինքնիշխանության բնական ու բանական ուղեծիր:

Ինքնիշխանությունն ինչ է, ի վերջո: Այդ վեհ գաղափարը ինչ աղերսներ ունի երկրի գոյաբանական առանցքների հետ, ինչքանո՞վ է այն բացարձակ, կայուն, չկոտրվող, ո՞ր մասն է պատվիրակելի կոնկրետ իրադրությունում: Որքանո՞վ է այն լուսե, մեր պարագայում գուրգուրանքի կարոտ... և, վերջապես, որո՞նք են ինքնիշխանության սահմանները:

Հարցերի այդ շրջանակը առաջիկայում մնալու է մեր քննարկումների կիզակետում: Ինքնիշխան Հայաստանում հետպատերազմյան իրադրությունում որակապես նոր ուղեծիր դուրս գալու, հեռանկարում ընդհուպ ցանցային տրանսպորտային հանգույցի վերաճելը այսօր կախված է Արցախի ու մեր դիմակայությունից՝ այս տմարդի բազմավեկտոր շրջափակումը հաղթահարելուց: Չեն կողպվելու մեր պայծառ գալիքի դռները: Ես դրան հավատում եմ: Իսկ իմ լավատեսության հիմքը հետևյալն է՝ **ինքնիշխանության ատրիբուտների ամրապնդմանն ուղղված գործողությունների գիտական մշակումն ու գործադրումը, որոնք վերաբերելու են անվտանգային ռազմական ու դիվանագիտական դիմակայությանը, երկրի ներսում ինքնիշխանության ճիշտ բաշխմանը տարբեր ինստիտուտների միջև:**

Ժողովածուում ընդգրկված հոդվածների վերընթերցումից հետո համակվեցի բավարարության զգացումով: Հիմքն այն էր, որ գրեթե չորս տասնամյակի ընթացքում հայտնելով երկրի տնտեսական քաղաքականության և դրա շուրջ դիրքորոշումներ՝ շարունակում եմ մշտապես մնալ նույն տեսակետներին՝ տեղի չտալով հարցադրումների վերաբերյալ կոնյունկտուրային ձևակերպումներին:

КОНЦЕПЦИЯ ИНТЕРЕСОВ

СОВЕТЫ И ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ

«Коммунист», 16 сентября, 1984

Начнем, пожалуй, со следующего определения: успешное решение проблемы перехода на интенсивные пути развития экономики в решаюшей мере зависит от правильного управления его главными факторами. Вернее, даже — от умения управлять ими. Определение само по себе не ново, и привел я его лишь для того, чтобы вплотную рассмотреть один из главных факторов - оптимальное сочетание централизованного планирования с самостоятельностью отраслевых и территориальных комплексов. Рассмотреть однако, под новым углом зрения, всецело вытекающим из принятого на апрельском (1984 г.) Пленуме ЦК КПСС постановления «О дальнейшем улучшении работы Советов народных депутатов», где, в частности, указывается: «Последовательно поднимать роль Советов в хозяйственном строительстве, выполнении государственных планов, повышении эффективности социалистического производства. в обеспечении комплексности экономического и социального развития, правильного сочетания территориальных и отраслевых начал в управлении».

Как это представляется конкретно?

Конфликты и диалектика

Существует неоспоримое мнение, что в условиях социализма, в условиях централизованного планирования, главной формой управления промышленностью может быть отраслевая форма. У нее имеются свои преимущества, подтвержденные опытом управления за все годы существования Советского государства.

Но коль скоро речь идет о совершенствовании организационной структуры управления, то оно должно происходить таким образом, чтобы наряду с отраслевым успешно и эффективно функционировали бы и территориальные и програмные линии управления. Здесь на первый план выдвигается условие: организационная структура должна основываться на экономических отношениях между непосредственными «участниками» процесса производства - отраслевыми подразделениями и территорией, выступающей в качестве носителя конкретного социально-экономического потенциала.

Поясним эту мысль.

Хорошо известно, что сейчас при формировании планов экономического и социального развития учитываются и территориальные интересы: расширены права местных органов, увеличены капитальные средства на социально-культурное развитие, жилье. Однако по мере усложнения хозяйственных связей возрастает диалектическое противоречие между экономическими объектами: отраслевыми комплексами и территориальными образованиями. Возникают конфликтные ситуации, экономическая природа которых основана на наличии объективно действующих факторов, связанных с развитием и размещением производительных сил на определенном территориальном образовании. Выражаются они в разном характере интересов: отрасли и территориальной единицы – города, района, региона.

И от того, как складываются взаимоотношения между ними, зависит во многом и жизнь людей, расселенных на данном территориальном образовании. А взаимоотношения эти зачастую складываются не совсем гладко. И по той простой причине, что многие предприятия, расположенные на конкретной территории, не имеют хорошо развитую производственную и социальную инфраструктуру. Первое объясняется стремлением к узкой специализации, второе - любым удобным способом «сэкономить» на социальной статье. Истоки возникновений таких противоречивых интересов не исчезнут до тех пор, пока отрасль и территория не будут поставлены в рамки эквивалентных экономических отношений.

Иными словами, требование адекватности плана социально экономического развития территориального образования возможностям и интересам отраслевых комплексов предполагает сообразную концепцию согласования интересов.

Произойти это может путем введения экономических (хозрасчетных) отношений между функционирующими на данной территории отраслевыми комплексами, как потребителями, и самими территориальными образованиями.

В поисках справедливости

Как известно, ресурсы для повышения материального и духовного уровня жизни трудящихся выделяются из бюджетных средств, а также из средств министерств и ведомств, значительную часть которых составляют фонды социально культурных мероприятий и жилищного стороительства. Однако бюджетные средства местных Советов, а также фонды социально-культурных мероприятий формируются без должного учета хозяйственной деятельности предприятий на конкретной территории. Более того, средства местных бюджетов не достаточны для развития «собственной» инфраструктуры.

В этом видится определенная «несправедливость». Ведь государство в лице местных Советов как бы «сдает в аренду» производственным предприятиям, находящимся на данной территории, экономический потенциал: фонды, природно-сырьевые и трудовые ресурсы, то есть общественное производство ведется с определенными обязательствами по внешним связям. Естественно, что в таких условиях органам территориального планирования и управления предоставляются полномочия выбора: очередности и направления решения тех или иных социальных задач. К сожалению, полномочия эти на деле оказываются эфемерными.

Как же все-таки соединить интересы территории и ведомств? Как добиться того, чтобы права местных Советов прочно упирались на соответствующий механизм управления, обеспечивающий комплексное строительство предприятия вкупе с общим развитием инфраструктуры местности?

Образовались своего рода «ножницы»: между «предложением» отраслей и «спросом» местного Совета на размещение на своей территории новых объектов, способных ускорить развитие инфраструктуры. За исключением двух-трех, остальные отрасли направляют свои «предложения» в регионы (районы) с высоким трудовым потенциалом и развитой производственной инфраструктурой, что является по существу основным фактором повышения экономической эффективности.

Что касается нашей республики, где за годы XI пятилетки более 40 процентов валовой продукции промышленности произведено в отраслях сферы союзного управления, то в пределах этой цифры удельный вес отдельных районов в общереспубликанском объеме колеблется от 0.02 процента до более 50 процентов. Львиная доля приходится на Ереван. Особенно «обделены» горные районы: Горис, Амасия, Арагац, Ехегнадзор и др. Аналогичная картина диспропорциональности между районами наблюдается также по отдельным показателям социального развития.

С миру по нитке

Итак, средства выделяемые местным Советам недостаточны для развития инфраструктуры района, ведомства не должны стоять в стороне от местных нужд, и нежелание считаться с местным Советом, его исполкомом — есть не что иное, как ущемление их прав.

Вот три кита, которые и будут поддерживать экономическую основу нового механизма эффективного функционирования Советов, способного изменить существующий порядок формирования местных бюджетов. «Справедливость» должна восторжествовать посредством установления определенной платы

отрасли для дальнейшего развития производственной, коммунальной и социальной инфраструктуры данного территориального образования. Иначе говоря, возникает возможность формирования фонда региональных доходов, где будут аккумулироваться своего рода фиксированные платежи за трудовые и природные ресурсы и услуги инфраструктуры, взимаемые на хозрасчетной основе с объединений (предприятий), размещенных на территории данного Совета. В первом приближении такой механизм может основываться на рентных платежах, размеры которых могут быть определены как разница между эффектом производства при размещении объектов в данном территориальном образовании с менее благоприятными условиями.

Впрочем, механизм формирования фонда региональных доходов можно разработать используя арсенал экономико-математических методов и моделей. Здесь нас больше интересует конечная цель использования фонда. А она такова. Посредством использования фонда региональных доходов на местах должны найти развитие: инфраструктурный комплекс (общехозяйственный, социальный, природоохранный!); потребительский комплекс (обеспечение населения товарами народного потребления); подготовительный комплекс (подготовка и переподготовка квалифицированных кадров по разным специальностям) и т. д. Кроме того, путем аккумулирования средств в региональный фонд будут цозданы предпосылки для реализации целевых социально-экономических программ. Такой предполагаемый механизм аккумулирования средств в фонд региональных доходов и его перераспределение позволит согласовать ведомственные и территориальные интересы на более высоких — региональном и народнохозяйственном — уровнях.

Конечно, решение этой задачи не может быть простым и быстрым. Оно требует специальных исследований, проектной и нормативно-методической проработки. В этой связи назрела необходимость усилиями плановых органов республики и НИИ экономического профиля подготовить и провести экономический эксперимент, направленный на улучшение сочетания отраслевого и территориального аспектов в комплексном угравлении народным хозяйством республики.

От редакции: Идеи, изложенные автором в данной статье, бесспорно заслуживают того, чтобы к ним был проявлен интерес. В предлагаемом подходе к развитию системы управления и возложения на местные Советы качественно иных функций по управлению народным хозяйством имеются все предпосылки для начала нового разговора, в котором мы надеемся, примут участие ученые-экономисты, работники планирующих органов и исполкомов местных Советов.

ПОМОЖЕТ ХОЗРАСЧЕТ[1]

«Известия», 3 февраля, 1986

От того, как складываются взаимоотношения между отраслью и территорией, зависят и эффективность производства и условия жизни людей. Следует отметить что заинтересованность ведомств в том, чтобы разместить свои объекты в том или ином городе, поселке, не подкреплена выделением соответствующих средств на развитие в них объектов социально-культурного назначения. Но справедливо ли пользоваться «территориальными благами», предоставляемыми отраслям безвозмездно?

На наш взгляд, в основу отношений необходимо заложить принцип хозрасчета, позволяющий пополнить доходную часть местных бюджетов и увеличить средства, направляемые на социальное развитие территории.

Переход на экономические основы формирования территориально-отраслевых взаимоотношений повысит роль и ответственность местных Советов в определении направлений и очередности решения тех или иных социальных задач, являющихся по своей сути межведомственными. Исходя из этого, предлагаю в проекте Основных направлений, где говорится: «…усиливать зависимость доходов местных бюджетов от результатов хозяйственной деятельности объединений, предприятий и организаций, расположенных на соответствующей территории», сделать дополнение: «на основе внедрения в территориально-отраслевые взаимоотношения хозрасчетных принципов».

---

[1] Տարածքային տնտեսական հաշվարկի գաղափարը անհամատեղելի էր սոցիալիստական սեփականության դոգմային: Դեռևս սոցիալիզմի պայմաններում կատարած հետազոտությունում արդյունքի բաշխման որոշակի խնդրի լուծում տեսնում էի նրանում, որ միութենական հանրապետությունը «կենտրոնից» կարծես թե վարձակալում էր իր տարածքում գտնվող ունեցվածքը (տե՛ս Саркисян Г. Л. «Управление социально-экономическим развитием рогионов (методология и пракика)», автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук, специальность 05.13.10.-Управление в социальных и экономических системах, М., 1990, сс. 30-31): Որքան էլ պարադոքսալ թվա, ինարքը՝ քո իսկ սեփականությունը վարձակալել երևութական ինչ-որ կենտրոնից, որը տերն է համաժողովրդական սեփականության, թույլ տվեց խաղերի տեսության մաթեմատիկական գործիքակազմի կիրառմամբ լուծել ռեգիոնի և կենտրոնի միջև արդյունքի արդարացի բաշխման խնդիրներ:

ԶԱՐԳԱՆԱԼ ՀԱՄԱԶԱՓ, ՆԵՐԴԱՇՆԱԿ

Ռեգիոնալ կառավարման մի քանի հարցեր

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

«Սովետական Հայաստան» օրաթերթ,
22 նոյեմբերի, 1986

Տնտեսական մեխանիզմի վերակառուցման կուսակցության սահմանած վեց հիմնական ուղղությունների մեջ, որոնք ընդգծվեցին ՍՄԿԿ XXVII համագումարում, առանձնակի կարևորություն ունի ռեգիոնալ կառավարման արմատական կատարելագործման, զարգացման ճյուղային և տերիտորիալ սկզբունքների օպտիմալ զուգակցման, առանձին ռեգիոնների արդյունավետ մասնագիտացման և կոմպլեքսային տնտեսական ու սոցիալական զարգացման խնդիրների միասնական համախումբը: Բանն այն է, որ տերիտորիալ և ճյուղային փոխհարաբերությունները կարգավորող գործող տնտեսական մեխանիզմն անուղղակի նպաստել ու խթանել է արտադրողական ուժերի ոչ ռացիոնալ տեղաբաշխումը, առանձին տերիտորիալ միավորների անհամամասնական սոցիալ-տնտեսական զարգացումը:

Ժողովրդական տնտեսության մեջ նեղ գերատեսչական կամ զուտ տեղայնական շահերով պայմանավորված տնտեսական ու սոցիալական միակողմանի և անարդյունավետ լուծումների օրինակները բազմաբնույթ են, այդ թվում նաև մեր հանրապետությունում: Դրա վկայությունն է, մասնավորապես, արտադրողական ուժերի տեղաբաշխման ստեղծված վիճակը, երբ ընդհուպ մինչև 70-ական թվականները շեշտը դրվում էր գլխավորապես Երևան քաղաքում ու դրա շրջակայքում արտադրական հզորությունների կենտրոնացման վրա: Չնայած վերջին տարիներին իրականացվող նոր քաղաքականությանը, այսուհանդերձ, ներկայումս մայրաքաղաքում ու նրա շրջակա 30-50 կիլոմետր շառավղով տարածքում, որը ներառում է Աբովյանի, Արտաշատի, Աշտարակի, Նաիրիի, Մասիսի, Հոկտեմբերյանի, Էջմիածնի շրջանների զգալի մասը, կենտրոնացված է հանրապետության արտադրական պոտենցիալի շուրջ 70 տոկոսը: Այն բնականաբար ուղեկցվել է հանրապետության տարբեր, հատկապես լեռնային շրջաններից բնակչության ակտիվ միգրացիայով: Դրա հետևանքով ծառացել են անհետաձգելի լուծում պահանջող երկու խումբ սոցիալական պրոբլեմներ, առաջինը՝ կապված հանրապետության տարածքի

մոտ մեկ քառորդը կազմող Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի «գերհագեցման», երկրորդը՝ լեռնային և նախալեռնային շրջաններում սոցիալական ենթակառուցվածքի առաջանցիկ զարգացման անհրաժեշտության հետ:

Նման վիճակն առաջացել է այն պատճառով, որ Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանում և առաջին հերթին Երևանյան ագլոմերացիայի շրջանակներում գտնվող միութենական ու հանրապետական ձեռնարկություններն ու արտադրական միավորումները, գործող տնտեսական մեխանիզմի պայմաններում, իրենց արտադրատնտեսական շահերի իրացման առավել նպաստավոր պայմաններ են գտել՝ արդեն ձևավորված որոշակի արտադրական ու սոցիալական ենթակառուցվածք, գիտատեխնիկական համապատասխան պոտենցիալ և այլն: Մինչդեռ, հանրապետության արտադրական պոտենցիալի առավել արդյունավետ օգտագործման, աշխատանքի տերիտորիալ օպտիմալ բաշխման ու կոոպերացման, լեռնային ու նախալեռնային շրջանների առջև ծառացած սոցիալական խնդիրներն ընդգրկող համապատասխան պրոբլեմային-նպատակային չափանիշով գնահատելու դեպքում, այդ ձեռնարկությունների մի զգալի մասի տեղադրումն Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի սահմաններում, անկասկած, կլիներ աննպատակահարմար: Ուստի և այսօր հարկ չէր լինի ընդունել Երևանի քաղաքային տնտեսության զարգացման կոմպլեքս միջոցառումների, Հայկական ՍՍՀ լեռնային ու նախալեռնային շրջանների տնտեսական և սոցիալական զարգացման վերաբերյալ հատուկ որոշումներ, դրանց կենսագործման համար առանձնացնել լրացուցիչ հսկայական միջոցներ:

Տերիտորիալ-ճյուղային փոխհարաբերությունների գործող մեխանիզմի անկատարությունն այն բանի հետևանք է, որ սոցիալական նպատակներն ու խնդիրները հիմնականում արտահայտվում են որպես արտաքին սահմանափակումներ՝ հետագա պլանային հաշվարկների ու հիմնավորումների համար: Մինչդեռ ժամանակակից պայմաններում սոցիալական նպատակներն ու խնդիրները պետք է դառնան այդ աշխատանքների ելակետը:

Այս պահանջն առավել կարևոր է մեր հանրապետության համար երկու հիմնական նկատառումով: Նախ՝ դա պայմանավորված է տերիտորիայի, արտադրատնտեսական ու բնակլիմայական պայմանների գոտիական ընդգծված առանձնահատկություններով. մի հանգամանք, որը միգրացիոն պրոցեսների, արտադրության միակողմանի տեղաբաշխման, տարածքային անհամաչափ զարգացման ակտիվ միջավայր է ստեղծում: Երկրորդ՝ արտադրողական ուժերի տեղաբաշխման արդեն իսկ ձևավորված այն իրավիճակով, որն զգալիորեն կրում է նշված երևույթների կառավարման՝ անցյալում թույլ տրված սխալների ազդեցությունը: Նման իրավիճակում, ինչպես նշվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հուլիսյան (1986 թ.) պլենումում, հանրապետությունում

հրատապ է դարձել առանձին ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների համահարթման, նրանց տնտեսական և սոցիալական զարգացման հաշվեկշռվածությունն ապահովելու խնդրի լուծումը: Դա բացատրվում է ոչ միայն առանձին շրջաններում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման մակարդակների էական տարբերություններով, այլև նրանով, որ հանրապետությունում դեռևս չի մշակված տերիտորիալ զարգացման և սոցիալական ենթակառուցվածքի տեղաբաշխման կոմպլեքսային ծրագիր, որի անհրաժեշտությունը, ի դեպ, վաղուց էր հասունացել: Այն թույլ կտա հենվել կառավարման տնտեսական մեթոդների, տերիտորիալ և ճյուղային (գերատեսչական) շահերի օպտիմալ զուգակցման սկզբունքների վրա: Նման ծրագրի բացակայության պայմաններում արտադրողական ուժերի տեղաբաշխման, ճյուղային և տերիտորիալ շահերի ներդաշնակման խնդիրներն անխուսափելիորեն լուծվում են՝ առավելապես հենվելով կառավարման վարչական մեթոդների վրա, որն անխուսափելիորեն հանգեցնում է անհամամասնությունների առաջացման, սոցիալական ու տնտեսական զարգացման ոչ ռացիոնալ զուգակցման, ռեգիոնալ մասնագիտացման ու կոմպլեքսային զարգացման թերհիմնավորված ծրագրերի մշակման ու իրականացման:

Առանձին շրջանների համար ստրատեգիական կողմնորոշում ունեցող կոմպլեքսային ծրագրերի բացակայության պայմաններում անհնար է նաև համակողմանիորեն հաշվի առնել դրանցից յուրաքանչյուրում արտադրատնտեսական բոլոր առանձնահատուկ պայմանները, էկոնոմիկայի տարածքային կազմակերպման բոլոր հիմնական գործոնները: Եվ դա է հիմնական պատճառը, որ հաճախ կազմվում են ոչ հաշվեկշռված տերիտորիալ պլաններ, առաջ են գալիս զարգացման սոցիալ-տնտեսական անհամամասնություններ, էկոլոգիական և այլ բնույթի պրոբլեմներ: Նման օրինակները շատ են, և դրանց մասին հանգամանորեն նշվեց նաև ՀԿԿ Կենտկոմի հիշյալ պլենումում: Ահա թե ինչու ՀԿԿ Կենտկոմը առաջ է քաշում հանրապետության բոլոր շրջանների հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման կոմպլեքսային ծրագրեր կազմելու անհրաժեշտության հարցը: Նման խնդրի լուծումն այսօր պահանջում է առաջին հերթին մշակել ռեգիոնալ տնտեսավարման այնպիսի համակարգ, որում առավել ներդաշնակորեն են փոխհամաձայնեցվում ճյուղային և տարածքային զարգացման խնդիրները, իսկ տեղական սովետները դառնում են սոցիալ-տնտեսական զարգացման կազմակերպման ու կառավարման լիիրավ կենտրոններ:

Սակայն, տնտեսական կապերի բարդացման աստիճանին համապատասխան, մեծանում է ճյուղային կոմպլեքսների և տարածքային միավորների շահերի դիալեկտիկական հակասությունը: Եվ նրանց միջև ծավալվող

փոխհարաբերություններից է կախված, մի կողմից՝ արտադրության արդյունավետությունը, մյուս կողմից՝ տվյալ տարածքում բնակվող մարդկանց պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ սոցիալական ենթակառուցվածքի ստեղծումը: Պրակտիկայում այդ փոխհարաբերությունները միշտ չէ, որ հարթ են ընթանում: Տիրապետող է դառնում այն միտումը, որ շատ ձեռնարկություններ շահագրգռված չեն լինում արտադրական և սոցիալական տերիտորիալ ենթակառուցվածք (կուլտուրայի, կենցաղսպասարկման օբյեկտներ, անհրաժեշտ ճանապարհային հանգույցներ, ջրմուղ-կոյուղու ցանց և այլն) ստեղծելու գործում:

Դժվար չէ նկատել, որ ինչպես արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, այնպես էլ բնակչության բարեկեցության համահարթման խնդիրների լուծումը նպատակահարմար է իրականացնել տերիտորիայի և ճյուղերի (տեղական սովետների համապատասխան տարածքում գտնվող ձեռնարկությունների) սերտ փոխկապակցության պայմաններում, այլ ոչ թե օգտակարության սեփական գերատեսչական կամ տեղայնական դիրքերից: Իսկ դա նշանակում է, որ ռեգիոնալ կառավարման կատարելագործումն այսօր սկզբունքորեն նորովի մոտեցում է պահանջում:

Տնտեսական և սոցիալական ոչ համալիր զարգացման պրոցեսների հաղթահարման, առանձին շրջաններում արտադրության տեղաբաշխման չափանիշների վերաիմաստավորման վճռորոշ ուղիներից մեկը տնտհաշվարկային սկզբունքներով տարածքային-ճյուղային հարաբերությունների կարգավորումն է:

«Տերիտորիա-ճյուղեր» կտրվածքով տնտհաշվարկային հարաբերությունների իրականացումն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում ռեգիոնալ եկամուտների ֆոնդի կազմավորման համար, հնարավորություն տալիս տվյալ ռեգիոնում տեղաբաշխված ձեռնարկություններից տնտհաշվարկային հիմունքներով ստացվող, աշխատանքային և բնական ռեսուրսների և ենթակառուցվածքի ծառայությունների դիմաց տրվող վճարները կուտակել տվյալ ռեգիոնում և այնուհետև նպատակային ձևով, կենտրոնացված կարգով վերաբաշխել: Նման պայմաններում, երբ հարաբերությունների կողմնորոշումը կընթանա առավելապես տնտեսավարման ոչ վարչական, այլ տնտեսական մեթոդներով, ճյուղերը խիստ կերպով կսահմանափակեն տարածքային արտադրատնտեսական պայմանների (բնական և աշխատանքային ռեսուրսներ, ստեղծված ենթակառուցվածք և այլն) անփոխհատույց և առանձին դեպքերում «գերշռայլ» օգտագործումը:

Տարածքային-ճյուղային տնտհաշվարկային փոխհարաբերություններում օրգանապես կմիակցվեն տեղական բյուջեների ու ենթակա սովետների տարածքում գտնվող արտադրական ձեռնարկությունների ու

կազմակերպությունների եկամուտները: Դա հնարավորություն կտա տեղական բյուջեների եկամուտները համալրել համապատասխան սովետների «վաստակած» հատկացումներով, դրանք հաշվեկշռել անհրաժեշտ նյութական ռեսուրսներով: Շրջանային սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ոլորտներում ուղիղ կապերով ճյուղերի փայատիրական մասնակցությունը կբացառի արտադրական օբյեկտները «ձեռնտու» շրջաններում տեղաբաշխելու միտումը՝ դրան բնորոշ նեգատիվ սոցիալական հետևանքներով:

Նկատենք, որ այդ պայմաններում ավելի կհեշտանա տվյալ կոլեկտիվի՝ սեփական աշխատանքով վաստակած արդյունքների գնահատումը և դրա հիման վրա լավ աշխատող ու հետ մնացող ձեռնարկությունների տարբերակումը: Հնարավորություն կստեղծվի նաև վերջիններիս նկատմամբ կիրառել տարբերակված խրախուսման հիմնավորված քաղաքականություն:

Այդ սկզբունքները լիովին համապատասխանում են ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների համահարթման կուսակցության քաղաքականությանը, ինքնաֆինանսավորման, ինքնածախսածածկման, լրիվ տնտեսական հաշվարկի հիման վրա արտադրական ձեռնարկությունների տնտեսական գործունեության հետագա կատարելագործման արդի պահանջներին: Բնակչության կենսամակարդակի համահարթման ավանդական մեթոդների նկատմամբ նման մոտեցման առավելությունն այն է, որ տվյալ դեպքում դրա իրականացումը դրվում է տնտեսական հիմքի վրա: Ստեղծվում են որոշակի պատնեշներ, որոնք ընդհանուր առմամբ խթանում են տարածքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը: Տարածքային-ճյուղային փոխհարաբերությունների ձևավորման տնտեսական եղանակներին անցումը կմեծացնի տեղական սովետների պատասխանատվությունն իրենց էությամբ միջգերատեսչական բնույթի սոցիալական խնդիրների նպատակամետ լուծման նկատմամբ: Իսկ քաղաքային և շրջանային սովետները, իրենց փաստական իրավունքներին համապատասխան, կունենան տնտեսական հնարավորություններ: Դրա հետ մեկտեղ կբարձրանա նրանց դերը չհամաձայնեցված լուծումներից բխող տարբեր բնույթի թերությունների վերացման գործում:

Սակայն գլխավոր խնդիրն այն է, թե իր բնույթով գործնականում ինչպիսի՞ն պետք է լինի տարածք-ճյուղ տնտհաշվարկային փոխհարաբերությունների հիմքի վրա գործող ռեգիոնալ տնտեսավարման մեխանիզմը, դրա առանձին տարրերի, ռեգիոնալ վերարտադրության տարբեր կողմերի միջև փոխհարաբերությունների կառավարման ցանկալի համակարգը: Բանն այն է, որ, մի կողմից, երկրի թերևս ոչ մի ռեգիոնում դեռևս չի ներդրվել տեսական ու պրակտիկ անհրաժեշտ հիմնավորում ստացած այնպիսի համակարգ, որը տնտհաշվարկային և ինքնակառավարման սկզբունքների հիման վրա ամբողջությամբ համապատասխաներ արտադրության կազմակերպման

ներկա պահանջներին: Մյուս կողմից՝ նման համակարգ հնարավոր է մշակել միմիայն յուրաքանչյուր ռեգիոնի բնակլիմայական, սոցիալ-տնտեսական, ազգային և այլ բնույթի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրման միջոցով: Ուստի թերևս նպատակահարմար է հանրապետության որևէ վարչական շրջանում նախապատրաստել և իրականացնել ռեգիոնալ կառավարման համակարգի արմատական վերակառուցման տնտեսափորձ: Վերջինս ընդհանուր ուրվագծերով պետք է նպատակամղվի տնտեսական լծակների ու խթանների այնպիսի համակարգի գործադրմանը, որի պայմաններում տվյալ շրջանում գործող ձեռնարկությունները, միավորումները և կազմակերպությունները տեղական սովետների հետ մեկտեղ «վերաճեն» ու դառնան հավասար պատասխանատու և հավասար շահագրգռված պարտնյորներ, որոնք պետական առաջադրանքների անխտիր կատարմանը համընթաց կմոբիլիզացնեն տերիտորիալ պոտենցիալը և այն կներգրավեն տնտեսական շրջանառության մեջ՝ ժողովրդական տնտեսության մեջ տվյալ շրջանի ավանդի մեծացման չափանիշով: Փաստորեն, առավելագույն նպատակահարմար ձևով կներդաշնակվեն տնտեսական և սոցիալական առաջընթացի, շրջանների մասնագիտացման ու կոմպլեքսային զարգացման խնդիրները:

Հասկանալի է, որ առաջադրված խնդիրների համարժեք մեխանիզմի ստեղծումը պահանջում է հատուկ ուսումնասիրություններ, նախագծային և նորմատիվային-մեթոդական մշակումներ, որը կարող է կատարվել հանրապետության պլանային մարմինների ու գիտահետազոտական կազմակերպությունների ջանքերով:

Անհրաժեշտության դեպքում կարող են կազմակերպվել նաև ժամանակավոր կոլեկտիվներ՝ ներառնելով համապատասխան գիտական կադրեր, ինչպես նաև շրջանային պլանային հանձնաժողովների ուժերը:

Մեր կարծիքով՝ տնտեսափորձը նպատակահարմար է անցկացնել հանրապետության Աշտարակի շրջանում: Նախալեռնային այդ շրջանը ներառել և «փոքր չափերով» կրկնում է հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գրեթե բոլոր բնորոշ առանձնահատկությունները:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Երեկոյան Երևան» օրաթերթ,
18 ապրիլի, 1991

Անկախության գործընթաց. ուղիներ և միջոցներ

– Խնդրում եմ բնութագրել տնտեսական և սոցիալական զարգացման ներկա իրավիճակը:

– Կեցվածք ընդունելն ընդհանրապես նորմալ երևույթ չէ: Այն առավել ևս անթույլատրելի է տնտեսության բնագավառին վերաբերող հարցերում: Կիսաշեն բնակավայրեր, գումարած՝ աղետի գոտին, և հետն էլ՝ կցորդ դարձած տնտեսություն: Սա ինքնին շատ բան է ասում. այսպիսի մեկնարկային դիրքեր են ժառանգվել: Տնտեսական ցուցանիշները նույնպես մխիթարող չեն: Նախորդ տարում նվազեցին արտադրված ազգային եկամուտը՝ 6,9, աշխատանքի արտադրողականությունը՝ 8,4 տոկոսով: Կրճատվող արդյունաբերական արտադրանքի ծավալը 7,3 տոկոս է: Բարելավում չկա ընթացիկ տարվա առաջին եռամսյակում: Արտադրված ազգային եկամուտն անցած տարվա նույն ժամանակի համեմատ նվազել է 10,7, հանրային աշխատանքի արտադրողականությունը՝ 12,4 տոկոսով: Ամփոփ այս ցուցանիշների հետևում կան, իհարկե, դրական միտումներ, սակայն դրանք մասնակի բնույթ են կրում: Այսպես, պետական կապիտալ ներդրումների հաշվին անցած երեք ամիսներին կառուցվել են 154 հազ. ք. մ ընդհանուր մակերեսով բնակելի շենքեր, որը 15 տոկոսով ավելի է անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Հանձնվել են շուրջ 500 աշակերտական տեղով դպրոցներ:

Չի կարող չանհանգստացնել այն հանգամանքը, որ արտադրության ծավալների կրճատումը և կարողությունների թերգործարկումը, թերևս առավել մեծ մասշտաբներով, համընդհանուր են ԽՍՀՄ-ով մեկ: Չի կարելի նաև ստեղծված կացությունը բացատրել խրոնիկ թերմատակարարումներով: Անելանելի վիճակներ չեն լինում:

Այնուհետև՝ դրամի շոշափելի արժեզրկում, գերսուր իրադրություն սպառողական շուկայում: Այս դժգույն պատկերը կարելի է ամբողջացնել: Մի խոսքով՝ մեզ համար առանձնակի է կարևորվում կառուցելու, վերականգնելու, իրավիճակը շտկելու ոչ ստանդարտ ուղիների որոնումը:

– Կառավարման ինչպիսի՞ գործընթացներ են անհրաժեշտ:

– Կարծում եմ՝ կառավարման որոշումը, անկախ այն բանից, թե որ ոլորտին է վերաբերում և ինչ մակարդակով է կայացվում, պետք է ելնի հստակ

դիրքորոշումներից, մանրակրկիտ հաշվարկներից և ամրապնդվի հետևողական գործելակերպով: Կիսատ բացատրությունը միայն լարվածության մեծացման պարարտ հող է ստեղծում: Սրանում եմ տեսնում արդյունավետ կառավարելու ամենակարևոր գրավականը:

Անցման շրջանում ապապետականացմանը և կառավարման բոլոր մակարդակներում գործող մարմինների ֆունկցիաների սահմանազատմանը զուգընթաց շատ կարևոր է հետևողականորեն իրագործել ամբողջ տարածքի տնտեսության միասնական ղեկավարում: Մասնավորապես, նոր ստեղծվելիք արդյունաբերության նախարարությունը կտնօրինի միասնական ենթակայության արտադրությունները, որի ձեռնարկություններում թողարկվում է հանրապետության արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին:

Քաղաքական անկախությունը առանց տնտեսական անկախության անիմաստ կդառնա: Այդ երկուսը փոխկապակցված են: Չի կարող լինել տնտեսական անկախություն՝ առանց քաղաքական անկախության: Այս իրողության դրսևորումներն այսօր առկա են մեր հանրապետությունում: Քաղաքական տեսակետից մենք այսօր զգալի ձեռքբերումներ ունենք: Հայաստանի Հանրապետությունը, պետական իշխանության մարմիններն այսօր, քաղաքական առումով, ըստ էության դուրս են եկել Մոսկվայի տիրապետության տակից, բայց տնտեսապես դեռ բազում թելերով կապված են նրա հետ ու հարկադրաբար կատարում են կենտրոնի հակաժողովրդական օրենքները (գների բարձրացում, պրեզիդենտական հարկ և այլն, և այլն): Ելնելով վերոհիշյալից՝ ինչ հեռանկարներ կան մեր հանրապետության տնտեսությունը ամրապնդելու ասպարեզում, ինչ է արված այդ ուղղությամբ վերջին 5-6 ամսվա ընթացքում:

– Չեմ ծավալվելու քաղաքական ու տնտեսական անկախության փոխկապակցվածության հարցի շուրջ: Դրանց սերտ կապն ակնհայտ է: Կուզենայի ընդգծել մի կարևոր հանգամանք. պետք է տարբերել տնտեսությունը վարելու, կառավարելու անկախությունը տնտեսական անկախությունից:

Անշուշտ, միայն քաղաքական անկախությունը կստեղծի անհրաժեշտ նախադրյալներ անկախ տնտեսավարման համար: Քաղաքական անկախությունը այն սոցիալական հիմքն է, որի պահպանման ու հզորացման, համապատասխան միջավայրի ստեղծման դեպքում կունենանք լիարժեք ինքնիշխանություն, դիցուք՝ ինքնուրույն բանկային համակարգի գործունեության կամ, ասենք, արտաքին տնտեսական կապերի, գնագոյացման, հարկային քաղաքականության բնագավառներում: Դրանք այսօր դրված են կենտրոնի կողմից նախապես պատրաստված կաղապարների մեջ: Միայն քաղաքական անկախություն ստանալուց հետո, տնօրինելով սեփական ռեսուրսներն ու եկամուտները, հնարավոր կլինի ունենալ կյանքի որակի բարելավման գործուն տնտեսական մեխանիզմներ: Այս ամենն անհերքելի է:

Շարունակեմ: Ցավալի իրողություն է, որ քաղաքական բաղձալի անկախությունը ստանալուց հետո անգամ մեր տնտեսական կախվածությունը միանգամից չի վերանալու: Ավելին՝ որոշ ոլորտներում ինտեգրացիան կարող է խորանալ:

Առաջիկայում, որքան էլ շեշտակիորեն տեղաշարժեր կատարվեն, կառուցվածքային ու ինվեստիցիոն քաղաքականության ասպարեզներում, միևնույն է, էկոնոմիկայում ներցիոն պրոցեսները կմնան: Արտադրությունների վերապրոֆիլավորումը ժամանակ է պահանջում: Միայն մեկ օրինակ. այնպես է ստացվել, որ մենք արտադրական և այլ նպատակներով հանրապետություն ենք բերել մինչև 1 մլն տոննա մետաղական արտադրանք կամ գրեթե լրիվ հումքը թեթև արդյունաբերության համար: Առաջիկայում հրաժարվել ձևավորված պահանջարկից և ավանդական տնտեսական կապերից անհնար կլինի: Խնդիրն այլ տեղ է: Մեր նպատակը պետք է լինի սնուցման մեկ աղբյուրի բացառումը, այսինքն՝ գտնել հումքի նոր մատակարարներ: Մեզ ձեռնտու արտադրական կառուցվածքների ստեղծումը լավագույն պարագաներում կպահանջի 7-10 տարի: Դրան պետք է գնալ աստիճանաբար՝ խելամտորեն հաշվարկելով արվող ամեն քայլ: Տնտեսական անկախությունը ենթադրում է սահմանափակ ռեսուրսների նպատակային բաշխում ըստ անկախ գոյատևելու չափանիշների:

Ինչ է արվել անցած կես տարում:

Նախ՝ ընթացիկ տարվա համար կազմված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը մի կողմից նպատակաուղղվել է հանրապետության էկոնոմիկայի կայունացմանը, մյուս կողմից՝ շուկայական հարաբերությունների զարգացման նախադրյալների ստեղծմանը: Նաև հաշվի են առնվել հանրապետությունների և կենտրոնի միջև ձևավորվող տնտեսական և քաղաքական նոր հարաբերությունների միտումները:

Որոնք են եղել այն ծրագրային միջոցառումները, որոնք այս տարի, թերևս, պետական առաջադրանքների տեսքով իջեցվել են կատարողներին:

Դրանք են՝ երկրաշարժի հետևանքների վերացում, տնտեսությունը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու անհետաձգելի միջոցառումների իրագործում, բնակչությանը, հատկապես աղետի գոտում տուժածներին ու փախստականներին, բնակարաններով ու աշխատատեղերով ապահովում, ԼՂԻՄ-ի հետ հանրապետության սոցիալ-տնտեսական կապերի ամրապնդում:

Նախապայմաններ են ստեղծվել տնտեսության ինքնապահովվածության մակարդակի բարձրացման համար:

Ունեցած գերսուղ միջոցներից, այնուհանդերձ, բաժին է հանվել հանրապետության համար ստրատեգիական նշանակության, մասնավորապես,

տրանսպորտային և կենսապահովման համակարգերի գործունեության կայունացմանն ուղղված միջոցառումների համար: Դրանք են՝ պահեստարանների ու բազաների, բաշխիչ սառցարանների կառուցումը, ճանապարհաշինարարությունը (Մեղրի-Քաջարան ավտոճանապարհի թունելը, Վերին-Հեն-Ծավ, Շվանիձոր-Ադրբեջանի սահման, Ղուկասյան-Բավրա ճանապարհները) և այլն:

Նախապատրաստվել և կնքվում են Հայաստանի Հանրապետության և մյուս միութենական հանրապետությունների միջև տնտեսական և մշակութային համագործակցության համաձայնագրեր: Հանրապետությունների միջև հորիզոնական կապերի խորացման նպատակով ստեղծվել է փոխանակման ֆոնդ, որում ամրագրված են ավելի քան 200 մլն ռուբլի ընդհանուր գումարով ապրանքային արժեքներ: Արդեն իրականացվում են հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող ապրանքների դեֆիցիտի լրացման ուղղությամբ ապրանքափոխանակության գործառնություններ:

Այսրոպեական, հրատապ պահանջմունքների բավարարման խնդիրներից բացի ճշգրտվում են շատ հիմնահարցեր, տարվում են որոնողական աշխատանքներ:

Դրանք վերաբերում են մեր կյանքի գրեթե բոլոր կողմերին՝ արտակարգ իրավիճակներում վառելիքաէներգետիկ համալիրի գործունեությունից, պարենի խնդրից, կոմունիկացիաների ստեղծումից մինչև կրթական համակարգի ու գիտության զարգացման խնդիրները:

– Ինչպիսին է մեր տնտեսական կապերի աշխարհագրությունը, որոնք են, Ձեր կարծիքով, դրանց փոփոխման միտումները:

– Ես արդեն նշեցի, որ կապերի արագ վերաձևումը հեշտ խնդիր չէ: Եվ այս հարցը պետք է քննարկվի միայն այն առումով, որ փոխշահավետ կապերը յուրաքանչյուր անկախ երկրի համար անհրաժեշտ են: Նորերը կստեղծվեն նույն՝ փոխշահավետության հիմքի վրա: Կարծում եմ, որ Ռուսաստանի և մյուս հանրապետությունների հետ տնտեսական կապերի պահպանումը մինչև դարավերջ իր վճռորոշ դերը կունենա:

Իհարկե, սրան զուգընթաց՝ պետք է համարձակ քայլեր կատարվեն արտահանման պոտենցիալի ստեղծման ու գործադրման ուղղությամբ: Այն այսօր խղճուկ է, չնայած արտաքուստ պերճախոս թվերին, մենք աշխարհի 60-70 երկրներ ենք ուղարկում շուրջ 80-100 անուն տարբեր արտադրատեսակներ. դա արտադրանքի ընդամենը մեկ տոկոսն է կազմում (80-100 մլն ռ.): Այստեղ բացահայտ հետ ենք մնացել:

Առաջիկա տարում կարող է ընդամենը կրկնապատկվել այդ ծավալը: Քիմիական, էլեկտրատեխնիկական, շինանյութերի և մյուս ճյուղերի գծով արտահանման ծավալների ակնկալվելիք մեծացման խթանները այսօր չկան:

Դրանք կաշկանդվում են գործող օրենսդրությամբ: Եվ իսկապես, չի կարելի շահագրգռել ձեռնարկատիրական կոլեկտիվին, երբ նրանց վալյուտային հասույթի շուրջ կեսը գանձվում է միայն կենտրոնի կողմից: Մինչդեռ անկախությունը թույլ կտա առաջիկա տարիների ընթացքում արտահանձնման զգալի պոտենցիալ ստեղծել:

Կա ևս մեկ կարևոր պայման: Գերճիգեր գործադրել, ասենք, ներկայիս Գերմանիայի շուկա ներթափանցելու՝ դեռևս չհաղթահարելով երբեմնի սոցիալիստական լագերի երկրների արտադրության որակի սահմանագիծը՝ անհեթեթ կլինի: Այնպես որ՝ առաջընթացի երաշխիքը մրցունակ արտադրանքն է և այդ հիմքի վրա նկատելիորեն կայուն բազայի ստեղծումը: Դա, իր հերթին, պահանջում է ունենալ համահայկական միաբանությամբ մշակված կոնկրետ մոտեցումներ, զարգացման մոդելներ: Քայլեր են արվում նաև այդ ուղղությամբ: Մասնավորապես, մայիս ամսին կկայանա «Գործարար մարդկանց համահայկական հանդիպում», որի ընթացքում այլ հարցերի խմբում նախատեսվում է քննարկել հանրապետությանը արտասահմանյան վարկեր տրամադրելու հարցերը:

Վերադառնալով զարգացման մոդելի վերաբերյալ մեր մոտեցումներին՝ պետք է ընդունել, որ ինչպիսիք էլ լինեն այդ մոդելի նրբերանգները, ուղեծիր դուրս բերող շարժիչ արդեն դրված է դրանում:

– Դուք նկատի ունենք շուկային անցնելու գործընթացը, որը մեր հանրապետությունում սկսված է: Նորովի հողօգտագործումը և ապապետականացման առաջին քայլերը, անշուշտ, ակնկալում են արտադրության ծավալների ավելացում, բայց միայն դա չէ: Կլինեն երևի այլ դրական, գուցեև բացասական կողմեր:

– Այո, ազատ ձեռնարկատիրությունը, շուկայական հարաբերություններին անցնելը կկանխեն արտադրության անկումը, որը, ինչպես նշեցինք, դեռևս չի կայունացել ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ մեզ մոտ, և մեզ կկանգնեցնեն այն փաստի առջև, երբ արդյունքի քիչ թե շատ արդարացի բաշխում ապահովելու համար անհրաժեշտ կլինի հերթական անգամ դիմել արհեստածին մեթոդների, որոնք կյանքում քննություն չեն բռնում:

Կարծում ենք՝ ելքը մեկն է. հաստատակամորեն առաջնորդվել սեփականության մասնավորեցման կուրսով, այնպիսի չափանիշներով, որ համատեղ լուծում ստանան, ինչպես առավել շատ ստեղծելու, այնպես էլ ստեղծված արդյունքը առավել արդարացի վերաբաշխելու ոչ պարզ խնդիրները:

Ինչ վերաբերում է ազատ ձեռնարկչության, ապապետականացման դրական կողմերին, ապա կառանձնացնեի հետևյալը. Շուկային անցնելը կբացառի անտնտեսվարությունը, կնեղացնի ստվերային տնտեսության ոլորտը: Հարկ չկա համոզելու, որ ներդրվող շուկայական մեխանիզմներին բնորոշ չեն

հրամայական բաշխման սկզբունքները, կոպիտ թելադրանքը, մարդկային նորմալ շահերի անտեսումը...

Բացասականն այն է, որ եթե ժամանակին չմշակվեն և չկիրառվեն առանձին խմբերի, այդ թվում՝ մտավորականության սոցիալական պաշտպանվածության մեխանիզմներ, չգործի ճկուն հականերգործման հարկային քաղաքականությունը (որը ներկայումս, ցավոք, գրեթե բացակայում է), անխուսափելի կդառնա բնակչության բևեռացումը ըստ նրա իրական եկամուտների:

Ընթացիկ տարում պետք է ընդունվեն կյանքի նվազագույն մակարդակի, գործարարի կարգավիճակի, աշխատանքի բորսաների մասին օրենքներ ու որոշումներ, մշակվում են քաղաքացիների եկամուտների հիմնավորված ինդեքսավորման և ուրիշ փաստաթղթեր, որոնք կնպաստեն սոցիալական արդարության սկզբունքների արմատավորմանը:

– Վերջին ամիսների փորձը ակնառու վկայում է, որ ԽՍՀՄ-ի տնտեսական կայունությունը ոչ թե լավանալու է, այլ առաջիկայում ավելի է վատանալու: Ավելի պարզ՝ այդ հսկա երկիրը արագությամբ գահավիժում է դեպի անդունդ: Եվ նա չի կատարելու նույնիսկ իր իսկ կնքած պարտավորությունները հանրապետությունների հետ: Ինչ պետք է արվի մեր հանրապետությունը այդ համատեղ կործանումից փրկելու համար:

– Համակարծիք եմ Ձեզ հետ, որ վիճակը է՛լ ավելի կարող է վատանալ: Դա զգում են բոլորը, և, կարծում եմ, կձեռնարկվեն կանխարգելիչ համատեղ գործողություններ՝ փոխպարտավորությունների համաձայնագրերի տեսքով: Կենտրոնը, ի վերջո, ստիպված կլինի հաշտվել ֆունկցիոնալ սահմանափակ լիազորությունների իրականացման փաստի հետ:

Այլընտրանքային մոտեցում ես չեմ տեսնում: Վերջապես, ժողովուրդները չեն կարող իրենց ճակատագիրը թողնել ներկայիս կենտրոնի քմահաճույքին: Ամեն մեկը յուրովի կվերագտնի քաղաքական և տնտեսական իր անկախությունը, որի հիմքը, կոնկրետ մեր հանրապետության համար, արդեն իսկ ներդրվող շուկայական հարաբերություններն են:

– Ինչ քայլեր են արվում Հայաստանի բնական պաշարների արդյունավետ օգտագործման համար: Նկատի ունեմ պղինձը, մոլիբդենը, ոսկին:

– Նախ՝ անընդունելի է այն, որ այդ մետաղները պարունակող հանքավայրերը մեր հանրապետությունում, գտնվելով ակտիվ շահագործման մեջ, տարեկան ապահովում են ընդամենը 350 մլն ռուբլու արտադրանք:

Գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական մշակումները վկայում են, որ կան բոլոր նախադրյալները այս բնագավառում որակական թռիչք ապահովելու համար, և դրան կարելի է հասնել բարձր արդյունավետության արտադրությունները կազմակերպելու միջոցով:

Առաջիկա 3-5 տարիներին մետալուրգիայի զարգացման նախագծերը գունավոր, դրան զուգահեռ, հավանական է, նաև սև մետալուրգիայի բնագավառում ինտենսիվ քննարկվում են էկոնոմիկայի պետական կոմիտեին կից աշխատանքային խմբում:

Այս ծրագրավորումով նախատեսվում է, մասնավորապես, մաքուր ոսկու ստացում: Գործարանի համար արդեն ընտրված է մասնաշենք:

Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի փակումից հետո պղնձի ու մոլիբդենի խտանյութերի մի մասն ուղարկվում է արտասահման, մյուսը՝ Միության ձուլարաններ: Այդ ծրագրով նախատեսվում է նոր տեխնոլոգիայով՝ բնապահպան գործոնի առավելագույն հաշվարկումով, պղնձաձուլարանի կառուցում, որի գտնվելու վայրը ճշգրտվում է:

Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատի պոչապահեստարանի թափոնների բազայի վրա նախատեսվում է կառուցել հանքային գունանյութերի արտադրություն և սկսել որմնանյութերի թողարկումը: Բոլոր ծրագրերն ու կանխագծումները ենթադրում են վերջնական մոլիբդենի ստացում, հանքանյութերի համալիր վերամշակում, դրանցում պարունակող տարրերի (ռենիում, թելուր, սելենիում) և ուղեկցող բաղադրամասերի կորզում ու մշակում, որոնք բազմապատիկ ավելի մեծ եկամուտ կապահովեն հանրապետությանը: Եթե այդ ամենին ավելացնենք նաև Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերի համակողմանի մշակումն ու արտադրանքը, ապա մեր տնտեսական հնարավորություններն ավելի կմեծանան:

– Ինչ սպասելիքներ կան գյուղատնտեսական մթերքների արտադրության ասպարեզում այս տարի և գալիք տարիներին՝ կապված հողի մասնավոր սեփականության հետ:

– Հիմնարար և միևնույն ժամանակ համարձակ՝ գործնականում ԽՍՀՄ-ում իր նախատիպը չունեցող գործընթացը նորմալ է ընթանում: Համապատասխան նախարարությունների կողմից աշխատանքներ են կատարվում կենտրոնացված կարգով կազմակերպելու տնտեսությունների ապահովումը սերմերով, պարարտանյութերով, խտացված կերերով, նյութատեխնիկական և այլ միջոցներով: Դեռևս ամեն ինչ չէ, որ հարթ և ոչ հիվանդագին է ընթանում: Ներկայումս անբավարար են անասնապահական մթերքների գնումները: Կարծում եմ, որ այսօրվանից պետք է խորամուխ լինել պատճառների մեջ, և պետք է ամեն ինչ արվի, որպեսզի չեզոքացվեն մթերումների գործում ծագած դժվարությունները:

Ըստ իմ կանխատեսումների՝ ինչպես ասում են՝ մյուս հավասար պայմանների դեպքում, այս տարի կարելի է ակնկալել դաշտավարական և անասնապահական մթերքների առնվազն անցյալ տարվա մակարդակ, իսկ գալիք տարիներին՝ դրանց էական աճ:

Այս խնդրին առնչվող մի հարցի մասին: Շատերն են տրտնջում, որ տված հողակտորով գյուղում լիուլի չի կարելի ապրել: Եվ իսկապես, մեկ միլիոնից ավելի գյուղաբնակներից միայն ամեն չորրորդ մարդն էր զբաղվում գյուղատնտեսությամբ: Մյուսները աշխատում և վաստակում էին այլ ոլորտներում: Այդ պրոցեսը, կարծում եմ, չպետք է խաթարվի:

– Ակնհայտ է տուրիզմի շահավետությունը յուրաքանչյուր երկրի համար: Ինչպես է զարգանալու տուրիզմը Հայաստանում:

– Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այդ ճյուղը, որպես այդպիսին, դեռևս լիովին չի էլ ձևավորվել: Բնակլիմայական բարենպաստ պայմանների ու պատմամշակութային կոթողների, ինչպես նաև ռեկրեացիոն ռեսուրսների առկայությունը նպատակահարմար են դարձնում միջազգային նշանակության կուրորտատուրիստական համալիրների ստեղծումը ու ընդլայնումը: Այս տարի համապատասխան կազմակերպությունների կողմից պլանավորվում է ընդունել մոտավորապես երեսուն հազար զբոսաշրջիկների, որից արտասահմանցիների թիվը չի գերազանցելու մեկ երրորդը: Ավելի քան համեստ են այս թվերը:

Անելիքները շատ են, սակայն դրանք պահանջում են զգալի ներդրումներ, ենթակառուցվածքային օբյեկտների առկայություն: Երկու հազարին չհասնող հյուրանոցային տեղերի քանակով կամ էլ համարյա բացակայող տուրիզմի արդյունաբերությամբ շատ բան չի կարելի անել: Ճյուղի զարգացման հեռանկարները խոստումնալից են, և այս բնագավառում համարձակ ձեռնարկումներ են անհրաժեշտ, այդ թվում՝ արտասահմանյան կապիտալի ներգրավման ուղիով:

– Ինչպես է ընթանում առևտրի, սպասարկման ոլորտի և արդյունաբերության փոքր օբյեկտների սեփականաշնորհման գործը: Ինչ հեռանկարներ ու սպասելիքներ կան ընդհանրապես ապապետականացման գործընթացներում:

– Ունեցվածքային շահն ընկած է շատ և շատ հասարակական գործընթացների հիմքում: Այս սկզբունքի վրա էլ խարսխվել է կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների ընտրված կուրսը: Դրանում արմատական հարցը պրիվատիզացիան է՝ սեփականության վերադարձումը ժողովրդին:

Հանրապետությունում ապապետականացման և սեփականաշնորհման են ենթակա ութ հազարից ավելի օբյեկտներ: Սկսվել են դրանց մի մասի՝ այսպես ասած «փոքր պրիվատիզացիայի» օբյեկտների գույքագրման, գնահատման և վաճառքի կազմակերպման աշխատանքները: Ներկայումս ճշգրտվում է մինչև երեք աշխատատեղով օբյեկտների սեփականաշնորհման կարգը:

Նշված խնդիրների մոնոլիտ լուծման և կենսագործման համար ստեղծված Պետական ունեցվածքի տնօրինման և ապապետականացման կոմիտեն

արդեն ստորագրել է առաջին երեք հանձնարարականները: Այնպես որ անշեղելի այդ գործընթացն սկսված է:

Ապապետականացման գործընթացին առնչվող ևս մեկ հարցի մասին:

Ինչպես գիտեք՝ կառավարությունը որոշում է կայացրել հանրապետության տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին: Ըստ այդ կարգի՝ լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեության տեսակներով զբաղված ամեն տիպի գործող ձեռնարկություն (բացառությամբ պետականի), ինչպես նաև նոր ստեղծվողները պարտավոր են մինչև 1991 թ. հուլիսի 1-ը ստանալ համապատասխան թույլտվություն պետական կառավարման մարմինների կողմից: Բացի պետական մենաշնորհ գործունեության տեսակներից՝ հանրապետության տարածքում ձեռնարկությունները և տնտեսվարող մյուս բոլոր սուբյեկտները ազատ են զբաղվելու տնտեսական բավական լայն գործունեությամբ: Շատ կարևոր է խստորեն օգտվել ընձեռված հնարավորություններից, արտադրությունը կողմնորոշել դեպքի իր նորմալ հունը և վաստակել:

– Վերջին երկու-երեք տարիներին Հայաստանի կառավարությունը հիմնական ուշադրությունը դարձրել է 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժի պատճառով ավերված՝ հանրապետության արտադրական և սոցիալական պոտենցիալի վերականգնմանը: Դրա հետ մեկտեղ՝ բազմաթիվ հիմնահարցեր կան բնական աղետից չտուժած քաղաքներում և շրջաններում: Մեր թերթի ընթերցողներին հատկապես հետաքրքրում է թե ինչպես են լուծվում Երևան քաղաքի զարգացման հարցերը:

– Հարցադրումը տեղին է և լիովին հասկանալի: Միանգամից ուզում եմ նշել, որ հանրապետության կառավարության կողմից անհրաժեշտ ուշադրություն է դարձվում, և արվում է ամեն հնարավորը ոչ միայն աղետի գոտու վերականգնման, այլ նաև հանրապետության մնացած քաղաքների և շրջանների համաչափ զարգացման ուղղությամբ: Որպես հանրապետության մայրաքաղաք՝ առանձնահատուկ տեղ է հատկացված Երևանին:

Սոցիալ-տնտեսական զարգացման այս տարվա ծրագրով Երևան քաղաքում պետական կապիտալ ներդրումների հաշվին նախատեսվում է գործարկել ավելի քան 178 հազ. մ ընդհանուր մակերեսով բնակտարածություն, 4550 աշակերտական տեղով հանրակրթական դպրոցներ, 1340 տեղով մանկական նախադպրոցական հիմնարկներ, 840 մահճակալով հիվանդանոցներ, ինչպես նաև հերթափոխում 2700 հաճախումով պոլիկլինիկաներ: Բացի դրանից՝ նախատեսվում է 52,5 կմ երկարությամբ նոր ջրատարների, համապատասխանաբար, 9,9 և 14,5 կմ ընդհանուր երկարությամբ կոյուղու և ջերմամատակարարման ցանցերի շինարարություն: Միաժամանակ,

բնակարանային-շինարարական կոոպերատիվների միջոցների հաշվին կկառուցվեն 81,4 հազ. քառ. մ մակերեսով բնակելի շենքեր:

Ուշադրության կենտրոնում կլինեն քաղաքի էկոլոգիական դրության բարելավման, տրանսպորտային հիմնահարցերի լուծման, ճանապարհների, կոմունալ-կենցաղային տնտեսության զարգացման և այլ բազմաթիվ կնճռոտ խնդիրներ:

Երևան քաղաքի զարգացման հիմնահարցերի լուծումը պահանջում է ոչ ստանդարտ մոտեցումներ: Հուսով եմ, որ Երևանի նոր քաղխորհուրդը կնախանշի մայրաքաղաքի հանգուցային հիմնահարցերի լուծման ուղիները:

ՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԴԻՎԵՐՍԻԱ Է
ՀԵՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

«Հայաստանի Հանրապետություն»,
24 փետրվարի, 1998

– Պրն Սարգսյան, ինչպես կբնութագրեք այսօրվա տնտեսական իրավիճակը, ինչ է ժառանգելու նորընտիր նախագահը:

– Նոր նախագահը ժառանգելու է տնտեսական ծանր վիճակ: Անհանգստացնողը ոչ այնքան ստեղծված ու վերջին տարիներին տնտեսական օրգանիզմի գնալով ծանրացող վիճակն է, որը դրսևորվում է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վատացումով, այլև նման իներցիայով շարունակվելու դեպքում ազգաբնակչության կրած զոհողությունների հետ մեկտեղ տնտեսության ամբողջովին կազմալուծման հեռանկարը: Ուստի արմատական միջոցառումների կիրառումն անխուսափելի է: Դրանց բովանդակությունը պետական տնտեսական քաղաքականության ամբողջ զինանոցի գործադրմամբ այլընտրանքային արդյունավետ լուծումներն են: Այդպիսի լուծումները պետք է ելնեն դեռևս մշակվելիք ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները հաշվի առնող հայեցակարգից: Այդպիսի լուծումները պետք է «ճեղքեն» անվստահության այն մթնոլորտը, որով շրջափակված են գործարարությունը և ստեղծագործ աշխատանքը:

Ստեղծված կացությունը շուկային հախուռն անցման, տնտեսության վնասարար քաղաքականության գործադրման հետևանք է: Այդ քաղաքականությունը դրսևորվել է տնտեսության կեղծ ազատականացմամբ, որի արդյունքում չեն երևում տնտեսության առողջացման նախանշանները: Պետական ձեռնարկություններում հիմնականում նշանակվել են դրանց տերեր, ինչը հանգեցրել է դեռևս սոցիալիզմի օրերից եկող ստվերային սեփականության զարգացմանը:

– Որո՞նք են իրավիճակից դուրս գալու ուղիների ընդհանուր ուրվագծերը:

– Ստեղված իրավիճակից դուրս գալու ուղին մեկն է՝ ճեղքումը տնտեսության «ճակատում»: Այն ենթադրում է անցման շրջանի տնտեսական մոդելի մշակում և իրագործում: Անցման մոդելի հիմքում, որը, ի դեպ, կարող է մշակվել մեր հանրապետությունում, պետք է դրվեն պետության դերի բարձրացման, ընդգծված սոցիալական արդարության դրույթները: Այդպիսի մոդելը պետք է երաշխավորի աշխատավորների առավելագույն զբաղվածությունը երկրի ազգային հարստության համալիր ու ռացիոնալ օգտագործման պայմաններում:

Առաջընթացի երաշխիքը ճեղքումն է տնտեսության ոլորտում, որը հնարավոր կլինի իրագործել, եթե մեր հարևանների «նավթին», «ծովին» մենք կարողանանք հակադրել մեր ազգային հարստության կարևոր տարրերը՝ գիտատեխնիկական ներուժը, ձեռնարկատիրական ունակությունները: Այս ամենը կարող է սնուցվել 200-300 մլրդ դրամ ներդրումներով, եթե հաղթահարվի անվստահության պատնեշը: Դրան կարող են մասնակից դառնալ նաև արտերկրների ընկերությունները: Հզորանալու աղբյուրը Հայաստանի նման փոքր և բաց երկրի համար ոչ միայն և գուցե ոչ այնքան ներդրումներն են, որքան ինստիտուցիոնալ բարեփոխումները: Սա, թերևս, առանձին խոսակցության նյութ է:

– Ինչպիսին պետք է լինի անցումային շրջանի տնտեսական մոդելը:

– Ազգային տնտեսության զարգացման իրատեսական քաղաքականության հիմքում պետք է դրվի որոշակի տնտեսական մոդել՝ իր հստակ սկզբունքներով և բազմաչափանիշային նպատակներով:

Հայաստանում կիրառելի տնտեսական մոդելը կարող է ունենալ առնվազն միջին տևողության ծրագրային ժամանակահատված (3-5 տարի) և հենվել ինչպես առկա հնարավորությունների բազմազանության, այնպես էլ օբյեկտիվ սահմանափակումների վրա: Այդպիսի մոդելից բխող սոցիալ-տնտեսական իրատեսական ծրագրերը կարող են մշակվել ու գործադրվել երկմիասնական՝ քաղաքական ու տնտեսական լուծումներ պարունակող սցենարների զուգորդման միջոցով: Այդ սցենարներում առավելագույնս պետք է հաշվի առնվեն տնտեսական զարգացման ինչպես սահմանափակող, այնպես էլ նպաստող գործոնների (առավելությունների) ազդեցությունը, որոնց թվում կարևորվում են՝

– բեռնափոխադրումների թողունակությունը (որը, ի դեպ, փոխհատուցվում է ցածր աշխատավարձով) և ռազմական ծախսումները (սահմանափակումներ).

– լեռնամետալուրգիական, գյուղատնտեսական, շինարարական, ռեկրեացիոն համալիրներում խոշորամասշտաբ ինվեստիցիոն նախագծերի իրագործման հնարավորությունները.

– գիտատեխնիկական ու մտավոր մեծ ներուժի և արդյունաբերության մի շարք ենթաճյուղերում հարաբերականորեն մրցունակ արտադրությունների առկայությունը (նպաստավոր գործոններ):

Նպաստավոր գործոնների լիարժեք դրսևորմանը նպատակամղված տնտեսական մոդելի գործադրումը հնարավոր է ինվեստիցիոն ներդրումների համար բարենպաստության երաշխիքների ապահովումով:

Այդպիսի երաշխիքների թվում կարող են հանդես գալ՝

– ենթակառուցվածքային բարելավումները (ֆինանսավորման աղբյուրները՝ միջազգային ֆինանսական հաստատությունների վարկերի նպատակային օգտագործումը),

– ազգային ինվեստիցիոն ապահովագրական հիմնադրամի ստեղծումը, որն իրագործելու է օտարերկրյա կապիտալի ներդրման ռիսկի կրճատման կանխարգելիչ ֆունկցիա (ֆինանսավորման աղբյուրները՝ կարող սփյուռքի հնարավորությունները, ներքին ռեզերվների մոբիլիզացումը, ստվերայնության կրճատումը, կոնցեսիոն մեխանիզմների գործադրումն ու վստահելի գործընկերների հետ դրանց համատեղ շահագործումը և այլն):

Առաջադրվող սկզբունքներով տնտեսական մոդելի գործադրումը անցման փուլում կապահովի արտադրության ընդլայնման անհրաժեշտ նախադրյալներ: Այս ուղիով կառավարությունը կկարողանա բավարարել բնակչության պահանջմունքները, սպասարկել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքը: Նախանշած տնտեսական մոդելի ու ծրագրերի գործադրումից զատ՝ կառավարությունը պետք է շարունակի տնտեսությունը շուկային կողմնորոշող իր գործունեությունը հետևյալ ուղղություններով՝ մասնավորեցում, գիտակցելով դրա համակարգման անհրաժեշտությունը, մասնավոր ձեռներեցության զարգացում, արտաքին առևտրի ռեժիմի բարելավում, ֆինանսական կարգապահություն:

Հետամուտ լինելով ժամանակի պահանջներին համապատասխան տնտեսական քաղաքականության նպատակներին (թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացում, ինֆլյացիայի կրճատում, վճարային հաշվեկշռի բարելավում, զբաղվածության մակարդակի բարձրացում և այլն), կառավարությունը կիրագործի մակրոտնտեսական, կառուցվածքային և ինստիտուցիոնալ քաղաքականություն: Այս ամենը միաժամանակ՝ որպես համալիր խնդիրներ:

Տնտեսական քաղաքականության նշված ուղղություններից բացի՝ կառավարության մշտական տեսադաշտում պետք է լինեն՝ մենատիրության սահմանափակումը, սպառողների պաշտպանվածությունը, բնակչության անպաշտպան շերտերին, աղքատներին ու չքավորներին հասցեագրված սոցիալական պաշտպանվածությունը: Կենսապահովման զամբյուղի ընդունումը և դրան համապատասխանող նվազագույն աշխատավարձի սահմանումը օրենքով և բնապահպանական ծրագրերի իրագործումը:

– *Նախանշած մոդելում ինչ դեր է հատկացվում արդյունաբերությանը:*

– Արդյունաբերական քաղաքականություն չի տարվել՝ մի դեպքում անտեսելով դրա հեռանկարայնությունը, մյուսում՝ ներկայացնելով շուրջ 2 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրումների պահանջարկ: Համոզված եմ, որ Հայաստանի վաղվա օրը բովանդակվելու է արդյունաբերական նախագծերի կենսագործումով:

Զարգացման ներկա տեմպերը թույլ կտան մինչև 2010 թվականը արդյունաբերական արտադրանքի ծավալը ընդամենը կրկնապատկել, որը կկազմի 1980 թ. մակարդակի մեկ քառորդը: Իմ գնահատումներով՝ շուրջ կես միլիոն արդյունաբերական աշխատողներից այսօր այս ոլորտում ռեալ աշխատում են 40-50 հազարը:

– Միջազգային ֆինանսական կազմակերպությունները (ԱՄՀ, ՀԲ) նույնպես փորձում են օժանդակել մեր հանրապետությանը՝ դուրս գալու ճգնաժամից: Ո՞րն է դրանց դերը:

– Այդ օժանդակությունը չպետք է նսեմացվի, բայց և տնտեսական քաղաքականության երաշխավորությունները չպետք է կրեն թելադրանքի բնույթ: Ահավասիկ՝ մեկ օրինակ:

1996 թ. վերջին ԱՄՀ-ի առաքելությունը, քննարկելով ՀՀ-ում կառավարության և Կենտրոնական բանկի տնտեսական բարեփոխումների համատեղ ծրագրի կատարումը, շեղումներ էր արձանագրել ֆիսկալ և կառուցվածքային վերափոխումների ոլորտներում և պահանջել դրանց վերացումը:

Այնուհետև, նրանք ոչ մի հիմք չեն տեսել, որ 1997-ի համար կանխատեսվի 14% ինֆլյացիա (երբ նախորդ տարում այն չի գերազանցել 10%-ը), մինչդեռ տարին ամփոփելիս արձանագրվել է 22%: Չհամաձայնվելու դեպքում ասվում է, որ վարկի հաջորդ մասնաբաժնի (տարեկան մոտ 50 մլն դոլար) փոխանցումը կուշացվի: Չենք ուզում համաձայնել այդպիսի թելադրանքին, որովհետև այդպիսի թելադրանքը չի առաջադրում համալիր խնդիրներ: Եթե ինֆլյացիան կարելի է զսպել սոսկ դրամի առաջարկով, դա ընդունելի չի կարող լինել: Այսօրվա նվազագույն աշխատավարձով մենք շատ թանկ գին ենք վճարելու: Նման աշխատավարձը դիվերսիա է հենց պետության հանդեպ: Այս պայմաններում հասարակության անդամները վերածվում են մեղսագործների բանակի, իսկ այդպիսի հասարակությունը անխուսափելիորեն կրախի է մատնվում, դատապարտվում ստեղծագործ աշխատանքից մասսայական օտարացման:

– Ինչ կասեք ձեռքբերումների մասին:

– Հողի մասնավորեցումը: Միայն թե այստեղ էլ գաղափարը վարկաբեկվեց՝ 1992 թ. սկսած անհետևողականության և անտրամաբանական որոշումների կայացումով:

Զրուցեց **Արթուր Ղարագյոզյանը**

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Կառավարում» գիտահանրամատչելի
վերլուծական ամսագիր, N1, 2000

Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունը «առաջընթացի կոորդինատների համակարգում» միանշանակ չէ:

Ֆինանսական կայունացման և կառուցվածքային վերափոխումների առումով վերջին տարիներին առկա են որոշակի ձեռքբերումներ: Սակայն, սոցիալական առաջընթացի և տնտեսական աճի առումով, դեռևս մեծ է անորոշությունը: Դա արտահայտվում է ներքին պահանջարկի և ամբողջական առաջարկի շարունակական անհավասարակշռվածությամբ: Ճեղքվածքը ծածկվում է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի, մասնավոր տրանսֆերտների և հումանիտար օգնության միջոցների հաշվին, որը, բնական է, երկար չի կարող շարունակվել: Վճարային հաշվեկշիռը դեռևս կենսունակ չէ: Ընթացիկ հաշիվն առանց պաշտոնական տրանսֆերտների, ըստ ՀՀ վիճակագրության նախարարության տվյալների, անցյալ տարի կազմել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 26,7 տոկոսը: Մտահոգիչ է նաև ՀՆԱ-ի օգտագործման որոշ բնութագրիչների շարժը: Այսպես, ըստ «Հայաստան. տնտեսական միտումներ» 1999 թ. թողարկման տվյալների՝ հիմնական ֆոնդերի համախառն կուտակումները 1994 թ. ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 20,2 տոկոս և 1998-ին կրճատվել 3,2 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում կտրուկ փոփոխվել են նյութական պաշարները՝ ՀՆԱ-ի 3,2 տոկոսից մինչև 1,6 տոկոս: Այս ամենի հետևանքը ընդհուպ պարզ վերարտադրության ցիկլի խախտումն է տնտեսության իրական հատվածում: Զուտ արտահանումը այդ ժամանակահատվածում դրսևորել է խիստ բացասական վարքագիծ՝ բացարձակ արժեքով կազմելով ՀՆԱ-ի մոտ մեկ երրորդը: Վերջին հինգ տարիներին արտահանման տոկոսային հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ կրճատվել է շուրջ երեք անգամ և ներկայումս չի հասնում 15 տոկոսի:

ՀՀ արտաքին առևտրի ամենևին ոչ սփոփիչ պատկերը երևում է նաև ՀՀ վիճակագրության նախարարության մշակած աղյուսակի տվյալներից:

Մի շարք երկրների արտահանման, ներմուծման, ՀՆԱ-ի ծավալները և արտահանման ու ներմուծման միջին հակվածությունները 1998 թվականին (մլն ԱՄՆ դոլար)

	Արտահանում	Ներմուծում	ՀՆԱ-ի ծավալը	Արտահանման միջին հակվածությունը, %	Ներմուծման միջին հակվածությունը, %	ՀՆԱ-ի ծավալը մեկ շնչի հաշվով (դոլ.)
Հայաստան	220,5	902,4	1898,0	11,6	47,5	496,9
Ադրբեջան	232,2	404,6	4103,4	5,7	9,9	537,1
Բելառուս	5160,1	5554,5	13549,0	38,1	41,0	1329,6
Ղազախստան	2100,2	2001,6	22373,5	9,4	8,9	1434,2
Վրաստան	189,5	1055,0	4882,7	3,9	21,6	904,2
Ռուսաստան	72553,0	45559,0	276659,0	26,2	16,5	1882,4
Ուկրաինա	12637,4	14675,6	42571,5	29,7	34,5	843,0
Բելգիա	186298,0	170065,0	262124,4	71,1	64,9	25723,7
Թուրքիա	25938,0	45369,0	122826,9	21,1	36,9	1935,8
Լիտվա	3710,2	5793,5	10692,0	34,7	54,2	2889,7
Իրան	12200,0	13800,0	333700,0	3,7	4,2	5000,0

Աղյուսակի վերջին երեք սյուներում բերված տվյալները վկայում են, որ անբարենպաստ է ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և շնչային ՀՆԱ-ի ինտեգրալ ցուցանիշը, այդ թվում՝ մեզ սահմանակից երկրների շարքում:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղին բարեփոխումներն են տնտեսության «ճակատում», որոնք պետք է նպատակամղվեն երկրի ազգային հարստության արդյունավետ տնօրինմանը և օգտագործմանը: Այս իմաստով, մեր նման բաց երկրի համար, արտահանման ընդլայնումն ու զարգացումը դառնում են գրեթե այլընտրանք չունեցող շարժիչ ուժ: Ընդ որում, ցանկալի տնտեսական նպատակների իրականացումը ենթադրում է արտաքին և ներքին հավասարակշռվածության ապահովում և, որպես լավագույն սցենար, երբ այդ հավասարակշիռ վիճակները համատեղ են հանդես գալիս:

Այդ իմաստով ցանկալի հավասարակշիռ վիճակներին հասնելը դառնում է մեր տնտեսական քաղաքականության գերխնդիրներից մեկը: Ինչպես ներքին հավասարակշռությունը (տնտեսական կայուն աճ՝ գործազրկության ցածր

մակարդակի պայմաններում), այնպես էլ արտաքին հավասարակշռությունը (առևտրի ցանկալի հաշվեկշիռ կամ արտարժույթի ցանկալի ներհոսքի ապահովում) հասանելի կդառնան, եթե առաջնահերթ այդ խնդիրների լուծմանը միտվի տնտեսական քաղաքականությունը: Վերջինիս արդյունավետության գնահատման տեսանկյունից այսօր պետք է կարևորվեն գործազրկության և սղաճի մակարդակների այնպիսի փոփոխությունները, որոնք ազդելու են առևտրի հաշվեկշռի բարելավման և փոխանակման իրատեսական դրույքաչափերի ձևավորման վրա:

Այսպիսով, տնտեսավարման այլընտրանքային առավել նպաստավոր լուծումները պետք է խարսխվեն երկարաժամկետ առաջարկը խթանող քաղաքականության վրա՝ հրաժարվելով վերջին տարիներին իրականացվող վերափոխումային կարճաժամկետ պահանջարկային կարգավորման (այն էլ՝ ոչ համալիր) ծրագրերից:

ՀՀ արտահանման ընդլայնման ու զարգացման ծրագրային խնդիրը: Գործուն աջակցությունը արտահանման գործընթացին՝ սկսած ծրագրի մշակումից մինչև դրա հետևողական կենսագործումը, պետք է դասվի առաջնահերթ ծրագրային խնդիրների շարքին: Տնտեսական և կառուցվածքային քաղաքականության հարցերով ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի փոխհամաձայնությունների մեմորանդումները Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի հետ դեռևս չեն ապահովում այն գործուն նախադրյալները, որպեսզի ընդլայնվի ու խթանվի արտահանումը: Ավելին՝ փոխպայմանավորվածությունները դեռևս միտված չեն արտահանման ողջ ներուժի խթանմանն ու արդյունավետ գործադրմանը:

Արտահանման ընդլայնման ու խթանման ծրագրային խնդիրը պետք է նպատակամղվի մեղմելու տնտեսության, ըստ էության, ընդամենը իռացիոնալ կայունության տանող քաղաքականությունը:

Առաջադրվելիք ծրագրային խնդիրը պետք է պարունակի արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների ու ծառայությունների զարգացումը խթանող միջոցառումների ամբողջական համալիր, և այս իմաստով արտահանման կտրուկ աճի ապահովումը առաջիկա տարիներին հրամայական է: Իհարկե, առկա է նաև հանրապետությունում ներմուծման ռացիոնալացման, փոխարինիչների (импортозамещение) ինքնին կարևոր հիմնախնդիրը:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ներկայիս ցուցանիշը՝ տարեկան շուրջ 500 դոլար, առաջիկա 4-5 տարիներին, ըստ մեր գնահատումների, պետք է հասցվի մինչև 2 հազար դոլարի, որը կպահանջի արտահանման ծավալների կտրուկ մեծացում՝ տարեկան 25 տոկոս և ավելի: Գնահատումների նման սցենարի

հիմքում ընկած է 10 և ավել տոկոս տնտեսական աճը: Այդ սցենարում արտահանման չափաբաժինը, ի թիվս կառուցվածքային այլ տարրերի (պետական ծախսումներ, մասնավոր ներդրումներ, ներմուծում), ելնում է ներքին շուկայում սպառման տարողության սահմանափակվածությունից:

Այն պնդումը, որ բացի արտահանման կտրուկ մեծացումից՝ չկան այլընտրանքներ, ելնում է տնտեսական աճի նախանշված՝ մինչև 7 տոկոս տեմպերի անհեռանկարայնությունից՝ քիչ թե շատ շոշափելի առաջընթաց ունենալու իմաստով: Այս դեպքում, դեռևս երկար տարիներ ՀՀ տնտեսությունում չի դիտարկվի առաջընթացի իրական տեղաշարժ՝ լավագույնս 6 և ավելի տարիներ հետո միայն կարող է կրկնապատկվել այսօրվա շնչային ՀՆԱ-ի մակարդակը և հասցվել ՌԴ-ի համանուն ցուցանիշի ներկայիս մակարդակի ընդամենը կեսին: Համեմատության համար նկատենք, որ, օրինակ, Իսրայելում այդ նույն ցուցանիշը ավելի քան 40 անգամ գերազանցում է այսօրվա մեր մակարդակը: Ի դեպ, այդ երկրում արտաքին տնտեսական շրջանառությունը բավականին բարձր է:

Այսպիսով, **դեպի զարգացում անցումն ապահովելու, ստեղծված իրավիճակում բեկում մտցնելու ՀՀ կառավարության ծրագրային խնդիրների շարքում արտահանման ընդլայնումն ու խթանումը պետք է դիտվեն որպես մեր հասարակության սոցիալական առաջընթացի իրական երաշխիք, մակրոտնտեսական կայունացման և զարգացման բազային պարամետր:**

Արտահանման ընդլայնման ու խթանման ծրագրի մշակումն ու գործադրումը պահանջում են հետևյալ հիմնախնդիրների լուծումը.

1. ՀՀ արտահանման ներուժի բացահայտումը: Արտահանման ներուժը պետք է ներառի ապրանքների և ծառայությունների այն ցանկը, որը հիմնավորվելու է ՀՀ բացարձակ և համեմատական առավելությունների գերակայություններով, դրանք իրացնելու հնարավորությունների և ուղիների նախանշումով (ըստ տեսականու, ծավալների, ժամկետների, իրացման շուկաների, սուբյեկտների, առկա և հնարավոր խոչընդոտների և այլ գնահատումներով): Նշենք, որ հանրապետությունում այս ուղղությամբ որոշ աշխատանքներ տարվում են: Մասնավորապես, Զարգացման հայկական գործակալությունը իրականացնում է «Արտահանման և զարգացման» ծրագիրը:

2. ՀՀ արտահանման ներուժի գործադրման խթանումը: Արտահանման գործընթացին ՀՀ կառավարության աջակցությունը պետք է ներառի ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ռեսուրսային վերահսկում (ըստ ներազդման բոլոր հնարավոր լծակների ու մեխանիզմների մատնանշման՝ վարկային, հարկային, բանկային, արտոնագրային, ապահովագրական, լիզինգային և սպասարկող այլ ենթակառույցների կայացման առումով):

Ծրագրի մշակումից հետո անհրաժեշտ է ապահովել ծրագրի իրականացման նախադրյալները ստորև բերված խնդիրների ու միջոցառումների տեսքով.

Խնդիրներ և միջոցառումներ

Արտաքին առևտրի կարգավորում, այդ թվում՝ արտաքին առևտրային ռեժիմի բարելավում

– միջազգային, բազմակողմ և երկկողմ առևտրատնտեսական իրավապայմանագրային դաշտի զարգացում.
– արտահանման ազատական տարիֆային և ոչ տարիֆային կարգավորման համակարգի ստեղծում և զարգացում:

Արտահանմանը խոչընդոտող վարչարարական և տեխնիկական արգելքների վերացում

– մաքսային արարողակարգի պարզեցում (հստակեցում).
– ստանդարտացման համակարգի բարելավում:

Արտահանման ընդլայնման և զարգացման (ենթա)կառույցների ձևավորում և գործունեության համակարգում

– արտահանման խթանման գործակալության ստեղծում, որի գործառույթների մեջ կմտնի արտաքին շուկաների ուսումնասիրությունը, առևտրային պայմանագրերի նախագծերի մշակումը, տեղեկատվական և գովազդային ծառայությունների տրամադրումը.
– էլեկտրոնային առևտրի հայտերի կազմում, միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների, գործարար համաժողովների կազմակերպում.
– «Առևտրաարդյունաբերական պալատի մասին» ՀՀ օրենքի ընդունում:

Արտաքին առևտրի ֆինանսավորման և ապահովագրման համակարգի ձևավորում

– ՀՀ-ում արտահանման-ներմուծման ապահովագրական բանկի (EximBank) ստեղծում.
– Արտահանման արտադրական ենթակառույցների աշխատանքի ձևավորում, այդ թվում լիզինգային գործունեության համակարգի ձևավորում.
– տրանսպորտային, կապի, պահեստավորման, փաթեթավորման, սառնարանային, որակի ստուգման և այլ ծառայությունների ստեղծում, կատարելագործում և համակարգում.
– «Լիզինգի մասին» ՀՀ օրենքի ընդունում:

Տեղեկատվական համակարգերի ձևավորում, ինչպես նաև տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների տրամադրման համակարգի կատարելագործում

– ինտերնետ և այլ տեղեկատվական համակարգերի համատարած ներդրում, խորհրդատվական ընկերությունների աջակցում:

Մարդկային ռեսուրսների զարգացում

– մենեջերների, կոնստրուկտորների, դիզայներների, որակի ապահովման, մարքեթինգի և այլ մասնագետների պատրաստում և վերապատրաստում:

Հետմասնավորեցման խնդիրների լուծում

– հետմասնավորեցման աջակցման ենթակառույցի ձևավորում:

Արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչության համակարգի ձևավորում

– արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների (կցորդների) ինստիտուտի ստեղծում:

Ծրագրի իրագործման վերջնանպատակը բարենպաստ մթնոլորտի ստեղծումն է բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար, անկախ սեփականության ձևից ու գործունեության ոլորտից, միակ պայմանը արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների ու ծառայությունների առկայությունն է:

ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԵՐ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

«Ժամանակ» օրաթերթ,
27 սեպտեմբերի, 2001

80-ամյա ԵՊՀ-ում տնտեսագիտությունը եղել է ավանդական մասնագիտություն: Երբ 1975 թ. բացվեց Ժողովրդական տնտեսության ինստիտուտը, ֆակուլտետն իր գործունեությունը ժամանակավորապես դադարեցրեց: Եվ միայն 1984-ին համալսարանում ֆակուլտետը վերաբացվեց մեկ՝ տնտեսագիտական կիբեռնետիկա ամբիոնով: Հետագայում, ժամանակի թելադրանքով, նոր որակի տնտեսագետ կադրեր պատրաստելու անհրաժեշտությունից դրդված՝ ֆակուլտետն ընդլայնվեց: Այժմ գործում է 6 ամբիոն, որոնք պատրաստում են տնտեսագետներ 5 մասնագիտության գծով: «Ժամանակը» զրուցում է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի հետ:

– Խորհրդային շրջանում տնտեսագիտական ուսուցումն ավանդաբար եղել է գաղափարականացված, ինչի արդյունքում աղճատվել են բազմաթիվ տեսություններ, երբ չէին ընդունվում շուկայի օրենքներն ու ընդհանրապես տնտեսության շուկայական մոդելը: Նախ անցում կատարվեց ուսուցման եռաստիճան համակարգի, արդյունքում՝ վերանայվեցին բակալավրիատի ծրագրերը: Այսօր ուսուցման բաց համակարգը, առաջընթացը դեպի տեղեկատվական տեխնոլոգիաներ և գլոբալացումը թելադրում են արտերկրի համալսարանների հետ համագործակցելու անհրաժեշտություն: Մեր ուսումնական ծրագրերով համագործակցում ենք Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի հետ, իրականացնում ենք ոչ միայն դասախոսների, այլև ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դոկտորների փոխանակումներ: «Տեմպուս» եվրասիական կրթական ծրագրի շրջանակներում հաստատեցինք կապեր Մակեդոնիայի, մասնավորապես, Սալոնիկի համալսարանի հետ: Համագործակցում ենք նաև Կալիֆոռնիայի համալսարանի դասախոսների հետ: Ներկայումս ֆակուլտետը հագեցած է ժամանակակից տնտեսագիտական կրթության համար անհրաժեշտ բարձրակարգ համակարգիչներով: Գործում է համակարգչային 3 լսարան, յուրաքանչյուրում՝ 10-ից ավելի համակարգիչներ:

– Բացի արտերկրի համալսարանների հետ համագործակցությունից, ֆակուլտետը կապեր ունի՞ մեր տնտեսության որոշակի ճյուղերի հետ:

– Հիմնական դասախոսական կազմից զատ, ֆակուլտետում համատեղման կարգով աշխատում է մոտ 30 դասախոս: Նրանք մասնագետներ են՝ հրավիրված ԿԲ-ից, առևտրային բանկերից, Արժեթղթերի և մրցակցության պաշտպանության հանձնաժողովներից, բոլորն էլ ունեն գիտական համապատասխան աստիճաններ: Այսօրինակ համագործակցությունն ապահովում է տեսական գիտելիքների համադրումը գործնականի հետ, ինչն ուսուցումը դարձնում է առավել արդյունավետ:

– Ինչպես արդեն նշեցիք, ներմուծվեցին նոր առարկաներ, ուրեմն ծնվեց նաև դասագրքային խնդիր:

– Դասագրքերը հիմնականում օտարալեզու են՝ անգլերեն ու ռուսերեն, սակայն այդ առումով խնդիրներ չեն ծագում, որովհետև ուսանողները հիշյալ լեզուներին տիրապետում են: Հաջողությամբ օգտվում են նաև Ինտերնետից:

– Այնուամենայնիվ, մայրենի լեզվով դասագրքեր կան:

– Կան, դրանք հիմնականում թարգմանություններ են:

– Ինչպիսին է վիճակը երիտասարդ դասախոսական կադրերի պատրաստման ոլորտում:

– Ինչ վերաբերում է նոր կադրերին, ապա այստեղ առկա են խնդիրներ՝ պետության կողմից տրամադրվող ասպիրանտուրայի տեղերի սահմանափակության պատճառով: Յուրաքանչյուր մասնագիտական ամբիոնի 1 ասպիրանտ է հասնում, կան ամբիոններ, որոնք ընդհանրապես ասպիրանտ չունեն: Սա մասնագիտությունների ժառանգականության, ինչպես նաև մտավոր ներուժի զարգացման վրա իր բացասական ազդեցությունը կունենա:

– Այսօր նաև արտագաղթն է նպաստում ուղեղների արտահոսքին:

– Իսկապես, վերջին տարիներին շուրջ 2 տասնյակ ուսանող և ասպիրանտ ունեինք միայն Մոսկվա քաղաքում: Նրանց միայն մի մասն է վերադարձել:

– Այս ուսումնական տարվա նորամուծություններից է երկրորդ մասնագիտության գծով ընդունելության կազմակերպումը ֆակուլտետում:

– Նորամուծությունը պայմանավորված է տնտեսության մեջ լուրջ տեղաշարժերով և աշխատաշուկայի պահանջարկով: Այսօր շատ մասնագետներ՝ ինժեներներ, կենսաբաններ, բանասերներ, աշխատանք գտնելու նպատակով, նոր մասնագիտություն ձեռք բերելու խնդրի առջև են կանգնած: Այս պատճառով էլ սկսեցինք ֆակուլտետում երկրորդ մասնագիտության գծով ուսուցումը: Նշենք, որ այսօրինակ ուսուցում կիրառվում է նաև իրավաբանական ֆակուլտետում:

– Դիմորդների խնդիր չկա, չէ՞ որ ուսուցումը նորույթ է և վճարովի՝ տարեկան 250 հազար դրամ:

– Իհարկե, կա նման խնդիր, սակայն արդեն ստացվել են առաջին դիմումները: Քաղաքական ասպարեզում բազմիցս հիշատակվում է, որ մեր

ապագան պայմանավորված է գիտական ներուժի պահպանմամբ: Այն սնվում է կրթահամակարգում, և պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի մեր ապագա կադրերը մնան այստեղ՝ ապահովելու երկրի հետագա սոցիալ-տնտեսական բարելավումն ու զարգացումը:

Հարցազրույցը՝ **Լուսինե Տերտերյանի**

ՊՐՈԲԼԵՄԸ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԻՆԴՐՈՄՆ Է

«Օրրան», 22 հունիսի, 2002

Պաշտոնական տվյալներով 2001-ին Հայաստանում գրանցվել է մոտ 10 տոկոս աճ: Իրա՞կան է այդ աճը, թե՝ ոչ: Եթե իրական է, ինչո՞ւ ընդդիմությունը համառորեն փորձում է հերքել այն, իսկ իշխանությունը նույն համառությամբ փողհարում է այդ թռիչքանման նվաճումը: Սա հարց է, որը պրոֆեսիոնալ դիտարկումների կարիք է զգում, առավել ևս, որ հարցադրումները սպառիչ ու հիմնավորված պատասխան են ակնկալում:

Առկա տնտեսական խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին մասնագիտական մեկնաբանություն ստանալու նպատակով դիմեցինք ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, դոկտոր-պրոֆեսոր, Քաղաքացիական ազգային նախաձեռնության համակարգող խորհրդի անդամ Հայկ Սարգսյանին:

– Կուզենայի խոսել, այսպես կոչված, անհամատեղելիության սինդրոմի մասին: Անկախացումից ի վեր տեղի ունեցած վերափոխումների և փոխակերպումների ընթացքը եթե վերլուծենք, կտեսնենք, որ և՛ տնտեսությանը, և՛ հասարակությանը տեղավորել ենք այնպիսի կաղապարներում, որոնք մեզ կանգնեցրել են սոցիալ-տնտեսական քաղաքականության վերարժևորման լուրջ հիմնախնդիրների առջև: Ըստ էության, գործ ունենք անհամարժեք զարգացումների հետ, որոնք մեր հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում էլ դրսևորվում են: Իհարկե, նախ և առաջ նկատի ունեմ սոցիալ-տնտեսական համակարգը: Մասնավորապես, դրանք բաժնետիրային սկզբունքների վրա խարսխվող կառավարումն է, աշխատաշուկայի, ապահովագրական, առողջապահական, գիտամշակութային, կրթական և այլ ոլորտներում ընթացող գործընթացներն են:

1992-ի հունվարից սկսած՝ ռեֆորմները մեր տնտեսությունը տեղափոխեցին նոր ռելսերի վրա, տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծվեցին ազատ առևտրի պայմաններ, բավական թեթև է այսօր հարկային բեռը և այլն: Ֆորմալ առումով՝ գերազատականացումը ստացվեց: Այսօր կան բավարար պայմաններ և՛ օրենսդրական, և՛ տարբեր ինստիտուտների ստեղծման առումով, որպեսզի գործենք ազատական տնտեսության պայմաններում: Սակայն հարկային օրենսդրության առնչություններում պետությունը պետք է

համարժեք վերաբերմունք ունենար իր վրա վերցվող բեռի և իր կողմից տարվող սոցիալական քաղաքականության առումով: Այստեղ հստակ դրսևորվում է անհամատեղելիության սինդրոմ ասվածը: Չի կարելի շրջանցել ունեցվածքի և եկամուտների վերաբաշխման հիմնախնդիրը, քանի որ պետության՝ Սահմանադրությամբ ամրագրվող իրավական, ժողովրդավարական, նաև՝ սոցիալական կողմնորոշման չափորոշիչները ապահովելու համար անհրաժեշտ է վերաբաշխել մինչև 50 տոկոս համախառն ներքին արդյունքը:

Դա չանելով ու տուրք տալով գերազատականացմանը՝ երևութական հնարավորություն ստեղծեցինք ազատ տնտեսվարման համար՝ միաժամանակ չկարողանալով լուծել սոցիալական խնդիրները թվարկված բոլոր ոլորտներում: Եվ, բնականորեն, եթե կա այդ տնտեսական աճը, իսկ այն իրոք կա, բաշխման անհավասարությունը բնակչության բոլոր շերտերի համար իրեն զգալ չի տալիս: Կարծում եմ՝ ընդհանրապես, լուրջ հիմնախնդիր է զարգացման ռազմավարության ամբողջական մոդելի մշակումը: Տնտեսական համակարգի զարգացումը պետք է շատ որոշակիորեն ուղղել ժողովրդի զարգացման ամբողջական ռազմավարությանը: Ընդ որում՝ այդ ուղղորդումը պետք է կատարվի տնտեսության որոշակի մոդելի միջոցով, իսկ մոդելի հստակ բնութագրիչները արդեն պետք է լինեն մի կողմից՝ **նպատակադրումները**, մյուս կողմից՝ դրանց իրագործման **իրատեսական ծրագրերը**: Շատ կարևորում եմ գործուն **կառուցակարգերը**: Գործուն բառն ուզում եմ ընդգծել, քանի որ շատ դեպքերում ստեղծվում են կառույցներ, որոնք անհրաժեշտ արդյունավետությամբ դեռևս չեն գործադրվում: Ինձ համար այդպիսին է մրցակցության պաշտպանության ինստիտուտը և, ընդհանրապես, սոցիալ-տնտեսական զարգացման իրատեսական ծրագրերը պետք է մշակվեն և գործադրվեն եռամիասնական քաղաքական-իրավական-տնտեսական լուծումներ պարունակող տարբերակային տիպաշարերի զուգորդման միջոցով:

Եվ, վերջապես, ազգային տնտեսության մոդելի նպատակադրումներում շատ կարևոր է ռազմավարական և մարտավարական խնդիրների նախ՝ տարանջատումը և այդ հենքի վրա արդեն երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովումը: Իհարկե, տնտեսական աճի կայունության հարցում ունեմ լուրջ վերապահում, հատկապես՝ երկարաժամկետության առումով: Անցած տարիների զիգզագով բնութագրվող 3-10 տոկոս աճը կայուն չեմ համարում: Դա պսևդոկայուն է, որովհետև ուղեկցվում է գործազրկության բավականին բարձր մակարդակով՝ բնականոն մակարդակը գրեթե երեք անգամ գերազանցող: Բացի դրանից՝ դեռևս չի ապահովվում նաև դրամական միջոցների ցանկալի ներհոսքը: Իհարկե, լուրջ խնդիրներ կան նաև ստվերայնության առումով: Դեռևս աղավաղված է պատկերը նույն զբաղվածության հարցում. քողարկված զբաղվածություն, թաքնված գործազրկություն:

– Բայց միայն նպատակադրումների ամրագրումը բավարար է...

– Դրանց համատեքստում պետք է զուգահեռ սահմանվեն ու տրվեն նաև տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծման երաշխիքներ: Քանի որ, եթե նույնիսկ կան առանձին ոլորտների հայեցակարգեր, դրանք դեռևս լուծման երաշխիքներ չեն, առավել ևս՝ եթե չկան իրագործման բավարար պայմաններ:

– Ո՞րն է պատճառը:

– Կառավարման համակարգը և մեր կազմակերպվածության անարդյունավետությունը: Թերևս դրանք նպատակաուղղված չեն համապետական ռազմավարական խնդիրների լուծմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է կառավարության կառուցվածքին, ֆունկցիոնալ դերակատարմանը և օղակների փոխգործունեությանը: Խիստ վիճահարույց է շուրջ քսան նախարարությունների փաստը: Շատ երկրներում դրանք մեկ տասնյակ են, բայց՝ հստակ գործունեության դաշտով: Օրինակ՝ Խորվաթիայում կա ներգաղթի, բարեփոխումների և էկոնոմիկայի նախարարություն, որի անվանումն արդեն իսկ հուշում է ֆունկցիոնալ այն խնդիրների մասին, որոնք դրված են տվյալ նախարարության վրա: Այս ամենի հետևանքով գնալով խորանում է փոխադարձ չվճարումների հիմնախնդիրը: Մեզ մոտ երկու մլրդ ԱՄՆ դոլարից քիչ ավելի համախառն ներքին արդյունքի կողքին ունենք 1 մլրդ դոլարից ավելի փոխադարձ չվճարումներ, որոնք կուտակվել են ամենատարբեր պատճառներով: Այսօր շուրջ 50 հազար տնտեսվարող սուբյեկտների ճնշող մասը կաթվածահար վիճակում է: Այս փաստն արդեն վկայում է, որ մենք տնտեսապես առողջ ձեռնարկություններ քիչ ունենք, և պետք է շատ ռադիկալ լինել ձեռնարկությունների ֆինանսական առողջացման հարցերում:

– Վերադառնանք տնտեսություն-հասարակություն փոխազդեցությանը, քանի որ, նույնիսկ եթե ընդունենք աճի այդ փաստը, այդուհանդերձ, հասարակության կենսամակարդակի վրա այն չի ազդում: Ինչպես հասկանալ:

– Պատասխանի մեկ ասպեկտը քննարկվեց: Մյուսը շատ պարզ է՝ եկամուտների ցցուն գերբևեռայնացումը: Ըստ մեր կողմից իրականացված հաշվարկների, Երևան քաղաքում 5-6 տարի առաջ (իսկ ներկայումս այդ պատկերը գրեթե չի փոխվել) բնակչության 10 տոկոսը տիրապետում էր ամբողջ եկամուտների շուրջ կեսին: Տնտեսական նման աճի պայմաններում կարող է այն զգալի լինել մյուս կեսի համար: Իհարկե՝ ոչ: Եկամուտների բևեռացման մեղմացումը բարեկեցության լուրջ ռեզերվ է: Որոշ գնահատումներով՝ Հայաստանում եկամուտների բևեռացման ցուցանիշի 1 տոկոս կրճատումը համարժեք է 5-6 տոկոս տնտեսական աճին: Խնդրեմ՝ ռեզերվ: Բայց այն կյանքի կոչելու իրատեսական ծրագրեր են պետք՝ աղքատության հաղթահարման, կոռուպցիայի դեմ պայքարի և այլն:

Մեր տնտեսական անկման խորությունը բավականին ցածր է եղել, և եթե նկատի ունենանք եկամուտների անհավասարաչափ բաշխվածությունը, այդ հենքի վրա չենք կարող այսօր զգալ աճի փաստը: Կարծում եմ՝ միայն տարիներ հետո իսկապես զգալի տեղաշարժեր կարելի է ունենալ, երբ ապահովենք գոնե մեր հարևան Ռուսաստանի և Իրանի կենսամակարդակները (այնտեղ մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը գերազանցում է 3000 ԱՄՆ դոլարը):

Եվ, ընդհանրապես, մենք բնականոն զարգացման պրոցեսի մեջ կլինենք, եթե պաշտպանվի բիզնեսի իրավունքը, համապատասխան կառույցները գործեն, հարգվի օրենքը, լինի վստահություն դատարանների և ապահովագրական ընկերությունների նկատմամբ, կարողանանք ունենալ արդեն նորմալ մենեջմենթ, և բանկերը «երկար փողեր» ունենան:

– Ի դեպ, այսօր հաճախակի են դարձել մեր բանկային համակարգի սնանկացման մասին խոսակցությունները, թեև իշխանությունը ժխտում է դրանք:

– Ընդհանրապես, շուկայի հանրակարգային խնդիր կա: Եթե մասնակիցներին նայենք՝ բանկերը, ֆոնդային բորսաները, ապահովագրական համակարգերը, վարկային միությունները և այլ կառույցներ ոչ համարժեք զարգացումներ ունեն, որն էլ չի նպաստում երկրի բյուջետային գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Բանկային համակարգի զարգացումը դեռևս բավարար չի կարող գնահատվել: Նկատի ունեմ մեր բանկային կապիտալի չափերը, որոնք բավականին փոքր են ու որում, ի դեպ, կիսով չափ արտասահմանյան կապիտալն է: Բանկային ակտիվները կազմում են համախառն ներքին արդյունքի մեկ հինգերորդ մասը միայն, և, այս ամենով հանդերձ, եթե նույնիսկ համակարգի ամբողջ կապիտալը գումարենք, քիչ թե շատ խոշորամասշտաբ ծրագիր առևտրային բանկերի համակարգը չի կարող ֆինանսավորել: Երկրի խնայողությունների 15-20 տոկոսն է մտնում բանկային ոլորտ, և երբ խոսում են գերբևեռայնացման մասին, վստահություն չունեմ, որ եկամուտների 50 տոկոսը, որ 10 տոկոսի մոտ է կուտակվում, արդյոք մտնո՞ւմ և շրջանառվո՞ւմ է բանկային համակարգով: Այն, իսկապես, կարող էր լինել ներդրումային լուրջ աղբյուր:

Սակայն պետք է ասել, որ այսօր իրականացվող առողջացման գործընթացները ողջունելի են: Մասնավորապես՝ նկատի ունեմ բանկերի միավորումը, որը գուցեև ավելի վաղ պետք է սկսված լիներ: Չեմ կարող պնդել, թե մեզ քանի բանկ է անհրաժեշտ, բայց որ այս համակարգում պետք է ունենանք և՛ ունիվերսալ, և՛ մասնագիտացված բանկեր, և որ համակարգը պետք է անհրաժեշտ ապահովագրական երաշխիքներ տա ավանդատուներին՝ միանշանակ է: Վերջերս տեղեկացա, որ 2005-ին ներդրվելու է ավանդների երաշխավորվածության խնդիրը: Իսկ ինչո՞ւ ոչ ավելի վաղ: Իհարկե, միշտ ամենատարբեր

պատճառներ կարելի է վկայակոչել, բայց սա այն խնդիրն է, որը որքան շուտ լուծվի, այնքան լավ հենց համակարգի համար:

Միով բանիվ, ես թվարկեցի մի շարք հիմնախնդիրներ և դրանց լուծման անհրաժեշտությունները, որոնք տնտեսության համակառույցում կապահովեն իր՝ տնտեսության զարգացում, և հասարակությունն այդ դեպքում անպայման կզգա այդ զարգացմանը աճի ազդեցությունը:

Հարցազրույցը՝ **Կարինե Հարությունյանի**

ՇԱՏ ԱՎԵԼԻՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՏԵՂԾԵԼ

«Օրան», 10 հուլիսի, 2002

Տնտեսագիտական կրթությունը միշտ էլ հարգի է եղել, ու դեռ խորհրդային տարիներին ԵՊՀ-ի և Ժողտնտեսության ինստիտուտի համապատասխան մասնագիտացման բաժինները միշտ էլ դիմորդների գերհոսք են ունեցել: Այսօր բարձրագույն դպրոցների թիվը բազմապատկվել է, ու դրանցից շատերը իրենց համակարգում ներառել են նաև տնտեսագիտություն մասնագիտությունը: Տարեկան մի քանի հազար տնտեսագետ է «արտադրվում» մեր երկրում: «Ինչ որակ ունի այդ արտադրանքը» հարցին ի պատասխան՝ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանն ասաց.

– 80-ականների կեսերին վերստեղծված մեր «Տնտեսագիտական կիբեռնետիկա» բաժինը այսօր արդեն ծավալվել է, և հազարից ավելի ուսանողներ են սովորում կրթահամակարգի երկու մակարդակներում՝ տնտեսագետ-բակալավրի և տնտեսագետ-մագիստրոսի: Հինգ մասնագիտացումներով ավարտող շրջանավարտների նկատմամբ պահանջարկը կա, և ավելին՝ գալիս-ընտրում և տանում են թե՛ բանկային համակարգից, թե՛ պետական կառավարման ու մասնավոր բիզնեսի կառույցներից: **Ասեմ, որ վերջին երկու տարիներին մեր հանրակրթական դպրոցների մեդալակիրների մեկ քառորդը համալրում է այս ֆակուլտետը:** Հավատացնում եմ, որ այդ «պրոդուկտը» մենք չենք փչացնում: Մեր պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է արտասահմանյան մասնագետներով: Համակարգչային գիտելիքները, օտար լեզուների դասավանդումը զուգորդվում են հիմնական կրթական ծրագրերով, և եթե չենք էլ պատրաստում նեղ մասնագետ, համալսարանական կրթությունը նրանց հնարավորություն է տալիս շատ կարճ ժամանակում ամենատարբեր ոլորտներում դրսևորվել որպես լավագույն մասնագետներ: Շատ շրջանավարտներ արտերկրում են, քանի որ համագործակցում ենք եվրոպական և ռուսական համալսարանների հետ: Ցավոք, նրանց քիչ մասն է վերադառնում:

– Շատ բուհեր ունեն տնտեսագիտական ֆակուլտետներ: Այդքան տնտեսագետի կարիք ունի՞ Հայաստանի տնտեսությունը:

– Մի առիթով հաշվարկեցի՝ մոտ 7000 տնտեսագետ պատրաստվում է միայն պետական կրթական համակարգում: Եթե դրան էլ գումարենք ոչ պետական համակարգում սովորողների թիվը, որը նշվածից մի փոքր ավելի է, կստացվի, որ երկրի բարձրագույն դպրոցի յուրաքանչյուր 4-5-րդ ուսանող

ապագա տնտեսագետ է: Այսօր ծնողները, չկարողանալով իրենց երեխաների համար պրոֆեսիոնալ ճշգրիտ կողմնորոշման հարցը լուծել, հաճախ տուրք են տալիս նորաձևությանը, չեն կարողանում հաշվարկել պահանջարկը և երեխաներին ուղղորդում են սխալ ճանապարհով: Բայց նաև սա չէ, որ ինձ ավելի շատ անհանգստացնում է, այլ երբեմն այն անորակ արտադրանքը, որն առկա է տարբեր կրթօջախներում:

– Գնանք-հասնենք էլի պետական ռազմավարությանը և կարևորենք կազմակերպչական գործոնը:

– Պետական հոգածությունը կրթական համալիրին բավարար համարել չի կարելի հենց բյուջեի մասհանումների առումով: Մեր ռազմավարական մոտեցումների հիմքում պետք է լինեն մարդկային կապիտալի ձևավորմանգործադրման խնդիրները: Ծախսերի մասնաբաժինը էապես պետք է փոխվի, իսկ միջոցների համալրման հարցը արդեն առանձին խնդիր է: Մենք կարող ենք շատ ավելին ստեղծել, քան կա:

Հարցազրույցը՝ **Կարինե Հարությունյանի**

ԽՆԴԻՐԸ ՎԵՐԵԼՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է

«Օրրան», 3 դեկտեմբերի, 2002

– Ինչպիսին պետք է լինի ՀՀ սոցիալ-տնտեսական վերելքի ռազմավարությունը:

– Երկրի ռազմավարությունը բնորոշվում է համակարգված գործողությունների ամբողջությամբ և դրսևորվում է տվյալ երկրի օրինաստեղծ, համակարգային, կառուցվածքային վերափոխումներով ու փոխակերպումներով (եկեղեցի, ավանդույթներ, ԶԼՄ-ներ և այլն): ՀՀ անցման տնտեսությունում ռազմավարության առաջադրումը և արդյունավետ լուծումների որոնումը պետք է ընթանան երկրաքաղաքական, ազգային անվտանգության, ռեսուրսային (պաշարամիջոցների), սոցիալ-հոգեբանական, նոր մշակույթի հեգեմոնիայի, համեմատական առավելությունների ու այլ առանձնահատկությունների առավելագույն հաշվառման միջոցով:

Նշված պայմանների համակարգումը, համատեղ դիտարկումն ու ըստ որոշակի հայտանիշների դրանցում առաջնահերթությունների սահմանումը ինքնին բարդ խնդիր է, որը պայմանավորված է զարգացմանն ուղղված կազմակերպական միջոցառումների կանխորոշմամբ: Ընդհանուր առմամբ, դա պետք է կատարվի բազմամիասնական չափանիշների համադրման ուղիով, իսկ, մասնավորապես, երկմիասնական՝ քաղաքական և տնտեսական լուծումներ պարունակող տարբեր դիպաշարերի զարգացման միջոցով:

– Այս համատեքստում որոնք են հիմնական անելիքներն ու դրանց արդյունքները:

– Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը, անկախության ձեռքբերումից ի վեր, նպատակամղվել է ազատական տնտեսության կայացմանը: Նոր տնտեսական հարաբերություններում անցման նախաշեմին արդեն նկատելի էին որոշակի անկումային միտումներ: Դրանք հիմնականում պայմանավորված էին արտադրական հնարավորությունների գործադրման նվազ արդյունավետությամբ, արտադրության ոչ ճկուն կառուցվածքով, ներքին կոոպերացիայի ցածր՝ 5-7% աստիճանով: 1987թ. արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճը ընդամենը 0,15% էր: 1989 թ. չբավարարված պահանջարկն ավելին էր 1 մլրդ ռուբլուց: Անմխիթար էր ձեռնարկությունների ու կազմակերպությունների ֆինանսական դրությունը: Այս տարի յուրաքանչյուր երրորդ (նախկին ԽՍՀՄ-ում՝ հինգերորդ) արդյունաբերական ձեռնարկություն և

շինարարական կազմակերպություն ֆինանսական արդյունքներով ձախողել են ծրագրված ցուցանիշները, իսկ 14 տոկոսը (նախկին Միությունում՝ 6%) մնասով է աշխատում: Ռազմաարդյունաբերական համալիրի արտադրությունների ու գիտահետազոտական-փորձարարական-նախագծային կազմակերպությունների միջև տասը արտադրությունների ու մշակումների մասնաբաժինները կազմում էին ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի մինչև 12%-ը: Այդ հատվածը հետագայում, ըստ էության, կազմալուծվեց: Դա տեղի ունեցավ մասամբ կոնվերսիայի ծրագրի բացակայության պատճառով:

– Իրականացված տնտեսական քաղաքականության արդյունքում ունենք արդյոք կայուն տնտեսություն:

– Անցած տարիների վերափոխումային գործընթացի քննական վերլուծությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ իրականացված տնտեսական քաղաքականության հանրագումարային արդյունքները դեռևս չեն նպաստում կայուն տնտեսության ձևավորմանը: Այդ տարիների միջին տարեկան տնտեսական աճը մոտավորապես 3% էր, 1995-ից ի վեր՝ շուրջ 6%: Ձինի՝ եկամուտների բևեռացման գործակիցը 0,25-ից հասել է 0,59-ի (ի դեպ՝ նկատենք, որ անհավասարության 1 տոկոսային կետով նվազումը, ըստ գնահատումների, համարժեք է 5,5% տնտեսական աճին՝ Հայաստանի համար, Կորեայում՝ 1,2%, իսկ Թաիլանդում՝ 4%, որոնք Ձինի գործակիցներով բնութագրվում են, համապատասխանաբար, 0,26 և 0,44):

– Որո՞նք են մեր երկրի հզորանալու հիմնական աղբյուրները:

– ՀՀ սոցիալ-տնտեսական իրողությունները գնահատելիս չի կարելի հաշվի չառնել նաև սրընթաց վերափոխվող աշխարհի մարտահրավերները: Կարևորագույն գործոնը մասնավոր սեփականության, իրավական պետության սկզբունքների և մարդու իրավունքների ամբողջ համալիրի կենսագործման երաշխիքների առավելագույնս ապահովումն է՝ այդ գործընթացներին համարժեք արձագանքելու գործուն կառուցակարգերի ստեղծման ճանապարհով: Սա է զարգացման մայրուղին:

Հայաստանի նման փոքր և բաց երկրի հզորանալու հիմնական աղբյուրներն են ներդրումները և ինստիտուցիոնալ բարեփոխումները: Պետք է կարողանալ առաջիկա հինգ տարիներին պայմաններ ստեղծել, որպեսզի գործարկվեն առնվազն 150 հազար նոր աշխատատեղեր (գնահատումը ելնում է գործազրկության մակարդակը բնականին մոտեցնելու պահանջը): Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ մրցակցության բարձրացման հիմնախնդիրը, ինչպես ՀՀ արդյունաբերությունում, այնպես էլ գյուղատնտեսությունում, պահանջում է կապիտալի և աշխատանքի սահմանային արդյունքների թռիչքային ավելացում: Դրանք երբեմն տասը և ավելի անգամ զիջում են անցման 26 երկրների միջին ցուցանիշը: Աշխատանքի դիմաց ցածր վճարները

նպաստավոր չեն կարող համարվել ոչ միայն խթանման, այլև վատորակ մենեջմենթի և ոչ արդիական տեխնոլոգիաների գործադրման առումներով: Նոր աշխատատեղեր գործարկելու համար պահանջվելիք ներդրումները (1 աշխատատեղի ստեղծումը՝ միջինում հինգ հազար դոլար հաշվարկով) կարող են կատարվել վստահության մթնոլորտի պայմաններում՝ ներքին պոտենցիալ ինվեստորների և դրսի մասնավոր կապիտալի ներհոսքի միջոցով: Նկատենք, որ իշխանությունների կողմից բազմիցս հավաստվել է մինչև 1 մլրդ և ավելի դոլար ներդրումային պայմանագրերի ու մտադրությունների առկայությունը:

– Ինչ է անհրաժեշտ նպատակային ներդրումների խթանման համար:

– Նպատակային ներդրումների խթանումը ոչ դյուրին լուծումներ պահանջող տնտեսական հիմնախնդիր է: Դրա համար անհրաժեշտ է հստակեցնել տնտեսության ճյուղային և ոլորտային առաջնահերթությունները (էներգետիկա, ճշգրիտ սարքաշինություն, քիմիա, կրթություն և գիտություն, դրանցում՝ հայագիտություն, կենսատեխնոլոգիա, հեռահաղորդակցություն և այլն), որոնցով կսահմանվեն ՀՀ տնտեսության առաջիկա տարիների ցանկալի կառուցվածքային համամասնությունները, և դրանց առումով կուժեղացվի պետական կարգավորումը: Որոշարկել համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրացման և ռեգիոնալիզացիայի (մինչև մեկ տասնյակ ավանգարդային ձեռնարկությունների հիմնում և այլն) ռացիոնալ քաղաքականությունը այն հաշվով, որ առավելագույնս հաշվի առնվեն ՀՀ տնտեսական ներուժի համեմատական առավելությունները (սփյուռք՝ ենթադրվում է կազմակերպված, մարդկային կապիտալ՝ բազմաֆունկցիոնալ որակավորված աշխատանք) և սահմանափակող գործոնները (քաղաքական ռիսկի բարձր աստիճան, ժողովրդագրական հիմնախնդիրներ, անհեռանկարային ձեռնարկությունների ժառանգություն, նոր արժեքների կուլտիվացիայի բացակայություն):

Իհարկե, այս երկու նախապայմանների կատարումը չպետք է գերագնահատվի՝ նկատի ունենալով, որ քաղաքականության «էկոնոմիզացիայի» դերը դեռևս վճռորոշ չէ, որը բնութագրական է երկարաժամկետ, կայուն տնտեսական աճ ապահովող երկրներին, և տարածաշրջանում այն արդիական էլ մնալու է տեսանելի հորիզոնում: Հակառակ դրան, տնտեսության քաղաքականացումը դեռևս շարունակում է իրեն զգալ տալ. ներդրումներ կլանային ոլորտներում, վարկերի վերադարձելիություն՝ չկանոնակարգված երաշխիքներով և այլն: Այլ կերպ՝ նպատակային ներդրումների սլաքը պետք է ուղղվի դեպի գիտակրթական համակարգ, վենչուրային ընկերություններ (ՀՀ-ում գրեթե բացակայում են), ճշգրտման ենթակա առանձնահատուկ ոլորտներ:

2000 թ. տվյալներով, արդյունաբերական արտադրանքի շուրջ կեսը՝ արտահանման 60 %-ից ավելին, ներմուծման 70 %-ից ավելին, կապիտալ ներդրումների կեսից ավելին, բաժին են ընկնում Երևան քաղաքին: Գեղարքունիք, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ մարզերին բաժին է ընկնում մոտ 10%-ը:

– Ո՞րն է ազգային տնտեսության զարգացման քաղաքականության հիմքը:

– Ինչպես նշվել է, ազգային տնտեսության զարգացման քաղաքականության հիմքում պետք է դրվի որոշակի տնտեսական մոդել՝ իր հստակ նպատակադրումներով և միջոցներով: Այդպիսիք կարող են հանդիսանալ առաջիկա 5 տարիների համար 10 և ավելի տոկոս տնտեսական աճը, տարեկան միջինում 300 մլն դոլար ներդրումները, տնտեսության ստվերայնության կրճատումը՝ դիցուք՝ 25-30 կետով, առնվազն նույն չափ դոլարացման մակարդակի իջեցումը, առաջիկա միջնաժամկետ հատվածում, տարեկան առնվազն 30 հազար նոր աշխատատեղի գործարկումը և այլն: Տնտեսության աշխուժացումը 10 և ավելի տոկոս աճի տեմպով (1999 թ. աճի նվազումից հետո) հնարավոր է տարածաշրջանային բարենպաստ պայմանների, այդ թվում՝ շրջափակումների վերացման, հետագա մասնավորեցման, էներգետիկայի ֆինանսական առողջացման, կառավարման ողջ համակարգի էական բարեփոխումների հիմքի վրա: Ըստ փորձագիտական գնահատումների՝ 5% տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է կատարել ներդրումներ՝ ՀՆԱ-ի առնվազն մեկ հինգերորդի չափով: Նկատի ունենալով ՀՀ տնտեսական անկման խորությունը, արտադրական կարողությունների գործարկման և պոտենցիալ ներդրումային հնարավորությունները ամենատարբեր աղբյուրներից (արտերկրից՝ մասնավոր բիզնեսում, ներքին խնայողություններից, բյուջեից և այլն)՝ իրատեսական է դառնում տնտեսական աճի 10 և ավելի տոկոս մակարդակի նպատակադրումը:

– Ձեր կարծիքով՝ առաջիկա ընտրություններն ինչպիսի ազդեցություն կունենան երկրի տնտեսության զարգացման վրա:

– Ընդհանրապես՝ ցանկացած ընտրություն որոշակի շեղումներ է առաջացնում տնտեսության զարգացման գործընթացում, և դա կապված է որոշակի սպասումների հետ: Խնդիրը, տվյալ պարագայում, քաղաքական կուրսի անշրջելիությանն է վերաբերում: Խիստ կարևորում եմ ընտրական գործընթացում տնտեսական վերափոխումների և փոխակերպումների հնարավոր շեղումները, բայց, միևնույն ժամանակ, հանգիստ եմ, որովհետև չեմ կարծում, որ դրանք որոշակի ցնցումների կհանգեցնեն: Մասնավորապես, հանրապետությունում տիրող հանդարտության մթնոլորտը չեմ կարծում, որ մեծ ազդեցություն կարող է ունենալ մեր տնտեսական առաջընթացի վրա: Այլ հարց է, որ իշխանությունները պետք է ուղենշեն վերելքի ռազմավարությունը, որովհետև այն իրավիճակային գործելակերպը, որը բնորոշ է եղել

մեր անցած տարիներին, դեռևս կարճատև զարգացման խնդիրներ է լուծում: Երկարատև տնտեսական աճի ապահովումը ենթադրում է մինչև 15 և ավելի տարիների ռազմավարության առկայություն, որին, որքան տեղյակ եմ, վերջին շրջանում ձեռնամուխ է եղել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը:

Հարցազրույցը՝ **Սուսան Տոնոյանի**

ԳԵՐԽՆԴԻՐՆ Է՝ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՈՐԱԿՅԱԼ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐ

«Երևանի համալսարան» ամսաթերթ,
12 նոյեմբերի, 2004

– Պարոն Սարգսյան, թերևս, մեր զրույցը սկսենք ուսումնական գործընթացի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին խոսակցությունից:

– Ինչպես համալսարանական գիտակրթական կյանքում, մեր ֆակուլտետում նույնպես աշխատանքները նպատակաուղղվել են ուսումնական գործընթացի բարելավման բազմապրոֆիլ խնդիրների լուծմանը: Որպես չափանիշ ընդունվել է **ուսման որակի բարձրացումը**: Հայտնի են այն երեք վեկտորները, որոնցով շարժվում են հասարակությունները: Դրանք են ինֆորմացիան, շուկան և դեմոկրատիան: Մենք բացառություն չենք, և մեր գործընթացում բարելավումները պետք է փնտրել այս երեք ուղղություններում: Կուզենայի նշել, որ այդ երեք ուղղություններում էլ կան դեպի առաջ տեղաշարժեր՝ թերևս, առանձին դեպքերում ոչ ցանկալի հապաղումներով:

– Ձեր ֆակուլտետում ինչպիսի առանձնահատկություններ կան գիտելիքների մատուցման համակարգում, և ինչպես եք լուծում կադրերի ապահովման հարցը:

– Վերջին կես դարում արմատապես փոխվել է գիտելիքների գեներացիայի և հաղորդման համակարգը, իսկ գոյություն ունեցող գիտելիքների և ինֆորմացիայի ծավալը բազմակի մեծացել է: Հաշվարկված է, որ ամեն տարի նորացվում են մինչև 5 տոկոսով տեսական և 20 տոկոսով՝ պրոֆեսիոնալ գիտելիքները: Հետևաբար՝ բազային կրթությունը անընդհատ պետք է լրացնել հավելյալ կրթածրագրերով: Էկոնոմիկայի ասպարեզում դա առանձնակի նշանակություն ունի:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի 30 տոկոսից ավելին համատեղողներ են: Այս հարաբերակցության օպտիմումի որոշումը միանշանակ չէ, և ոչ էլ պատահական է այսպիսի բաշխումը: Մենք բավականին բծախնդրորեն ենք վերաբերվում հիմնական հաստիքների համալրմանը: Մյուս կողմից՝ համատեղումները հնարավոր են դարձնում ակադեմիական կրթությունը մոտեցնել պրակտիկային:

Ուսումնական ծրագրեր: Մեր համալսարանում, բարեբախտաբար, դեռևս տարիներ առաջ, իրագործվել են ուսումնական ծրագրերի

արմատական վերանայումներ, շտկումներ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ գլոբալացման արդի գործընթացից դուրս չէ նաև տնտեսագիտական կրթությունը: Տնտեսագիտության միջազգայնացումը, փողի ու կապիտալի միասնական շուկաների ձևավորման գործընթացները, պետության դերի վերանայումը, միջազգային չափորոշիչների արմատավորումը մեր կյանքի տարբեր բնագավառներում, անցումային հասարակությունների առանձնահատկությունների բացահայտումը և այլ շատ խնդիրներ նոր պահանջներ են առաջադրում տնտեսագետ մասնագետներին: Հետևաբար, համոզված եմ, որ մեր ֆակուլտետում ծրագրային բարեփոխումների միտված աշխատանքները պետք է շարունակվեն, ընդ որում՝ առավել ինտենսիվությամբ: Ֆակուլտետի կազմում ներկայումս գործող վեց ամբիոնների առարկայական ծրագրերը վերանայվել, ճշգրտվել են այն հաշվով, որ դրանք պարունակում են այսօրվա ու վաղվա տնտեսագետներին անհրաժեշտ գիտելիքների ռացիոնալ զամբյուղը, ապահովում են օպտիմալ հաշվեկշիռը բակալավրիատում և մագիստրոսական մասնագիտացումներում: Կազմվել և առանձին գրքույկներով հրատարակվել են բակալավրիատի, մագիստրատուրայի ընդհանուր, մասնագիտական դասընթացների առարկայական ծրագրերը:

Կազմակերպչական այս աշխատանքներն իրագործվել են մեր ընդհանուր ջանքերով, մասնավորապես, ֆակուլտետի ամբիոնների վարիչների և առաջատար դասախոսների ուժերով ստեղծված մեթոդական խորհրդի կողմից, որը նպատակամղվելու է կրթությունը առավել ճկուն դարձնելուն, կրթական ստանդարտի անդրադարձը կյանքի մեջ հնարավորինս ապահովելուն: Եվ այս ամենի նպատակը մեկն է՝ մեր շրջանավարտներով աշխատատեղերի համալրման պահանջարկի առավելագույնս բավարարումը:

Գիտություն, կադրերի աճ, հրատարակումներ: Բուհական գիտության ընդհանուր ֆոնի վրա բացառություն չի նաև մեր ֆակուլտետը: Այն այսօր չի առանձնանում իր կատարելությամբ, թեև պոտենցիալ հնարավորություններն ավելի մեծ են:

Չեմ անդրադառնում ամբիոնների գիտական հետազոտությունների առանձին ուղղություններին, սակայն ակնհայտ է, որ մենք դեռ չունենք ամբիոնական, միջամբիոնական ուղղությունները կանխորոշող ամփոփ թեմաներ: Սա հատկապես կարևորվում է մեր գործունեության ընթացքում գիտական և մանկավարժական բաղադրիչների զուգորդման անհրաժեշտության տեսանկյունից:

Պետպատվերի գերսուղ ֆինանսավորման, այսպես կոչված՝ դրամաշնորհային հետազոտությունների սակավության պայմաններում անգամ ուսումնագիտական աշխատանքների ակտիվությունը վերջին տարիներին ավելի նկատելի է: Մասնավորապես, ֆակուլտետի առաջատար դասախոսները

լծվել են դասագրքաստեղծման դժվարին գործին, և այսօր մենք ունենք հաջողված օրինակներ:

Ֆակուլտետում ստեղծում ենք գիտական գործուն մթնոլորտ՝ դրանում ներգրավելով մագիստրոսներին, ասպիրանտներին: Մենք պարտավոր ենք տարբեր երաշխավորագրեր, տնտեսական օրինագծերի վերաբերյալ նկատառումներ ներկայացնել ՀՀ գործադիր և օրենսդիր մարմիններին:

Համագործակցություն: Այս բնագավառում վերջին տարիներին առկա է նկատելի առաջընթաց, սակայն չպետք է սահմանափակվել դրանով:

ԵՊՀ համագործակցության ծրագրերի շնորհիվ ավելի է բարձրացել ֆակուլտետի հեղինակությունը, ավելացել է ֆակուլտետում սովորել ցանկացողների թիվը (շուրջ 250 ուսանող՝ յուրաքանչյուր տարի): Հանրապետության դպրոցների մեդալակիր շրջանավարտների մոտ 1/3–1/4-ը վերջին 4-5 տարիներին դիմում է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ: Ֆակուլտետին կից բացվել է ոչ տնտեսագիտական բարձրագույն կրթությունների համար չորս տարվա տնտեսագիտական կրթական նոր համակարգ (2-րդ մասնագիտություն), որի գործունեության չորրորդ տարին է: Երկու լսարան ամբողջովին կահավորված են ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնոյի պետական համալսարանի հետ համագործակցության շնորհիվ, ուսանողներն օգտվում են ինտերնետային կապից, նախապատրաստում են իրենց կուրսային և բակալավրիատի ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը և թեկնածուական ատենախոսությունները, իսկ դասախոսները նախապատրաստում են իրենց կողմից կարդացվող դասընթացները:

Ֆակուլտետի կապերը ՌԴ, ԱՄՆ և Եվրոպայի մի շարք համալսարանների հետ պետք է ամրագրվեն գործնական արդյունքներով: Համալսարանների հետ գոյություն ունեցող ծրագրերով նախատեսված փոխայցելությունները հետապնդում են մի շարք նպատակներ՝ ուսումնական ծրագրերի բարելավում, կոնկրետ կուրսերի յուրացում և ներդրում, նյութատեխնիկական բազայի ամրապնդում: Այս նախագծերը կամուրջներ են համալսարանների միջև, և այդ կամուրջներով պետք է անցնեն մեր այն դասախոսները, մագիստրանտները և ուսանողները, ովքեր գիտեն, թե ինչի համար են այդ կամուրջները գցվել: Կուզենայի նշել, որ TEMPUS-ի՝ բարձրագույն կրթության ոլորտում տրանս-եվրոպական սխեմայի հայտերի 25-30 տոկոսը տնտեսագիտությունից են, և մենք այստեղ ևս ունենք լրացուցիչ հնարավորություններ:

Նշենք նաև, որ մեր ֆակուլտետի, Մոսկվայի պետհամալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի և ՌԴ կառավարությանն առընթեր ժողտնտեսության ակադեմիայի միջև համագործակցության շրջանակներում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են պարբերաբար կազմակերպվող

մեթոդխորհրդի նիստերին, ունեցել ենք նպատակային տեղեր ինչպես ուսանողների, այնպես էլ ասպիրանտների համար:

– Ինչպիսին է կապը «տնտեսություն-տնտեսագետ մասնագետներ» շղթայում:

– Հայաստանի սոցիալ-տնտեսական վերելքի ապահովման դժվարին խնդիրների լուծման գործընթացում որոշակի ակնկալիքները պայմանավորված են նաև բարձր որակավորում ունեցող տնտեսագետ կադրերի պատրաստմամբ: Մեր գերխնդիրն է այսուհետ ևս հետամուտ լինել այդ պրոբլեմների լուծմանը: Կադրերի պահանջարկը մեծ է: Ժամանակակից տնտեսության 50 հազարից ավելի տնտեսվարող սուբյեկտները կարիք ունեն համալրվելու բանիմաց մենեջերով, ֆինանսիստով, շուկայագետով, միջազգայնագետ-տնտեսագետով և մոդելավորող ու ինֆորմացիոն համակարգերի տիրապետող մասնագետներով, որոնք կկարողանան օպտիմալ որոշումներ կայացնել ռիսկի և անորոշության պայմաններում: Բացի դրանից՝ մեր գիտակրթական օջախները նաև տեսաբան տնտեսագետների լուրջ պակաս ունեն: Այս ուղղություններով մենք աշխատում ենք ԵՊՀ–ի վարկանիշին համապատասխան մասնագետներ պատրաստել:

Վերջում կցանկանայի ընդգծել մեր՝ ինչպես վաստակաշատ, այնպես էլ երիտասարդ, խոստումնալից դասախոսների ավանդը մեր նորօրյա խնդիրների լուծման ասպարեզում, շնորհավորել բոլորիս ԵՊՀ-ում տնտեսագետ կադրերի պատրաստման «70-20» հոբելյանի կապակցությամբ:

Հարցազրույցը՝ **Վ. Մաղալյանի**

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՏԵՍԱԿԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

«Հայաստան», 28 հոկտեմբերի, 2011

«Հայացք»-ի հյուրն է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, հանրային խորհրդի անդամ, 2011 թվականին Սինգապուրում անցկացված «Ասիայի 2-րդ լավագույն տնտեսագիտական դպրոցների պարգև» մրցանակաբաշխության շրջանակներում «Տնտեսագիտության լավագույն պրոֆեսոր» միջազգային մրցանակին արժանացած Հայկ Սարգսյանը:

– Պարոն Սարգսյան, անցումային փուլում գտնվող մեր հանրապետության տնտեսության զարգացման համար շատ կարևոր է տնտեսական կադրերի պատրաստումը: Այդ գործընթացը բավարար հիմքերի վրա է: Քանի որ պետական բուհերից բացի՝ տնտեսագետների պատրաստմամբ զբաղվում են նաև ոչ պետական և արտասահմանյան որոշ բուհերի հայաստանյան մասնաճյուղերը, և մեզ անհրաժեշտ են այդքան տնտեսագետներ:

– ՀՀ-ում կան 60 հազարից ավելի տնտեսվարող սուբյեկտներ, որոնք լավ տնտեսագետների կարիք ունեն, իսկ տնտեսագետն իր էությամբ պետք է լինի փնտրող և ռազմավարական ու իրավիճակային լուծումներ գտնող: Մեր նպատակն է այդպիսի հատկանիշներով օժտված երիտասարդներին դարձնել որակյալ մասնագետներ: Տնտեսագիտական ֆակուլտետում ուսուցման տարբեր ձևերում ու մակարդակներում սովորում է 2000-ից ավել ուսանող: Ավարտելով բակալավրիատը՝ ուսանողները ստանում են տնտեսագետի որակավորում, որը համարվում է լիարժեք բարձրագույն կրթություն: Հաջորդ կրթական աստիճանը մագիստրատուրան է, որտեղ կրթությունն իրականացվում է 5 մասնագիտական ամբիոններում՝ տնտեսագիտական տեսություն, տնտեսության մոդելավորում, կառավարում և գործարարություն, ֆինանսահաշվային և միջազգային տնտեսագիտություն: Կան համանուն մասնագիտական ծրագրեր, այս տարվանից գործում են նաև տնտեսական քաղաքականություն և իրավունք, ֆինանսատնտեսական ոլորտի մոդելավորման նորաբաց ծրագրերը (վերջինս իրականացվում է Կենտրոնական բանկի հետ համատեղ):

Մեր շրջանավարտները կարողանում են ուսումը շարունակել արտասահմանյան հեղինակավոր համալսարաններում: Նրանցից երկուսը Հարվարդի համալսարանն ավարտելուց հետո աշխատում են բրիտանական

կառավարության համակարգում: Որակյալ մասնագետների պատրաստման առումով ԵՊՀ-ի տնտեսագիտականը մրցունակ է բոլոր պետական և արտասահմանյան մասնաճյուղերի համանուն ֆակուլտետների հետ այն պարզ պատճառով, որ աշխատաշուկայում քննություն բռնած մեր շրջանավարտները ոչ միայն այստեղ, այլև դրսում պահանջված մասնագետներ են:

– Հայաստանի տնտեսության համար ո՞ր հիմնախնդիրներն են օրակարգային:

– Այսօր շատ է խոսվում եվրոյի գոտում ընդգրկված պետությունների կառավարությունների խնդիրների մասին, որոնցից յուրաքանչյուրի գործելակերպը պայմանավորված է գլոբալ ֆինանսատնտեսական տարածքում պարտքային ճգնաժամով ու դեֆիցիտով: Աշխարհում փողը շատ է, սակայն այն պետք է կարողանալ ստեղծված արդյունքներին համաչափ ծախսել, և եթե ֆինանսական այդ կարգապահությունը խախտվել է, ապա պետությունները խնդիրներ են ունենում: Գալով Հայաստանին՝ պետք է ասեմ, որ մեզ համար ճգնաժամի 2-րդ ալիք կարող է զգացվել հատկապես մեզ հետ հաղորդակից առևտրային գործընկեր երկրների տնտեսությունների վիճակի առումով: Ես կարծում եմ, որ ճգնաժամին դիմակայելու հնարավորությունների մեծացումը, մեր տեսական օրգանիզմի իմունային համակարգի ամրապնդումը պայմանավորված կլինեն մեր տնտեսության զարգացմամբ, տնտեսության մեջ լուրջ կառուցվածքային տեղաշարժերի իրականացմամբ:

– Իսկ ո՞րն է մեր տնտեսության գերխնդիրը:

– Հարկավոր է մեր տնտեսության արտահանելի հատվածի վրա ավելի մեծ ուշադրություն դարձնել: Հայաստանի տնտեսությունը 1990-ական թվականներից ժառանգել է ոչ կենսունակ տնտեսություն, մենք կարծես թե կցահանգույց լինեինք ԽՍՀՄ-ի միասնական ժողովրդատնտեսական համալիրում, շատ փոքր կոոպերացիայի աստիճանով՝ 5-7%: Ամբողջատիրական այդ համակարգի փլուզումից հետո մենք կարողացանք միայն 2005-ին վերականգնել մեկնարկային դիրքերը, հետագա տարիներին տնտեսությունը արձանագրեց «աճ»: Անցել է երկու տասնամյակ, և լավ կլիներ, որ 15-20 տարի անց մենք արդեն բացարձակ այլ դիրքերից խոսեինք առաջիկա տարիների իրավիճակի մասին: Այս առումով կարևորում եմ արտահանումը, դրա ծավալի ավելացումը և կառուցվածքի բարելավումը, քանի որ լուրջ առաջընթացի համար այլընտրանք չունենք: Այդ ամենը իրականացնելու համար պետք է քաջատեղյակ լինել տնտեսական բազմապատկման աղյուսակին, ինչը հնարավորություն կտա ներդրումների միջոցով հարաճուն աճ ապահովել: Հարկ է լուծել մի շարք խնդիրներ. առաջին՝ արտահանման ներուժի բացահայտում ոչ միայն ներկա արտահանման հատվածում: Չպետք սահմանափակվել միայն թանկարժեք քարերի, լեռնամետալուրգիական արտադրանքի՝ խտանյութի, և

խմիչքների արտահանմամբ, որն այսօր արտահանման ծավալում գերազանցում է 2/3-ը: Այդ ներուժը շատ ավելի ընդգրկուն է, ներառում է ֆինանսական, ծրագրավորման, կրթական, առողջապահական և այլ ծառայություններ, բարձր տեխնոլոգիաների և սարքավորումների արտահանում և վերջապես ավանդական՝ հողի, ջրի, մարդկային կապիտալի հնարավորությունների առավելագույն գործադրում: Տնտեսական բազմապատկման աղյուսակի հաջորդ ազդակը յուրօրինակ ՆԷՊ-ն է (наведение элементарного порядка): Դա նոր տնտեսական քաղաքականությունը չէ. ես նկատի ունեմ ֆինանսատնտեսական կարգապահությունը, մրցունակ գործարար միջավայրի ստեղծումը, քանզի համոզված եմ, որ ինչպես ներդրումների, այնպես էլ արտահանման համար այդ պայմանները անկասելիորեն պետք է ապահովվեն:

Եվ այս հենքի վրա կարևորում եմ երրորդ՝ ոչ պակաս պայմանը. դա հավակնոտ ծրագրերի իրագործումն է, այսինքն՝ պետք է բավարարվենք ոչ միայն նոր ատոմակայանի կառուցմամբ, գազի ներկրման ծավալների ավելացմամբ կամ լեռնամետալուրգիական համալիրում ձեռք բերած արդյունքով, այլ նաև այդ արդյունքները բազմապատկելու ուղիներ փնտրելով: Հաջորդ կարևոր խնդիրը արտահանելի հատվածի վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումների իրականացումն է: Ի վերջո, անհրաժեշտ է տեսնել, թե այս մեխանիզմների ու գրավչության պայմաններում ինչպիսի տնտեսություն կունենանք 10-20 տարի անց: Տնտեսության բազմատեսակայնացումը այն նախապայմանն է, որը կապահովի մեզ երկարատև, կայուն տնտեսական աճ վերելքի ռազմավարության պայմաններում: Եթե դա չունենանք, մնացածը քիչ էական է:

Հարցազրույցը՝ **Անուշ Ներսիսյանի**

ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԸ ՃԱՆԱՉՎԵԼ Է ԼԱՎԱԳՈՒՅՆԸ

«Երևանի համալսարան» ամսաթերթ, №8, 2011

ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանն արժանացել է «Տնտեսագիտության լավագույն պրոֆեսոր» միջազգային մրցանակի:

Մրցանակը շնորհվել է «Ասիայի լավագույն տնտեսագիտական դպրոցների պարգև» 2-րդ մրցանակաբաշխության շրջանակներում, իսկ պարգևատրման արարողությունը Սինգապուրի Սունտեկ քաղաքում տեղի է ունեցել 2011 թ. հուլիսի 22-ին: Մրցույթը, որ ընդգրկել է բոլոր մայրցամաքների 29 երկիր, անցկացվել է երկու կատեգորիաներով՝ կազմակերպություններ և անհատներ: Պարգևատրման մասին որոշումը կայացվել է մարքեթինգի, հանրային հարաբերությունների, բիզնես ռազմավարության և կորպորատիվ հաղորդակցության բնագավառների 15 փորձառու մասնագետներից կազմված ժյուրիի կողմից: Մրցանակների շնորհման չափանիշներն էին հավակնորդի գիտահետազոտական նվաճումները, ստեղծարար աշխատանքը, գիտակրթական ոլորտում ներդրած ավանդը և այլն: Մրցանակաբաշխության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ընտրությունը կատարվել է առանց մասնակիցների գիտության:

Ինչպես նշեց պարոն Սարգսյանը, մրցանակին արժանանալն իր համար չափազանց հաճելի անակնկալ է եղել. «Շատ հաճելի է այդ գնահատանքը, որին, ըստ իս, արժանացել եմ սկսած դեռևս ութսունականներից (ժամանակաշրջան, երբ տնտեսագիտությունն առավելապես գաղափարայնացված գիտությունն էր) իմ կողմից էկոնոմիկայի ոլորտում կատարված գիտահետազոտական աշխատանքների համար, որոնցում մշակվել են տնտեսության կառավարման ժողովրդավարական կառուցակարգեր՝ շուկայական մոդելների գործադրմամբ: Կարծում եմ՝ սա նաև ԵՊՀ-ի աշխատակցին տրված գնահատական է»:

Հ.Գ. Հայկ Սարգսյանը 1970 թ. ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում և ուսումնառությունը շարունակելով նույն բուհի ասպիրանտուրայում: Տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան ստացել է 1990-ին Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ կենտրոնական տնտեսագիտական-մաթեմատիկական ինստիտուտում պաշտպանելով «Ռեգիոնների սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը:

1975-ից Հայկ Սարգսյանը դասախոսական աշխատանքի է անցել ԵՊՀ-ում: Աշխատել է նաև Ժողովրդական տնտեսության և ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտներում, ՀԿԿ Կենտկոմում, ՀՀ էկոնոմիկայի պետական կոմիտեում, այնուհետև՝ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ: 1994-ից շարունակել է աշխատել ԵՊՀ-ում: 2000-ից ֆակուլտետի դեկան է:

Հեղինակել է չորս մենագրություն, բուհական մի շարք դասագրքեր և հարյուրից ավելի գիտական հոդվածներ և զեկույցներ:

Նյութը՝ **Ծովինար Կարապետյանի**

ՍՑԵՆԱՐ՝ ԸՆԴԴԵՄ ՀՀ ՃԳՆԱԺԱՄԻ

ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի «դեղատոմսը»

«Առավոտ» օրաթերթ,
2 դեկտեմբերի, 2011

ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը վերջերս Սինգապուրում անցկացված «Ասիայի լավագույն տնտեսագիտական դպրոցների պարգև» երկրորդ մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է «Տնտեսագիտության լավագույն» պրոֆեսոր հեղինակավոր մրցանակի: «Առավոտի» հետ զրույցում պարոն Սարգսյանը նշեց, որ անչափ կարևորում է այդ մրցանակաբաշխությունը, որին մասնակցել է 29 երկիր, ժյուրին էլ ներկայացուցչական է եղել: Պարզեցինք, որ Հայկ Սարգսյանը հայտ չի ներկայացրել, այլ միանգամից հրավեր է ստացել՝ մասնակցելու մրցույթին: Ավելի ուշ նա ինտերնետից տեղեկացել է չափանիշների ու սկզբունքների մասին: Պրոֆեսորը կարծում է, որ իրեն մրցանակ են շնորհել ինչպես գիտահետազոտական, այնպես էլ գիտակրթական գործունեություն ծավալելու համար:

Մրցանակակիր տնտեսագետին ու ճանաչված մասնագետին հարցրինք տնտեսական ճգնաժամի նոր փուլի մասին զանազան գնահատականներ են հնչում, իր կարծիքով՝ նոր ճգնաժամի ալիքը ինչպե՞ս կարող է ազդել Հայաստանի վրա: Մեր զրուցակիցը նշեց, որ տարբեր վարկանիշային կազմակերպությունների կողմից հնչող կարծիքները երբեմն լավատեսական են, երբեմն՝ զգուշացնող: Նրա խոսքով՝ ճգնաժամը բնույթով պարտքային է, որը մասշտաբային ընդգրկումներ է ունենում. «Անվճարունակությունը մասամբ հետևանք է այն բանի, որ եվրոտան անդամների ծախսերն ու արդյունքները անհամաչափ են: Իրավիճակը այսօր սրվել է եվրոգոտու շրջանակներում, որն իր անդրադարձը կունենա նաև գործընկեր երկրներում: Ճգնաժամի առաջին ալիքից հետո, որը մարեց 2010 թվականին, կարծում եմ՝ անհրաժեշտ դասեր չքաղվեցին, բավարար հետևողականություն չդրսևորվեց սնանկին, անվճարունակին առողջացնելու հարցում: Բնության մեջ էլ է այդպես՝ թույլը, հիվանդը, տկարը ենթարկվում են սանիտարական մաքրման: Տնտեսության մեջ խնդիրը մեկն է՝ հնարավոր է հստակ, ծրագրային գործընթացներ իրականացնել բանկրոտներին առողջացնելու հարցում: Դա կարող է լինել և՛ երկիրը, և՛ ընկերությունը, և՛ մի ամբողջ ոլորտ, իսկ մեթոդները տարբեր կարող են լինել»: Պարոն Սարգսյանը ասելիքը մանրամասնեց Հայաստանի տնտեսության օրինակով.

«Ճգնաժամի նոր ալիքը մեզ կարող է հարվածել միջնորդավորված՝ գործընկեր երկրների միջոցով, արտաքին ազդակները կապված են մի կողմից՝ Եվրոպայի և ՌԴ հանքարդյունաբերության արտադրանքի, մետաղների, քարերի և այլնի արտահանմամբ, մյուս կողմից՝ մասնավոր տրանսֆերտների և օտարերկրյա ներդրումների տեսքով դրամական ներհոսքի ծավալների կրճատմամբ: Մենք ինչ անելիքներ ունենք, որպեսզի առավելագույնս կարողանանք դիմակայել սպասվող տնտեսական վերահաս անկմանը: Բնականաբար, պետք է մեծացնենք տնտեսության դիմադրողականությունը՝ ամեն տիպի ճգնաժամի հաղթահարման առումով, որը կարող է պայմանավորված լինել մեր տնտեսության մրցակցության ցանկալի մակարդակով: Մենք այլընտրանք չունենք, բարեբախտաբար կորցրել ենք մեր համեմատական առավելություններից մեկը՝ էժան աշխատուժի երկիր լինելը: Միջին աշխատավարձը արդեն գերազանցում է 110000 դրամը: Այնպես որ, վերելքի ճանապարհը ինտենսիվ գյուղատնտեսությունն է լինելու՝ բարձր արտադրողականությամբ, բարձր տեխնոլոգիաները, կրթական և առողջապահական ծառայությունների մատուցումը, այլ կերպ ասած՝ արտահանման ամբողջ պոտենցիալի բացահայտումը և գործադրումը: Մեզ մոտ արտահանման տեմպը կարող է առաջանցիկություն ապահովել ՀՆԱ-ից, ստիպված ենք առաջիկա 10-15 տարիների կտրվածքով արտահանման ծավալները հասցնել 30-40%-ի: Մյուսը մրցունակության գերխնդիրն է: ԽՍՀՄ-ից ժառանգել ենք ոչ կենսունակ տնտեսություն՝ տոտալիտար համակարգի փլուզումից հետո կանգնելով կոտրած տաշտակի առաջ: միայն 2005-ին ենք կարողացել վերականգնել մեր մեկնարկային դիրքերը: Արտահանման խնդիրը հարկ է, որ լուծվի մեր ավանդական՝ հողի, ջրի, մարդկային կապիտալի հնարավորությունների առավել գործադրման միջոցով: Մյուս խնդիրը համարում եմ, այսպես կոչված, էֆեկտիվ տնտեսություն ունենալը՝ յուրօրինակ ազդակի առավելագույնս գործադրումով, որը պայմանականորեն անվանում եմ նոր տնտեսական, ռուսերեն՝ НЭП (наведение элементарного порядка): Նկատի ունեմ ֆինանսատնտեսական կարգապահությունը, մրցունակ գործարար միջավայրի ստեղծումը, քանզի համոզված եմ, որ ինչպես ներդրումների, այնպես էլ արտահանման համար այդ պայմանները առաջնային են»: Մասնագետի համոզմամբ՝ հաջորդ կարևոր քայլը ճշգրիտ կանխատեսումների իրականացումն է. «Ճիշտ պրոգնոզներն է հարկավոր իրականացնել՝ սցենարներով... ճիշտ պետք է կանխատեսել տնտեսության բազմատեսակայնացման (դիվերսիֆիկացիայի) հնարավորությունները, կանխատեսել՝ ինչը կարող է ապահովել երկարատև, կայուն տնտեսական աճ՝ վերելքի ռազմավարության պարագաներում»:

Մեր զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև պետական և մասնավոր բուհերի կողմից չափից շատ տնտեսագետների «թողարկմանը»:

«Տնտեսագետների «թողարկումը» տարակարծություն է առաջացնում: Կոպիտ ասած՝ այսօր ով չի ալարում, տնտեսագետ է պատրաստում, որովհետև կա պահանջարկ: Մյուս կողմից էլ՝ թվաքանակը ուռճացված չէ, որովհետև եթե նայենք աշխարհում մասնագիտությունների սանդղակին, նորմալ է, որ տնտեսագետները մինչև 20% կազմեն: Կարծում եմ՝ մեր կառավարությունը չի սխալվել այդքան պետական պատվերով և վճարովի համակարգով տնտեսագիտական մասնագիտությունների գծով տեղեր հատկացնելու հարցում. Մեր տնտեսությունը լավ մենեջերի, մարքեթոլոգի, ֆինանսիստի, հաշվապահի, ագրոնոմի և այլ մասնագետների կարիք ունի: Դեռ կգա ժամանակը, որ գործարարները կնայեն ոչ թե դիպլոմներին, այլ գիտելիքներին: Տնտեսագետի մասնագիտությունը այսօր հիմնովին փոխվել է: Օրինակ՝ եթե նախկինում հաշվապահը ընդամենը բալանսներ էր կառուցում՝ մուտքերի և ելքերի, այսօր պետք է կարողանա ֆիրմայի մենեջերի կողքին երաշխավորություններ մշակել՝ անորոշությունների պայմաններում գործելու, ռիսկի դիմելու հարցերում: Իմ գնահատականներով՝ այնուամենայնիվ, 50-60 հազար լավ տնտեսագետի կարիք ունենք»,– նշեց պարոն Սարգսյանը:

Գոհար Հակոբյան

ՀԱՅԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

«ԷԿՈՆՈՄԻԿԱ» պարբերական հանդես,
հունվար, 2012/1

Հարցերի այն շրջանակը, որը քննարկման առարկա է դարձել «Էկոնոմիկա» պարբերականի կողմից, բավականին ընդգրկուն է և հրատապ, եթե ինդրին նայում ենք երկարաժամկետ կայուն զարգացման տեսակետից:

– Խոսակցության այնպիսի շրջանակ ենք ընդգրկել, որը չի պարփակվում մեկ մասնագիտության տիրույթում: Հարցը փիլիսոփայական է, հոգեբանական է. ըստ էության, խոսում ենք ազգային ինքնության մասին, որի համապարփակ քննարկման դեպքում առաջնայինը տնտեսագետի մոտեցումը չէ: Դիտարկումների առարկան շատ ավելի իմացաբանական գիտելիքներ է պարունակում: Մեկ-երկու հիշատակում: Մեր ազգին վերջի շրջանում շատ հայտնի անձի կողմից տրվեց «համաշխարհային ազգի» որակում: Զուգահեռ՝ որպես իրողություն, սրա կողքին շրջանառվում է՝ «որտեղ հաց, այնտեղ կաց» սկզբունքով ապրողների շրջանակը: Մենք հստակ առանձնացրել ենք մյուս ազգերից հետևյալ կերպ. անհասկանալի ինչ-որ մի մոլուցքով ցանկացել ենք միշտ առաջին խրամատում լինել: Վերհիշենք անցյալ դարի ամբողջ պատմության ընթացքը: Երիտթուրքերին իշխանության բերելու հարցում հայերը շատ մեծ դերակատարություն են ունեցել, հետո տեսան, թե ինչ բերեցին իրենց գլխին այդ ոճրագործները: Երկրորդ օրինակը. Ռուսաստանում հեղափոխության ժամանակ վերցրեք Լենինի հայ զինակիցների ցուցակը: Լենինի անմիջական շրջապատում էին շատ տաղանդավոր հայեր: Արդյունքում, էլի մենք շատ մեծ կորուստներ ունեցանք, ընդհուպ՝ տարածքներ նվիրեցին մեր թշնամուն: Այն, որ անկախությունը բաղձանք էր, անվիճելի է: Ժամանակի առումով, միևնույն է, քանդվելու էր այդ ամբողջատիրական համակարգը, բայց մենք կրկին առաջինը լինելու պահը չէինք ուզում բաց թողնել... Անցնենք այսօրվա իրավիճակներին՝ գոյատևելու, վերընձյուղման, ազգային զարթոնքի ֆոնի վրա այսօրվա իրողություններին:

Այսօր կարելի է արձանագրել, որ անցած երկու տասնամյակում մեր ձեռքբերումները համեստ են: Չհամակարգված տնտեսության քաղաքականության արդյունքում ունեցել ենք տարաբնույթ բացթողումներ ու կորուստներ: Ի վերջո, անհանգստացնող է զրկանքների սոցիալական գինը:

ՀՀԿ վերջին համագումարում տնտեսական քաղաքականության վերաբերյալ ՀՀ նախագահի դիրքորոշումները հուսադրող են: Խոսքը վերաբերում

է տնտեսական աճից տնտեսական զարգացում ապահովելուն ուղղված բանաձևումին: Հիրավի, մարդկային զարգացման համատեքստում տնտեսական աճը միշտ չէ, որ դրական ազդեցություն է ունենում աղքատության մեղմացման հարցում: Աղքատության, կոռուպցիայի հաղթահարման, ներգաղթի խթանման պատնեշները մարդկային համապարփակ զարգացման պահանջների իրագործումն է, որի համար անբեկանելի է դառնում առաջիկայում համալիր մի շարք ծրագրերի իրագործումը: Այդ ծրագրերը մեր երկրի փոքր և բաց տնտեսության համար պետք է ոչ միայն իրատեսական, այլև մասշտաբային ու հավակնոտ լինեն:

Իհարկե, ստեղծված իրավիճակից անցումը դեպի վերելք դժվար է, սակայն այլընտրանքը չկա, իսկ այսօրվա նեգատիվ դրսևորումների պատճառները պետք է տեսնել դրանց ակունքներում: Ինքս գյուղի ծնունդ եմ և լավատեղյակ, թե ինչ է կատարվում գյուղերում, դեռ 90-ականներին հողի սեփականաշնորհման ժամանակ կրկին բարձրաձայնում էինք, թե մենք առաջինն ենք, բայց հետագայում տեսանք, որ գյուղացին մենակ մնաց իր լոսկուտ հողակտորներով, որովհետև ենթակառուցվածքները չստեղծվեցին, որպեսզի ամրապնդվեն պետականորեն իրականացվող այդ կարևորագույն ակցիան: Սակավահող մեր երկրում այսօր վարելահողերի մեկ երրորդը չի օգտագործվում: Այդ ամենի ակունքները ձևավորվել են 90-ականներից: Եվ ահա՝ ազգի տեսակ է ձևավորվում՝ որտեղ հաց, այնտեղ կաց:

Աղքատության մակարդակը ավելացել է: Դրա կողքին կա ևս մեկ տագնապալի իրողություն՝ մենք ռացիոնալ սնման ասպարեզում ոչ միայն աղքատ ենք, այլև թերսնվում ենք: Հարևանների հետ՝ Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, Իրան, վիճակագրական համեմատությունը տարօրինակ պատկեր է ցույց տալիս՝ աղքատության բարձր ցուցանիշ, թերսնման տագնապալի փաստ, բայց՝ բջջային հեռախոսների բաժանորդների թվում առաջինն ենք՝ 100 մարդուն 123 բջջային հեռախոս է հասնում:

Այսօր արձագանքներն էլ են բևեռացված, այստեղ էլ չկա միջին որակական գնահատականը, Կուզենայի, որպեսզի լուծումները տեղափոխվեին հնարավորինս կառուցողական և հավակնոտ բնագծեր: Որքան էլ բարձր տեխնոլոգիաների մասին խոսենք, արտահանման ուղղությունները առաջնային հիմնախնդիր դարձնենք, միևնույն է՝ չպետք է մեր բնական ռեսուրսները անտեսենք, որոնք բոլորովին էլ մոլիբդենն ու պղինձը չեն, այլ հողը, ջուրը, մարդը: Ինչ է նշանակում անտեսել այս ռեսուրսները: Նախկինում ասում էինք, որ ջերմուկով կպահենք Հայաստանը, բայց այսօր վստահաբար կարելի է ասել, որ ջրային ռեսուրսով կարելի է տարածաշրջանում գերիշխող դիրք գրավել: Ավելին՝ ես ասեմ, որ այս խնդիրը ունի վաղեմություն: Դեռևս ՀՀ առաջին նախագահը 1992-ին Ռիո դե Ժանեյրոյում միջազգային

մակարդակով բարձրացրել է ջրային ռեսուրսների առումով Հայաստանի դերը: Ոչ հեռու ապագայում տարածաշրջանային լուրջ խնդիր կարող է դառնալ և՛ խմելու, և՛ հանքային ջրերի պաշարների հիմնախնդիրը: Սևանի ջրերի յուրաքանչյուր մետր բարձրացումը և դրա ոչ ոռոգման նպատակներով օգտագործումը կարող է մեծ դեր խաղալ: Ահա սա կարող է դառնալ կառավարության հեռանկարային և հավակնոտ ծրագրերից մեկը: Մենք չենք կարող առանց նոր ատոմակայանի արդյունաբերություն զարգացնել և այդ հենքի վրա արտահանման հարց լուծել: Խնդիրները շատ են, բայց ես ուզում եմ լավատեսորեն վերաբերվել իրականացվող ծրագրերին: Օրինակ՝ կրթության հիմնախնդիրը: Վարչապետի ձևակերպումը շատ տեղին է՝ հայ ընտանիքին նա աղքատ է համարում, եթե երեխային կրթություն տալու հնարավորությունից զրկում են: Իսկ այդ հնարավորությունը մեր պետությունը պետք է ստեղծի: Սա լուրջ մոտեցում է: Վերջերս Հունաստանում էի, լուրջ պրոբլեմներ ապրող այդ երկրում դեռևս պահպանում են պետական պատվերի տեղեր, այլ երկրներից հրավիրում են ուսանողներ, որպեսզի նրանք դառնան իրենց դեսպանները տարբեր երկրներում:

Որովհետև պիտի կարողանաս քո ինքնատիպությունը տարածել, որովհետև աշխարհը հետաքրքիր է այդ ինքնատիպության ամբողջությամբ:

ՎՍՏԱՀԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Երևանի Համալսարան» ամսաթերթ,
2 հոկտեմբերի, 2012

Երևանի պետական և Դոնեցկի ազգային համալսարանները հոկտեմբերի 18-ին թարմացրին 6 տարի առաջ կնքված համագործակցության պայմանագիրը:

Ընդ որում՝ թարմացվել է ոչ միայն Երևանի պետական և Դոնեցկի ազգային համալսարանների, այլև երկու բուհերի Տնտեսագիտության ֆակուլտետների միջև 2006-ին կնքված պայմանագիրը: «Մենք համոզվեցինք, որ վստահելի գործընկերներ ենք և միմյանց աջակցության կարիքն ունենք: Ես և պարոն Սիմոնյանը կանենք ամեն ինչ, որ այս բարեկամությունը երկու կողմին էլ օգուտ բերի»,– պայմանագրի ստորագրումից հետո նշեց Դոնեցկի ազգային համալսարանի պատվավոր ռեկտոր Վլադիմիր Շևչենկոն:

Ըստ երկու պայմանագրերի էլ՝ նախատեսված են ուսանողական փոխանակման ծրագրերի իրականացում, համատեղ կոնֆերանսների կազմակերպում, համատեղ տպագրություններ, ինչպես նաև դասախոսական և ուսանողական փոխայցեր: Նշենք, որ երկու բուհերի համագործակցությունը սկսվել է դեռևս 2006-ից:

«ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները պարբերաբար մասնակցել են Դոնեցկում կազմակերպվող գիտական դպրոցներին, մեր համալսարանն էլ նրանց է հյուրընկալել: Դոնեցկի համալսարանի պրոֆեսորները կարճաժամկետ դասախոսություններ են կարդացել մեզ մոտ, մեր դասախոսներն էլ հրավիրվել են Ուկրաինա: Հիմա փորձում ենք այդ կապերն ավելի աշխուժացնել»,– նախորդ տարիների փոխգործակցությունն է ներկայացնում ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը:

Այսուհետ հայկական և ուկրաինական երկու բուհերի դասախոսները կաշխատեն միասին. հետազոտություններ կկատարեն, գիտական աշխատություններ կպատրաստեն, ինչպես նաև կշարունակվի ուսանողական ծրագիրը: Դոնեցկի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Գենադի Զերնիչենկոն էլ Մայր բուհի հետ կապերը կարևորում է այն առումով, որ այդ կերպ կարողանում են գնահատել իրենց ձեռքբերումները. «Հայերն իմաստուն ժողովուրդ են: Նայում ենք՝ նրանք ինչ են անում, ինչպես են անում. դա մեզ շատ բան է տալիս»:

Հավելենք, որ ըստ ռեկտորների միջև ստորագրված պայմանագրի՝ մինչև այս ուսումնական տարվա վերջ համագործակցության պայմանագրեր կկնքեն նաև երկու բուհերի մյուս ֆակուլտետները:

Հ.Գ. Հոկտեմբերի 20-ին էլ Դոնեցկի ազգային համալսարանի պատվիրակությունը հյուրընկալվեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

Նրանց այցի առթիվ Կիրառական արվեստի ֆակուլտետի շրջանավարտների բազմաժանր ստեղծագործություններով կազմակերպվել էր բացօթյա ցուցահանդես: Հարկ է նշել, որ ֆակուլտետի ուսանողներն իրենց աշխատանքներից նվիրեցին հյուրերին: Վերջիններս էլ անչափ տպավորված էին ԵՊՀ-ի իջևանյան գողտրիկ բնության գրկում հիմնված մասնաճյուղի գործունեությամբ:

Այցի շրջանակում Դոնեցկի ազգային համալսարանի պատվիրակությունը հանդիպում է ունեցել մասնաճյուղի տնօրինության հետ: Հյուրերը ներկայացրել են ԵՊՀ ռեկտորի և Տնտեսագիտության ֆակուլտետի հետ կնքված պայմանագրերի բովանդակությունը՝ հույս հայտնելով, որ ուսանողների փոխանակման ծրագրերում կընդգրկվեն նաև մասնաճյուղի ուսանողները:

Հետագա համագործակցության ձևաչափն ուրվագծելու նպատակով ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Առաքելյանը և Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը հրավիրվել են Դոնեցկ:

Նշենք, որ հայաստանյան այցի ընթացքում, գործնական հանդիպումներից բացի, ուկրաինացի հյուրերը եղել են նաև Հայաստանի տեսարժան և պատմամշակութային վայրերում:

Ծովինար Կարապետյան,
Հասմիկ Վանյան

НЕОБХОДИМА НОВАЯ ПРОГРАММА РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА И АРМЯНСКОГО СЕЛА

«Деловой Экспресс», 8-15 ноября, 2013

Представляем вашему вниманию бецеду с деканом экономичецкого факультета Ереванского государственного университета, д.э.н., профессором Гайком Саргсяном, предлагающим альтернативную программу развития сельского хозяйства и армянского села.

— Вы предлагаете разработать и принять национальную государственную программу, касающуюся эффективного водо- и землепользования (НПЗВ). Каковы должны быть ее цели?

— Армянское общество после известного заявления президента РА Сержа Саргсяна 3 сентября этого года по поводу судьбоносного выбора дальнейшего пути развития страны в большинстве своем среагировало в направлении усиления военной и энергетической безопасности страны. В то же время в существующих реалиях наша страна может достичь поступательного экономического роста, важнейшей предпосылкой которого может стать альтернативная программа развития сельского хозяйства.

Сегодня пересмотр и коренное изменение наших представлений и действий в вопросах развития сельского хозяйства и сельских общин более чем востребованы. Земельные и водные ресурсы, а также человеческий потенциал недогружены, иногда покинуты, заброшены, находятся в простое. Все это является результатом ошибочной политики нереализованности потенциальных возможностей более эффективного использования ресурсов и удовлетворения краткосрочных потребностей общества. По этому пути мы шли более 20 лет. Я же придерживаюсь того мнения, что чаще всего краткосрочные эффекты могут обернуться долгосрочными потерями.

Таких фактов предостаточно.

Мы считаем, что пока еще отсутствуют всеобъемлющие, целевые программы долгосрочного развития сельского хозяйства и села. Хотя правительство приняло концепцию “Стратегия устойчивого развития сельского хозяйства РА на 2010-2020гг.”, она даже при большом желании не может претендовать на выполнение этой роли. Разрабатывая программы развития отрасли, следует принимать во внимание то, что они должны быть направлены на улучшение демографической ситуации и регулирование территориального расселения

населения, сокращение уровня бедности, особенно для сельского населения, стимулирование экспорта сельхозпродукции и т.д.

Конечная цель НИЗВ — оптмальное использование ресурсов,таких как земля, вода, солнечная энергия и человеческий капитал.Лучшим средством для реализации НИЗВ может стать создание Инвтиционного фонда, который будет принимать участие в реализации различных бизнес-проектов,направленных на эффективное использование земельных и водных ресурсов. Именно подобный фонд, а не банковцкая сфера, способен решить поцтавленные проблемы. Инжестиционный фонд может наполняться из различных источников, в том числе при участии диаспоры.

Необходима новая программа развития сельского хозайства и армянского села

Она должна разрабатываться и выполняться с учетом интересов, сравнительных примущецтв и осовенноцтей страны в контексте политики, национальной безопасности, ресурсного обеспечения, социально-психологической, культуры и т.д. Очевидно, что и положения НПЗВ также доложны разрабатываться и осуществляться в этом разрезе.

По мнению руководителя аппарата праительства РА Ваче Габриеляна, только за счет перехода к развитию и осуществлению существенных структурных преобразований в экономике можно превысить считающийся реальным 5-7%-ый экономический рост. С этой точки зрения вряд ли будет возможно без новых изменений, по инерции обеспечить заложенный в программе правительства среднесрочный рост в 5-7% и достичь трендового роста в 4-4,5%. На мой взгляд, основная задача заключается в том, чтобы эти 5-7% роста не стали самоцелью.

НИЗВ должна рассматриваться в качестве базового условия, реального гаранта процесса развития и стабилизации макроэкономики. Предлагаемая программа по своей сущности — это комплексная целевая программа, которая позволит ускорить экономический оборот в отрасли, увеличить объемы продаж и обслуживания и, наконец, обеспечить получение оптимального экономического результата.

Основные целевые направления предлагаемой программы — это, во-первых, резкое снижение эмиграционных потоков и поощрение иммиграции. Во-вторых, расселение населения, которое кардинально изменилось в сельской местности, так как перестали действовать директивные нормативные методы, и этот вакуум. не заполняется в досточной мере за счет самоорганизации и управления, В-третьих, сокращение бедности населения, В-четвертых, стимулирование экспорта. В настоящее время экспорт Армении едва

превышает 10% от ВВП и базируется на ресурсосодержащих товарах. По доле в экспорте рудных товаров, концентратов и металлов Армения занимает самые высокие позиции, Возможность расширения экспорта в данном разрезе делает положение очень неустойчивым, так как цены на непереработанную руду и металлы на международном рынке постоянно меняются. Устойчивого роста экспорта можно достичь за счет увеличения доли сельхозпродукции и готовых продуктов питания.

— Что Вы предлагаете в плане повышения эффективности использования ресурсов?

— Наша страна занимает одно из последних мест по эффективности использования земель среди стран с переходной экономикой.

В часности, в Армении обрабатывается менее 25% земель сельскохозяйственного назначения. Для сравнения: этот показатель в Венгрии и Украине составляет около 80%. Сегодня используется около 2/3 похотных земель. Нецмотря на относительное обилие пастбишных земель животноводство развито слабее земледелия. Все эти проблемы являются следствием допущенных ошибок, устранение которых возможно в рамках НИЗВ.

Согласно балансу земель от 1997 года, земельный фонд Армении включал 1,3 млн гектаров земель сельскохозяйственного назначения. Около 78% пахотной земли были поделены на мелкие наделы и розданы крестьянам. Предполагалось, что после раздачи земель между хозяйствами возникнет конкуренция. Это было очень упрощенным подходом, так на деле сократилась производительность и эффективность обработки лоскутных наделов. Раздробленность земельных наделов стала серьезным препятствием на пути к эффективному землепользованию.

— В нем Вы видите выход из создавшегося положения? В новой принудительной коллективизации? Вы не боитесь социального взрыва? Ведь у крестьян кроме этих наделов ничего нет.

— Сама идея коллективизации была неплохой. Другое дело, как она была реализована в 30-х годах прошлого века. Сегодня ставится вопрос кооперации посредством коллективного использования средств и земельных ресурсов. Что касается укрупнения, то здесь имеется в виду прежде всего задействование земельного рынка, чтобы объектом купли-продажи в полной мере стала земля. Хотя сегодня крестьяне имеют право продавать и покупать земельные наделы, существующие ограничения делают рынок земли неэффективным.

— Не приведет ли развитие рынка земель, о котором Вы говорите, к возврату феодализма и даже крепостного права? Ведь земли

сельскохозяйственного назначения запросто могут скупить олигархи, а не крестьяне, у которых нет на это денег.

— Я не думаю, что это возможно, но отношения "собственник земли-арендатор","работодатель-наемный работник" должны быть задействованы и в этой сфере. Думаю,что если в сельском хозяйстве возникнут крупные собственники, как в других сферах не это не так уж плохо. Можно привести множество удачных примеров.

— А где гарантии, что пе возникнет еще одна, теперь уже земельная монополия, которая примкнет к другим, душащим нашу экономику?

— При объяснении негативных сторон, присущих сегодня нашей экономике, нельзя оперировать такими показателкми, как монополия. Иногда монополия, если она естественная, ситуационная или легальная, также как и олигополия могут обеспечить более серьезный эффект, и не надо забывать, что эти структуры сформировались в условиях, близких к конкуренции.

Другое дело, когда я призываю вкладывать средства в сельское хозяйство, мои оппоненты могут возразить, что сельское хозяйство — это зона высокого риска, и это верно. Но, как бы то ни было, в первую очередь следует исходить из того, что надо эффективно и бережно использовать то, что нам дано Богом. Это земля, вода, солнечная энергия и другие ресурсы.

— Что Вы предлагаете по улучшению использования водных и других ресурсов?

— Спрос и предложение на питьевую воду в мировом масштабе сравнялись еще в 2000 году, и теперь год от года спрос все более превышает предложение. Все это свидетельствует о важности питьевой воды в качестве незаменимого природного ресурса. В ряде регионов мира межгосударственные конфликты из-за питьевой воды стали обычным явлением.

Одним из важнейших сравнительных преимуществ Армении в региональном масштабе является наличие огромных запасов подземных и наземных вод. Достаточно сказать, что на территории страны ежегодно формируется около 7,5 млрд кубометров воды (без учета подземных вод), из которых используется всего 2,5 млрд кубометров, в том числе в сельском хозяйстве 1,2 млрд кубометров, Оставшееся количество этого важнейшего стратегического ресурса по сути "экспортируется" в соседние страны по нулевой цене. Все это требует создания подпрограммы (в рамках НПЗВ) использования и управления водными ресурсами, которая за счет реализации ряда мероприятий позволит достичь эффективного использования водных ресурсов и умножить получаемый результат.

Особое место в сфере водопользования занимает наращивание экспорта питьевой воды. За рубежом, в розничной продаже 1 литр питьевой воды реализуется по цене 0,37 доллара. Протнозируется, что в 2011- 2021 гг. мировой объем бутилированной воды достигнет 440 млрд литров. При наращивании экспорта воды из Армении до 10 млрд литров (что составит в денежном выражении 3,7 млрд долларов), это составит 3,3% от потребности мирового рынка сегодня. Для резкого увеличения объемов экспорта питьевой воды необходимо осуществить инвентаризацию экспортного потенциала, провести маркетинговые исследования рынков и другие мероприятия.

Направления расширения экспорта и различные формы поставки армянской питьевой воды должны стать предметом тщательного обсуждения. В частности, расширение экспорта возможно с использованием действующих в настоящее время условий и схем. Кроме того, в случае возобновления железнодорожного сообщения через Грузию возможен экспорт воды в изотермических-изобарных вагонах-цистернах. Можно также извлекать из минеральной воды содержащиеся в ней минеральные вещества и поставлять их в сухом виде.

Одним из возможных вариантов доставки питьевой воды на потребительский рынок, например в арабские страны, является ее доставка с помощью трубопроводов, с последующей бутилизацией на месте. Гарантом обеспечения наращивания экспорта питьевой воды из Армении станет озеро. Севан с его объемами, что позволит сделать этот продукт важной статьей армянского экспорта и источником решения социально-экономических задач.

Хочу остановиться также на возможном использовании в сельском хозяйстве имеющейся в изобилии солнечной энергии. Яимею в виду разработки д.т.н. Ваана Амазаспяна,значительно отличающиеся от работ, ведущихся в других странах. Если там солнечная энергия рассматривается в качестве источника для развития альтернативной энергетики, то в армянском варианте упор делается на технологические особенности разработанной аппаратуры и ее использование в сельской местности. Думаю, что это направление является перспективным, и при разработке соответствующей бизнес-программы гелиофикации страны и сельского хозяйства достойно дальнейшего развития.

Что касается предлагаемой Национальной программы земле- и водопользования, то с учетом вышеназванных целевых направлений, полагаю, что она может претендовать на статус “национально-государственной” после детальной разработки концепции и самой программы. Идея рационального использования природных ресурсов не нова, она напоминает мне “хорошо

забытое прошлое”. Не случайно, что страны, преуспевающие в своем инновационном развитии и не имеющие достаточных природных ресурсов, достигли впеляющих результатов, прежде всего в рациональном использовании традиционных ресурсов.

Беседаовала **Юлия Кулешова**

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԵՎ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՊԱՀՊԱՆԵԼ ՄԵՐ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Realpolitik» հաղորդաշար, 26 մայիսի, 2013

Աշնանը նախատեսվում է Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը Հայաստանի և ԵՄ-ի միջև: Միաժամանակ, ԱՊՀ տարածքում արդեն գործում է Մաքսային միություն, որի հիմքի վրա հիմնադիրները մտադիր են ձևավորել մեկ այլ կառույց՝ Եվրասիական տնտեսական միություն: Համագործակցությունն այս ուղղություններից յուրաքանչյուրի հետ ինչ հնարավորություններ է ստեղծում մեր տնտեսության համար, որո՞նք են հնարավոր վտանգները, ինչ կտա Հայաստանին եվրապարտատոմսերի թողարկումը, ինչ է կատարվում հայ-ռուսական ֆինանսատնտեսական հարաբերություններում: Realpolitik-ի տաղավարում այս և այլ հարցերի է անդրադառնում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

«Այսօր մենք պահանջված ենք և՛ ԵՄ-ում, և՛ ԵվրԱզԷՍ-ում: Խնդիրն այն է, որ մենք կարողանանք ինքներս գնալ, այլ ոչ թէ մեզ տանեն: Կարծում եմ՝ պարտավոր ենք և պետք է կարողանանք պահպանել տնտեսական ինքնուրույնությունը, բազմազանեցնել արտադրությունը, արդյունավետ լուծում տալ «մինի-մաքս»-ի հետևյալ խնդրին՝ մաքսիմալ արտահանում, մինիմալ ներմուծում»,– հարցազրույցում նշեց պրոֆեսոր Սարգսյանը:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=t3bBRt_0sDQ

ԷԺԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՉԷ

«Առավոտ» օրաթերթ,
31 հունվարի, 2014

ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հանրային խորհրդի անդամ Հայկ Սարգսյանը «Առավոտի» հետ զրույցում նշեց, որ կրթության մասին խոսելն իր համար պատասխանատու խնդիր է: «Ուսումը եղել և մնում է մեր ժողովրդի համար գերակա արժեք: Կրթությունը նաև մարդկային կապիտալի հիմքերից մեկն է: Դրանով հանդերձ, կրթական համակարգն այսօր կարծես վերածվում է տնտեսական և հոգևոր վերելքը արգելակող ուժի, որը ոչ մի կերպ չի տեղավորվում «Տնտեսական աճից տնտեսական զարգացում ապահովող» բանաձևում, որը որդեգրել ենք որպես զարգացման ուղենիշ:

Ժամանակակից կրթահամակարգի ստեղծումը և բարձրորակ մասնագետներով ապահովվածությունը կնպաստի գիտատար տնտեսություն ունենալուն, առանց որի անհնար է զարգացած և զորեղ Հայաստանի տեսլականը: Ինչ խոսք, Հայաստանի Հանրապետությունում առկա են բարձրագույն կրթության որակի բարելավման որոշակի ձեռքբերումները: Դա արտաքին և ներքին մղումներով է պայմանավորված»,– ասաց նա: Պրոֆեսորի ձևակերպմամբ՝ մտահոգող է հետագա կայուն առաջընթացի հեռանկարը. «Արդյոք կարո՞ղ է մեր բուհական համակարգը մեկ ուսանողի կրթության համար ծախսվող շուրջ 1000 ամերիկյան դոլարին համարժեք դրամով ապահովել միջազգային կրթական մակարդակ. երիցս՝ ոչ: Ավելին՝ մենք կարող ենք հարատև աղքատության ծուղակում հայտնվել: Ստեղծվել է մի պարադոքսալ իրավիճակ, երբ մի կողմից իրատեսական չեն կրթական բարձր վարձավճարները, մյուս կողմից՝ էժան կրթությունը չի կարող նպաստել աղքատության շեմից հեռանալուն: Այդ մասին են վկայում տնտեսական աճի արդի մշակումները (հայազգի Աճեմօղլուի և Ալչյանի տեսությունները դրանց վկան և հաստատումն են): Ուստի, մեր կարծիքով, ռեալ ուղին մեկն է՝ Հայաստանում զարկ տալ արտադրողականության ճեղքվածքի վերացմանը և նախապատվությունը տալ բարձր տեխնոլոգիաների ներգրավվածությանը կրթական ոլորտ, ինչը միանգամայն հնարավոր է հատկապես բնագիտության ու բնագիտական կրթության պատշաճ աջակցման պարագայում: Մեր ֆիզիկոսները, մաթեմատիկոսները, կենսաբաններն ու քիմիկոսները եվրոպական համալսարաններում դիրքեր են զբաղեցնում, որը երկար չի կարող շարունակվել, որովհետև ի վերջո մաշվում է այդ կապիտալը՝ առանց

ամորտիզացվելու: ԵՊՀ-ում բնագետները դոտացիա են ստանում հումանիտար թևից, ինչը նպատակահարմար չէ: Կարծում եմ՝ պետք է վերանայվի «ոչ թանկարժեք կրթության» քաղաքականությունը: Ի վերջո, էժան կրթությունը ստույգ լավագույնը չէ: Ավելին՝ իրենց ծառայությունները ինքնարժեքից ցածր գնով իրացնող կազմակերպությունները, ի վերջո, սնանկանում են: Համալսարանականների մասնագիտական պատասխանատվությունը այսօր դեռևս պահում է այդ իրավիճակը, և մեր պատրաստած մասնագետները դեռևս պահանջարկ ունեն այսօրվա հարկային համակարգում, բանկերում, կլինիկաներում: Այսպես շարունակվելու պարագայում նման մասնագետներն այլևս պահանջարկ չեն վայելի, իսկ մենք չպետք է մասնագետներ ներմուծենք: Երկիրը առաջ են տանելու ու ապահով են դարձնելու բարձրորակ մասնագետները: Ուստի, վերը բերված տրամաբանության մեջ կարևորագույն խնդիր է դառնում արտասահմանյան բուհերում արդեն կրթություն ստացած մասնագետների բանկի ստեղծումը և նրանց գործառնումը մեր համակարգերում»: ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանը կոնկրետ առաջարկներ ունի: «Առաջինը կրթության միջազգայնացումն է: Այն պետք է իրականացնել ինչպես կրթական ծառայությունների արտահանման նախադրյալների ստեղծման (այսօր այդ պոտենցիալն առկա է), այնպես էլ պահանջված մասնագետների հրավիրման ու հայտնի կենտրոններում մեր դասախոսներին վերապատրաստման առումներով: Երկրորդը, որպես ոլորտի պետական կարգավորման բաղադրիչ՝ անհրաժեշտ ենք համարում կրթության «սնուցումն» ապահովել ոչ միայն բյուջեից ֆինանսավորման ավելացման հաշվին, այլև բարեգործական հիմնադրամների և գործատուների՝ պետության կողմից կրթահամակարգ մուտքի խրախուսման ու համակարգման միջոցով: Կարծում եմ՝ բարեգործությունը կրթական ոլորտում պետք է դուրս բերվի կուսակցականացվածությունից, հանվի այդ պատյանից:

Մի խնդրի մասին էլ եմ ուզում խոսել. մեր երկրում կրթության հնարավորությունների: Մեր բոլոր ընտանիքները ձգտում են կրթության տալ իրենց զավակներին, սակայն այդ հնարավորությունը ոչ բոլորն ունեն: Զեղչերի համակարգ է, բարեբախտաբար, գործադրվում բուհերի կողմից, սակայն բովանդակային մի խնդիր տեխնիկական իր ճիշտ լուծումները կարող է ունենալ համապատասխան աշխատանքի դեպքում: Մասնավորաբար, զեղչման համակարգը պետք է իրականացնել ուսանողի համար «մեկ պատուհանի» սկզբունքով, որը կարող է իրագործվել նման խնդրի լուծման մրցույթում հաղթող բանկի կողմից: Այդ բանկում կարող են կենտրոնացվել ամենատարբեր ֆինանսավորման աղբյուրները: Դրանք կարող են լինել զեղչմանն ուղղված բուհի հատկացումները, սոցիալական փաթեթի հնարավորությունները,

բարեգործական միջոցները, բյուջեի հատկացումները և այլն: Արդյունքում ուսանողը, դիմելով իր հնարավորությունների մատնանշումով, այդ պատուհանին կարող է համապատասխան տեղեկանքը ներկայացնել և զեղչվել»,– նշեց տնտեսագիտության դոկտորը:

Գոհար Հակոբյան

ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ ՈՐՈՇԱԿԻ ՇԵՐՏԻ ԶՐԿԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՎ

«Հրապարակ» օրաթերթ,
9 դեկտեմբերի, 2014

– Պարոն Սարգսյան, վերջին երկու օրում ռուսական ռուբլին սկսեց կայունանալ: Մոսկվայի բորսայում դոլարի կուրսն 80-ից հասավ 60-64 ռուբլու: Դրամը ևս առողջացման միտում է ցուցաբերում: Ինչ է սա նշանակում:

– Դա ընդամենը աժիոտաժային բաղադրիչի փոփոխություն է: Այո, դոլարի պաշտոնական փոխարժեքը սահմանվել է նորից 450-460-ի սահմաններում, իսկ վաճառքը 500-520-ով է իրականացվում: Սա հետևանք է նրա, որ մեղմացվել է խուճապային բաղադրիչը:

– Ինչո՞վ էր պայմանավորված, որ խուճապը նվազեց:

– Պաշտոնական հայտարարություններով այն մասին, որ, ի վերջո, լինելու է արժևորման գործընթաց, և որ այս ամենը պայմանավորված էր սպեկուլյացիայով: Մարդիկ փող էին աշխատում ստեղծված իրավիճակում: Միշտ այդ կամայական պրոցեսները կան: Հատկապես Հայաստանի նման երկրներում: Երբ մենք ունենք չկայացած երկրորդային շուկա, որտեղ կարող են արժեթղթեր վաճառվել և այլն, առաջնային շուկայում նման սպեկուլյատիվ երևույթների հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փողն ապրանք է դառնում, դրա՝ որպես դեֆիցիտ ապրանքի վաճառքի վրա սկսում են սպեկուլյացիա անել:

– Որքա՞ն կտևի այս արժևորումը: Թեև դոլարի կուրսն ընկավ, բանկերը չեն վաճառում դոլար կամ քիչ են վաճառում: Հնարավո՞ր է, որ կրկին բարձրանա դոլարի կուրսը:

– Իհարկե, չեն վաճառում, սահմանափակ է դոլարի վաճառքը, սակայն մեծ տատանումներ չեն կարող լինել: Կլինեն փոքր տատանումներ՝ կապված ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի հետ: Քանի դեռ այս երկուսի միջև կա խզում, տատանումների հնարավորություն միշտ կառաջանա: Այդ խզումը բնակչության սպառմամբ կամ պահանջարկով չէ պայմանավորված, այլ պայմանավորված է կապիտալ ներդրումներով, ներմուծում-արտահանում հարաբերակցությամբ, պետբյուջեի ծախսերով: Իսկ կայունացումը պետք է երկարաժամկետ հատվածում դիտարկվի:

– Դրամը ոնց որ թե կայունացավ, բայց խանութներում առաջին անհրաժեշտության ապրանքների գները չեն իջնում: Սա էլ է սպեկուլյացիա:

– Ոչ, այստեղ ուրիշ խնդիր կա: Փոխարժեքի և գների միջև կապն իսկապես

գոյություն ունի: Էկոնոմիկայում սուրբ երրորդության նման մի բան կա, որը կոչվում է անհնարինության երրորդություն: Սա ինչ է նշանակում: Պետք է դու կարողանաս ընտրություն կատարել փոխարժեքի կայունության, գների կայունության և կապիտալի սահմանափակումների միջև: Միաժամանակ այս բոլորն իրար հետ լուծել հնարավոր չէ: Եթե մի պեդալին սեղմում ենք, մյուսն է փոխվում: Հիմա, գների կայունությունը եղած սահմանափակումների պայմաններում փոխարժեքի կայունությամբ է պայմանավորված: Եթե փոխարժեքը կայուն մնա, գները նորից կմնան կայուն: Սակայն քանի որ այդ պրոցեսը դեռ երկարաժամկետ չի դրսևորվել, ընդամենը մեկ-երկու օրվա մասին է խոսքը, պետք է սպասենք, տեսնենք, թե փոխարժեքի տատանումներն ինչպիսին կլինեն, և հետո նոր գների մասին վերջնական դատողություն կունենանք:

– Այսինքն՝ եթե դրամի կայունացումը երկար տևի, գները կիջնեն:

– Այո, բայց սովորաբար կա, այսպես կոչված, արգելանիվի էֆեկտ: Սա ևս օրինաչափություն է: Բարձրանալուց հետո գները հեշտ չեն իջնում, մինչև որ բալանսը չլինի: Այսպես ասեմ. պետք է գները «հանգստանան», նոր իջնեն:

– Պարոն Սարգսյան, այսօր Հայաստանում անկայուն և անորոշ տնտեսական իրավիճակ է, եթե չասենք՝ անկառավարելի: Ինչ է լինելու:

– Ստեղծված իրավիճակում և՛ տնտեսվարող սուբյեկտները, և՛ բնակչությունը դժվարին կացության մեջ են: Նրանք ունենում են եկամուտների մեծ կորուստներ: Արտահանողների համար ազգային դրամի արժեզրկումը, թերևս, կարող է օգտակար լինել, բայց դրա համար ժամանակ է պետք, իսկ այս պահին նրանք ևս կորուստներ են կրում: Անորոշությունը վերացնելու համար ԿԲ-ն և կառավարությունը, որոնք ներազդման բավարար միջոցներ ունեն և լուրջ գիտական սպասարկում, պետք է համատեղ գործեն: Կարծում եմ՝ դրա համար նրանք բավարար գործիքներ ունեն:

– Այդ դեպքում ինչո՞ւ չեն գործադրում: Ռուսաստանի կառավարությունը, օրինակ, վերջին երկու օրերին փորձում է կոորդինացնել արտահանողների շահույթի վաճառքը, կառավարության և ԿԲ-ի հետ համատեղ կանխել վալյուտային սպեկուլյացիաները:

– Փորձ կատարվեց միայն ԿԲ մոնետար մեթոդներով շուկայի մասնակցությամբ միլիոնավոր դոլարների ամենօրյա վաճառքով ազդել պրոցեսների վրա, բայց կյանքը ցույց տվեց, որ սա գործուն միջոց չէ: Այդ է պատճառը, որ ես ասում եմ, որ համատեղ պետք է աշխատել, կիրառելով գործիքների այն ամբողջությունը, որը կկայունացնի իրավիճակը: Այդ գործիքները պետք է ոչ ստանդարտ լինեն: Մեր առևտրային գործընկերների հետ պետք է, կարծում եմ, շատ խնդիրներ պարզեն: Մասնավորաբար, խնդիրը վերաբերում է ռուբլի-դոլար-դրամ եռյակի փոխգործունեությանը, տարբեր պայմանագրերի հնարավոր վերաձևակերպումներին և այլն:

– 90-ականների սկզբում ռուբլուց անցանք դրամի, և նույն անորոշությունն էլ բնակչության մեջ այն շրջանում էր:

– Մարդիկ հիշում են 93 թվականը, ազգային դրամի ներմուծումը, երբ 1 դոլարի համար սահմանվեց 12,5 դրամ փոխարժեք: Անցած 20 տարիների ընթացքում մենք ունեցել ենք մինչև 600 դրամ փոխարժեքի աճ, և երկու անգամ եղել են շոկային թռիչքներ՝ 300-400 դրամ, իսկ հիմա էլ՝ 410-500 և ավելի: Կարծում եմ՝ ներկայիս իրավիճակում իրական փոխարժեքը դեռևս չի ձևավորվել, այն պրոցեսի մեջ է: Դեռևս նույն առաջարկի և պահանջարկի բալանսավորման կանոնները կբերեն նրան, որ փոխարժեքը կձևավորվի:

– Հայաստանի հետ ինչ է լինելու:

– Հայաստանն ունենալու է տնտեսական վերելք, այս ամենն անցնելու է, իհարկե, հասարակության որոշակի շերտի տնտեսական զրկանքների գնով: Որքանով են արդարացված այս զրկանքները՝ այլ խնդիր է, բայց մենք ունենք բոլոր նախադրյալները՝ իրավիճակը շտկելու և վերելք ապահովելու, որպեսզի մեր տնտեսական աճը լինի կայուն և նպաստի զարգացմանը:

– Հնարավոր է, որ մենք ավելի շուտ մտնենք ռուբլու գոտի:

– Այսօրվա դրությամբ ստորագրված համաձայնագրերով ռուբլու գոտուն անդամակցելու մասին խոսելը դեռ վաղ է: Տեսանելի հորիզոնում չեմ կարծում, որ դա հնարավոր լինի: Իսկ հետագայում տնտեսական ինքնիշխանությունը չի բացառում նաև խոր ինտեգրում, ռուբլու գոտու կամ մեկ ուրիշ վալյուտայի ընդհանրական գործադրում Մաքսային միության կազմ մտնող երկրների համար:

– Ռուբլու գոտի մտնելով՝ մենք չենք կորցնում մեր տնտեսական անկախությունը:

– Կամովի անդամագրումը և խոր ինտեգրումն ինչ-որ մի միությանը, առևտրային ռեժիմների, հարկային, մաքսային համակարգերի ներդաշնակեցումը և ազգային դրամի փոխարինումը մեկ ընդհանրական արժույթով չի նշանակում տնտեսական ինքնիշխանության կորուստ: Դրա օրինակն են ԵՄ-ն և եվրոն: Մեր պատկերացումները տնտեսական ինքնիշխանության մասին պետք է փոխվեն, որովհետև գլոբալացման և ինտեգրման այս դարաշրջանում գիտական մոտեցումը ենթադրում է ինքնիշխանության պայմաններում նաև խորը ինտեգրում և այս երեք ատրիբուտների վերանայում՝ առևտրային ռեժիմի, ազգային դրամի և հարկային ու մաքսային քաղաքականության:

Հարցազրույցը՝ **Սյուզան Սիմոնյանի**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Հայոց աշխարհ» օրաթերթ,
16 ապրիլի, 2015

Որքան էլ այսօր հասարակության ուշադրությունը սևեռված է ընտրական գործընթացների, մասնավորապես, Ընտրական օրենսգրքի նախապատրաստմանը, որևէ կերպ չպետք է շրջանցվեն հանապազօրյա և երկարաժամկետ ազդեցություն ունեցող խնդիրների լուծումները: Դրանք էլ հենց բովանդակելու են զարգացման ուղեծիր դուրս բերող սահմանադրականացման գործընթացը:

Փոփոխված սահմանադրության ընդունումից հետո առաջիկա տարիների ու տեսանելի հորիզոնի գերակա հիմնախնդիրը լուծելու միջոցներից մեկը երկրում սահմանադրականության առավել բարձր մակարդակի ապահովումն է լինելու:

Սահմանադրական կարևորագույն նորմերից մեկը ֆինանսական կայունությունն է: Փորձենք տեսնել, թե ինչպես է ֆինանսական կայունությունը դառնում սեփականության անձեռնմխելիության երաշխավորման պայման:

Երբ ֆինանսական կայունությունը համալուծ է որոշակի միջակայքում տրված գների կայունության ապահովմանը, երբ հասարակության շահերը՝ առավելապես սոցիալապես անապահով քաղաքացիների մասով, չեն ստորադասվում ֆինանսաբանկային համակարգի շահերին, այն արդարացված է: Ի դեպ, փոփոխված սահմանադրության մեջ որպես Կենտրոնական բանկի հիմնական նպատակ ամրագրվեց գների և ֆինանսական կայունության ապահովումը:

Ֆինանսական կայունության ապահովումը պետք է նպաստի գնաճը նպատակային թիրախում պահպանելու գործընթացին, այդպիսով պաշտպանի հասարակությունը սոցիալական ծանրագույն երևույթներից մեկից՝ գնաճից:

Ֆինանսական համակարգի անկայունության դրսևորումները կարող են լինել անբավարար իրացվելիությունը, անվճարունակությունը, սնանկացումը և այլն: Նկատենք, որ վերջին տարիներին մեր երկրի ֆինանսական համակարգը համեմատաբար ավելի հանգիստ արձագանքեց մի շարք խոշոր ցնցումներին՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, հարևան երկրի նմանությամբ փոխարժեքի կտրուկ տատանումներ և այլն, իսկ գնաճի առավելագույն մակարդակը մնաց միանիշ տիրույթում:

Թե ինչպես ենք կարողանում իրականացնել ֆինանսական կայունության մոնիտորինգ ու կառավարում, չեզոքացնում ամենատարբեր ասպարեզներում՝ ներքին տնտեսությունում, արտաքին հատվածից ածանցվող և բուն ֆինանսական համակարգում առաջացող ռիսկերը՝ իրացնելով քաղաքացիների պաշտպանված լինելու, ֆինանսական ծառայություններից անվտանգ օգտվելու իրավունքը, փորձենք լուսաբանել թվերով:

Ֆինանսական համակարգը, վերջին տարիներին բախվելով արտաքին տնտեսությունից փոխանցված որոշակի ռիսկերի հետ, որոնք, ի դեպ, դեռևս ամբողջովին չեզոքացված չեն, կարողացել է մետաղների համաշխարհային գների, ներքին սպառման, օտարերկրյա ներդրումների ու մասնավոր տրանսֆերտների նվազման պարագայում առաջացող ռիսկերի կլանման քայլեր ձեռնարկել ու դրանք հաղթահարել:

Ֆինանսական կայունության ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված քայլերից հարկ եմ համարում նշել առևտրային բանկերի նվազագույն կապիտալի շեմի բարձրացման Կենտրոնական բանկի պահանջը (մինչև 30 մլրդ դրամ, վերջնաժամկետը՝ 2017-ին):

Կապիտալի ամրապնդումը լրացուցիչ բարձիկ է երկարաժամկետ հորիզոնում ռիսկերի կանխարգելման համար, այսպես ասած, «իմունային համակարգը»՝ դիմակայելու հնարավոր ցնցումներին, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում բանկերին տրամադրելու ավելի մատչելի և երկարաժամկետ վարկեր:

Հաջորդը. վերջին տարիների ընթացքում հաջողվել է ապահովել ֆինանսական միջնորդության զգալի աճ: Տրամադրված վարկերի ու ներգրավված ավանդների ծավալների միջին տարեկան աճը վերջին 7-8 տարիներին կազմել է շուրջ 20%:

Ֆինանսական միջնորդությունը բնութագրող այնպիսի ցուցանիշը, ինչպիսին բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունն է, աճել է և կազմել շուրջ 45,3% (2014 թ.): Եթե 2008 թ. մեր բանկային համակարգում վարկեր/ՀՆԱ ցուցանիշն ընդամենը 17% էր, ապա վերջին տարիների 22 տոկոսային կետը գերազանցող աճն ուղեկցվել է հաճախորդների քանակի կրկնապատկմամբ (ներկայումս ֆինանսական ծառայություններից օգտվում է շուրջ 2,3 մլն մարդ):

Ինչ վերաբերում է տնտեսության ֆինանսական հատվածում իրավիճակի էական բարեփոխմանը, կարծում եմ, որ պետք է ձևավորվեն բավարար շարժառիթներ, որոնք բանկերին կդրդեն լուծել խնդիրներ՝ կապված մեծածավալ հեռանկարային ներդրումային ծրագրերի ֆինանսավորման հետ: Այսօր դրան բաժին է ընկնում բանկային համակարգի վարկային միջոցների շատ փոքր մասը միայն:

Դեռևս բավարար լուծված չէ ֆինանսական ենթակառուցվածքների հետագա զարգացման և ընդլայնման խնդիրը, որը պետք է իրականացվի ոչ միայն արդեն որոշակի հաջողությունների հասած բանկային համակարգի գործունեության ոլորտների ընդլայնմամբ, այլև ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների ու ֆինանսական շուկայի նոր կառուցվածքային օղակների զարգացմամբ (ապահովագրական համակարգ, ներդրումային ընկերություններ, լիզինգային և ֆակտորինգային ինստիտուտներ, կապիտալի շուկա, վենչուրային կապիտալ և այլն):

ՈՉ ԹԵ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՇԱՀԵՐ

«Հրապարակ» օրաթերթ,
22 ապրիլի, 2015

Տնտեսագիտության բնագավառում գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական երեք խորհուրդ է գործում, ոչ թե երկուսը, ինչպես նախկինում: Այժմ կոռուպցիոն ռիսկը նվազել է, և ավելի դժվար է խոչընդոտել հաջողված գիտական աշխատանքների պաշտպանությունը կամ գումարային «տրամպլիններ» սահմանել հայցվորների համար, քանի որ նրանք են որոշում, թե որ խորհուրդ դիմել ատենախոսություն պաշտպանելու համար: Մյուս կողմից, լուրեր կան, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մասնագիտական խորհուրդը, նրա ղեկավար Յուրի Սուվարյանը վերջերս փորձել են ներազդել ԵՊՀ խորհրդի փոխնախագահ Հայկ Սարգսյանի վրա՝ հորդորելով չընդունել ՀՊՏՀ շրջանավարտների աշխատանքները: Այս և մյուս հարցերը տվեցինք ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ մասնագիտական խորհրդի փոխնախագահ Հայկ Սարգսյանին:

– Պարոն Սարգսյան, ինչպես է ընթանում մասնագիտական խորհրդի աշխատանքը: Շատ դիմորդներ ունեք այլ տարիների համեմատ:

– Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդները տնտեսագիտության գծով չորսն են՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհուրդը, մերը՝ Երևանի պետական համալսարանինը, խորհուրդ կա Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում և Հայաստանի ագրարային համալսարանում: Եթե չեմ սխալվում, խորհուրդ կա նաև Եվրոպական համալսարանում, որն ստեղծվեց տարեսկզբին: Այս վերջին երկուսն առանձին չեն: Եթե Ագրարային համալսարանից մարդիկ են լինում, գալիս են, միանում են մեզ, իսկ Սլավոնականն էլ միացյալ է Եվրոպականի հետ: Ինտենսիվության մասին կարող եմ ասել, որ մեր խորհուրդը շատ ծանրաբեռնված չէ: Ամիսը մեկ-երկու նիստ ենք ունենում: Այսինքն՝ 2-4 հոգի կարող են պաշտպանել:

– Հիմնականում ձեր շրջանավարտներն են դիմում ԵՊՀ-ի մասնագիտական խորհուրդ, թե կան նաև այլ բուհերից:

– Կարող են և մերոնք դիմել, և դրսից դիմել, բայց մենք աշխատում ենք, որ մեր ասպիրանտները մեզ դիմեն: Գտնում ենք, որ սա ինչ-որ տեղ նաև

պատասխանատվության խնդիր է: Մեր ուսանողներին, ասպիրանտներին կրթում ենք սկզբից մինչև վերջ: Ասպիրանտուրան կրթական համակարգ է, և մեր կադրերին մենք գիտենք, թեմաներն էլ մենք ենք հաստատել: Մեր ուսանողն ինչո՞ւ պետք է ընկնի ուրիշ խորհուրդներ: Մյուս կողմից, մեզ դիմում են նաև դրսից, այն բուհերից, որոնք չունեն մասնագիտական խորհուրդներ: Օրինակ՝ նույն Ճարտարագիտական համալսարանից՝ պոլիտեխնիկից, հենց հիմա հայցվորներ ունենք, և քանի որ մենք թերբեռնված ենք, ընդունում ենք:

– Իսկ եթե տվյալ բուհն ունի մասնագիտական խորհուրդ, օրինակ՝ Տնտեսագիտական համալսարանը, բայց շրջանավարտները նախընտրում են դիմել ձեզ, ոչ թե իրենց բուհերին, չե՞ք ընդունում:

– Դա նրանց իրավունքն է, նրանք ևս կարող են մեզ դիմել, բայց պետք է մոտիվացիա լինի: Եթե համապատասխան նամակ է լինում, որով պատճառաբանվում է, թե ինչու է հայցվորը գալիս մեզ մոտ, ապա մենք կարող ենք ընդառաջել: Օրինակ՝ պատճառաբանությունը կարող է լինել տվյալ խորհրդի ծանրաբեռնվածությունը:

– Բայց ինչո՞ւ է պետք նամակ: Չէ՞ որ մասնագիտական խորհուրդները տնտեսագիտության գծով ավելացվեցին կոռուպցիայի և կաշառակերության ռիսկը նվազեցնելու համար: Որպեսզի դիմորդները հնարավորություն ունենան ընտրության: Եթե մի տեղ նրանցից կաշառք են ուզում, կարողանան դիմել այլ բուհ:

– Չգիտեմ որտեղ ինչ են ուզում: Նման որակումների համար հիմքեր են պետք: Մենք պահանջում ենք համապատասխան նամակ՝ հասկանալու համար, որ, այ բարեկամս, դու անցել ես այդ բուհի կրթական ծրագրով, ամբիոնով, թեման հաստատվել է այդ բուհում, ինչո՞ւ ես թողնում քո հարազատ կրթօջախը և դեգերում այլ խորհուրդներով:

– Հաճա՞խ է լինում, որ Տնտեսագիտական համալսարանի շրջանավարտները ձեզ դիմեն:

– Եղել են դեպքեր, բայց դրանք եզակի են՝ մեկ-երկու: Մայիսին մենք ունենք պաշտպանություններ, հենց մեկը այդ բուհի շրջանավարտի, որը պատճառաբանել է, որ իրենց մոտ, քննարկումների ժամանակ, տարակարծություն է եղել:

– Պարոն Սարգսյան, այնուամենայնիվ ընդունեք, որ խորհուրդների միջև մրցակցություն կա, պայքար հայցվորի համար:

– «Մրցակցություն» բառն այստեղ տեղին չէ: Ավելի շուտ կարելի է խոսել կորպորատիվ շահերի մասին: Խորհուրդները կարող են շատ լինել, կարող է լինել մեկը: Ասենք, ինչ-որ ակադեմիական կենտրոն, տարբեր բուհերի ներկայացուցիչների ներգրավմամբ, բայց նման խորհուրդը շատ ծանրաբեռնված

կլինի: Խորհուրդները պետք է բարձրորակ ատեստացիա կազմակերպեն. սա է խնդիրը, որ աշխատանքները հետ չգնան: Մեր խորհուրդը, օրինակ, ավելի քիչ է թողարկում, քան Տնտեսագիտական համալսարանինը: Շատ չեն տնտեսագետները, աշխարհում է այդպես:

– Կարող եմ ասել, որ Ձեր ղեկավարած մասնագիտական խորհրդի մասին կարծիք կա, որ կաշառքն այնքան էլ տարածված չէ, և տնտեսագիտականից Ձեզ շատ են դիմում:

– Ո՞վ է չափողը, այ բալա: Եկեք գնահատման ժամանակ խնդրին նայենք ուրիշ դիտակետից: Ինչո՞ւ է պահանջված ամեն գնով աստիճան ունենալը: Ես, օրինակ, կուզեի, որ բուհերում տարկետման իրավունքը հանվեր: Սա լուրջ խթան կլիներ պսևդոգիտնականներից ազատվելու, որոնք այլ մոտիվներով են գնում պաշտպանության: Այսպես միանգամից երկու խնդիր կլուծենք՝ բանակում դիվերսիֆիկացիա կլինի, այնտեղ խելամիտ, բարձր կրթական մակարդակ ունեցող ծառայողներ կունենանք, հոգեբարոյական առողջ միջավայր: Նաև գիտությունը կշահի՝ ազատվելով ավելորդ մարդկանցից:

– Մենք տեղեկություններ ունենք, որ այլ բուհերից փորձում են ներքին կարգով ազդել Ձեզ վրա, որպեսզի չընդունեք իրենց շրջանավարտների պաշտպանությունը ԵՊՀ խորհրդում: Որքանո՞վ է ճիշտ դա:

– Չէ, ես չէի ասի՝ ազդել: Ես կօգտագործեի «կորպորատիվ շահ» տերմինը: Նման խոսակցություններ, քննարկումներ լինում են, բայց մենք ըստ կանոնակարգի ենք շարժվում: Եթե դիմում են, չենք մերժում: Լավ կլիներ այլ բանի վրա ուշադրություն դարձնեիք: Մենք Բարձրագույն որակավորման հանձնաժողովում կանոնակարգման մեխանիզմների հետ կապված խնդիր ունենք: ԲՈՀ-ի նախագահն ինքը հայտարարեց, որ ատենախոսությունների գրեթե քառորդը վերադարձվում է: Այդ թվում՝ տնտեսագիտական: Կարծում եմ, որ կրկնակի քննարկումների հետ կապված ինստիտուտը, երբ աշխատանքը բեկանվում է ԲՈՀ-ի կողմից, պետք է վերանայվի: Կարծում եմ՝ ԲՈՀ-ում այս իմաստով բարեփոխում է անհրաժեշտ:

Հարցազրույցը՝ **Սյուզան Սիմոնյանի**

ԵԹԵ ՏԱՏԻԿԸ ԿՈՒԱՆՈՒՄ Է, ՔԱՂՀԱՆ Է ԱՆՈՒՄ, ՄԵՆՔ ՆՐԱՆ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆՔ ԶԲԱՂՎԱԾ

«Հրապարակ» օրաթերթ,
9 մայիսի, 2015

Վերջերս հայերեն, ռուսերեն և անգլերեն լույս է տեսել տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի և տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանի մոնումենտալ աշխատությունը՝ նվիրված նորանկախ Հայաստանի տնտեսական զարգացման քառորդդարյա ճանապարհին: Երկհատոր գիրքը հավակնոտ վերնագիր ունի՝ «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները», և հասցեագրված է բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են Հայաստանի տնտեսության համակարգային և ինստիտուցիոնալ վերափոխումներով: Ուստի ընթերցողն անաչառ վերլուծություններ է սպասում հեղինակներից և մեր տնտեսական վիճակի հետ կապված կնճռոտ հարցերի անկեղծ պատասխաններ: «Հրապարակի» հարցերին պատասխանում է Հայկ Սարգսյանը:

– Ինչպես կնկարագրեք Ձեր աշխատությունը, ինչ նպատակ եք ունեցել ՀՀ տնտեսական ամբողջ զարգացման ընթացքը ներկայացնելիս:

– Տնտեսությունն ու կենդանի օրգանիզմը նման են իրար: Տնտեսությունն էլ ունի իր արյունատար անոթները, ինքն էլ է շնչում, ծաղկում, վերելքներ և վայրէջքներ ունենում, և որպեսզի այն օրգանիզմի նման չծերանա, պետք է միշտ սնուցում ունենա, լինեն բարեփոխումներ: Այստեղ մենք փորձել ենք նկարագրել այդ գրեթե քառորդդարյա բարեփոխումները: Դրանք տարատեսակ են եղել: Վերելքի և անկման շրջաններ ենք ունեցել և հանդարտության, բայց, ինչն անցումային երկրներին է բնորոշ, կարողացել ենք դժվարությունների պարագայում ունենալ մի տնտեսություն, որը հեռանկարային է:

– Խանութները վաճառվում են, գործազրկությունն ու գներն աճում են, մարդիկ հեռանում են երկրից. ինչ տնտեսական հեռանկարի մասին է խոսքը:

– Իհարկե, կան խնդիրներ: Ես ինքս նախանձախնդիր եմ դրանք տեսնելու և բացահայտելու: Ես դրանցից կառանձնացնեի տնտեսության կառուցվածքի փոխակերպման խնդիրը: Տեսեք: Գյուղատնտեսությունում զբաղված է բոլոր զբաղվածների 40 տոկոսից ավելին: Սրանք կեղծ, նկարած թվեր են: Եթե տատիկը կոանում է, քաղհան է անում, մենք նրան համարում ենք զբաղված:

Բայց արտադրողականության մասին չենք ուզում խոսել: Մենք գյուղատնտեսության հատվածում ստեղծել ենք իսկապես անոմալ մի վիճակ, երբ 340 հազար անհատական տնտեսություններ իրենց երկրագործությունն իրականացնում են 1,2 մլն՝ իրարից անջատված հողակտորների, լոսկուտների վրա: Սա անոմալիա է: Այստեղ այդ խնդիրները հանգամանալից ներկայացված են, նաև իրացման խնդիրը: Երաշխավորված քաղաքականություն է պետք գյուղատնտեսության ոլորտում, վստահություն, որ արտադրանքը՝ կաթը, խաղողը, մյուս կուլտուրաների գծով, կիրացվեն, ընդ որում՝ մրցակցային շուկայի պայմաններում: Եթե սա չկա, մենք չենք կարող խոսել մղումների մասին, իմպուլսների մասին, որ գյուղացին պետք է ունենա:

– Գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկը մեծ է, գները քաղաքում բարձրանում են, բայց Ձեր ասած մրցակցային պայմանները չկան:

– Ոչ միայն մայրաքաղաքում է մեծ: Մենք նաև առանձին արտադրատեսակների գծով կարող ենք ունենալ էկոլոգիապես մաքուր արտադրանք, որն իրացվելի է կամայական շուկայում: Եթե այսօր մենք լուրջ մրցակցություն ունենանք գնումների և իրացման հարցում, մի «Սպայկայի» փոխարեն երկու-երեք «Սպայկաներ» լինեն, որոնք կտեղափոխեն գյուղացու արտադրածը, եթե երաշխավորված գնով ապրանքի ձեռքբերում ունենանք, առևտրային սխեմաներով, որոնցով այն կհասցվի սպառողին և կիրացվի. սա՝ առաջին հանգամանքը, և երկրորդը՝ ներդրումների նպաստավոր պայմանների ստեղծում:

– Գյուղացին, երևի, նորանկախ մեր երկրի ստեղծման առաջին օրից պետական աջակցություն է պահանջում: Դուք դրան կողմնակից եք:

– Գյուղատնտեսության ոլորտը խիստ ռիսկային է, ի տարբերություն մյուս ոլորտների, և աշխարհում չկա երկիր, որ գյուղատնտեսությանը դոտացիաներ, պետական աջակցություն չլինի: Ես սրա շատ կողմնակիցը չեմ, բայց այս ոլորտում այլընտրանքը չկա: Այսօր ես նույնիսկ կառաջարկեի, որ ջուրն անվճար տրվեր գյուղացուն: Անախրոնիզմ է, երբ կրակի տակ գտնվող սահմանամերձ շրջաններում մտածում ենք հողի, ջրի վարձ հավաքելու մասին: Հիմնովին պետք է փոխվի ամբողջ քաղաքականությունն այս ոլորտում:

– Մինչ օրս՝ 25 տարի, սխալ են կառավարել:

– Ի տարբերություն անապատային երկրների, մենք այդ ներդրումներն ունենք՝ հողի, ջրի, արևի տեսքով: Նույն Իսրայելում, մյուս երկրներում նախ հող են ստեղծում մեծ ներդրումների գնով, պալմա են տնկում, կաթիլային սնուցում են ստեղծում: Մենք այս հողն ու ջուրն ունենք: Ես ինքս Թալինի շրջանից եմ, երբ դուրս եմ գալիս Աշտարակից և հասնում եմ Գյումրի, աջ ու ձախ անմշակ հող է: Ուսանողական տարիներից ես մի տրանսպարանտ եմ հիշում Սիբիրսկի օդանավակայանում փակցված՝ «Могущество России - это

освоение Сибири»: Ես հիմա ցավով պետք է արձանագրեմ, որ մեր փոքրիկ երկրի վարելահողերի 1/3-ը դեռ չի յուրացվել, մեր հզորությունն այս տարածքների յուրացումն է: Յուրացումը նաև աղբյուր կլինի զբաղվածության նոր ռեսուրսներ գտնելու:

– Փաստորեն, Ձեր գրքում վերելքի հեռանկարը կապվում է գյուղատնտեսության հետ, որի արտադրանքը չի արտահանվում, մինչդեռ մեր տնտեսության զարգացող, «հեռանկարային» ճյուղը լեռնամետալուրգիան է:

– Մեր տվյալներով, որոնք կան գրքում, այսօր գյուղատնտեսական արտադրանքի 3-4 տոկոսն ունի արտահանման կողմնորոշում: Բայց այս հնարավորությունը մենք երբեք չպետք է համեմատենք նույն լեռնամետալուրգիայի համալիրի հնարավորությունների հետ: Հանքերի շահագործումն ապագա չէ, և դրանով փորձել վերելք ապահովել՝ առաջնայինը չպետք է լինի: Նախ՝ ռեսուրսակախված տնտեսությունը հեռանկարային չէ, ինչ վերաբերում է մյուս ճյուղերին՝ բարձր տեխնոլոգիաներին և այլն, թեև դրանք հեռանկարային են, բայց այստեղ էլ մեզ լուրջ գիտակրթական համակարգեր են պետք, որոնք չունենք:

– Ստեղծվել է Հայաստանի զարգացման հիմնադրամ, որի առաքելությունն է տնտեսական աճի խթանումը, ներդրումների ներգրավումը, արտահանման խթանումը և այլն, և Դուք այս հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ եք: Արդյոք սա նշանակում է, որ տնտեսության զարգացման մյուս ծրագրերն այլևս չեն աշխատում:

– Տնտեսության կառավարման համակարգը խիստ խոցելի է, այստեղ բացակայում է տնտեսագիտահենք կառավարումը, որը կարող է իրականացվել գիտական սպասարկման միջոցով: Այսօր այն որոշումները, որոնք ընդունվում են կառավարությունում, կարճաժամկետ, ինչ-որ տեղ իրավիճակային խնդիրներ են լուծում: Մենք ունեցել ենք մի քանի երկարաժամկետ ծրագրեր: Տեսեք, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որը հետագայում փոխվեց կայուն զարգացման ծրագրի, կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիրը, երրորդը գյուղատնտեսության ծրագիրն էր՝ մինչև 2020 թվականը հեռանկարային զարգացման, բայց մոնիտորինգը ցույց է տալիս, որ այստեղ արդյունքներ չունենք: Ոչ մի ծրագրի արդյունքներ մենք այսօր չենք զգում: Կարծում եմ, որ այս նոր հիմնադրամը վերելքի նախադրյալների ստեղծման հարցում լուրջ դեր կարող է ունենալ:

– Վերջին հարցը: Դուք ուսումնասիրել եք մեր տնտեսությունը վերից վար, ինչ եզրահանգում ունեք մենաշնորհների վերաբերյալ, որոնք խանգարում են զարգացմանը:

– Ոչ միայն խանգարում են: Շուկայական տնտեսության աղը մրցակցային միջավայրի ստեղծումն է: Այստեղ մենք ունենք պարագրաֆ, որն

անհանգստացրել էր որոշ անձանց Ազգային ժողովում: Բերվում են մեր ներքին շուկայի պաշտպանության և զարգացման հիմնախնդիրները, ու առանձին պարենային մթերքների օրինակով տեսնում ենք գնագոյացման անհասկանալի մեխանիզմներ: Այս ամենին գրքում կա անդրադարձ:

Հարցազրույցը՝ **Սյուզան Սիմոնյանի**

«ԹԱՐՄ ՈՒՂԵՂՈՎ»՝ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ

21 ապրիլի, 2015

Դեռևս նախորդ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված «գիտելիքահենք տնտեսություն» հասկացությունը չի կարող կյանքի կոչվել, եթե բացակայում է տնտեսագիտահենք կառավարումը՝ լավորակ կառավարումը: Չնայած երկու հարևանների կողմից շրջափակված լինելուն՝ Հայաստանը կարող է դառնալ սուբյեկտ միջազգային տնտեսական համակարգում, լինել խաչմերուկ՝ բոլոր դժբախտությունները շրջափակման հետ կապելու փոխարեն, սեփական սխալներն ուղղելու մասին մտածելու դեպքում:

Որո՞նք են վարչապետ Հովիկ Աբրահամյանի պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում գրանցված տնտեսական ձեռքբերումները և կորուստները: Մեկնարկե՛լ են, արդյոք, խոստացված տնտեսական այն գործընթացները, որոնց մասին խոսում էին Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելիս: Այս և մի շարք այլ հարցերի մասին է զրույցը տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի հետ:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=BKemG0dbwXc&t=380s

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ «ԱԿԱՆԸ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿՆ Է

«Հայոց Աշխարհ» օրաթերթ, 25 սեպտեմբերի, 2015

Սահմանադրական բարեփոխումների շուրջ ծավալվող քննարկումների այս բուռն փուլում քաղաքական, հասարակական շրջանակներում խոսվում է ամեն ինչից, փոխարենը քիչ է խոսվում կամ գրեթե չի խոսվում ամենակարևորի մասին. ինչ անել, որպեսզի մեր օրենքները, առաջին հերթին՝ երկրի մայր օրենքը, գործի լիարժեքորեն: Պարզվում է՝ այս երևույթն իր գիտական տերմինն ունի, որ կոչվում է սահմանադրականություն:

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, Հանրային խորհրդի անդամ Հայկ Սարգսյանը, որ մանրամասնորեն ուսումնասիրել է խնդիրը, մեզ հետ զրույցում տարբեր շրջանակների ուշադրությունը հրավիրեց հենց սահմանադրության սահմանադրականության վրա:

– Պարոն Սարգսյան, սահմանադրական բարեփոխումների ընդդիմախոսները տարբեր փաստարկներ են բերում՝ ասելով, թե այսօր ժամանակավրեպ է երկրի մայր օրենքի բարեփոխումը, որ այն հաճախակի փոխելը տրամաբանական չէ, քանզի երկրում ստեղծված խնդիրների մեղավորը ամենևին էլ Սահմանադրությունը չէ: Հետաքրքիր է, ո՞րն է ձեր մոտեցումը:

– Մեր քաղաքական օրակարգում թիվ մեկ խնդիրը սահմանադրական փոփոխություններն են, և, իմ գնահատմամբ, դրանք անհրաժեշտություն են:

Իրոք, լսում ենք ամենատարբեր պնդումներ, բերվում են օրինակներ, թե 200 տարուց ավելի գործող ԱՄՆ սահմանադրության մեջ ընդամենը մի քանի հոդված է փոփոխվել, Անգլիան, չունենալով սահմանադրություն, ինչպե՞ս է կարողանում լուծել իր խնդիրները, կամ արդյոք գործող սահմանադրությունն է խանգարում ավելի լավ ապրելուն:

Համոզված եմ, որ, այո, որոշ իմաստով հենց գործող սահմանադրությունն է դրան խանգարում, հետևաբար բարեփոխումներն ամենևին ժամանակավրեպ չեն: Առհասարակ չի կարելի երկրում կուտակված խնդիրների, դրանց հանգուցալուծման մասին և հատկապես սահմանադրության մասին խոսել շաբլոններով:

Չնայած մեր խոսակցության թեման լինելու է սահմանադրականությունը, սակայն չեմ կարող զերծ մնալ գայթակղությունից և չխոսել նոր նախագծում ամրագրված նորմերի մասին:

Իսկ նրանում ամրագրված կառավարման համակարգը հնարավորություն է ընձեռում բարձրացնել նոր հիմունքներով կառավարություն ձևավորելու սահմանադրական պատասխանատվությունը: Սա շատ կարևոր շեշտադրում է: Խոսքս մի կողմից վերաբերում է քաղաքական խնդրին՝ իրական քաղաքական կոալիցիայի ձևավորմանը, մյուս կողմից՝ ֆինանսատնտեսական հիմնախնդիրները տնտեսական նոր հիմքի վրա կարգավորելուն:

Կարող եք հարցնել՝ չէ՞ որ մինչ այս էլ մեզանում ձևավորվել են կոալիցիաներ: Այո, բայց դրանց ձևավորման հիմքում կար արհեստականության լուրջ բաղադրիչ:

– Կարծում եք՝ սահմանադրորեն ամրագրելով կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման մասին դրույթը, ինչը ամենից շատ է վրդովեցրել քաղաքական ուժերին, կկարողանանք խուսափել արհեստական կոալիցիաների ստեղծումից:

– Իհարկե: Այն կարծիքին եմ, որ «կայուն մեծամասնություն» նորմի ներմուծումը հնարավորություն կտա, որ բնականոն ճանապարհով՝ ընտրական գործընթացների արդյունքում, Ազգային ժողովում երկու և ավելի ուժերի միջև ձևավորվի այդ քաղաքական կոալիցիան: Եվ այն այլևս չի կարող լինել արհեստական միավորում:

– Դառնանք տնտեսական ոլորտին առնչվող հարցերին. մասնավորաբար, նախագծում բավարար չափով ամրագրված չէ պայքարը մենաշնորհների դեմ, ինչպես նաև քննադատության ենթարկվեց այն դրույթը, որով երկրի տնտեսական կարգի հիմք է համարվում սոցիալական շուկայական տնտեսությունը, մինչդեռ ոչ մի խոսք չկա պետական սեփականության մասին:

– Ես այն կարծիքին եմ, որ սոցիալ-տնտեսական իրողությունները բավարար չափով արտացոլված են Սահմանադրության նախագծում: Օրինակ՝ 57-րդ հոդվածը, որը վերաբերում է տնտեսական գործունեության ազատությանը, տնտեսական մրցակցության երաշխավորմանը, մի նոր բովանդակություն է հաղորդում նախագծին:

Սահմանադրորեն հստակ ամրագրվում է, որ մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Իսկ այս նորմի իրացումը այլ օրենքների ամբողջության մեջ թույլ կտա ստեղծել բավարար պայմաններ, որ ներդրողներն ունենան ներդրումներ իրականացնելու ազատություն, և բարեխիղճ մրցակցային պայմաններ ստեղծվեն բոլորի համար: Իսկ մրցակցությունը զարգացման հենասյուն է, և կարծում եմ, որ այդ պայմանները սահմանադրորեն ստեղծված են:

Ինչ վերաբերում է տնտեսական կարգին, ապա, այո, շուկայական տնտեսությունը մեր տնտեսության հիմնական հենքն է: Իհարկե, շուկայական տարերքը կարող է կործանարար լինել: Հիշենք անկախության առաջին

տարիների բարեփոխումները. շոկային թերապիայի դրույթը, որը մեխանիկորեն վերցրինք ու տեղայնացրինք, կամ գյուղական տնտեսությունների գերմասնատվածությունը, ինչը չի կարող նպաստել արդյունավետ գյուղատնտեսության ստեղծմանը:

Բայց նախագծում երկրի տնտեսական կարգը հայտարարելով շուկայական տնտեսությունը՝ դա ամենևին չի նշանակում բազմասեփականության, այդ թվում՝ նաև պետական սեփականության բացառում: Հակառակը, կան համապատասխան հոդվածներ, որոնք սեփականության տարբեր ձևերի արդյունավետ գործունեության հնարավորություն են ընձեռում:

Ընդհանրապես, երբ խոսվում է շուկայական տնտեսության մասին, այս օրինակն եմ բերում. հոսանքը ինչ է, եթե ոչ էլեկտրոնների ուղղորդված շարժում, նույնը նաև տնտեսության մեջ է, շուկայական մեխանիզմներն առաջացնում են տնտեսական զարգացման այդ հոսանքը:

Մեր զրույցի ընթացքում, դուք ինձ «մղեցիք» խոսել սահմանադրական նախագծի «ականներից»: Ասեմ, որ ներկայացված փաստաթղթում ես «ականներ» չեմ նշմարում, փոխարենը սահմանադրության «ականը» սահմանադրականության անբավարար մակարդակի մեջ եմ տեսնում: Սրա արդյունքում է, որ անկախ նրանից՝ կգրվի վատ, լավ, կամ շատ լավ սահմանադրություն, հռչակված նորմերը կարող են ամբողջությամբ չգործել: Այստեղ, է, որ կուզենայի խոսել սահմանադրականություն կոչվող երևույթի մասին:

Սա հիմնախնդիր է, որ կա նաև տարբեր երկրներում: Աշխարհի միայն սակավաթիվ երկրների հաջողվեց 20-րդ դարում տեղի ունեցած սահմանադրությունների ընդունման հաղթարշավից հետո ապահովել սահմանադրականության քիչ թե շատ բարձր մակարդակ: Սահմանադրության ընդունումը դեռ բավարար պայման չէ սահմանադրականության հաստատման համար: Իսկ սա նշանակում է, որ սահմանադրության հիմնարար արժեքները, նորմերը պետք է լիարժեքորեն իրացվեն մեր իրական կյանքում, դառնան ապրող իրողություններ:

Սակայն աշխարհի շատ երկրներում դեռևս կա սահմանադրականության դեֆիցիտ: Հետևաբար մեր խնդիրը պետք է լինի ամեն ինչ անել, որպեսզի սահմանադրությունը լիովին գործի մեր իրական կյանքում, հաղթահարվի սահմանադրականության դեֆիցիտը, այսինքն՝ օրենքը լիովին չի աշխատում, օրենքը պե՛տք է լիովին աշխատի, որի համար պետք է քաղաքական կամք նաև դրսևորվի:

Սա լուրջ հիվանդություն է. գրվում են հրաշալի օրենքներ ու մնում թղթի վրա, մեր ժողովուրդն այդպես էլ չի զգում դրանց դրական ներգործությունը: Որո՞նք են սահմանադրականության դեֆիցիտի հիմնական պատճառները:

Այն կարող է դրսևորվել կոռուպցիայի բարձր մակարդակով: Ի դեպ, մեր վիճակը, մեր կատարած փոքր հետազոտությունների արդյունքում, ավելի բարվոք

է, քան Ուզբեկստանում, Թուրքմենստանում, Բելառուսում, Ռուսաստանում, Ղազախստանում, Տաջիկստանում, Կոսովոյում, Ադրբեջանում: Եվ, իհարկե, լավ դիրքերում չենք Արևելյան Եվրոպայի երկրների համեմատությամբ:

Բայց միայն կոռուպցիան չէ սահմանադրականության դեֆիցիտի պատճառը. երկրորդ տեղում արդարադատության նկատմամբ ցածր վստահությունն է, երրորդում՝ ընտրական մշակույթի ձևախեղումը՝ իր բացասական հետևանքներով:

Հաջորդը քաղաքական համակարգի անկատարությունն է, կուսակցությունների չկայացածությունը, մարդ-կուսակցությունների առկայությունը, ինչի մասին շատ ենք խոսում: Ահա, թե ինչն է պատճառը, որ շատերը խորհրդարանական համակարգին անցնելու հարցում ինչ-որ տեղ վտանգ են տեսնում:

Այստեղ գործ ունենք հավի ու ձվի հայտնի պատմության հետ. նախ կայացնել քաղաքական դաշտը, հետո անցնել խորհրդարանական համակարգի՞, թե՞ անցնելով նպաստել կուսակցությունների կայացմանը:

Եթե կա նման քննարկում, նշանակում է՝ մեզ տրված է ընտրության հնարավորություն:

Քիչ չեն այն երկրները, որոնք, անցում կատարելով խորհրդարանական համակարգի, ընթացքում «թևերը քշտած» կայացրել են իրենց քաղաքական դաշտը:

Ես ևս հակված եմ դրան՝ խորհրդարանական համակարգը կնպաստի քաղաքական դաշտի կայացմանը: Իսկ դա պետք է սկսվի կուսակցությունների խոշորացումով. դաշտում կմնան մի քանի կուսակցություններ, որոնք էլ կկարողանան կայացնել այն:

– Ինչ երաշխիքներ կան, որ բարեփոխված Սահմանադրության մեջ ամրագրված նորմերը կյանքի են կոչվելու:

– Սա շատ կարևոր հարց է: Որպես պատասխան՝ բերեմ մի օրինակ. լողալու իրավունքը բոլորիս է տրված, և կարելի է կարծել, թե բոլորս էլ կարող ենք ցատկել լողավազանի մեջ և իրացնել այդ իրավունքը: Բայց եթե ավազանում ջուր չլինի, պատկերացնո՞ւմ եք, թե ինչ վիճակում կհայտնվի ցատկողը՝ խփվելով անջուր տարածքին:

Նա ևս փաստորեն իրացրեց իր լողալու իրավունքը, բայց շատ տխուր վերջաբանով…

Այո՝ տեղում մնալով: Ուրեմն մենք պետք է փորձենք այնպես իրացնել մեր իրավունքները, որ դրանք լինեն մեզ համար օգտակար, արդյունավետ:

Լուրջ հետազոտական աշխատանքներ պետք է տարվեն, կարծում եմ, հարկ կլինի հատուկ կենտրոն ստեղծել, որ կարողանանք ուսումնասիրել ու արձանագրել, թե տարիների ընթացքում մեզանում սահմանադրականության

ինչպիսի՞ աճ ենք ունեցել: Կանխատեսել այսօր հնարավոր չէ, ժամանակը ցույց կտա, թե մեր օրենքները որքանով աշխատեցին:

Դրանով էլ պայմանավորված կլինի մեր երկարատև, տնտեսական կայուն աճը, որի մասին այդքան խոսում ենք, և զուր չի ասվում, որ ունենք «տրանսֆերտային ասեղի» վրա նստած տնտեսություն: Սա նորմալ չի կարող լինել: Բնակչության արտագաղթի մասին ենք խոսում, բայց չենք խոսում բիզնեսի, փողի արտահանման մասին, որն անթույլատրելի է մեր երկրի համար: Սա հենց սահմանադրականության ցածր աստիճանի, դեֆիցիտի հետևանք է:

Այստեղ առաջ է գալիս տնտեսության ճիշտ կառավարման հարցը: Անցած տարիներին վատ ենք վարվել մեր տնտեսության հետ, արհամարհել ենք, ոտքի տակ ենք գցել: Այսօր, սակայն, սահմանադրական այս նոր դրույթներով մեզ շանս է տրված շտկելու մեր մեջքը:

– Պարոն Սարգսյան, մեր երկիրն իր աշխարհաքաղաքական դիրքով ունի շանս՝ գտնվելու աշխարհի տնտեսական հետաքրքրությունների տիրույթում:

– Այո: Բազմիցս է ասվում այդ մասին, որ հենց մեր աշխարհագրական դիրքով կարող ենք դառնալ սուբյեկտ միջազգային հարաբերությունների համակարգում, հետաքրքրել աշխարհին, լինել խաչմերուկում, և ոչ թե մեր բոլոր դժվարությունները կապել շրջափակման հետ, որը կարող է դեռ երկար շարունակվել: Իսկ դրա համար պետք է կարողանանք փոխել մեր տնտեսության կառուցվածքը՝ այն հարմարեցնել իրավիճակին, տվյալ դեպքում՝ շրջափակմանը: Եվմենք դա կարող ենք անել, քանի որ ունենք ոլորտներ, որոնցում կարող ենք լուրջ հաջողությունների հասնել:

Եկել է պատժամիջոցներից ազատված Իրանի հետ առավել ակտիվ համագործակցության ժամանակը, ես մտածում եմ համատեղ նավթավերամշակման գործարանի ստեղծման մասին: Ինձ ոգևորում են չինական կողմի հետ բանակցությունները, Մետաքսի ճանապարհի ստեղծման շուրջ խոսակցությունները:

Եվ ես հուսով եմ, որ շատ շուտով կանցնի նավթային գործոնի ազդեցության ժամանակը, կգա գավառականությունից զերծ որակյալ կապիտալի ժամանակաշրջանը, որտեղ Հայաստանն իր մարդկային ներուժով կունենա իր ուրույն տեղը աշխարհում:

Իսկ դրա համար պետք է պայքարենք մեր երկրում առկա սահմանադրականության դեֆիցիտի կրճատման դեմ և աշխատենք ի նպաստ կարգապահության ամրապնդման, որն ամենատարբեր մակարդակներում, ի վերջո, կապահովի սահմանադրականության բարձր նշաձող:

Հարցազրույցը՝ **Արմինե Սիմոնյանի**

ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵՍԻՋՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻՆ

«Հայոց Աշխարհ» օրաթերթ,
18 փետրվարի, 2016

Փետրվարի 12-ի իր ելույթում նախագահ Սերժ Սարգսյանը շեշտեց, որ արտաքին մարտահրավերները նորովի են ազդում մեր տնտեսության վրա, հետևաբար դրանց հաղթահարումը պահանջում է նոր ջանքերի, նոր տնտեսական ծրագրերի ու մոտեցումների ներդրում:

Այս հարցերի շուրջ է մեր հարցազրույցը ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, հանրային խորհրդի անդամ Հայկ Սարգսյանի հետ:

– Որպես տնտեսագետ՝ ինչպես եք գնահատում երկրի ղեկավարի ելույթի՝ տնտեսությանը վերաբերող հատվածը:

Նախագահի փետրվարի 12-ի ելույթը կորակեմ այսպես. համապարփակ տեսլական, որը ոչ միայն տնտեսական խնդիրներ է ներառում ու լուծումներ առաջադրում, այլև առկա խնդիրները դիտարկում է շատ ավելի լայն համատեքստում.

Դրանք արտաքին քաղաքականության ուղղություններն են, սոցիալական խնդիրները, աշխարհում կատարվող փոփոխություններն ու դրանց հետևանքով առաջացող մարտահրավերները: Եվ այս բոլոր խնդիրների շարքում տնտեսականը նախագահը տարանջատված չդիտարկեց:

Անդրադառնալով հարկաբյուջետային քաղաքականությանը՝ նախագահը շեշտեց դրա խելամիտ իրականացումը, ասել է թե՝ կարգապահ լինելը:

Ես այստեղ կօգտագործեմ «հարկային կարգապահություն» բառակապակցությունը: Այսինքն՝ կարգապահություն ֆինանսական հատվածում՝ պարտավորությունների կատարման առումով: Փոխվում է մեր երկրի հարկային օրենսգիրքը, այն ավելի պարզեցվելու է, հստակեցվելու: Հետևաբար հարկային քաղաքականությունն էլ պետք է իրագործվի սահմանված օրենքի շրջանակներում:

Դրա համար պատահական չէ, որ օգտագործեցի «կարգապահություն» բառը: Այստեղ ևս նախագահի պահանջը հստակ է՝ հարկային ոլորտում պետք է հստակ ամրագրվեն մեխանիզմները, և պարտադիր պահպանվեն սահմանված կարգերը:

– Նախագահը նաև նկատեց, թե չնայած 2015 թ. տնտեսական տարվա 3,1 տոկոս տնտեսական ակտիվության ցուցանիշը տարածաշրջանի և գործընկեր այլ երկրների համեմատությամբ վատ չէ, սակայն տնտեսական աճի այդ մակարդակը բավարար համարվել չի կարող: Ուրեմն լրացուցիչ ջանքեր են պետք գործարար միջավայրի բարելավման, նոր ներդրումների ներգրավման ուղղությամբ: Ինչ է անհրաժեշտ անել այս ուղղությամբ:

– Կապիտալի ներհոսքի ապահովման համար պետք է ստեղծվեն բարենպաստ պայմաններ՝ անկախ կապիտալի բնույթից, աշխարհագրությունից: Ներդրողը պետք է իմանա, որ իր գործունեության եկամտաբերությունը Հայաստանում ապահովված է:

Ինչ վերաբերում է ջանքերի գործադրմանը, ապա, կարծում եմ, դա հետևյալ կերպ պետք է դրսևորվի: Արտերկրում գործող մեր համապատասխան կառույցները, այդ թվում՝ նաև դեսպանատները, իրենց աշխատառճի մեջ պետք է բեկում մտցնեն: Այսօրվա փոփոխվող աշխարհում Հայաստանը կարող է ներկայանալ ու իրապես դառնալ շատ գրավիչ երկիր ներդրումների համար:

Մասնավորաբար, նկատի ունեմ Արևմուտք-Եվրասիական տնտեսական տարածք խաչմերուկում Հայաստանի գտնվելու հանգամանքը, ինչը շատ եմ կարևորում: Հարկավոր է սահմանել մի շարք նորմատիվներ, որոնք հնարավորություն կտան, որ Հայաստանը Արևմուտք-ԵԱՏՄ տարածքում հանդիսանա հաղորդակցության միջանցք: Սա կլինի շատ կարևոր գրավական ներդրումների խթանման համար:

– Հաճախ է խոսվում պետության կողմից տնտեսվարող սուբյեկտների, ՓՄՁ-ների աջակցման, նրանց համար անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին. Սերժ Սարգսյանը չշրջանցեց նաև այս խնդիրը՝ շեշտելով, որ նոր ազդակներ պետք է հաղորդել տնտեսվարողներին, ակտիվացնել պետություն-մասնավոր համագործակցությունը: Որոնք պետք է լինեն առաջնային քայլերը:

– Ոլորտ առ ոլորտ խնդիրները պետք է լուծվեն: ՓՄՁ-ների գործունեության խթանումը երկրի տնտեսական առաջընթացի համար շատ կարևոր է: Հարկավոր է գործադրել ամենատարբեր մեխանիզմներ. ապահովագրական, սուբսիդավորման, արտոնությունների կիրառում: Ու այս ամենը չպետք է լինի հատվածային, ընտրողաբար, այլ պետք է տարածվի բոլոր արտադրողների վրա, դիցուք՝ գյուղատնտեսության ոլորտում:

Ինչու եմ շեշտում այս ոլորտը, որովհետև այս ոլորտի մեր 300000-ից ավելի տնտեսվարող սուբյեկտները, ըստ էության, լուրջ եղանակ կարող են ստեղծել՝ հատկապես միանալով վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններին: Այստեղ արտոնությունների ամբողջ զինանոցի ներդրումը

կարող է լուրջ ազդեցություն ունենալ: Եթե մենք այսօր միայն առանձին ձեռնարկությունների ենք տալիս արտոնություններ, կարծում եմ՝ դա արդարացված քաղաքականություն չէ: Մինչդեռ խնդիրը պետք է այս կերպ դրվի. փաստացի արտահանող բոլոր ձեռնարկություններին պետք է հնարավորություն ընձեռել, այսինքն՝ իջեցնել շահութահարկի դրույքաչափը, ընդհուպ մինչև սահմանել զրոյական շահութահարկ:

Շատ կարևոր է պետություն-մասնավոր հատված փոխգործակցությունը: Ասեմ, որ տնտեսվարող սուբյեկտը շատ զգայուն է, նա զգայուն է պետության կողմից հաղորդվող յուրաքանչյուր ազդակի համար:

Հետևաբար շատ կարևոր է, որ տնտեսվարող սուբյեկտները համոզված լինեն, որ պետության քայլերը ժամանակավոր բնույթ չեն կրում, որ սա պետական քաղաքականություն է, ընդ որում՝ երկարաժամկետ: Փաստորեն, այս հարցում ևս առաջադրանքը ձևակերպված է, և պետական կառավարման մարմիններին տրված է հստակ պատվեր:

– Եվ վերջապես, Մերժ Սարգսյանը խոսեց բոլորիս մտահոգող երևույթի՝ տնտեսության մեջ հավասար մրցակցային պայմանների բացակայության, հովանավորչության առկայության մասին: Սրանք «հիմնարար սկզբունքներ» համարելով՝ ասաց՝ խաղի նոր կանոնները պետք է հավասարապես տարածվեն բոլորի վրա: Ինչ ակնկալիքներ ունեք այս առումով:

– Գիտեք՝ մրցակցությունը շուկայի աղն է: Այն անհրաժեշտ պայման է, առանց որի ցանկացած խնդիր չի կարող լուծում ստանալ: Միայն առողջ, արդարացի մրցակցության պայմաններում տնտեսվարող սուբյեկտները կկարողանան իրենց հնարավորություններն առավելագույնս օգտագործել:

Այսօր տարբեր ոլորտներում կան տարբեր խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում՝ սկսած աշխատանքի իրավունքից, ձեռնարկատիրական գործունեության իրավունքից, մինչև կոռուպցիայի դեմ պայքար և այլն, և այլն: Լուծումները, կարծում եմ, երաշխավորված են նոր սահմանադրության դրույթներով: Միայն հարկավոր է և պետք է կարողանալ երկրի գլխավոր օրենքում ամրագրված նորմերը կյանքի կոչել: Ինչպես ասում են՝ ամեն ինչ պետք է անել, որպեսզի դրանք չմնան թղթի վրա, այլ իրականացվեն:

Հարցազրույցը՝ **Արմինե Սիմոնյանի**

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԴԻԿ՝ 18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Առավոտ» օրաթերթ,
4 մայիսի, 2016

Վերջին օրերին ամենաքննարկվող թեման 18 տարեկաններին պարտադիր զորակոչելուն է վերաբերում: «Այդ հարցը տարբեր ժամանակաշրջաններում տարիներ շարունակ քննարկվել է: Կարծում եմ, որ այն մարդիկ, որոնք արվեստի ճանապարհով են գնում, միևնույն է՝ բանակից հետո էլ զբաղվելու են իրենց ընտրած մասնագիտությամբ: Որակի առումով չեմ կարծում, թե փոփոխություն կլինի: Ամեն դեպքում, լավ կլիներ, որ խաղաղություն լիներ, և առանց ընդհատելու շնորհալի երեխաները շարունակեին իրենց ուսումը, բայց իրավիճակն է այդպիսին»,– Aravot.am-ին ասաց գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը:

Նաև հավելեց. «Մեր երկրի պայմաններում, որ թշնամիներով ենք շրջապատված, կարծում եմ՝ սխալ որոշում չէ: Այլ հարց է, որ այդ ամենը պետք է ճիշտ լինի, բոլորի համար հավասարություն լինի: Պետք է հրեաներից որոշ բաներ սովորենք. նրանք էլ նույն պայմաններում են ապրում, դա վաղուց անում են ու չեն տրտնջում: Մյուս կողմից էլ՝ ծառայելու որակը պետք է շատ լավ լինի, մարդկանց պետք է ինչ-ինչ հնարավորություններ տրվեն, օրինակ՝ արվեստագետներին՝ ստեղծագործելու հնարավորություն: Ժամանակին գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտելուց հետո, ես էլ եմ մեկ տարի ծառայել սովետական բանակում, իսկ հիմա մեր հայրենիքն է, նույնիսկ աղջիկները պետք է ծառայեն»:

Aravot.am-ը ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության ոլորտում գիտական աստիճաններ շնորհող ԵՊՀ 015 խորհրդի նախագահ, Հանրային խորհրդի անդամ Հայկ Սարգսյանից հետաքրքրվեց՝ ինչ կարծիքի է այն օրինագծի վերաբերյալ, ըստ որի՝ ուսանողներին չպետք է տրվի տարկետում, և 18 տարին լրացած արական սեռի ներկայացուցիչները պետք է ծառայեն բանակում: Պարոն Սարգսյանը նշեց, որ հարցը պետք է լուծվի համապարփակ քննարկումների արդյունքում:

«Այն օրինագիծը, որի մասին խոսակցություններ կան հեռուստաեթերում և գիտակրթական հարթակում, նոր չէ, պարզապես նոր շնչառություն է ձեռք բերել՝ կապված պատերազմական վերջին գործողությունների հետ: Չէի ասի, որ դա փոքր երկրի բախտն է, բայց մենք ունենք Իսրայելի և մյուս երկրների

օրինակը, երբ տղամարդկանց հայրենանվեր գործունեությունը տեսնում ենք նաև այդ կտրվածքով»:

Մեր հարցին՝ բանակից հետո երիտասարդների մեծ մասը կուզենա՞ն արդյոք կրթությունը շարունակել և անգամ զբաղվել գիտությամբ, պարոն Սարգսյանը պատասխանեց. «Ես չէի ուզենա միլիտարիզացված պետություն ունենայինք, բայց ինչ-ինչ ասպեկտներ պետք է պահպանվեն՝ բանակի կարիքների համար, տնտեսությունը պետք է ունենա կառուցվածքային որոշակի տեղաշարժ պետական կարիքների համար, պաշտպանիչ համակարգերի գծով գիտությունը պետք է զարգացնել՝ ձևավորելով և գործարկելով ռազմարդյունաբերական համալիրը: Իրերի բերումով կարող է այնպես ստացվել, որ մենք դեռևս երկարաժամկետ կարող է ունենանք դժվարին պայմաններ տնտեսությունը զարգացնելու համար: Նկատի ունեմ՝ շրջափակման պայմաններում տրանսպորտային հանգույցները լրացուցիչ վերադիր ծախսեր կարող են ենթադրել մեր գործարարների համար, այդ պատճառով տնտեսությունում առաջանում է կառուցվածքային տեղաշարժերի անհրաժեշտություն: Ինչ վերաբերում է բանակում ծառայելուն, այլ երկրների փորձը կա, որ բանակում ծառայածը բնավ էլ չի կորցնում լուրջ գիտությամբ զբաղվելու հնարավորությունը, աշխարհամարտերի ժամանակ զորակոչված մարդիկ դարձել են համաշխարհային կարգի գիտնական...

Արդեն նշեցի, որ խնդիրը պետք է համապարփակ քննարկվի: Բացի սրանից՝ չի կարելի ասել, որ առանց բացառությունների՝ բոլորը պետք է ծառայեն: Որոշակի շնորհներ ունեցած անձանց՝ միջազգային օլիմպիադաներում հաղթածներին, տաղանդավոր ջութակահարներին և այլն, հստակ չափանիշներով կարող են տարկետում տալ, մանավանդ՝ այդպիսի երիտասարդների թիվը մեծ չէ:

Իմիջիայլոց, գուցե անհամեստ թվա, բայց հանգամանքների բերումով ինքս էլ ասպիրանտուրայից եմ բանակ գնացել, իմ ուսումը ժամանակին ընդհատվել է՝ բանակում ծառայելով: Համոզված եմ, որ 18 տարեկանի կյանքում 1-2 տարին կորուստ չէ, այն կարող է նույնիսկ օգտակար լինել: Ամենատարբեր կոռուպցիոն ռիսկերը կարող են վերանալ: Բացի դրանից՝ այսօրվա բանակը կարիք ունի ամենատարբեր մասնագետների՝ սկսած մշակույթի ոլորտից, վերջացրած ռազմատեխնիկականով»:

ԵՊՀ դասախոս, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանն էլ թեմայի վերաբերյալ ֆեյսբուքի իր էջում գրել էր. «Չնայած երկրում առկա հուզական ֆոնը բարձր է, բայց հատկապես այս փուլում պետք է սթափ դատենք: Ուսանողներին տրվող տարկետումը վերացնելը պաշտոնյաների երեխաների առաջին գծում ծառայելու հարցը չի լուծելու: Պարզապես, կրթության ոլորտի կոռուպցիան տեղափոխելու է առողջապահություն և բանակ: Մենք

կորցնելու ենք նաև բակալավրի և մագիստրոսի կրթությամբ բանակ գնացողներին, ինչն ազդելու է սերժանտական կազմի և բանակի մասնագիտական որակի վրա: Ի վերջո, բժշկական, տեխնոլոգիական, ինժեներական, մանկավարժական և այլ կրթությամբ բակալավրի կամ մագիստրոսի աստիճանով զինվորականներ բանակում պետք է լինեն: Մենք կորցնելու ենք նաև այն ուսանողներին, որոնք բանակից հետո սովորելու հավես չեն ունենալու: Կա երկու լուծում՝ 1. ծառայելը պարտադիր է, բայց պետպատվերով սովորող ուսանողն է որոշում, երբ գնա բանակ (18 տարեկանում, բակալավրիատից հետո, մագիստրատուրայից հետո թե ասպիրանտուրայից հետո). 2. կաշառք վերցնողների գլխից բռնել: Պետք է մտածել նաև բանակի միջավայրը կրթական դարձնելու մասին»:

Գոհար Հակոբյան

ՆԱԽԱԳԻԾԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԶՄԱԹԻՎ ԾՈՒՂԱԿՆԵՐ

«Հայոց Աշխարհ» օրաթերթ,
6 սեպտեմբերի, 2016

Հարկային նոր օրենսգրքի նախագիծը կրկին վերադառնում է քննարկումների դաշտ: Ամենայն հավանականությամբ, փաստաթուղթը կդառնա խորհրդարանի աշնանային նստաշրջանում քննարկվելիք առաջնահերթ նախագծերից մեկը:

Հիշեցնենք, որ այս կարևորագույն օրենքի նախագծի քննարկմանը Ազգային ժողովը ձեռնամուխ եղավ գարնանային նստաշրջանի վերջին քառօրյայի վերջին նիստին: Այս հանգամանքը՝ մի կողմից, նախագծի բովանդակությունը՝ մյուս կողմից, հարուցել էին պատգամավորների դժգոհությունը: Սա այն բացառիկ նախագծերից է, որը սկզբից ևեթ արժանացավ և՛ ընդդիմության, և՛ քաղաքական մեծամասնության քննադատությանը:

Նախագիծն արժանացավ նաև ԱԺ տնտեսական մշտական հանձնաժողովի բացասական գնահատականին: Հանձնաժողովականները նախագծում լրջագույն կոռուպցիոն ռիսկեր են տեսնում՝ այն համարելով բիզնեսը կործանող գործիք:

Այդ օրերին միակը ՊԵԿ-ից Վախթանգ Միրումյանն էր, որ հակադրվելով խորհրդականների, տնտեսագետների քննադատություններին ու պնդումներին, թե նախագիծը մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը, ճգնում էր հակառակն ապացուցել՝ իր հերթին հայտարարելով, թե ներկայացված փաստաթուղթը խրախուսելու է տնտեսական գործունեությունը, նպաստելու է տնտեսական գործունեության ակտիվացմանն ու երկարաժամկետ տնտեսական աճի ապահովմանը:

Հարկային օրենսգիրքը, որը մասնագիտական շրջանակներում համարվում է գործարար դաշտի սահմանադրություն և վաղվա օրվա բիզնեսի ճակատագիրը որոշող փաստաթուղթ, պետք է լուծի ստվերի կրճատման հարցը, թաքնված աշխատավարձերի խնդիրը, առաջարկի այնպիսի դրույքաչափեր, որոնք կբարելավեն գործարար միջավայրը, ստեղծի բարենպաստ պայմաններ ներդրողների համար:

Մինչդեռ ներկայացվածը ոչ միայն այս հարցերը չի լուծում, այլև, հակառակը, նպաստավոր միջավայր է ստեղծում ստվերի համար, ավելացնում միջին խավի հարկային բեռը, ասել է թե՝ բյուջեի եկամուտները ավելացնելով հասարակության աղքատացման հաշվին՝ օրինականացնում է

աշխատող-գործատու հարաբերություններում առկա հանցավոր գործարքը, չի նպաստում ներդրումների զարգացմանը:

ՀՕ-ի նախագիծն առավելապես վրդովեցրել է գործարարներին: Չնայած հարկային օրենսգիրքը պետք է որ նպաստավոր պայմաններ ստեղծի գործարար միջավայրի համար՝ ապահովելով կայունություն ու կանխատեսելիություն, այն բազմաթիվ ծուղակներ է պարունակում հենց գործարարների համար: Դրանցից մեկն էլ այն է, որ հարկայինը մշտապես միջամտելու է ձեռնարկատիրոջ գործունեությանը:

Նախագծում բացակայում են ներդրումային ու գործարար միջավայրի ապագային միտված դրական քայլերը, չեն առաջարկվում երկարաժամկետ լուծումներ: Սա կարող է հանգեցնել նրան, որ Հայաստանում բիզնեսով զբաղվելը կդառնա ոչ նպաստավոր:

Ի դեպ, խորհրդարանում նախագծի քննարկման փուլում պտտվում էր կարծիք, թե այն միջազգային վարկատու կազմակերպությունների, մասնավորաբար Համաշխարհային բանկի ճնշման արդյունք է, որի նպատակն է Հայաստանում ավելացնել հարկերը, որպեսզի հնարավոր լինի ապագա վարկերը սպասարկել:

Կառավարությանն իր առաջարկներն է ներկայացրել նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հանրային խորհրդի անդամ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Մեզ հետ զրույցում պրոֆեսորն ասաց, որ մինչ այս նախագիծն ինքը ծանոթ է եղել օրենսգրքի նախնական տարբերակին, որն առավել ընդունելի էր, մասնավորաբար, եկամտահարկի առավել ցածր դրույքաչափով միասնական սանդղակ ունենալու տեսանկյունից: Սակայն այն վերափոխվեց. թե ինչ հանգամանքներով պայմանավորված՝ դժվարանում է ասել: Այդուհանդերձ, համոզված է, որ այս տեսքով օրենսգիրքը արմատապես պետք է վերաշտկվի:

Ըստ Հ.Սարգսյանի՝ «Ներկայացված Հանրային օրենսգիրքը Հայաստանի նման փոքր և էապես բաց տնտեսություն ունեցող երկրի համար պետք է խարսխվի ինչպես հարկային բեռի օպտիմալ մեծության, այնպես էլ այդ բեռի կազմի ու կառուցվածքի հիմնավորվածության հայեցակարգի վրա, ինչը բացակայում է: Շուրջ երկու տոկոսային կետով հարկեր-ՀՆԱ հարաբերակցության մեծացումը այն տեսքով, երբ այդ բեռը չի «ծանրանում» բարձր եկամուտ ունեցող շերտի վրա, չի կարող նպաստել հասարակության սոցիալական համերաշխությանն ու արդարությանը: Իսկ վերջինս երկրի սահմանադրականացման իրավատնտեսական հիմքն է:

Մեր զրուցակցի կարծիքով՝ ՀՕ-ն իր կանխատեսելիությամբ հասարակության մեջ և բիզնեսում սովորաբար առաջացնում է լուրջ սպասումներ, որոնք կարող են ինչպես խթանել, այնպես էլ սասանել առանց այդ էլ ցամաքող

ներդրումային հոսքերի ինտենսիվությունն ու կայունությունը, բիզնեսի ընդլայնումն ու փախուստը երկրից: Մինչդեռ օրենսգրքում այդ սպասումները բացասական են:

«Երբ սահմանվեց, որ շրջանառության հարկի շեմը՝ 115 մլն դրամը, ժամանակավոր է, այն չվերանայվեց՝ խոչընդոտելով տնտեսական զարգացմանը: Նախագծով այդ շեմը նախատեսվում է իջեցնել մինչև 40 մլն դրամ, որը, կարծում եմ, չունի բավարար հիմնավորումներ: ՓՄՁ-ների մեծ մասի համար կարելի է կիրառել հաստատագրված վճարներ և չառաջնորդվել մտացածին շեմերով»,– նշեց նա:

ՀՕ-ում ամրագրված դրույքաչափերը, ըստ տնտեսագետի, համալիր փորձաքննության չեն ենթարկվել: Արձագանքելով, որ հասարակությունը կարևորում է ոչ այնքան աշխատավարձերի ու կենսաթոշակների բարձրացումը, որքան այդ փոփոխությունների հետևանքով կենսամակարդակի բարձրացումը, պրոֆեսորը եզրակացնում է՝ Հայաստանի նման՝ աղքատության բարձր մակարդակ ունեցող երկրում ոչ թե աշխատավարձի, այլ եկամտի հարկումը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ պրոգրեսիվ հարկումը, անավարտ շինությունների նկատմամբ տուգանային հարկումը հնարավորություն կտան լուրջ մուտքեր ապահովել երկրի բյուջեում և առավել լիարժեք իրագործել պետության վերաբաշխման գործառույթը:

Ամփոփելով խոսքը՝ Հայկ Սարգսյանը եզրակացնում է՝ Հարկային նոր օրենսգրքի ներկայացված նախագիծը խիստ խոցելի է, հետևաբար անհրաժեշտ է լրամշակել այն ու վերափոխել ամրագրված բազմաթիվ առանցքային դրույթներ:

Ս. Սահակյան

ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ, ՈՐՊԵՍԶԻ ՎԱՂԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՊՐԵՆՔ. ՏՆՏԵՍԱԳԵՏԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Tert.am, 21 հոկտեմբերի, 2016

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանը Tert.am-ի հետ զրույցում դրական համարեց նոր կառավարության ծրագիրն այն առումով, որ ծրագրում կան նշաձողեր, որոնց հաղթահարումը կարող է ապահովել երկարատև, կայուն տնտեսական աճ:

«Դա շատ եմ կարևորում, որովհետև այսօր գտնվում ենք գերծանր սոցիալ-տնտեսական մեկնարկային դիրքերում: Ըստ կառավարության ծրագրի՝ մենք ունենալու ենք լուրջ նախադրյալներ, որպեսզի վաղը շատ ավելի լավ ապրենք: Ժամանակակից պայմաններում տնտեսական արդյունավետ ծրագրի իրականացումը մեծապես կախված է երկրում սահմանադրականության դեֆիցիտից»,– ասաց նա:

Տնտեսագետը համարում է, որ ծրագրի հաջող իրականացումը պայմանավորված է կառավարության օղակներում կոնկրետ լիազորությունները, մեխանիզմները լավագույնս կառավարելով:

Անդրադառնալով գյուղատնտեսության ոլորտին՝ ասաց, որ Հայաստանի համար գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը առանցքային, դոմինանտ նշանակություն կարող է ունենալ արտահանման ծավալների ավելացման և ընդհանրապես ներքին պահանջարկի բավարարման հարցում: Հայկ Սարգսյանը կարևորեց արդյունավետ գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեությունը:

«Երկու խնդիր պետք է կարողանանք լուծել գյուղատնտեսության ոլորտում՝ մեկը արտադրանքի իրացման հիմնախնդիրն է, երկրորդը՝ պետության աջակցությունը ապահովագրական ամենատարբեր համակարգերի ներդրման հարցում: Գյուղատնտեսությունը բոլոր երկրներում է սնվում դոտացիաների միջոցով, մեր երկիրը չի կարող բացառություն լինել»,– ասաց նա և նշեց, որ անոմալիաների դեպքում պետությունը պետք է գյուղացու կողքին լինի:

Տնտեսագետը հատկապես հատկանշական համարեց, որ կառավարության ծրագրում ձևակերպվում է կոնկրետ նպատակ՝ հստակ հասցեականությամբ, ժամկետներով, միջոցառումներով և կարծում է, որ հետևողական լինելու դեպքում կառավարությունը կհաջողի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

«Երևանի համալսարան» ամսաթերթ,
14 ապրիլի, 2017

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետին կից գործող՝ Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կողմից կազմակերպված «Սահմանադրականություն. ախտորոշման և կառավարման հիմնախնդիրներ» թեմայով սեմինարը վարում է ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

Սեմինարին մասնակցում էին ոչ միայն ուսանողներ, այլև ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

«Գիտության զարգացման առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտական ճյուղերն այլևս առանձին չեն զարգանում: Այսօր միջառարկայական գիտություններն են, որ առաջընթաց ու զարգացում են ապրում: Այդ ճյուղերից մեկն էլ իրավագիտության և տնտեսագիտության վրա հիմնված «Սահմանադրական տնտեսագիտություն» առարկան է, որն այսօր մեր ուսումնասիրման առանցքում է»,– նշեց Հայկ Սարգսյանը:

Բանախոսն անդրադարձավ սահմանադրական տնտեսագիտության ուսումնասիրության առարկային, դասակարգմանը, ինստիտուցիոնալիզմի և սահմանադրական տնտեսագիտության միջև առկա կապին, ինչպես նաև բնագավառի մասնագետների առաջ քաշած մեթոդներին ու մոտեցումներին:

Պրոֆեսորն ընդգծեց, որ սահմանադրական տնտեսագիտությունն ուսումնասիրում է կանոնների (սահմանադրական) գործող հատկությունները, այն ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները փոխազդում են, ինչպես նաև գործընթացները, որոնց միջոցով այդ կանոններն ու ինստիտուտները ծագում և ընտրվում են:

«Եթե ավանդական տնտեսագիտությունում վերլուծությունները կենտրոնանում են առկա սահմանափակումների շրջանակներում ընտրության վրա, ապա սահմանադրական տնտեսագիտությունը վերլուծությունն ուղղորդում է դեպի սահմանափակումների միջև ընտրությունը՝ այդպիսով ներկայացնելով քննության «ավելի բարձր մակարդակ»,– նշեց Հայկ Սարգսյանը:

Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց նաև իրականացված հետազոտության արդյունքները՝ նշելով, որ մշակվել է սահմանադրականության մակարդակի որոշման և վերլուծության հայեցակարգային սխեմայի հատուկ

մեթոդիկա, որը բաղկացած է միմյանց փոխադարձորեն փոխարինող և փոխադարձ լրացնող 5 մոդելից:

«Անցման տնտեսությամբ երկրների սահմանադրականության մակարդակի գնահատման համար անհրաժեշտ է ոչ միայն իրավական պետություն, ժողովրդավարական զարգացումների բնութագրիչների, սոցիալ-տնտեսական ցուցիչների, այլև քաղաքական կայունության ինդիկատորի ուսումնասիրություն: Եվ այս վերլուծության միջոցով հաջողվել է վեր հանել երկու թաքնված գործոն՝ ինստիտուցիոնալ զարգացման և ժողովրդավարական զարգացումների գործոնները»,– ընդգծեց բանախոսը և հավելեց, որ հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ անհրաժեշտ է անցումային երկրների սոցիալ-տնտեսական բնութագրիչները դիտարկել որպես ինքնուրույն ցուցիչներ:

Հավելենք, որ սեմինարները կրելու են շարունակական բնույթ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳԱՂՏՆԻՔԸ ԹԱՔՆՎԱԾ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«168 ժամ» օրաթերթ, 21-22 սեպտեմբերի, 2017

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը համոզված է՝ Հայաստանի տնտեսական զարգացման երաշխիքը սահմանադրականության բարձր մակարդակն է:

Հայկ Սարգսյանի հետ մեր զրույցը, այսպիսով, ոչ միայն և ոչ այնքան տնտեսության մասին է, որքան սահմանադրականության, և տնտեսության վրա դրա ազդեցության մասին:

– Պրն Սարգսյան, սկսենք ամենաթարմ տնտեսական ցուցանիշներից... Կիսամյակն ամփոփվեց 6,1% տնտեսական աճով... Ինչ է ասում Ձեզ այս թիվը, և ինչ արդյունքով կամփոփենք 2017 թվականը...

– Մի քանի գործոն կա, որոնք իսկապես լավատեսության հիմքեր են ստեղծում, օրինակ՝ նույն 6,1% տնտեսական ակտիվության աճը: Կարծում եմ՝ տարին կեզրափակենք ավելի լավ, քան պլանավորված էր բյուջեով. 3,2 %-ի փոխարեն աճը կլինի 4 %-ի շրջակայքում:

Լավատեսությանս հիմքը նախ՝ վստահության մթնոլորտն է, որը կցանկանայի, որ առավել թափ առներ և լիներ շարունակական, ու նաև՝ կառավարության ծրագրով ստեղծված աճի նախադրյալները: Ձեմ ուզում թվերով շատ ծանրաբեռնել, բայց մեխանիզմների առումով կառավարության ծրագիրն իսկապես տնտեսական աճի ու զարգացման հնարավորություններ է ընձեռում, և միջնաժամկետ ծախսերի ծրագրում դրանք արդեն ամրագրվեցին կոնկրետ թվերի տեսքով:

Մեխանիզմների մասով կարող եմ առանձնացնել, օրինակ, ներդրումային հիմնադրամի գաղափարը, որն առկա էր ծրագրում: Սակայն դա չպետք է սոսկ հռչակվի և մնա թղթի վրա: Ներդրումային հիմնադրամի ձևավորումն ու գործունեությունը պետք է դառնա ռեալ գործընթաց: Հիմնադրամը թույլ կտա բացարձակ այլ կառուցակարգերով միջոցներ ակումուլացնել ոչ միայն երկրի ներսում, այլև արտերկրից, այդ թվում՝ շատ փոքր գումարներով, հստակ ծրագրերի տակ, և դա կարող է տնտեսության համար լուրջ շարժիչ ուժ դառնալ: Նշեմ նաև, որ ներդրումային հիմնադրամը գործում է բանկային ռեժիմներից էապես տարբերվող մեխանիզմներով, ինչը տվյալ պարագայում շահեկան է:

– Օտարերկրյա ներդրումները, Ձեր կարծիքով, հայտարարված չափով կլինեն: 830-840 մլն դոլար՝ այս տարի, և 3,4 մլրդ դոլար՝ 5 տարվա ընթացքում:

– Այո, կարծում եմ՝ գուցե և փոքր շեղումներով, կլինեն, և տնտեսական աճի աղբյուրը հենց ներդրումներն են լինելու: Նկատի ունեմ ոչ միայն օտարերկրյա ուղղակի ներդրումները, այլ նաև ներքին ռեսուրսները: Ներդրումները պարտադիր պետք է լինեն, որովհետև դրա այլընտրանքը չկա: Մենք՝ տնտեսագետներս, լավ գիտենք, որ մեր տիպի երկրները 5-7% տնտեսական աճ ապահովելու համար պարտավոր են ՀՆԱ-ի մինչև 1/4-ի չափով ներդրումներ ապահովել: Մեր պարագայում՝ մոտ 10 մլրդ դոլար ՀՆԱ-ի դեպքում, տարեկան 2-2,5 մլրդ դոլարի ներդրումներ պետք է լինեն: Ինչ էլ անենք՝ այս խնդիրը պետք է լուծենք:

– Պետք է, բայց ինչպես:

– Ձեմ խոսի ամենատարբեր միջավայրերի բարելավման և այլ գործոնների մասին: Կասեմ ամենակարևորը՝ պետք է բարձրացնել սահմանադրականության մակարդակը երկրում:

Ընդհանրապես, պետք է նկատի ունենալ, որ Հայաստանում երկարաժամկետ կայուն սոցիալ-տնտեսական զարգացումն առաջիկա տարիներին ընթանալու է 2 խումբ սահմանափակումների պարագայում: Սահմանափակումների առաջին խումբը մեզ պարտադրված փաստացի պատերազմական իրավիճակն ու ցամաքային մասնակի շրջափակումն է: Այս սահմանափակումները ես դիտարկում եմ որպես յուրօրինակ տրանսակցիոն ծախսեր, որը, ի դեպ, լրացուցիչ բեռ է նույն բիզնեսի համար: Համոզված եմ, որ դրա հաղթահարումը տնտեսության առավել նպաստավոր կառուցվածքային տեղաշարժերի մեջ է, ինչն առանձին քննարկման թեմա է:

– Ինչ ասել է սահմանադրականություն և սահմանադրականության դեֆիցիտ:

– Խոսքը Սահմանադրության մեջ ամրագրված նորմերի և դրանց կիրարկման մասին է: Եթե Սահմանադրության նորմերը պատշաճ ձևով կյանքի չեն կոչվում, ապա ունենք սահմանադրականության դեֆիցիտ: Այդ դեֆիցիտը տարբեր երկրներում, այդ թվում և Հայաստանում, տարիների ընթացքում մշտապես առկա է եղել՝ իհարկե, տարբեր չափով: Հենց այդ դեֆիցիտն է մարդկանց վստահության ու լավատեսության ինչ-որ չափով կորստի պատճառը, ինչն էլ հանգեցնում է նրանց վարքագծային բոլոր նեգատիվ հետևանքներին՝ անտարբերություն, քաղաքացիական և սոցիալական ակտիվության պակաս, աննախաձեռնողականություն և այլն: Եվ այսօր ամենակարևոր խնդիրն այդ դեֆիցիտի կրճատումն է, որովհետև այստեղ է թաքնված սոցիալ-տնտեսական առաջընթացի երաշխիքը: Սահմանադրականության

բարձր մակարդակն իրապես կարող է ստեղծել բավարար նախապայմաններ՝ բարձր տնտեսական աճ և տնտեսական զարգացում ապահովելու համար:

– Այսինքն՝ մեր երկարաժամկետ տնտեսական աճի գաղտնիքը թաքնված է Սահմանադրության մեջ…

– Սահմանադրականության մեջ, և ոչ թե՝ Սահմանադրության: Այսինքն՝ ինչպես են երկրի Սահմանադրության մեջ ամրագրված նորմերն իրականում կյանքի կոչվում: Կառավարության «ռադարային էկրանի» վրա պետք է լինեն Սահմանադրականության վիճակի բնութագրիչները:

Սահմանադրության մեջ պարունակվող ամենատարբեր նորմերը՝ տնտեսական, ժողովրդավարական, իրավական, սոցիալական, քաղաքական և այլն, պետք է կենսունակ լինեն և առավելագույնս իրագործվեն:

Սահմանադրականության հիմնախնդիրը պարզաբանեմ կոնկրետ նորմերից մեկի օրինակով: Սահմանադրության 200-րդ հոդվածն ասում է, որ ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական նպատակն է գների և ֆինանսական կայունության ապահովումը: Նախկինում որպես նորմ՝ գնաճի զսպումն էր: Այսինքն՝ ֆինանսական կայունության ապահովումը դարձավ սահմանադրական նորմ, ինչը դրական ազդեցություն կունենա մարդկանց ու տնտեսվարող սուբյեկտների սպասումների վրա: Սա հարյուրավոր նորմերից ընդամենը մեկն է: Կան այլ նորմեր՝ կապված պատշաճ կենսամակարդակի, աշխատանքի, կրթության, ֆիզիկական, մտավոր ու կորպորատիվ սեփականության իրավունքների, ազատ մրցակցության հնարավորության և այլ սոցիալ-տնտեսական նորմերի հետ: Իրավական և ժողովրդավարական ոլորտից՝ անկախ դատաիրավական համակարգի, քաղաքացիական հասարակության, անկախ մեդիայի և այլնի վերաբերյալ նորմերը: Նորմերի այսօրինակ հավաքածուների կամ, այլ կերպ՝ ինդիկատորների միջոցով հնարավոր է բնութագրել կոնկրետ երկրում սահմանադրականության մակարդակը:

– Սահմանադրականության դեֆիցիտը, փաստորեն, արգելակում է մեր տնտեսական աճը… Ինչպես, ինչ չափով…

– Դա հենց ամենակարևոր խնդիրներից մեկն է: Այսօր դեռևս բացակայում են իրավական կարգավորումների տնտեսական հետևանքների գնահատման արդյունավետ մեխանիզմները: Ավելի պարզ՝ եթե մենք չգիտենք, թե Սահմանադրության այսինչ նորմի ոչ պատշաճ կիրարկումն ինչպես և ինչ չափով է ազդում տնտեսության վրա, կարգավորումների վերաբերյալ բավարար լուծումներ չենք ունենա: Մինչև այդ մեխանիզմները չստեղծվեն, և այդ հետևանքները չգնահատվեն, մենք չենք կարողանալու առանձնացնել առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրները, որի հետևանքով էլ սոցիալ-տնտեսական ոլորտում չենք ունենալու պոտենցիալ հնարավորությունների լիարժեք գործադրում:

Օրինակ՝ տարբեր կուսակցությունների նախընտրական ծրագրերում հռչակվում էին տարբեր թեզեր՝ այս կանենք կամ այն: Որևէ մեկը չի փորձել գնահատել, թե ինչպիսին կլիներ վնասը կամ օգուտը, եթե այդ թեզերը կյանքի կոչվեին: Չեմ ուզում քաղաքական ենթատեքստ հաղորդել, բայց, իրոք, կային վտանգավոր թեզեր, որոնք կարող էին խարխլել մեր տնտեսական համակարգն ու կայուն զարգացման հիմքերը: Ավելին՝ կարծում եմ՝ մեր պառլամենտում արդեն ընդունված առանձին օրինագծեր վնասակար են եղել հասարակության համար...

– Սահմանադրականության մակարդակը չափելի է: Հնարավոր է համեմատություն անցկացնել տարբեր երկրների սահմանադրականության մակարդակների միջև:

– Այո, և մենք արդեն ունենք որոշակի մեթոդիկայով առանձին գնահատումներ: Եթե փորձենք տարբեր ինդիկատորների միջոցով ներկայացնել սահմանադրականության մակարդակը, կարելի է խմբավորել այսպես՝ իրավունքի գերակայության նորմեր և կայուն զարգացման նորմեր: Մասնավորաբար, այս երկու ամփոփ բաղադրիչներով մենք կարող ենք խոսել սահմանադրականության մակարդակի մասին կոնկրետ երկրում: Դա էր մեր նպատակներից մեկը, երբ ստեղծվեց Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը:

Կենտրոնի հիմնական նպատակը, եթե մեկ նախադասությամբ ասեմ, տնտեսահրավական կարգավորումների և դրանց հետևանքների գնահատման մեխանիզմների մշակումն է ու դեֆիցիտի կրճատման գործընթացների կառավարումը: Բնական է, պետք է նախ դեֆիցիտի մակարդակը բացահայտվի, պետք է տեսնենք՝ որոնք են «նեղ տեղերը», և որոնք են սահմանադրականության «լոկոմոտիվ» նորմերը, որոնց վրա պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել:

Գնահատման մեթոդիկայի ստեղծումը հնարավորություն է տալիս ոչ միայն լուծել սահմանադրականության ախտորոշման խնդիրը, այլև կառավարել երկրում դրա դեֆիցիտի հաղթահարման գործընթացը: Այսինքն՝ ոչ միայն խնդիրը բացահայտել, այլ նաև տալ լուծումները: Դրա համար էլ սահմանադրականության հիմնախնդրի մասին խոսելիս մենք առանձնացնում ենք հետևյալ երեք բառերը՝ ախտորոշում, մշտադիտարկում և կառավարում:

– Դուք խոսում եք սահմանադրականության մասին, իսկ երբեմն-երբեմն, հատկապես ընդդիմությունը, հարց է բարձրացնում համակարգային փոփոխությունների անհրաժեշտության մասին: Արդյոք սա չէ՞ խնդիրների լուծման արմատական ուղին:

– Հարցադրման հեղինակներն իրավացի են, բայց ինչ առումով: Եթե առաջընթացի տեսլականը դիտարկվում է համակարգային փոփոխությունների

հարթությունում, ապա գործ ունենք առավել սահմանադրականացման պահանջի հետ: Համակարգային փոփոխություններ պահանջելով՝ մարդիկ ուզում են առավելագույնս իրականացված տեսնել մեր սահմանադրության մեջ ամրագրված, դիցուք, առաջին հոդվածի դրույթները՝ ունենալ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Այսպիսով սահմանադրականացումն ու համակարգային փոփոխություններն ուղղորդվում են գրեթե նույնական խնդիրների լուծմանը:

– Ձեր վերջին հրապարակումներից մեկը, որը համահեղինակությամբ է, վերնագրված է «Սահմանադրականություն. ախտորոշում, մշտադիտարկում, կառավարում»: Ինչ է այն պարունակում:

– Դա իրականացվել է «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի և ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» համագործակցությամբ: Գիտական մշակումների ներկա փուլը ներառում է սահմանադրականության մակարդակի ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման եղանակների ու գործիքների ստեղծումը: Այն գործադրվել է տարբեր երկրների ու դրանց խմբերի կտրվածքով:

Հետազոտությունների ամփոփումից ու ամբողջականացումից հետո մեր կենտրոնում կունենանք արտահանելի գիտական արդյունք հասարակագիտության ոլորտից: Դրան են ուղղված մեր ջանքերը:

– Մարդիկ ասում են, որ առանց նման հետազոտությունների էլ պարզ է, որ մինչև չլավացվի մրցակցությունը, չկրճատվի կոռուպցիան, չբարելավվի դատաիրավական համակարգը, մենք կդուխենք տեղում: Որքանո՞վ է արդարացված գիտական հետազոտությունների պահանջը:

– Իհարկե, իրավացի եք: Ավելին՝ թվարկված անհրաժեշտ բարելավումների ցանկը կարելի է շարունակել. բիզնեսի և քաղաքականության տարանջատում, իրավունքի գերակայություն, ինստիտուտների կայացում և այլն: Այս ամենը ակնհայտ է, բայց սոսկ թվարկումը պարզունակ կլինի: Բերեմ մեկ օրինակ: Խնձորի՝ ծառից վայր ընկնելու պատճառը հայտնի է, բայց, երբ այդ նույն խնձորը տեղադրում են օդապարիկում, այն վեր է բարձրանում: Երկու դեպքում էլ կա գիտական բացատրությունը: Երկրներում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիրների համատեղ (այսինքն՝ ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ինդիկատորների համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Առանց պատշաճ գիտական սպասարկման ու հիմնավորման՝ չի կարելի ակնկալել լուրջ արդյունքներ: Ի վերջո, պատճառահետևանքային կապերի հանգույցում պետք է բացահայտվեն առաջընթացի խոչընդոտներն ու խթանիչները,

դրանց դիրքավորումները և մշակվեն իրավատնտեսական կարգավորումների գործուն մեխանիզմներ:

– Կառավարության ծրագրով առաջիկա տարիներին նպատակադրվել է տարեկան միջինը 5% տնտեսական աճ: Սա է այն առավելագույն նշաձողը, որին Հայաստանը կարող է հավակնել իր սահմանափակման՝ սահմանադրականության ներկայիս դեֆիցիտի պայմաններում:

– Ես կարծում եմ, որ տնտեսական աճի պոտենցիալ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Մյուս կողմից՝ հասկանում եմ նաև կառավարության զգուշավորությունը՝ ունենալ նշաձող, որը պետք է իրատեսական լինի: Բայց եթե մենք այսօր աշխատանքի կազմակերպման, ռազմավարական ծրագրերի մշակման և գործադրման առումով հետևողական քայլեր անենք, հնարավորությունները շատ ավելի մեծ կլինեն:

Օրինակ՝ բնօգտագործման ոլորտում հատկապես մեծ հնարավորություններ ունենք. ոլորտում կուտակված շատ խնդիրներ կան, որոնք պետք է կարգավորվեն: Մասնավորաբար՝ Սյունիքի տարածաշրջանում պետք է խտանյութերի պարզ արդյունահանումից անցում կատարել վերջնարդյունքների (հազվագյուտ մետաղների կորզում և այլն): Կամ՝ մենք բնավ լիարժեք չենք օգտագործում մեր հողը, մասնավորապես՝ մեր 1,8 մլն հա գյուղատնտեսական նշանակության հողերը: Ինքս Թալինի շրջանից եմ, և ամեն անգամ այնտեղ գնալիս ափսոսանք եմ ապրում Աշտարակից Գյումրի տանող ճանապարհի ամբողջ երկայնքով առկա ու չօգտագործվող հողատարածքների համար: Այդ տարածքները կարելի էր պարզապես այգեստան դարձնել:

– Ինչն է խանգարում:

– Կարծում եմ՝ առաջին հերթին խանգարում է վատ գիտակցումը, որ մենք արդեն իսկ ունենք ներդրում՝ հենց այդ հողի տեսքով: Իսրայելի գյուղատնտեսության օրինակը շատ է բերվում: Բայց այնտեղ ավելի դժվար է եղել, որովհետև նրանք նախ պետք է այդ հողը ստանային՝ անապատը վերածեին օգտագործելի հողի: Իսկ մեզ մոտ այդ խնդիրը լուծված է: Մնում է գործել՝ ապահովել սահմանադրականության բարձր մակարդակ, ներդրումային հոսքի բարենպաստ պայմաններ, որպեսզի այդ տարածքները յուրացվեն:

Սահմանադրականության և տնտեսության կապի մասին մի բան ավելացնեմ՝ այսօր տնտեսագիտական միտքը եկել է այն համոզման, որ կառավարման ամենաարդյունավետ ձևը ինստիտուտների զարգացումն է: Ունես լավ ինստիտուտներ՝ ի դեմս, օրինակ, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կամ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և այլն, կունենաս լավ տնտեսություն: Չունես՝ չես կարողանալու գործադրել աճի պոտենցիալը:

– Դարոն Աճեմօղլուն ինստիտուտների դերը կարևորում է՝ դրանց կայացածությունը պայմանավորելով ժողովրդավարության մակարդակով: Օրինակ՝ Սինգապուրում ինստիտուտներն աշխատում են, սակայն ժողովրդավարություն չկա: Որքանո՞վ է կարևոր ժողովրդավարությունը: Հնարավո՞ր է ունենալ լավ ինստիտուտներ՝ առանց ժողովրդավարության բավարար մակարդակի:

– Ո՞վ ասաց, որ ժողովրդավարությունը կամ ավտորիտար համակարգն ինստիտուտներ չեն: Այո, տարաբնույթ ինստիտուտներ են: Խնդիրն այլ է՝ մենք ի՞նչ արժեքների ենք դավանում՝ եվրոպական, թե՞ եվրասիական: Ցանկալի կլիներ, որ կառավարման ոլորտում ունենայինք եվրոպական մոդելներ:

Ես հետևում եմ Ռուսաստանի տնտեսական անցուդարձին և վերլուծական մտքին: Վերջին երկու տասնամյակներից առաջինում նրանց մոտ եղել է տարեկան միջինը 7% տնտեսական աճ, երկրորդ տասնամյակում՝ 2007-2016 թթ., աճը գործնականում մոտ է եղել զրո տոկոսին: Ինչի՞ հետևանք է. սահմանադրականության ցածր մակարդակի: Որոշ վերլուծաբաններ, իհարկե, դա պայմանավորում են նավթի գներով, բայց մյուսները կոնկրետ վերլուծություններով ցույց են տալիս, որ անկումն ընդամենը 20-25%-ի չափով է պայմանավորված նավթի գներով: Անկման հիմնական պատճառը սահմանադրականության ցածր մակարդակն է:

Մեր մեթոդիկան թույլ է տալիս այդ գնահատումը կատարել անցման շրջանում գտնվող երկրների կտրվածքով: Հայաստանը սահմանադրականության ընդհանուր մակարդակի առումով շատ ավելի շահեկան վիճակում է, քան ԵԱՏՄ տարածքի երկրները: Եվ Ռուսաստանից ենք առաջ, և Ղրղզստանից, և ԵԱՏՄ անդամ չհանդիսացող Ուկրաինայից, Ուզբեկստանից ու Ադրբեջանից: Սակայն մեր նշաձողը սա չէ: Համեմատության մեջ, եթե այդ երկրներից լավ վիճակում ենք, դա չի նշանակում, որ պետք է բավարարվենք եղածով:

– 2015 թվականից մենք ԵԱՏՄ անդամ ենք: Եթե այդ միության գլխավոր դերակատար Ռուսաստանում սահմանադրականության մակարդակն ավելի ցածր է, քան Հայաստանում, ապա ինտեգրումը մեզ այդ առումով ի՞նչ է տալու: Մենք ենք նրանց վրա դրական ազդելու՝ բարձրացնելով սահմանադրականությունը, թե՞ նրանք են մեզ հետ տանելու:

– Միմյանց վրա փոխազդելու խնդիրն այլ հարթությունում է: Որքան էլ ԵԱՏՄ ազդեցությունը առանձին գնահատումների համաձայն ոչ նպաստավոր լինի, չենք կարող անվտանգության բաղադրիչը մի կողմ դնել: Ուստի պետք է շարունակել համագործակցությունը քաղաքատնտեսական հարթությունում «և, և» բանաձևով, և շահեկանորեն ինտեգրվել եվրասիական տարածքին և եվրոպական արժեհամակարգին: Հիշեցնեմ, որ մոտավորապես

2 շաբաթ առաջ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը հերթական անգամ հաստատեց, որ Հայաստանը աշնանը ԵՄ-ի հետ ստորագրելու է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, և որ չստորագրելու պատճառներ չկան: Սա հենց նշանակում է, որ իշխանությունը առաջնորդվում է «և, և» բանաձևով:

– Ռուսաստանում ֆինանսների նախկին նախարար Կուդրինի գլխավորությամբ տնտեսագետների թիմ է աշխատում, որը պետք է մշակի Ռուսաստանի երկարաժամկետ տնտեսական քաղաքականությունը՝ ուր են իրենք ցանկանում հասնել 2025 թվականին: Այդտեղ ներգրավված են երկրի լավագույն տնտեսագետները, այդ թվում՝ Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Աուզանը: Հայաստանում գիտական շրջանակների մասնակցությամբ նման քննարկումներ լինո՞ւմ են: Կոնկրետ Դուք՝ որպես Մայր բուհի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, ներգրավված եք կառավարության հետ համատեղ նման քննարկումներում:

– Իհարկե, մենք նման քննարկումներից զերծ չենք մնում: Ես նաև Հանրային խորհրդի անդամ եմ և իմ շատ հարցադրումներ իսկապես կարողանում եմ տեղ հասցնել: Նույն ներդրումային հիմնադրամի խնդիրը ես 4 տարի առաջ ներկայացրել եմ որպես կարևորագույն մեխանիզմ՝ պոտենցիալ հնարավորությունները լավագույնս օգտագործելու համար: Այսօր մեր տնտեսագիտական համայնքի և կոնկրետ մեր ֆակուլտետի միտքն ինչ-որ չափով տեղ հասնում է: Լսելը՝ լսում են, բայց պետք է նաև հետևողական լինեն ռացիոնալ հարցադրումների կենսագործման առումով:

– Դուք մեր զրույցի ընթացքում մի քանի անգամ շեշտեցիք, որ լավատեսորեն եք տրամադրված: Ո՞րն է այդ լավատեսության հիմքը: Ինչն է փոխվել կամ ի հայտ եկել, որ նախկինում չկար, որ լավատեսություն է հաղորդում:

– Ես կարծում եմ, որ այսօր հանրապետության նախագահն ու վարչապետը միասնական խնդիր են լուծում՝ երկիրն առաջ տանելու ուղղությամբ: Անկախ այն բանից, թե ինչպիսին կլինեն դասավորումները կամ վերադասավորումները, համոզված եմ, որ երկրի կառավարման ընդհանուր համակարգի բարելավմանն ուղղված այդ քայլերը շարունակական կլինեն: Մենք պետք է կարողանանք Արցախի հետ միասին այս 40 և ավելի հազար քառ. կմ տարածքի վրա մեր պոտենցիալը լավագույնս գործադրել: Ի վերջո, բոլոր երկրներում այդ «հրաշքները»՝ սինգապուրյան, չինական և այլն, պայմանավորված են եղել սահմանադրականության մակարդակի բարձրացմամբ: Սա է հիմնասյունը կամ հիմնաքարը:

Իսկ ընդհանուր լավատեսությանս հետ կապված՝ մի դրվագ պատմեմ, որ ավելի պարզ լինի: Երբ Սահմանադրականության ախտորոշման մասին պրեզենտացիան էի պատրաստում, այդ օրը լրատվամիջոցներից մեկում

պատահաբար կարդացի հարցազրույց Արցախում ծառայող 20-ամյա զինվոր Դավիթ Վարդանյանի հետ: Նա այսպիսի մի միտք էր արտահայտել. «Ես Հայաստանը տեսնում եմ որպես մտավոր, տնտեսական և մշակութային հանգույց: Այլ մշակույթները հասկանալու և նրանց հետ հարաբերություններ կառուցելու մեր ունակությունը մեզ բացառիկ մրցակցային առավելություն է տալիս և հնարավորություն ընձեռում դառնալ տարածաշրջանի առաջատար»: Այս միտքն ինձ այնքան դուր եկավ, որ հանեցի և դարձրի իմ պրեզենտացիայի բնաբան:

Ասեմ, որ ես միայն հետո իմացա, որ այդ 20-ամյա զինվորը Ռուբեն Վարդանյանի որդին է:

Հարցազրույցը՝ **Բաբկեն Թունյանի**

B4B կայքում տեղադրված այս հարցազրույցը՝
հայերեն, ռուսերեն և անգլերեն,
ունեցել էր ավելի քան 130 հազար դիտում

2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱԿՆԿԱԼԵԼ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Aysor.am, 12 նոյեմբերի, 2017

Կառավարությունը նախատեսում է 2018 թվականին 4,5 տոկոս տնտեսական աճ գրանցել: Ֆինանսների նախարար Վարդան Արամյանն այս մասին բազմիցս հայտարարել է տարբեր հանդիպումների ժամանակ, այսօր էլ վերահաստատեց խորհրդարանում «ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական քննարկման ընթացքում:

Aysor.am-ի հետ զրույցում ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանն ասաց, թե կանխատեսվող տնտեսական աճն իրատեսական է:

«4,5 տոկոս տնտեսական աճն իրատեսական գնահատական է, հատկապես երբ դա հնչում է կառավարության կողմից. որովհետև կառավարությունն աշխատում է հնարավորինս զգուշավորություն ցուցաբերել նման արդյունքների հրապարակման ժամանակ, այն ակնկալիքով, որ չլինի ավելի փոքր, քան նախանշված բնագիծն է: Բայց ես կարծում եմ, որ պոտենցիալ հնարավորությունները շատ ավելի մեծ են, եթե, իհարկե, ցուցաբերվի հետևողականություն տնտեսական քաղաքականության այն մասով, որ այսօր ստեղծված է ՀՀ-ում, և առկա առավելությունները գործարկվեն ամբողջովին»,– նշեց Հայկ Սարգսյանը:

– Ասացիք, որ պոտենցիալ հնարավորությունները մեծ են: Ինչն է այդպիսի լավատեսության հիմքը, հաշվի առնելով հանգամանքը, որ վարչապետն ասում է, թե տնտեսական աճի հիմքերը բավարար ամուր չեն երկարաժամկետ տնտեսական աճի հավակնելու համար:

– Այդ հարցում ունեմ իմ, չէի ասի՝ օրիգինալ, այլ այսօր ընդունված համընդհանուր տեսակետը, այն է՝ տնտեսության ոլորտում ժողովրդավարական նորմերն ամրագրել, ունենալ ինստիտուտների գործարկում: Եթե ինստիտուտները վատ աշխատեցին, դժվար կլինի: Մասնավորապես՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը. այս ինստիտուտները պետք է շատ լավ աշխատեն, դա բավարար պայմաններ կստեղծի նաև ներդրումների ապահովման համար:

– Ակնկալվող 4,5 տոկոս տնտեսական աճի պայմաններում քաղաքացու կենսամակարդակում փոփոխություններ կլինեն:

– Կարծում եմ՝ այս աճի պայմաններում բնակչությունը դեռևս չի զգա շոշափելի փոփոխություններ, դրանք կլինեն աստիճանաբար, եթե մենք ունենանք հետևողական զարգացում տարիների ընթացքում, ընդ որում՝ ոչ պակաս, քան ՀՆԱ-ի 5-6 տոկոս արդյունքն է: Այդ արդյունքները կունենանք, եթե հաշվի առնենք, որ այդ քաղաքականությունը միտված պետք է լինի եկամուտների բևեռացման մեղմացմանը, որովհետև այսօր ստեղծվել է մի իրավիճակ, որ ունենք եկամուտների խիստ բևեռացում, իսկ դա հասարակության լայն շերտերի համար չի կարող նպաստավոր լինել:

Ի վերջո, աճը շոշափելի կարող է լինել, եթե բարձրանան աշխատավարձերը, իրական եկամուտները, ցածր ինֆլյացիայի պայմաններում աշխատավարձերի և կենսաթոշակների բարձրացում տեղի ունենա: Սակայն այդ հնարավորությունները դեռևս արձանագրված չեն այս տարվա բյուջեում:

– Ֆինանսների նախարար Վարդան Արամյանը հայտարարեց, որ տարեվերջին արտաքին պարտքը կհասնի 6,7 միլիարդի: Մտահոգիչ չե՞ք համարում պարտքի ավելացումը:

– Ոչ, մտահոգիչ չէ: Աշխարհում է ընդունված պարտք ունենալը, բոլոր երկրներն են պարտքային խրամատներում: Շատ կարևոր է, թե այդ պարտքն ինչ արդյունավետությամբ է գործադրվում: Առաջիկա տարիներին բացարձակ թվի ավելացման պայմաններում ունենալու ենք պարտքային բեռի տեմպի նվազեցում, ինչը լավ նախանշան է հետագայում այդ բեռը թեթևացնելու համար:

– Հետևաբար կարո՞ղ ենք ասել, որ 2018 թվականի բյուջեն իրատեսական է, և արտաքին ցնցումների դեպքում էլ երկրում շոկեր չեն լինի:

– Մտավախություններ չկան, սակայն ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ եկող տարվա բյուջեի արդյունքներով բարեկեցության մակարդակի էական բարձրացում չենք կարող ակնկալել:

Հարցազրույցը՝ **Սյուզի Մելքոնյանի**

ԻՆՉՈՒ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՉԷ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ «ԹՌԻՉՔՈՎ» ԴՈԿՏՈՐ ԴԱՐՁՆԵԼԸ

«Առավոտ» օրաթերթ,
3 նոյեմբերի, 2017

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, «Առավոտի» խնդրանքով մեկնաբանելով դժգոհությունների տեղիք տված «ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքի» նախագիծը, որը հավասարության նշան է դնում գիտությունների թեկնածուի ու դոկտորի միջև, նկատեց, որ ԽՍՀՄ-ի ժամանակ էլ կային ձեռքբերումներ, որոնցից մեկը գիտական աստիճանաշնորհման համակարգն էր: «Մենք այժմ ԵԱՏՄ տարածքում ենք և ամենատարբեր դաշտերում ներդաշնակեցում ենք փնտրում, հետևաբար անհասկանալի է դիսոնանսը ռուսական համակարգի հետ: Այնտեղ ևս պահպանվում են գիտությունների թեկնածու և դոկտոր աստիճանները: Անգամ եվրոպական կրթական տարածքի հետ մեր ինտեգրումը հաշվի առնելով՝ չենք կարող չփաստել, որ Եվրոպայի առանձին երկրներում էլ է առկա երկաստիճան համակարգը»,– ասաց գիտությունների դոկտորը: Նրա ձևակերպմամբ՝ երկաստիճան համակարգի վերացման դեպքում, ճիշտ է, չեն լինի կորուստներ, բայց կունենանք ոչ հստակ տարբերակում: «Գիտությունների թեկնածուի շեմը հաղթահարողները միանգամից կհռչակվեն դոկտորներ, եթե անցումային դրույթները նորմալ չլինեն: Իմիջիայլոց, գիտությունների դոկտորը PhD-ն է (Doctor of Phylosophy) բնագիտական մասնագիտության ծրագիրը հաջողությամբ ավարտած դոկտորական աստիճանի հայցորդի համար, իսկ հումանիտար մասնագիտության դեպքում՝ DLA-ն (Doctor of Liberal Arts): Մնացած բնագավառներում չեմ կարծում, թե երկաստիճան համակարգից հրաժարվելը արդարացվում է: Խնամքով պետք է մոտենալ հարցին, շատ լուրջ քննարկումներ պետք է լինեն, օրենքը պետք է լուրջ ապրոբացիա անցնի»,– համոզված է գիտնականը:

ԱՌԱՆՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԽԱՐԽԼԵԼ ՄԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Առավոտ» օրաթերթ, 11 նոյեմբերի, 2017

Ըստ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի, բնագիտական առարկաների պարագայում կրթության անընդհատությունը անհրաժեշտություն է:

«Առավոտը» պրոֆեսոր Հայկ Սարգսյանից հետաքրքրվեց՝ ինչ կարծիքի է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագծի և կրթության անընդհատության մասին, մանավանդ պրոֆեսորը օրերս մասնակցել էր ԵՊՀ ռեկտորատի ընդլայնված նիստին: Հիշեցնենք, որ այնտեղ քննարկվում էր օրենքի նախագիծը, մասնավորաբար տարկետման իրավունքի հետ կապված խնդիրները՝ այսօրվա իրողությունների ֆոնին:

«Հիմնականում տիրապետող էր այն դրույթը, որ մեծամասնությունը կողմ էր օրենքի ընդունմանը: Ես իմ ելույթում անդրադարձա գիտության հետագա զարգացման հետ կապված խնդրահարույց մի քանի կետի, որոնք գուցե օրենքի երկրորդ ընթերցման ժամանակ վերանայվեն: Ներքին համոզում ունեմ, որ այդ հնարավորությունը կա: Խոսքը մասնավորապես տարկետման իրավունքի որոշակի համակազմի մասին է՝ հիմնականում բնագիտական թևի ուսանողների հետ կապված: Խնդիրն էլ հետևյալին է վերաբերում, որ մեր երկրի դեմքը, իմիջը պետք է լինեն երկրի կրթական, պաշտպանական համակարգերը, բանակը և գիտությունը: Սրանք պետք է դիտարկել որպես միմյանց փոխլրացնող համակարգեր: Բանակը և երկրի անվտանգությունը չպետք է դիտվի որպես երկրի միակ գերակայություն՝ ինչ-որ իմաստով ստորադասելով գիտությունը: Կարծում եմ, որ գիտությունն այսօր լուծում է և շարունակելու է լուծել անվտանգության խնդիրներ, հատկապես վաղվա օրվա կտրվածքով: Առանց գիտության վաղը կարող ենք խարխլել մեր անվտանգությունը»,– ասաց Հայկ Սարգսյանը: Նրա ձևակերպմամբ՝ օրենքի ընդունումից հետո հնարավոր կլինի խուսափել նեգատիվ երևույթներից, զեխությունից, բանակից ծառայելուց խուսափելու շինծու հնարքներից, որոնք գործադրվում են հատկապես առողջապահության ոլորտում: «Նույնիսկ երկրորդ ընթերցումից հետո, օրենքն ընդունելուց հետո պետք է համապատասխան կարգավորումներ լինեն, որպեսզի սոցիալական արդարության սկզբունքը, որը դրված է օրենքի հիմքում, իրապես կյանքի կոչվի: Մյուս կողմից, իմ համոզմամբ, ընդհանրապես դատարկ են բոլոր այն խոսակցությունները՝ գիտելիքահեն

տնտեսություն ունենալու վերաբերյալ, եթե այսօր և հետագայում հետևողականորեն ձեռնամուխ չլինենք հանրակրթության, բարձրագույն կրթության և գիտական համակարգերի արդյունավետության բարձրացմանը»,– նշեց նա:

Պարոն Սարգսյանը կուտակված խնդիրներին էլ անդրադարձավ. «Շատ կարևոր է, թե ինչպիսին կլինեն իրավակարգավորումներն ու կառուցակարգերը, այսինքն՝ մեխանիզմները: Կրկնում եմ՝ մենք այլ ճանապարհ չունենք, քան գիտելիքահեն տնտեսության վրա կառուցած պետություն ունենալը. այս օրերին դա հնչեց նաև նախագահի շուրթերից: Կրթությունը մեր ժողովրդի համար եղել և մնում է գերակա արժեք, սակայն մեր կրթական համակարգն այսօր կարծես տնտեսական և հոգևոր վերելքին ուժգնորեն չի նպաստում: Արդի կրթահամակարգերի ստեղծումը և բարձրորակ մասնագետներով ապահովվածությունը գիտատար տնտեսության գրավականն է. մի բան, առանց որի անհնար է զարգացած և զորեղ Հայաստանի տեսլականը»: Գիտնականը նաև փաստում է, որ բարձրագույն կրթության ոլորտում ունենք որոշակի ձեռքբերումներ, ինչի մասին կարող են վկայել հաջողությունները բնագիտական թևում՝ միջազգային ասպարեզում: Սակայն առաջընթացի հեռանկարը, այնուամենայնիվ, մեր զրուցակիցը մտահոգիչ է համարում. «Մենք այսօր մեկ ուսանողին բաժին ընկնող $1000-ին համարժեք դրամով (կրթական ծախսերի մասին է խոսքը) կկարողանանք ապահովել միջազգային կրթական բարձր մակարդակ: Ես տարակուսում եմ այս հարցում, թերևս ոչ... Երկար ժամանակ կարող ենք այսօրվա նման աղքատության ծուղակում հայտնվել, եթե լուրջ անդրադարձ չլինի կրթության որակին: Այս պահին հիշեցի Անտոն Չեխովին, որն ասում էր, թե աղքատությունը, չհասկացվածությունը և չիրացվածությունը ատամնացավից ուժեղ են ցավեցնում... 2000-ականներին, երբ քննարկվում էր աղքատության շեմի հարցը, մի առիթով արդեն ասել եմ, որ աղքատը ոչ թե այն հայ ընտանիքն է, որտեղ մեկ շնչին 2 կամ 3 դոլար է բաժին ընկնում, այլ այն, որ չի կարողանում հոգալ կրթության ծախսերը»:

«Առավոտը» հետաքրքրվեց, եթե նախատեսված է, որ առաջիկայում կրթության ֆինանսավորումը նվազելու է մինչև 1,85 տոկոս, այդ ֆինանսավորմամբ ինչպե՞ս է հնարավոր լինելու որակյալ կրթություն ապահովելը:

«Ստեղծվել է մի պարադոքսալ իրավիճակ, երբ, մի կողմից, իրատեսական չեն կրթական բարձր վարձավճարները, մյուս կողմից էլ՝ էժան կրթությունը չի կարող նպաստել աղքատության շեմից հեռանալուն: Այդ մասին վկայում են տնտեսական աճին ուղղված՝ ժամանակակից գիտնականների մշակումները, մասնավորաբար, Դարոն Աճեմօղլուի և Ալչյանի տեսությունները: Դրանք իմ պնդման հաստատումներն են: Իսկ ռեալ ուղին մեկն է՝ Հայաստանում պետք է զարկ տրվի բարձր արտադրողական տեխնոլոգիաներին

և այդ տեխնոլոգիաների ներգրավվածությանը՝ կրթական ոլորտ, ինչը միանգամայն հնարավոր է հատկապես բնագիտության և բնագիտական կրթության պատշաճ աջակցման պարագայում: Եվրոպական համալսարաններում մեր ֆիզիկոսները, մաթեմատիկոսները, կենսաբանները, քիմիկոսները դիրքեր են զբաղեցնում, բայց դա երկար չի կարող շարունակվել, քանի որ մաշվում են նաև այդ կապիտալի վերարտադրության հնարավորությունները: Մեր համալսարաններում տնտեսագետները, ցավոք, դեռևս դոտացիա են ստանում հումանիտար թևից: Կարծում եմ՝ պետք է վերանայվի ոչ թանկարժեք կրթության տարվող քաղաքականությունը, ի վերջո էժան կրթությունը ստույգ լավագույնը չէ: Ավելին՝ ծառայություններն ինքնարժեքից ցածր գնով իրացնող կազմակերպություններն ի վերջո սնանկանում են: Բայց կրթությունը կարծես թե շրջանցում է այս հանգամանքը, համալսարանականների մասնագիտական պատասխանատվությունն այսօր դեռևս պահում է այդ իրավիճակը: Մեր պատրաստած մասնագետները դեռևս պահանջված են այսօրվա կլինիկաներում, հարկային համակարգում, կարող ենք նաև մասնագետներ պատրաստել «դրսի» համար: Իմիջիայլոց, մեր արտահանման քաղաքականության մեջ, իսկ արտահանումը հասնում է գրեթե 40%-ի, սա լուրջ բնագիծ է և նախադրյալ է՝ վաղը տնտեսական զարգացում ունենալու համար: Բայց դա պետք է լինի շարունակական: Կարծում եմ, որ այդ բաղադրիչը՝ կրթական ծառայություններ մատուցել դրսի ուսանողների, նույնպես պետք է առկա լինի: Հիշում եմ՝ տարիներ առաջ նույնիսկ միջին մասնագիտական կրթության գծով վիետնամցի ուսանողների էլ կարելի էր տեսնել պրոֆտեխուսումնարաններում: Այնպես որ, այդ պոտենցիալը կա, և այն կարծիքին եմ, որ մենք դա պետք է կարողանանք գործադրել:

Ինչ վերաբերում է ֆինանսական հնարավորություններին, շատ կարևորում եմ այն հանգամանքը, որ կրթության սնուցումը պետք է ակնկալել ոչ միայն բյուջեի սուղ միջոցներից, այլև ամենատարբեր բարեգործական հիմնադրամների, գործատուների՝ երկրի կրթահամակարգ մուտք գործելու միջոցով: Դրսի համալսարաններում ևս իրենց բյուջեն բաղկացած է բարեգործական բաղադրիչներից»,– հայտնեց պարոն Սարգսյանը: Նրանից տեղեկացանք, որ, օրինակ, ԵՊՀ-ի բյուջետային միջոցները՝ մոտ 20 մլն դոլարին համարժեք, 70 տոկոսի չափով գոյանում են ուսանողների վարձավճարներից: Մեր զրույցի ավարտին դարձյալ անդրադարձ եղավ կրթության անընդհատությանը և դժգոհություններ հարուցած օրենքի նախագծին: «Կարծում եմ՝ 18 տարեկանը չպետք է լինի սահմանագծին, ընդ որում՝ այդ հնարավորություններն ընձեռված են օրենքով: Նա կարող է պայմանագրային հիմունքներով շարունակել իր ուսումը բակալավրիատում: Չեմ կարծում, թե նպատակահարմար է, որ 18 տարեկան որպես զինվոր չկայացածը սահմանի վրա

լինի և այսօրվա ոչ արդիական տեխնոլոգիաներով մեր սահմանագիծը պահի…»,– ասաց Հայկ Սարգսյանը:

Ինչ վերաբերում է կրթության անընդհատության գաղափարին, պարոն Սարգսյանի համոզմամբ, որոշ դեպքերում, իսկ դա բնագիտական կրթությանն է վերաբերում, պետք է տաղանդաշատ ուսանողների կրթության անընդհատությունը պահել: «Նման ուսանողները կարող են 100-200 հոգի լինել, այդ հնարավորությունը պետք է ապահովվի նրանց համար: Կարծում եմ, որ երկրորդ ընթերցման պարագային օրենքի ուժով այդ հնարավորությունը կընդգծվի: Ինքս Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանն ավարտելուց հետո, հանգամանքների բերումով, չեմ գնացել զինվորական ճամբար, հույս չունեի, որ ինձ կպահեն ասպիրանտուրայում: Սակայն ասպիրանտուրա ընդունվեցի ու որպես զինվոր՝ ծառայեցի բանակում: Բայց նման օրինակները չպետք է ընդհանրացնել: Հատկապես բնագիտական առարկաների մի որոշակի սեգմենտի համար կրթության անընդհատությունը անհրաժեշտություն է»,– հայտնեց Հ. Սարգսյանը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՇԱՃ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԼԱՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԱՎ ԱԺ ՈՒՆԵՆԱՆՔ

1in.am, 28 նոյեմբեր, 2017
https://www.1in.am/2252897.html

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանը պնդում է իր այն կանխատեսումը, որ 2017 թ. Հայաստանը կունենա 4 տոկոս տնտեսական (ՀՆԱ-ի) աճ: Դեռ ավելին՝ ԱՎԾ ներկայացրած տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) 6-7 տոկոս աճը նրան հույս է տալիս, որ ՀՆԱ-ն կարող է աճել մինչև 5 տոկոսը: Նա հորդորում է տարբերել ՏԱՑ-ը և ՀՆԱ-ն: Իսկ ոչ վաղ անցյալում ԱՎԾ-ն ոչ թե ՏԱՑ, այլ ՀՆԱ-ի աճ էր ներկայացնում: Եվ տպավորություն կա, որ ՏԱՑ-ի ցուցանիշ հրապարակելով՝ հիմա փորձում է տնտեսական աճի ավելի ցածր ցուցանիշը քողարկել: Հ. Սարգսյանը համաձայն չէ այս դիտարկմանեւ և վստահ է, որ ԱՎԾ-ի մեթոդաբանության փոփոխության մեջ մանիպուլյացիաներ չկան: Ներկայացնում ենք Հ. Սարգսյանի հետ զրույցն ամբողջությամբ:

– Դուք ասել էիք, թե 5 տոկոս տնտեսական աճ ունենալու համար անհրաժեշտ է ապահովել տարեկան ՀՆԱ-ի մեկ քառորդի չափ կամ 2-2,5 մլրդ դոլարի ներդրումներ: Բայց ԱՎԾ-ն տարեվերջին կարող է այդքան աճ ցույց տալ՝ չունենալով 2-2,5 մլրդ դոլարի մեկ երրորդի չափ ներդրումը:

– Հայաստանի տիպի երկրները, որպեսզի երկարատև հատվածում կարողանան պարբերաբար 5-7 տոկոս աճ ապահովել, պետք է ունենան այդքան ներդրում: Ընդ որում՝ դրանք կարող են լինել թե՛ օտարերկրյա, թե՛ ներքին ներդրումների տեսքով: Տարին դեռ չի ամփոփվել, և կառավարության այն հռչակումը, որ մենք կունենանք 800 մլն դոլարի ներդրումներ, կարծում եմ՝ իրագործելի է: Եվ մենք դեռ պետք է լսենք այդ ուղղությամբ մեր կառավարության հաշվետվությունը:

– Եթե անգամ այդ 800 մլն դոլարի ներդրումը լինի, դա Ձեր ասած գումարից երեք անգամ քիչ է: Այդպիսով չեք կարծում, որ թե՛ ՏԱՑ-ի գրանցված 7 տոկոսանոց աճը, թե՛ ակնկալվող ՀՆԱ-ի ավելի քան 4 տոկոս աճը կլինի մանիպուլյացիայի արդյունք, պարզապես թիվ:

– 2-2,5 մլրդ դոլարի ներդրումները պետք է երկարատև տնտեսական աճ ապահովեն: Մենք կարող ենք ցածր բազայի պարագայում որևէ տարում թռիչքաձև աճ ունենալ, բայց դա շարունակական չի լինելու: Նախորդ տասնամյակում, երբ երկնիշ աճ կար, շինարարությունն ընդհուպ մինչև 40 տոկոս

աճ ուներ: Այդ պարագայում ՀՆԱ-ի երկնիշ աճը բացատրելի էր: Բայց, ցավոք, դա չէր կարող լինել մշտական, քանի որ խարսխված էր մի բաղադրիչի վրա:

– Իսկ նման՝ 2-2,5 մլրդ դոլարի ներդրումներ ներգրավելու համար ինչ է պետք անել:

– Պետք է բարելավել ներդրումային միջավայրը, պետք է երկրում բարձրացնել սահմանադրականության մակարդակը: Մենք նախ պետք է կարողանանք գնահատել, ախտորոշել սահմանադրականության մակարդակը: Տնտեսական օրգանիզմն իր զարգացումներում չի կարելի իրավական, ժողովրդավարական, քաղաքական միջավայրից առանձնացնել: Տնտեսությունը պետք է այս ամբողջության մեջ դիտարկել, և մոտեցումը պետք է լինի համակարգային, ամբողջական, ու այս պարագայում սահմանադրականության բազմաշերտ երևույթը պետք է դառնա տնտեսության զարգացման չափանիշ: Ինչպիսին է այդ մակարդակը, այդպիսին կարող է լինել տնտեսական զարգացման մակարդակը: Օրինակ՝ սահմանադրական նորմ է պատշաճ կենսամակարդակը: Ընդ որում՝ ժամանակին վիճարկվում էր հարցը՝ նոր Սահմանադրության մեջ դրա համար կոնկրետ թվեր ամրագրե՞նք, թե՞ ոչ: Պարտադիր չէ, որ մայր օրենքում նման թվեր ամրագրվեն, դրանք կարող են լինել օրենքներում:

– Բայց Սահմանադրության մեջ նման կոնկրետացում ամրագրելը նշանակում է իշխանության պատասխանատվության ուժեղացում, հակառակ պարագայում այն կարող է դիտարկվել որպես պատասխանատվությունից խուսափում:

– Ոչ: Այդուհանդերձ կա պարտադրանք, որ պետք է ընդունվի օրենքը, որտեղ կոնկրետ նշաձողեր կլինեն: Իսկ պատշաճ կենսամակարդակի կբերի լավ ընտրությունը և լավ խորհրդարանը: Խորհրդարանը լավ կլինի այն պարագայում, եթե նրա ընդունած օրենքները կանխորոշեն մեր հետագա առաջընթացը:

– Ընդունված կարծիք կա, որ մեր օրենքները լավն են, բայց դրանք ըստ էության չեն կիրառվում:

– Մենք կարող ենք ասել, որ օրենքները բավարար չափով չեն իրականացվում կյանքում, որի անունն է սահմանադրականության դեֆիցիտ: Ընդ որում՝ պետք է նշել, որ այդ դեֆիցիտն առկա է բոլոր երկրներում՝ տարբեր չափերով: Պատշաճ կենսամակարդակի լավ խորհրդարանի, լավ օրենքների, լավ ինստիտուտների գործադրմամբ արդեն կկրճատվեն տարբեր բացասական դրսևորումները՝ կոռուպցիան, դատական համակարգի անկախությունը կմեծանա: Այս ամենը թույլ կտա, որ սոցիալ-տնտեսական ինդիկատորներն ավելի բարձր մակարդակի լինեն:

– Դուք տնտեսագետ եք և ասեք, թե պատշաճ մակարդակն ինչ թվերով կարելի է ներկայացնել: Նվազագույն աշխատավարձ, սոցիալական զամբյուղի ինչ մակարդակ պետք է սահմանել:

– Պատշաճ մակարդակն օրենսդրորեն իր նվազագույն շեմն ունի, որը ՀՀ-ում սահմանված է նվազագույն աշխատավարձի ցուցանիշ:

– 55000 դրամը պատշաճ կենսամակարդակ է:

– Ես չեմ կարծում, որ այսօր պատշաճ մակարդակ է, և կարծում եմ՝ մենք մեր բոլոր հնարավորությունները չենք գործադրել, որ այդ պատշաճությունն ապահովվի:

– Այդպիսով կարող ենք եզրակացնել, որ մեր իշխանությունները Սահմանադրության այդ շատ կարևոր նորմը խախտում են:

– Այդ հարցում մենք դեռ պետք է ձեռքբերումներ ունենանք: Եթե արդեն օրենքում նշվի, թե այդ պատշաճը ոչ թե նվազագույն աշխատավարձն է, այլ նվազագույն զամբյուղը, որի մեջ պետք է ներառվի և՛ պարենի, և՛ կոմունալ վճարումների, և՛ այլ էլեմենտներով համալրված զամբյուղը, ապա պարտադրված կլինեն դա ապահովել: Իսկ եթե ռացիոնալը լինի, որը դրված է զարգացած երկրների կենսամակարդակում, շատ ավելի լավ: Եվ պատահական չէ, որ մենք շարունակում ենք աղքատության հաղթահարման մասին խոսել:

– 30 տոկոս աղքատություն, մոտ 20 տոկոս գործազրկություն: Այսինքն՝ սոցիալ-տնտեսական ոլորտում սահմանադրականությունը խախտվում է համատարած կերպով:

– Դուք կարող եք նշել բազում բացասական երևույթներ՝ ընդհուպ մինչև դեպի դուրս միգրացիոն հոսքը, բայց ես կարծում եմ՝ դրանք մեր անցումային քառորդդարյա ժամանակահատվածի համար բնորոշ, բայց լուծելի խնդիրներ են: Որևէ մեկը չի ասում, որ տնտեսական զրկանքներին զուգահեռ պահպանել ենք ազատագրված տարածքները, շրջափակման պայմաններում տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններ են արվել: Իհարկե, ես դա բավարար չեմ համարում, և տնտեսության այսօրվա կառուցվածքը որևէ կերպ չի կարող արդարացվել: Տնտեսության մեջ 5-10 տարի հետո SS, արդյունաբերության, գյուղատնտեսության մասնաբաժինները էապես կարող են փոխվել: Նույն կերպ՝ զբաղվածության մակարդակը: Կես միլիոն մարդ զբաղված է գյուղոլորտում, բայց գործնականում արտադրողականություն չունենք: Մենք պետք է զարգացնենք այս ոլորտը, բարձր տեխնոլոգիաներով հագեցնենք: Գյուղատնտեսական օգտագործելի հողերը մոտ 2 մլն հա են, կես միլիոն վարելահողը մենք չենք օգտագործում: Իսրայելում այդ հողը տեղափոխում են անապատների վրա ու ներդրումներ կատարում, օդում ու հիդրոպոնիկայի եղանակով հող են ստեղծում և դառնում ինքնաբավ երկիր: Մենք այդ

ներդրումն արդեն ունենք հողի տեսքով, բայց դա չի օգտագործվում: Սա ընդամենը մի օրինակ է: Մենք չպետք է տառապենք գիգանտամանիայով և ներկրենք 1 մլն տոննա մետաղ, հաստոցներ ու արտադրություն կազմակերպենք և ԽՍՀՄ տարիների նման դուրս ուղարկենք: Այդ նոստալջիին պետք է վերջ տալ: Մենք ոգևորված էինք ԵՏՄ 170 մլն բնակիչ ունեցող շուկայով, բայց ինչ ենք իրացնում: Վերամշակվող արտադրության ինչ-որ տեսականի: ԵՄ-ի հետ այս համաձայնագրի ստորագրմամբ նոր հնարավորություններ կընձեռվեն, շատ ավելի մեծ՝ 500 միլիոնանոց ավելի վճարունակ շուկա մտնելու: Բայց մենք պատրաստ ենք դրան, նրանց «տնտեսական սպասասրահները» սպասում են արդյոք մեր արտադրությանն ու ծառայություններին:

– Որևէ մեկն էլ չի սպասի, պետք է համապատասխան որակի արտադրանք ապահովել և փորձել շուկա ձեռք բերել:

– Այո, շուկա ձեռք բերելու համար բարձր պահանջներ բավարարող ապրանք պետք է ունենանք: Մենք այսօր դա չունենք, բայց ունենք դա ձեռք բերելու հնարավորությունները: Դա պահանջում է ֆինանսական և որակավորված մարդկային կապիտալ:

– Մեր որակյալ կադրերը արտագաղթում են, միաժամանակ երկրից կապիտալի արտահոսք կա: Այսինքն՝ բարձր տեխնոլոգիաներ ներդնելու առանձնապես ցանկություն էլ չկա: Սա բիզնես մտածողության, թե վստահության բացակայությունն է: Ինչու՞ բիզնեսը չի ցանկանում այստեղ խոշոր ներդրումներ անել:

– Այդ և այլ բաղադրիչները առկա են, ցավոք: Բայց հեշտ չէ միանգամից այդ խնդիրները լուծել, պետք է մեր մտածողությունը փոխել: Շրջափակված արաբական աշխարհով և մինչև հիմա էլ պատերազմական խնդիր ունեցող Իսրայելը մտածողության կազմակերպվածության արդյունքում զարգացում ունեցավ:

– ԵՏՄ-ին անդամակցելը չստիպեց ՀՀ-ին որակյալ արտադրանք ու տնտեսություն ունենալ, քանի որ անդամ երկրները նման պահանջ չունեն: ԵՄ-ի հետ համաձայնագրի ստորագրումը կստիպի՞ լուծել այդ խնդիրը:

– Առկա է նման մեկնաբանություն, բայց ես չեմ տեսնում գլխավորը, որը ստեղծվում է «և, և» բանաձևի պայմաններում: Մենք կարող էինք ոչ բարձր ստանդարտներին բավարարող մեր արտադրանքն իրացնել ԵՏՄ տարածքում, բայց դա չի լինի ԵՄ տարածքում: Իսկ դա շատ լավ ազդակ է, որ վերակառուցես քո արտադրանքը, կարողանաս առավել պահանջարկված ապրանք ստեղծել:

– Տնտեսության մեջ գիգանտոմանիայով չտարվելու մասին խոսեցիք, արդյոք դրա մի դրսևորում չէ՞ այն վիճակը, որ այսօր մեր տնտեսության, հարկերի 70 տոկոսը բաժին է ընկնում խոշոր բիզնեսին, և ընդամենը 30 տոկոսն

է, որ ՓՄՁ-ն է զբաղեցնում: Ձեք կարծում, որ դա պետական քաղաքականության արդյունք է:

– Համաձայն եմ, որ մեզ մոտ միջին խավը դեռ ձևավորված չէ, շատ երկրներում դա 50 տոկոսից բարձր է: Մենք, ցավոք, ունենք աղքատություն, մինչև 3-5 տոկոս չքավորություն: Մեզ մոտ 3 մլն բնակչության կամ 700 հազար ընտանիքի 10 տոկոսը կարողանում են իրենց գրեթե ամեն ինչ թույլ տալ: Կա մեկ ուրիշ 70 հազար ընտանիք, որոնք կարոտ են նորմալ սննդի: Ցավն այս բևեռացումն է, որը պետք է հնարավորինս մեղմացվի: Մեր խոշոր բիզնեսը կամ պետական լծակները պետք է հնարավորություն ընձեռեն, որ ձևավորվի այդ միջին խավը: Կարծում եմ, որ կառավարության որոշումները շատ դեպքերում պետք է միտված լինեն նման խնդիրների լուծմանը:

– Իսկ կառավարությանը հաջողվե՞լ է ազատ տնտեսական մրցակցություն կամ հավասար հարկային դաշտ ստեղծել:

– Այսօր ոչ խտրական մրցակցային միջավայր դեռևս չունենք: Որքան էլ այդ նպատակով ստեղծված ինստիտուտները՝ ՏՄՊՊՀ-ն և այլ կառույցները լինեն, կարծում եմ՝ այսօր ընտրողականությունը դեռևս տեղ ունի, բայց հույս ունեմ, որ վիճակը կբարելավվի: Իսկ սահմանադրականության ապահովումը թույլ է տալու լուծել սոցիալական խնդիրները: Մենք մեր փոքր խմբով անցած շաբաթ Հռոմում մասնակցեցինք մի գիտաժողովի, որտեղ ներկայացրինք զեկույց և անդրադարձանք սահմանադրականության մակարդակի խնդիրներին, այդ թվում՝ ՀՀ-ում կուտակված խնդիրներին, դրանց լուծման տնտեսաիրավական կարգավորումներին: Մեկ օրինակ ներկայացնեմ. այս նոր Սահմանադրության շրջանակներում փոխվում են Կենտրոնական բանկի գործառույթները, և, կարծեք թե, կա հնարավոր վտանգ, որ ԿԲ անկախությունը կարող է սեղմվել: Գուցե փող տպելու միջոցով կառավարությունները կարճաժամկետ տնտեսական աճ, զբաղվածություն ապահովելու նպատակով ունենան գայթակղություն կրճատելու ԿԲ-ի անկախությունը: Եվ մեր հետազոտական խումբը մտածում է՝ ինչպես անել, որ այդ գայթակղությունը չլինի՝ անկախ անձերից, որ ԿԲ վարկունակության, հասարակության վստահության աճ լինի, որ ԿԲ անկախության և գնաճի միջև բացասական կապ չլինի:

Արմինե Ավետյան

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՇՈՒՐՋ

«Հայելու առաջ» հաղորդաշար, 30 հունվարի, 2018

Բավարար են, արդյոք, մեր երկրում գործադրվող ժողովրդավարական մեխանիզմները, որպեսզի երկիրն ունենա առաջընթաց: Պարզվում է, որ ոչ. մենք ունենք խոսքի ազատության իրավունք, քաղաքացիական հասարակություն, մեդիայի ազատություն, ժողովրդավարության այլ ատրիբուտներ, բայց այս ամենը բավարար չէ, եթե չեն գործում ինստիտուտները:

Հայկ Սարգսյանի հետ զրույցը գնաճի, սոցիալ-տնտեսական վիճակի, եկամուտների գերբևեռացման, սահմանադրականության ցածր մակարդակի, չգործադրվող հնարավորությունների մասին է:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://youtu.be/JxvpT4uIalk,
https://www.youtube.com/watch?feature=share&v=JxvpT4uIalk&app=desktop

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱԴԱՐՄԱՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է

«Գործք» ամսագիր, հունվար, 2018

«Գործք» ամսագրի հյուրը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, 2011 թվականին Սինգապուրում անցկացված «Ասիայի լավագույն բիզնես դպրոցների պարգև» մրցույթում «Տնտեսագիտության լավագույն պրոֆեսոր» տիտղոսին արժանացած Հայկ Սարգսյանն է: Նա գիտական հանդեսներում հրատարակված, միջազգային գիտաժողովներում ներկայացված 150-ից ավելի գիտական հոդվածների և զեկույցների, ինչպես նաև շուրջ երկու տասնյակ մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հեղինակ է: 2009 թվականից Հայկ Սարգսյանը Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի, իսկ 2010-ից «Գործք» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

Պարոն Սարգսյանին հյուրընկալվել էինք իր աշխատասենյակում վերջերս, սակայն աշխատասենյակի օրացույցի թերթը դեռևս 2017 թվականի փետրվար ամիսն էր ցույց տալիս:

– Այս էջը միտումնավոր չեմ շրջել: Լուսանկարում քառօրյա պատերազմի հերոս, ֆակուլտետի ուսանող Շուլի Հակոբյանն է, որը թշնամու երեք տանկ է ոչնչացրել: Նա մեր պարծանքն է: Ի դեպ, մեկ այլ էջում ֆակուլտետի պրոֆեսոր Ռուբեն Ա. Գևորգյանի ուսանող որդու՝ Ալբերտ Գևորգյանի լուսանկարն է, որը մաթեմատիկական միջազգային օլիմպիադաների ոսկե մեդալակիր է: Նման երիտասարդներն են երաշխավորում զորեղ Հայաստանի տեսլականը,– ասում է պարոն Սարգսյանը:

– Պարոն Սարգսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ընթացող Հայաստանի տնտեսության առանձին հիմնախնդիրներին նվիրված սեմինարների շարքում տեղի ունեցավ Ձեր կողմից ղեկավարվող Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կազմակերպած «Սահմանադրականություն. ախտորոշման և կառավարման հիմնախնդիրները» թեմայով սեմինարը, որը վարում էիք Դուք: Ներկայացրեք ինդրեմ, «սահմանադրականություն» եզրույթի բովանդակությունը:

– Շնորհակալություն նախաձեռնության և հարցի համար: Խոսքը Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքների, նորմերի և դրանց կիրարկման մասին է: Եթե Սահմանադրության նորմերը պատշաճ ձևով կյանքի չեն կոչվում, ապա ի հայտ է գալիս սահմանադրականության դեֆիցիտ

(պակասուրդ), և խաթարվում է հասարակության բնականոն, քիչ թե շատ նորմալ կենսագործունեությունը: Պետք է ասել, որ այդ դեֆիցիտը միայն Հայաստանին բնորոշ չէ: Սահմանադրականության դեֆիցիտը առկա է բոլոր երկրներում, ինչ խոսք, տարբեր չափով և խորությամբ: Այսօր մեր խնդիրն այդ դեֆիցիտի հնարավորինս կրճատումն է, որովհետև միայն այդ դեպքում է հնարավոր ստեղծել բավարար երաշխիքներ սոցիալական և տնտեսական առաջընթացի ապահովման համար:

– Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնն օժանդակում է սահմանադրականության դեֆիցիտի կրճատման խնդիրների լուծմանը: Ինչ ուժերով եք փորձում հասնել կենտրոնի առջև դրված նպատակների իրագործմանը:

– Կենտրոնի հիմնական նպատակը գիտահետազոտական, վերլուծական, փորձարարական աշխատանքների իրականացումն է, որը նպատակամղված է համակարգային սահմանադրական մշտադիտարկման առանցքային խնդիրների վերաբերյալ համապատասխան լուծումների ստացմանը: Դա կարող է իրագործվել տնտեսաիրավական կարգավորումների և դրանց հնարավոր հետևանքները գնահատելու մեխանիզմների մշակումների միջոցով:

Առաջնայինը, իհարկե, սահմանադրականության դեֆիցիտի ախտորոշումն է և լուծումների առաջադրումը: Երբ խոսում ենք սահմանադրականության խնդիրների մասին, պետք է նշենք, որ այդ մշակումները հնարավոր է իրականացնել՝ մեկտեղելով տնտեսագետ, իրավաբան, մաթեմատիկոս, սոցիոլոգ, հոգեբան և այլ բնագավառների մասնագետ-հետազոտողների ջանքերը:

– Որքանո՞վ է սահմանադրական տնտեսագիտության կիզակետը փոփոխվել ավանդական տնտեսագիտության համեմատությամբ:

– Եթե փորձենք հակիրճ բնութագրել սահմանադրական և ավանդական տնտեսագիտությունների տարբերությունները, կնկատենք, որ սահմանադրական տնտեսագիտությունը որպես գիտություն ինտենսիվ զարգացել է վերջին չորս, հինգ տասնամյակում, ի հեճուկս ավանդական տնտեսագիտության, որի ակունքները սկիզբ են առնում չորս հինգ դար առաջ, և ուսումնասիրում է սահմանադրական կանոնների գործող հատկությունները և այն ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները փոխներգործակցում են:

Եթե ավանդական տնտեսագիտության բնագավառում վերլուծություններն առավելապես կենտրոնանում են առկա սահմանափակումների շրջանակներում ռեսուրսների և բարիքների ընտրության վրա, ապա սահմանադրական տնտեսագիտության վերլուծությունն ուղղված է սահմանափակումների ընտրության վրա:

Ընդգծված ուզում եմ ասել, որ մեր սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համադարմանը սահմանադրականության մակարդակի բարձրացման ապահովումն է:

Սահմանադրականության պակասուրդի մշտադիտարկումն ու կառավարումը համակարգային փոփոխությունների պահանջված խնդիրն է: Ընդ որում՝ եթե Հայաստանի պարագայում տեսանելի հորիզոնում դեռևս լուծումների անորոշություններով բեռնված խնդիրների շարքում են գրեթե չընդհատվող պատերազմական գործողությունները և ցամաքային շրջափակմամբ պայմանավորված տրանսպորտային կոմունիկացիոն սահմանափակումները, որոնք հիմնականում արտաքին ազդեցության գործոններ են, ապա Սահմանադրությունում ամրագրված նորմերի չափումը, մշտադիտարկումն ու կառավարումը մեր անելիքն է, գերակա խնդիրը, այսօրվա հրամայականը:

– Պարոն Սարգսյան, ինչ է անհրաժեշտ սահմանադրականության մակարդակի գնահատման համար:

– Անհրաժեշտ է իրականացնել ոչ միայն ինքնիշխան, իրավական պետության, ժողովրդավարական զարգացումների բնութագրիչների, սոցիալ-տնտեսական ցուցիչների, այլև քաղաքական կայունության ինդիկատորների ուսումնասիրություն:

Այսպիսի վերլուծությունների արդյունքում մեզ հաջողվել է լուսաբանել երկու թաքնված՝ ինստիտուցիոնալ զարգացման և ժողովրդավարական զարգացման գործոնները, ինչպես նաև դրանց քանակական գնահատականներն իրենց կառուցվածքային տարրերի ամբողջության մեջ: Սահմանադրականությունը հանրային կեցության իրավակարգավորման հիմնարար սկզբունք է: Այն կենդանի օրգանիզմ է, և չի կարելի առանձնացնել, մեկուսի դիտարկել մարդու իրավունքների գերակայության և կայուն զարգացման հիմնախնդիրներից:

Սահմանադրականության մակարդակով են տարբերվում երկրները, որոնք բնութագրվում են ժողովրդավարության, այն է՝ քաղաքական հասուն ինստիտուտների կայացվածությամբ և տնտեսական զարգացմամբ: Այդուհանդերձ, շատ հետազոտողներ գտնում են, որ ժողովրդավարությունը կարող է առաջացնել լուրջ տնտեսական արդյունքներ միայն որոշակի ինստիտուտների գործուն աջակցությամբ, այլ կերպ՝ տնտեսական զարգացման ակնկալիքները և զարգացման նոր ուղեգիծ դուրս գալը չի կարող իրականացվել վատ տնտեսական ինստիտուտների և, ընդհանրապես, ամենատարբեր ոլորտներում իրավունքի գերակայության բացակայության պայմաններում: Ի դեպ, «Ժամանակակից անհատի հոգևոր և իրավական վարքագծին նետված մարտահրավերների և դրանց հաղթահարման ուղիներին» նվիրված

միջազգային գիտաժողովում (Հռոմ, նոյեմբեր, 2017 թ.) ներկայացվեց «Սահմանադրական մշակույթ միջազգային վերլուծական կենտրոնի» ղեկավար, պրոֆեսոր Գ. Հարությունյանի և մեր խմբի կողմից մշակված անցումային երկրներում սահմանադրականության ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման մեթոդիկան:

– Մեր երկրում մշտապես առկա է տնտեսական վերահաս վայրիվերումների վտանգին դիմակայելու անհրաժեշտությունը: Ինչ առաջնահերթությունների վրա է հարկավոր կենտրոնանալ այդ պայմաններում անկման ռիսկերը նվազեցնելու և հետագա աճն ապահովելու համար:

– Տնտեսության կառավարման մեջ խնդիրը մեկն է. պետք է հստակ ծրագրային միջոցներ ձեռնարկել, որոնք կկանխեն առկա տնտեսական ռեսուրսների պարապուրդը: Եթե ճգնաժամը փորձենք դիտարկել Հայաստանի տնտեսության օրինակով, ապա քայլերը պետք է ուղղված լինեն տնտեսության դիմադրողականության մեծացմանը: Մենք, բարեբախտաբար թե դժբախտաբար, կորցրել ենք մեզ համար համեմատական առավելություններից մեկը՝ էժան աշխատուժի երկիր լինել: Այսօր էլ մենք դեռևս մնում ենք որակյալ մարդկային կապիտալ ունեցող երկիր և մեր զարգացումները պետք է խարսխենք այդ հենքի վրա: Տնտեսական վերելք տանող ճանապարհը պետք է լինի արտահանման պոտենցիալի ամբողջական բացահայտումը և նպատակային գործադրումը: ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման մասնաբաժնի ավելի քան 30% բնագիծը կարող է երկարատև տնտեսական աճ ապահովել, եթե այդ արտահանման ծավալները կայուն ու շարունակական լինեն:

Ինչ վերաբերում է, թե կոնկրետ որ ոլորտներին է պետք առավելագույն ուշադրություն դարձնել, ապա միանշանակ պետք է շեշտել գյուղատնտեսության, բարձր տեխնոլոգիաների, կրթական և առողջապահական ծառայությունների ոլորտները:

– Բարձր տեխնոլոգիաների, կրթական և առողջապահական ծառայությունների ոլորտները, կարծեք թե, ավելի շատ են գրավում ներդրողներին, և նշված ոլորտներն ավելի շահեկան դիրքում են, քան գյուղատնտեսական ոլորտը: Ժամանակին նույնիսկ առաջարկել եք մշակել համապետական ծրագիր: Որո՞նք են ոլորտի գերխնդիրները:

– Մենք բնօգտագործման ոլորտում շատ անելիքներ ունենք, հատկապես երբ տեսնում ենք, թե որքան մեծ են մեր հնարավորություններն այստեղ:

Իհարկե, խնդիրները շատ են, որոնք նախ պետք է ստանան իրենց լուծումները: Մեկ անգամ առիթ ունեցել եմ ասելու, այժմ էլ կրկնում եմ, որ, մասնավորապես, Սյունիքի տարածաշրջանում ժամանակն է խտանյութերի պարզ արդյունահանումից անցում կատարել վերջնարդյունքներին՝ հազվագյուտ

մետաղների կորզում և այլն: Մենք այսօր արդյունավետ չենք օգտագործում մեր 1,8 մլն հա տարածությամբ գյուղատնտեսական նշանակության հողերը:

Ներկայացնեմ մեկ օրինակ՝ փորձեք ուշադրություն դարձնել Աշտարակից Թալին տանող ճանապարհի ամբողջ երկայնքով առկա հողատարածքներին, կտեսնեք, որ գրեթե չօգտագործվող են: Մինչդեռ այդ տարածքները կարելի էր այգեստան դարձնել: Շատ հաճախ բերվում է Իսրայելի գյուղատնտեսության օրինակը: Նկատենք, որ այնտեղ մարդիկ անապատն են նախ վերածել օգտագործելի հողի: Այսօր մենք այդ խնդիրը չունենք, քանզի այդ «ներդրումները» կատարված են Աստծո կողմից բարեբեր հողի տեսքով: Ջրի շինծու դեֆիցիտի և ոռոգման հետ կապված խնդիրների շարունակաբար ձգձգվող ու ոչ բավարար լուծումը անհանդուրժելի է:

Ուստի այստեղ նորից անդրադարձ պետք է կատարեմ սահմանադրականության բարձր մակարդակ ձևավորելուն, որի արդյունքում կունենանք ներդրումային հոսքերի բարենպաստ պայմաններ, և այդ տարածքները կծառայեն ըստ նպատակի:

– Պարոն Սարգսյան, որքան էլ խոսենք սահմանադրականության մակարդակի բարձրացման, պայծառ ապագայի տեսլականի մասին, պետք է փաստենք, որ այս ամենը կարող է իրականություն դառնալ կայուն և զարգացած կրթական համակարգի պայմաններում գիտելիքներով զինված մասնագետների շնորհիվ: Կրթական համակարգն արդյոք այսօր տալիս է այն «գործիքները», որոնցով մեր ապագա մասնագետները կարող են դիմագրավել ժամանակակից մարտահրավերներին:

– Ուսումնառությունը, կրթությունը մեր ժողովրդի համար եղել է, կա և կմնա գերակա արժեք:

Այդուհանդերձ, կրթական համակարգն այսօր դեռևս բավարար չափով չի նպաստում տնտեսական և հոգևոր վերելքին: Հայտնի է, որ ժամանակակից կրթահամակարգի ստեղծումը և բարձրորակ մասնագետներով ապահովվածությունը էապես կնպաստի գիտատար տնտեսություն ունենալուն, առանց որի անհնար է զարգացած Հայաստանի տեսլականը: Սակայն կարո՞ղ է արդյոք մեր բուհական համակարգը մեկ ուսանողի կրթության համար ծախսվող 1000 ամերիկյան դոլարին համարժեք միջոցներով ապահովել պահանջարկված կրթական մակարդակ: Իհարկե՝ ոչ ամբողջովին:

Ստեղծվել է մի պարադոքսալ իրավիճակ, երբ, մի կողմից, իրատեսական չեն կրթական բարձր վարձավճարները, մյուս կողմից՝ էժան կրթությունը չի կարող նպաստել զանգվածային աղքատության կրճատմանը: Ելքը մեկն է՝ մեր երկրում պետք է զարկ տալ բարձր տեխնոլոգիաների ներգրավվածությանը կրթական ոլորտում, ինչը, միանգամայն, հնարավոր է: Մենք մասնագետներ ունենք՝ ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, քիմիկոսներ, որոնք

եվրոպական համալսարաններում դիրքեր են զբաղեցնում: Կարծում եմ՝ պետք է գտնել այդ պոտենցիալը ներգրավելու ձևերը: Ժամանակն է վերանայել «ոչ թանկարժեք կրթության» քաղաքականությունը:

Կարևորագույն խնդիրն այսօր արտասահմանյան բուհերում արդեն կրթություն ստացած մասնագետների տեղեկատվական բանկի ստեղծումն է: Մեր քայլերը պետք է ուղղված լինեն կրթության միջազգայնացմանը: Այն պետք է իրականացնել նաև կրթական ծրագրերի արտահանման նախադրյալների ստեղծման, պահանջարկված մասնագետներ հրավիրելու ու հայտնի կենտրոններում մեր դասախոսական կազմը վերապատրաստելու միջոցով:

Շարունակելով կրթության թեման՝ կուզենայի նշել, որ մեր երկրում առանցքային տեղ պետք է ունենան պաշտպանական և գիտակրթական համակարգերը, որոնք պետք է միմյանց փոխլրացնեն:

Բանակը և երկրի անվտանգությունը չպետք է դիտվեն որպես երկրի միակ գերակայություն՝ դրան ինչ-որ իմաստով ստորադասելով գիտությունը:

Կարծում եմ, որ գիտությունն այսօր լուծում է և շարունակելու է լուծել անվտանգության խնդիրներ՝ հատկապես վաղվա օրվա կտրվածքով: **Առանց գիտության՝ վաղը կարող ենք խարխլել մեր անվտանգությունը: Իմ համոզմամբ, ընդհանրապես դատարկ են բոլոր այն խոսակցությունները գիտելիքահեն տնտեսություն ունենալու վերաբերյալ, եթե այսօր և հետագայում հետևողականորեն ձեռնամուխ չլինենք հանրակրթության, բարձրագույն կրթության և գիտական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:** Շատ կարևոր է, թե ինչպիսին կլինեն այդ ոլորտներում իրավակարգավորումներն ու կառուցակարգերը: Մենք այլ ճանապարհ չունենք, քան գիտելիքահեն տնտեսության վրա կառուցած պետություն ունենալը, դա բազմիցս հնչել է նաև երկրի նախագահի շուրթերից:

– Պարոն Սարգսյան, տարբեր գիտաժողովներում զեկույցներ եք ներկայացրել սահմանադրականության մակարդակի, ՀՀ-ում կուտակված խնդիրների վերաբերյալ: Ինչ շեշտադրումներ են ունեցել Ձեր զեկույցները:

– Երբ մենք խոսում ենք տնտեսական խնդիրների կարգավորումների մասին, պետք է նկատենք, որ ոլորտները և ինստիտուտները բազմազան են:

Օրինակներից մեկը, որ կուզենայի բերել, այն է, որ նոր Սահմանադրության շրջանակներում փոփոխության են ենթարկվում Կենտրոնական բանկի նպատակները. գների կայունության ապահովման հիմնական նպատակին ավելանում է նաև ֆինանսական կայունության հիմնական նպատակը:

Փոխվում են նաև Կենտրոնական բանկի ղեկավարության նշանակման մոտեցումները, և Կենտրոնական բանկի ղեկավարների թեկնածություններն առաջադրում է իշխող կուսակցությունը:

Այստեղ թվում է, թե կարող է սահմանափակվել Կենտրոնական բանկի գործառույթների իրականացման անկախությունը, որպեսզի կառավարությունների համար կարճ ժամկետում ապահովվի տնտեսական աճ, զբաղվածություն:

Վերջիններիս հասնելու համար անհրաժեշտ կլինի էժանացնել և ավելացնել փողը տնտեսությունում: Եթե Կենտրոնական բանկը գնա այդ քայլին՝ կարևորելով կառավարության կարճաժամկետ առաջնահերթությունները, վաղ թե ուշ բարձր գնաճի խնդրին կհանգի: Այս իրավիճակը կդիտվի Կենտրոնական բանկի անկախությունը կրճատելու փորձ: Մեր հետազոտական խումբն ունի խնդիր, այն է՝ ինչպես անել, որ այդ գայթակղությունները չգերակայեն տնտեսական անհրաժեշտություններին:

– Պարոն Սարգսյան, շնորհակալություն հետաքրքիր և բովանդակալից հարցազրույցի համար: Դուք լավատեսորեն եք տրամադրված գրեթե բոլոր նախաձեռնություններում: Տարին նոր է սկսվել, ինչ ակնկալիքներ ունեք 2018 թվականից որպես տնտեսագետ, որպես ՀՀ քաղաքացի:

– Կուզենայի, որ մեր ժողովուրդը շարունակեր ապրել անվտանգ երկրում, համակվեր լավատեսությամբ և վաղվա բարեկեցիկ, սահմանադրականության բարձր մակարդակ ունեցող Հայաստանի տեսլականով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 1/3 ՄԱՍՆ ԱՂՔԱՏ Է, ԱՌԿԱ Է ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԵՐԲԵՎԵՌԱՑՈՒՄ, ՈՐԸ ՀԱՍՏԱՏԱԳՐՎՈՒՄ Է

Tert.am, 23 հունվարի, 2018

Հայաստանում բնակչության 1/3 մասն աղքատ է, առկա է եկամուտների գերբևեռացում, որը հաստատագրվում է:

Այս մասին այսօր «Առանձին ապրանքատեսակների գների բարձրացման պատճառները և գնաճը մեղմելու հնարավորությունները» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ասաց պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

«Մենք այսօր ունենք հոյակապ գաղափար՝ ԱԺ-ում լսելու մեր ժողովրդի ստվար հատվածի համար կենսական հարց համարվող խնդիրների մասին, և լուծումներ առաջարկելու, թե ինչպես կարելի է դիմակայել այդ ամենին:

Ես սա համարում եմ ձեռքբերում, ձեռքբերում եմ համարում նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկն ունի 2,6% ընդհանուր գնաճ սպառողական զամբյուղում: Բայց եկեք տեսնենք՝ այս ամենն ինչ ֆոնի վրա է իրականացվում»,– ասաց Հայկ Սարգսյանը:

Նրա խոսքով՝ բնակչության 1/3-ն աղքատ է, կա եկամուտների գերբևեռացում, Հայաստանում սպառողական զամբյուղում ոչ բարենպաստ իրավիճակ է. «Նույն կոմունալի և պարենի մասով ծախսերը սպառողական զամբյուղում գերազանցում են կեսից ավելին, այլ երկրներում այս վիճակը շատ ավելի բարվոք է, իսկ առավել զարգացած երկրներում այդ ծախսերը բաժին են ընկնում սոցիալական ծառայություններին»:

Հայկ Սարգսյանի խոսքով՝ ակադեմիական վեճը նրանում է, որ նշված խնդիրների լուծման համար երկիրը պետք է ժողովրդավարացման անցնի, տնտեսությունում ազատության նոր թափ պետք է ստանա. «Հասարակության դեմոկրատացումը երբեք չի կարող բավարար լինել, եթե բավարար որակով չեն աշխատում ենթակառուցվածքները: Խոսքը սեփականության ինստիտուտի, շուկայական և դատական ինստիտուտների մասին է, վերջապես, նաև օրենքի ինստիտուտի մասին է»:

Հայկ Սարգսյանն առաջարկեց փոփոխություններ իրականացնել Հարկային օրենսգրքում և անշարժ գույքի մասով եկամուտների վերաբաշխում իրականացնել:

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

տ.գ.դ. պրոֆեսորներ
Հ. Սարգսյան և Ռ. Գևորգյան, 2018

http://consteconom.ysu.am/product/gneri-kayounoutyouny-ev-kentronakan-bank

Տարեսկզբին որոշ ապրանքատեսակների թանկացումից հետո հասարակական լայն քննարկման առարկա դարձավ գների կայունության հիմնախնդիրը: Իսկապես, Հայաստանի նման փոքր երկրի համար այդ խնդիրը չափազանց մեծ կարևորություն է ստանում, քանի որ տնտեսության բաց լինելը հանգեցնում է արտաքին շոկերի ուղղակի ազդեցությանը տարբեր ոլորտների վրա և հանդիսանում է գնաճի պատճառ, իսկ տնտեսության փոքր լինելը բերում է այդ շոկերը մարելու շուկայական ինքնակարգավորման մեխանիզմների սահմանափակմանը:

Գների կայունացման հարցի շուրջ խորհրդարանում տեղի ունեցած լսումների և այլ հարթակներում հարցի քննարկման ժամանակ խոսվել է տարբեր հնարավորությունների և մեխանիզմների մասին, որոնք կարող են ապագայում մեղմել գների կտրուկ փոփոխման հետևանքները, իսկ որոշ դեպքերում՝ նաև կանխել այդ իրավիճակների զարգացումը: Օրինակ՝ շատ լուրջ քննարկման առարկա դարձավ մրցակցության բարձրացման և մրցակցային հավասար պայմանների ստեղծման անհրաժեշտության հիմնահարցը: Անկասկած, գների կայունությունն ապահովելու համար դա շատ կարևոր գործոն է, սակայն պետք է հասկանալ, որ փոքր տնտեսությունների առկայության պարագայում մրցակցային շուկայի ազդեցությունը գների կայունության վրա խիստ սահմանափակված է հենց տնտեսության չափերով: Անդրադարձը գների կայունության ապահովման մեկ այլ՝ ինստիտուցիոնալ հնարավորությանը մենք կարևորում ենք այն պատճառով, որ բոլոր քննարկումների ընթացքում վերջինս երկրորդ պլան է մղվում:

Հայտնի է, որ Կենտրոնական բանկի գլխավոր նպատակը գների կայունության ապահովումն է, որը սահմանված է ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածի 2-րդ կետով, իսկ նույն հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ իր գործառույթները իրականացնելիս Կենտրոնական բանկն անկախ է: Մեր կարծիքով, ԿԲ-ի անկախությունը գների կայունության կարևորագույն գործոն է, հատկապես փոքր շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Այդ մասին են վկայում բազմաթիվ հեղինակավոր հետազոտությունները:

Զարգացած երկրների համար այս օրինաչափությունը հայտնաբերվել է դեռևս նախորդ դարի 80-ական թվականների վերջին: Մասնավորաբար, Կուկերմանի աշխատություններում ցույց է տրված, որ զարգացած երկրներում գոյություն ունի հստակ ուղիղ գծային կապ կենտրոնական բանկերի անկախության համաթվի և գնաճի միջև: Նմանատիպ աշխատություններում նշվում է, որ գոյություն ունի տարբերություն կենտրոնական բանկերի դե յուրե և դե ֆակտո անկախությունների միջև: Եթե զարգացած երկրներում դե յուրե անկախության և գնաճի միջև կապը միանշանակ է, ապա զարգացող երկրներում այդ կապը ավելի թույլ է արտահայտված, քանի որ դե յուրե անկախությունը դեռևս չի նշանակում դե-ֆակտո անկախություն: Այս հանգամանքը պայմանավորված է զարգացող երկրներում ինստիտուտների ցածր զարգացվածության մակարդակով:

Կենտրոնական բանկերի անկախության և գնաճի միջև կապը ուսումնասիրվել է նաև անցումային երկրների համար: Այս հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ անցումային շրջանի առաջին տարիներին կենտրոնական բանկերի անկախության և գնաճի միջև վիճակագրորեն նշանակալի կապ գոյություն չի ունեցել: Միևնույն ժամանակ, կենտրոնական բանկերի դե յուրե և գնաճի ցուցանիշների միջև հայտնաբերվել է նշանակալի գծային կապ անցումային շրջանի վերջին տարիներին՝ 2009-2016 թթ.: Ավելին՝ այդ կապը ժամանակի ընթացքում անցումային երկրների համար ավելի ու ավելի արտահայտված է դրսևորվում:

Այս ամենը վկայում է այն մասին, որ փոքր բաց շուկայական տնտեսություններում, ինչպիսին Հայաստանն է, Կենտրոնական բանկի անկախությունը դառնում է մակրոտնտեսական և ֆինանսական կայունության կարևորագույն գործոն: Նոր սահմանադրության ընդունումը և կառավարման նոր համակարգի անցումը պետք է իրականացվի այնպես, որ Կենտրոնական բանկը շարունակի մնալ անկախ, ինչը և գների կայունության կարևորագույն նախադրյալն է:

ՏՆՏԵՍԱԳԵՏԸ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄԸ

armenpress.am, 28 փետրվարի, 2018

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանը կոնցեպտուալ նոր իրադրություն է համարում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այն շեշտադրումը, որ տնտեսական աճը պետք է ներառական լինի և ազդեցություն ունենա յուրաքանչյուր քաղաքացու վրա: «Արմենպրես»-ի հետ զրույցում ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանը նշեց, որ այս պայմաններում ՀՀ կառավարությունն իր գործունեությունն ուղղելու է բնակչության բարեկեցության բարձրացմանը, որի համար պետք է գտնվեն բավարար մեխանիզմներ: **«Շատ հստակ էր ՀՀ նախագահի ձևակերպած խնդիրը, որ տնտեսական աճն ի վերջո պետք է նպաստի տնտեսական զարգացմանը, իսկ դրա բաղադրիչներից մեկն այն է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իր մաշկի վրա զգա, որ այդ աճն արձանագրվել է»,– ա**սաց մեր զրուցակիցը՝ հավելելով, որ եկամուտների գերբևեռացման պայմաններում տնտեսական աճի ազդեցությունը հասարակության տարբեր շերտերի վրա միանշանակ չի բնութագրվում: Մյուս կողմից՝ նախորդ երկու տասնամյակների երերուն տնտեսական աճն ու 2009-ին ընդհուպ 14 տոկոս անկումը զգալի կորուստների են բերել տնտեսության ներուժի գործադրման իմաստով:

Հայկ Սարգսյանը տնտեսական աճի ներառականության ապահովումը տեսնում է բյուջեից սնվող հատվածի՝ կենսաթոշակառուների, պետական աշխատողների եկամուտների ավելացման մեջ: Դրան զուգահեռ պետք է նաև մասնավոր հատվածը կարողանա վարձու աշխատողների խնդիրը համաչափ լուծել:

Անդրադառնալով այն հարցադրմանը, որ ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված չէ սոցիալական ծախսերի ավելացում, ինչպե՞ս հնարավոր կլինի ապահովել տնտեսական աճի ներառականությունը, Հայկ Սարգսյանը նշեց, որ տնտեսական զարգացումը բերում է հնարավորությունների ավելացման, որի պայմաններում յուրաքանչյուրը կարող է գուցե ոչ բյուջեից, բայց եկամուտների աճ ունենալ: «Ես կարծում եմ, որ զարգացման այդ դրվածքը՝ ներդրումների ճանապարհով արդյունքի ավելացումը, որը կբերի բյուջեի միջոցների ավելացման, առաջացած խնդիրները լուծելի կդարձնի առաջիկա տարիներին: Ի դեպ, դրա այլընտրանքը չկա, ներդրումները պետք է լինեն

անընդհատ և ցանկալի է՝ ՀՆԱ-ի առնվազն մեկ հինգերորդի չափով»,– ավելացրեց տնտեսագիտության դոկտորը:

Հայկ Սարգսյանի համոզմամբ՝ այո, հայտարարվածի պես մինչև 1 միլիարդ դոլարի ներդրումներ եղել են ՀՀ տնտեսությունում նախորդ տարի, բայց արդյոք դա բավարար է. նրա կարծիքով՝ ոչ: «Մեր ներդրումները պետք է ընդհուպ երկու անգամ գերազանցեն պլանավորված շեմը, որպեսզի ունենանք այդ նույն 7 տոկոս և ավելի տնտեսական աճը: Եթե այդ տնտեսական աճը մի քանի տարում շարունակական լինի, շատ խնդիրներ կլուծվեն: Երբ բազան փոխվում է, այդ 7 տոկոսը նոր շեմ է դառնում ավելի մեծ հնարավորությունների համար: Իսկ այդ հնարավորությունները, ինչպես նշեցի, կան»,– եզրափակեց մեր զրուցակիցը:

Անի Նազարյան

ՄԵԿՆԱՐԿԻՑ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

«Հայկական ժամանակ» օրաթերթ, 19 հունիսի, 2018

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանը վստահում է նոր կառավարության ներկայացրած ծրագրին և համակարծիք չէ թվերի բացակայությունից հիասթափված որոշ գործընկերների հետ: Պրոֆեսորը նշում է նաև, որ խիստ կարևոր է պատասխանատվության գործոնը և, միաժամանակ, ընդգծում, որ իր համար տեսանելի են այն բնագծերը, ինչին ձգտում է հասնել ներկա կառավարությունը:

– Ծրագրի վերաբերյալ տարաբևեռ մեկնաբանություններ եղան, հնչեցին տարբեր դիտարկումներ, որովհետև վերջին տասնամյակներին ներկայացված ավանդական ծրագրերի համեմատ կային էական շեղումներ: Սահմանադրության պահանջն է, որ նոր կառավարությունը ծրագիր ներկայացնի, սակայն չի նշվում, թե ինչ խորությամբ, տնտեսության ճյուղերի ինչպիսի՞ ընդգրկմամբ և ինչ թվերի նշաձողերով պիտի ներկայացվի: Մայր օրենքում չկա այդպիսի պարտադրանք, և ծրագիրը կազմելիս հենց այդ հանգամանքից էլ օգտվել էր կառավարությունը: Ներկայացված ծրագիրը, լինելով քաղաքական հռչակագրային բնույթ կրող փաստաթուղթ, ակնհայտորեն ներառում էր մեր երկրի և տնտեսության զարգացման ուղենիշները:

– Տնտեսագետներից շատերը կարծիք հայտնելիս ընդգծում էին ծրագրում թվերի բացակայությունը: Դուք ևս հիասթափված եք, որ զարգացման տեմպերը նկարագրող թվերի ու չափելի միավորների չեք հանդիպել:

– Տնտեսագետի համար, այո, լավագույն փաստարկը թիվն է, բայց, երբ այդ թիվը շինծու է կամ համարժեք չի արտահայտում իրողությունը, ինչպես ասում են՝ գրոշի արժեք ունի: Ի դեպ, այս իմաստով ևս կարելի է ներկայացված ծրագիրը շահեկան համարել: Նկատենք, որ թվերի փոխարեն նախանշվում են ինչ-ինչ բնագծեր, որոնք ի վերջո ցույց են տալիս չափելի սահմանագծերը: Օրինակ՝ ներկայացված էր, թե ինչ չափով կարելի է հասնել աղքատության կրճատմանը, հայրենադարձության ապահովմանը որոշակի ժամանակահատվածում և այլն:

– Ուրեմն ավելի վստահելի է Ձեզ համար, այսպես ասած, խոստումների այն փաթեթը, որը բառերով ու էմոցիաներով է նկարագրված, թե՞ այն, որը հրապուրիչ թվերի վրա է կառուցված ու այդպես էլ բացառապես ԱՎԾ-ի թվերով է հիմնավորվում:

– Եկեք հարցին այս դիտանկյունից նայենք՝ երբ զարգացման ծրագիրը թվերով ներկայացնողները չեն կատարել խոստացածը, ինչպիսի՞ պատասխանատվության են ենթարկվել նախորդ կառավարություններում: Հենց պատասխանատվության ինստիտուտն է շատ կարևոր, որը պետք է ինչ-որ կերպ ամրագրվի նաև այդ փաստաթղթում: Այն կառուցակարգերը, այն գործիքակազմը, որոնք կիրառվում են ինչ-ինչ բնագծեր նվաճելու համար, ինձ համար տեսանելի են, ուստի, ես չեմ կառչում թվերից:

Իհարկե, կա նաև երկրորդ տարբերակը. իրազեկ եմ՝ դեռևս կես դար առաջ Ֆրանսիայի տնտեսության համար մշակված միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերին: Էկոնոմիկայի և ֆինանսների նախարար Լ. Ստոլերյուն, որը «Հավասարակշռություն և տնտեսական աճ» հայտնի մենագրության հեղինակն է, ի դեպ, այդ գիրքը ուսանողների համար գիտագործնական նյութ է, հինգ տարվա կտրվածքով այդ երկրի համար մշակում էր նյութաֆինանսական բալանսներ: Եվ թվերով արտահայտված այդ ծրագրերը պարտադրվում էին գերատեսչություններին՝ ի կատարում: Սա է լուրջ մեխանիզմը՝ ծրագիրը թվերով ներկայացնելու և այդ թվերին իրականում հասնելու համար: Մինչ հեղափոխական գործընթացների սկիզբը (ի դեպ, համոզված ենք, որ սա ընդամենը սկիզբն է), դեռ նախորդ կառավարության օրոք իշխանության կողմից խնդիր դրվեց, որ տնտեսական աճը պիտի ներառական լինի, այսինքն՝ յուրաքանչյուր անհատ պիտի իր վրա զգա դրա ազդեցությունը: Սա շատ լավ ու բարի ցանկություն էր, բայց քանիցս ասել եմ, որ մեզ մոտ դեռևս բացակայում են ռեալ մեխանիզմները, որոնք թույլ կտան տնտեսական աճի ներառական ազդեցությունը տարածել հասարակության բոլոր շերտերի վրա, որպեսզի նրանցից յուրաքանչյուրն իր կենցաղում զգա այդ էֆեկտը:

– Անդրադառնանք ծրագրի այն հատվածին, որում ներկայացված են տնտեսության զարգացման գերակա ուղղությունները:

– Գերակա ուղղություններում միանգամայն նկատելի են տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը և տուրիզմը: ՏՏ-ում մենք շատ հետ չենք աշխարհի զարգացող տեմպերից, բայց այդ ռեսուրսը պետք է ներդնենք նաև ռազմարդյունաբերական ոլորտում: Մարդկային կապիտալի այդ մեծ պոտենցիալը դեռ չենք կորցրել: Աշխարհն այսօր զարգանում է արագ ռիթմով, և ժամանակի ընթացքում որոշ մասնագիտություններ անհետանալու են, և ստեղծվելու են նորերը: Աշխատաշուկայի և գիտակրթական ծրագրերի միջև չպետք է թույլ տալ, որ գոյություն ունեցող խզվածքը խորանա: Եվ այս խնդիրը պետք է հաղթահարվի: Նման կերպ մենք վարվեցինք, երբ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում հիմնեցինք «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը:

Հաջորդ կարևոր դրույթը, որը հետագայում պետք է բացվի ծրագրերում, վերաբերում է պայմանագրային էկոնոմիկային: Տնտեսությունն այսօր մի ամբողջական ցանց է, պայմանագրերի մի մեծ համախումբ: Շուկան մի իրավիճակ է, որտեղ տնտեսվարողներն ու սպառողները պայմանավորվում են: Տնտեսագետները, ուսումնասիրելով այդ պայմանավորվածությունները, ձգտում են, որ դրանք ավելի լավը լինեն, ստեղծվեն բավարար տնտեսաիրավական կարգավորումներ ձեռնարկությունների միջև, գործատու-աշխատող հարաբերություններում և այլն: Պայմանագրային համակարգի գրագետ և պարտադիր գործարկումը արդեն իսկ շատ բան է կանխորոշելու: Կարևոր է նաև պայմանագրերի լուծման կամ վիճարկման դատաիրավական ինստիտուտի կայացումը:

Ծրագրում կար անդրադարձ նաև թվային էկոնոմիկային, որի սրընթաց զարգացումը մեզ համար պարտադրանք է: Համաշխարհային զարգացման միտումներին անդրադառնալով՝ նշեմ, որ տեղեկատվական և տելեկոմունիկացիոն ծառայություններում արտադրությունը կազմում է աշխարհի ՀՆԱ-ի 6,5%-ը: Միայն 2010-2015 թթ. էլեկտրոնային առևտրի ոլորտում այս ծառայությունների արտադրությունը աշխարհում հասել է 25 տրիլիոն դոլարի: Թվայնացումը միանգամայն բարձրացնում է ընկերությունների մրցունակությունը, օգնում է օպտիմալացնել ծախսերը, մեծացնել ակտիվների եկամտաբերությունը, և վերջապես, օգնում է ավելի լավ գնահատել սպառողների պահանջարկը:

Հաջորդ կարևոր խնդիրը ինովացիոն տնտեսության շեշտադրումն է: Պետք է նշեմ, որ միայն 2017 թ. եվրոպական սանդղակում նորարարությունները հասնում են՝ Շվեդիայում, Նիդերլանդներում և Գերմանիայում շուրջ 70% -ի, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում գերազանցում են 60%-ը, իսկ ՌԴ-ում ընդամենը 39 % է: Նույն կերպ, պատենտների թվով միլիոն բնակչի հաշվով ԱՄՆ-ում (21939), Գերմանիայում (18728), Ճապոնիայում (15395) է, իսկ ՌԴ-ում այդ ցուցանիշը 105 է, որը վկայում է գիտատեխնիկական մշակումների առևտրայնացման խիստ ցածր մակարդակի մասին: Կարծում եմ՝ եվրաասոցացման հնարավորությունները զարկ կտան ՀՀ-ում ինովացիոն հենքով ընկերությունների հիմնմանը, և չենք սահմանափակվի ժամանակ առ ժամանակ երևացող էքսպոներով:

– Պարոն Սարգսյան, որքանո՞վ ենք մենք կարևորում ռազմարդյունաբերական ոլորտը:

– Մենք դեռ շարունակում ենք խոսել «Նաիրիտի» գործարկումից, պոլիմերներից ու լատեքսներից՝ անտեսելով ռազմարդյունաբերական ոլորտի մեր կորցրած պոտենցիալը: Մինչ անկախացումը ունեինք փակ ձեռնարկություններ՝ «Էլեկտրոնը», «Բազալտը», «Սիրիուսը», «Մարսը», տասնյակ

ձեռնարկություններ, որոնք ռազմարդյունաբերական համալիրի լրակազմող սարքերի գծով արտադրանք էին թողարկում: Պահպանված պոտենցիալի և նորաստեղծ ընկերությունների, ինչպես նաև գիտակրթական ոլորտներում իրական բարեփոխումների միջոցով կարող ենք ունենալ լուրջ ՌԱՀ: Տարբեր առիթներով գրել եմ, որ. «Առանց գիտության կարող ենք խարխլել մեր անվտանգությունը», կամ «Էժան կրթությունը ապագա չէ»:

Մեր ուսանողների թվաքանակը «Հրազդան» ստադիոնի տարողության չափ է, այս կադրերով ենք շարժելու երկրի տնտեսությունը: Այսքան հասկանալի և անհասկանալի մասնագիտություններով ո՞ւր ենք շարժվում: Իներցիայով կադրերի թողարկումը, առանց գիտության զարգացման, հնարավոր չէ:

Սպասենք Կառավարության կողմից հաստատված փաթեթի միջոցառումների ծրագրերին, որոնք կարտացոլվեն 2019 թ. բյուջեով, և որտեղ ավելի առարկայաբար կերևան ոլորտ առ ոլորտ աշխատանքները՝ սոցիալական, պաշտպանության, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում:

Նույն ոգեղենությամբ պետք է շարունակություն ապահովել և, որպես տնտեսագետ, համոզված եմ՝ Էֆեկտիվ տնտեսության կազմակերպումը հնարավոր է միայն դեմոկրատական, ինստիտուցիոնալ և քաղաքական զարգացումների առումով սահմանադրականության բարձր մակարդակ ունենալու պարագայում: Համաշխարհային զարգացումների օրինաչափությունների պրակտիկայում ընդունված է, որ 5-7% հարաճուն տնտեսական աճ ունենալու համար պետք է ՀՆԱ-ի 1/4-ի և 1/5-ի չափով ներդրումներ ապահովել: Մեր տնտեսության պարագայում մենք պետք է խնդիր դնենք, որ ամենատարբեր աղբյուրներից գոյացող ներդրումների ծավալը գերազանցի 2 մլրդ դոլարը:

Հավատում ենք՝ կունենանք վերելքի ճանապարհ, իսկ սահմանադրականության մակարդակի բարձրացումը կլինի որպես երկրում կուտակված խնդիրների լուծման համադարման: Մեկնարկից վերելք տանող ճանապարհները անցնում են դեմոկրատական, ինստիտուցիոնալ և քաղաքական զարգացումների լաբիրինթոսներով:

ՄԵՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵՋ ԱՌԱՆՑՔԱՅԻՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է

«Դե Ֆակտո» ամսագիր, հուլիս, 2018

– Պարոն Սարգսյան, շնորհավորում ենք Ձեզ տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ: Ինչ է նշանակում այդ պաշտոնը Ձեզ համար:

– Տնտեսագիտության ֆակուլտետն իր ծանրակշիռ ավանդն ունի այսօր ՀՀ-ում տնտեսագիտական գիտելիքների տարածման հարցերում: Ինձ համար պատվաբեր և միևնույն ժամանակ խիստ պարտավորեցնող է ֆակուլտետի դեկանի պաշտոնը ստանձնելը: Պարզապես, կային որոշակի գործեր և ծրագրեր կրթական ծառայությունում, որոնք պետք է շարունակական լինեին, և այդ շարունակականության խնդիրը պահանջում էր, որ ես վերընտրվեի: Սա արդեն ներքին մղում էր իմ կողմից:

– Ինչ ծրագրեր են ներդրվելու ֆակուլտետում և, առհասարակ, ինչ փոփոխություններ են ակնկալվում:

– Իհարկե, մեր ծրագրերի մեջ առանցքայինը կրթության որակի ապահովումն է: Կան խնդիրներ՝ կապված նյութատեխնիկական բազայի ընդլայնման, գիտահետազոտական աշխատանքների մեծացման, կիրառական գիտական հետազոտությունների իրականացման, բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի բարելավման, հեռակա ուսուցման համակարգի կայացման, կրթական ծառայությունների միջոցով ֆինանսական լրացուցիչ հոսքերի ապահովման, ֆակուլտետի ակադեմիական ազատության ընդլայնման առումներով: Բոլոր այս ուղղություններով տարվում են լուրջ աշխատանքներ, և որոշ ձեռքբերումներ արդեն իսկ տեսանելի են: Ինչ վերաբերվում է նորամուծություններին, ապա դրանց արդյունքները կերևան մոտ ապագայում. օրինակ՝ բակալավրիատում ներդրվող կրեդիտային համակարգը, որը եվրոպական կրթատարածքին միավորվելու կոչված գործընթաց է, կամ մագիստրատուրայում ներդրված արդի ծրագրերը և այլն:

– Տնտեսագիտությունը արագ զարգացող գիտություն է. ի հայտ են գալիս նորանոր տնտեսագիտական խնդիրներ ու երևույթներ, մշակվում են նոր մոտեցումներ ու լուծումներ: Ինչպես է ֆակուլտետը իր դասախոսական անձնակազմով քայլում համընթաց այդ փոփոխություններին և որքանով է մատուցվող նյութը այժմեական:

– Միանշանակ, արդյունավետ տնտեսագիտական կրթությունը համալիր հիմնախնդիր է: Այստեղ ֆակուլտետը բոլոր հնարավոր լծակներն

օգտագործում է ուսումնական գործընթացի դինամիզմն ապահովելու համար, որպեսզի նոր երևույթներին արագ արձագանք ու գիտագործնական գնահատական տրվի: Տեղեկատվության ու գիտական, ուսումնական գրականության աճի բարձր տեմպերով, ինչպես նաև տնտեսագիտական տարբեր ուղղությունների արագ զարգացմամբ պայմանավորված՝ յուրացման մեթոդաբանության, միջառարկայական դասընթացների մշակման ու ներդրման ուղղությամբ լուրջ քայլեր են ձեռնարկվում: Տնտեսագիտական կրթության ճկունության ապահովումից զատ՝ իրականացվում է դրա համապատասխանեցումը ազգային տնտեսության առանձնահատկություններին և միջազգային տնտեսական զարգացումների միտումներին:

– Հայտնի է, որ գործատուները աշխատանքի ընդունելիս գերազանցապես առաջնորդվում են աշխատանքային փորձով: Այս առումով բարդանում է ֆակուլտետի շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցը: Ինչ միջոցներ են ձեռնարկվում նորաթուխ տնտեսագետներին աշխատանքով ապահովելու համար:

– Ֆակուլտետն այստեղ մեծ ուշադրություն է դարձնում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպմանը. փորձ է արվում ընդլայնել ուսանողներին ընդունող կազմակերպությունների ցանցը, որոնց հետ շրջանավարտների հետագա ստաժավորման կազմակերպման և աշխատանքի տեղավորման նպատակով համագործակցությունը շարունակական բնույթ է կրում: Նախատեսված է նաև ԵՊՀ կարիերայի կենտրոնի հետ համագործակցության ուղիով ֆակուլտետի շրջանավարտների ասոցիացիայի հիմնում, որը հնարավորություն կտա մի կողմից սերտացնել կապը գործատուների հետ և համալսարանի աջակցությամբ շրջանավարտ ուսանողներին տեղավորել աշխատանքի, մյուս կողմից, պրակտիկայի պահանջների հակադարձ կապով, թարմացնել, լրամշակել ուսումնական պլաններն ու ծրագրերը՝ ելնելով աշխատանքի շուկայի դինամիկ փոփոխվող պայմաններից:

Հարցազրույցը՝ **Գրիշա Նուրիջանյանի**

ԹԱԼԱՆԱԾԸ ՊԵՏՔ Է ՀԵՏ ԲԵՐԵԼ, ԲԱՅՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՉՊԵՏՔ Է ԿԱՌՈՒՑՎԻ ՀԱՎԱՔԱԳՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՐԱ

Past.am, 21 հուլիսի, 2018

Տնտեսական զարգացման և քաղաքականության, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առումով այսօր առանձին բեկում՝ կտրուկ փոփոխություն չունենք: «Փաստ»-ի հետ զրույցում գնահատելով տնտեսական ներկայիս իրավիճակը՝ նման տեսակետ հայտնեց ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր Հայկ Սարգսյանը:

Տնտեսագետը նշեց, որ այդ իրավիճակը պայմանավորված է նրանով, որ տնտեսական համակարգերն իներցիոն են. «Տնտեսական աճը շարունակական է, իսկ փոփոխությունները մեծ չեն: Մենք տեսանք, որ թավշյա հեղափոխության արդյունքները չանդրադարձան տնտեսական զարգացման վրա: Ապրիլ և մայիս ամիսներին մենք ունեցանք տնտեսական աճի իներցիոն զարգացում, ինչպես նաև բյուջեի միջոցների համալրում: Այնպես որ, այդ իմաստով, կարծեք թե, մենք չենք տարբերվում նախորդ տարիների ձեռքբերումներից: Ինչ վերաբերում է ռազմավարական խնդիրներին, կարծում եմ՝ ռազմավարական ծրագրերում փոփոխություններ կարող ենք ակնկալել միայն աշնանը, և հատկապես ընտրություններից հետո ձևավորվող կառավարության որդեգրած քաղաքականության արդյունքում: Այդ փոփոխությունները կվերաբերեն ոչ միայն այսօրվա առաջնահերթ հարցերին՝ կոռուպցիայի վերացմանը, աղքատության նվազեցմանը, արտագաղթի կրճատմանը, այլև բուն տնտեսական քաղաքականությանը, ինչը կարտացոլվի հարկաբյուջետային, դրամավարկային, սոցիալական, հակամենաշնորհային քաղաքականության վրա»:

Հայկ Սարգսյանի խոսքով՝ այդ ամբողջի համատեքստում պետք է լինի նաև ինստիտուցիոնալ զարգացման տեսլականը: Ըստ նրա՝ ինստիտուտների գործադրմամբ կձևավորվի այն տեսլականը, որը ժողովրդի համար բարեկեցիկ վիճակ կապահովի:

«Իսկ ինչ է նշանակում ասվածը: Կուզենայի մի բան հասկանանք. այլ բան է ունենալ ժողովրդավարական երկիր, բայց ոչ բավարար ինստիտուտների գործադրմամբ, և մեկ ուրիշ բան՝ ժողովրդավարական գործընթացներին զուգահեռ ունենալ աշխատող ինստիտուտներ: Օրինակ են դատական և հատկապես արբիտրաժային համակարգերը, ըստ որի՝ մասնավոր բիզնեսն ու

տեղական կառավարման ներկայացուցիչներն իրենց շահերը կարողանան վիճարկել, այսպես կոչված, պայմանագրային տնտեսություններում: Մենք այդ ակնկալիքները կարող ենք ունենալ միայն ռազմավարական ծրագրերում, ինչի իրականացումը պետք է որ հաջողվի նոր իշխանություններին»,– ասաց Հ. Սարգսյանը՝ հավելելով, որ այդ դեպքում պետք է կարողանանք նաև այնպես անել, որ ներդրումային փորձն ու միջոցները համեմատաբար գերազանցեն մինչ այս առկա ցուցանիշներին:

«Այդ թիվը մեր պարագայում պետք է գերազանցի, ենթադրենք, 2 միլիարդ դոլարը: Իսկ այս ընթացքում, ըստ իս, ավելի շատ տակտիկական խնդիրներ են լուծվում: Օրինակ՝ հակամենաշնորհային քաղաքականության փոփոխության առումով արձանագրում ենք, որ այն ընտրանքային եղանակով չէ, պայքարն արդեն համատարած բնույթ է կրում: Բայց մեկ ուրիշ խնդիր եմ ուզում առանձնացնել. եթե մենք փոփոխություն չունենանք հարկային օրենսդրությունում, ապա ռազմավարական փոփոխությունների մասին խոսք լինել չի կարող: Ես նկատի ունեմ փոքր և միջին ձեռնարկատիրությունների խթանման հարցերը»,– նշեց նա:

Տնտեսագետի հետ զրուցեցինք նաև այն գումարների մասին, որոնք վերջին երկու ամիսների ընթացքում են «հետ բերվել»:

«Զարգացման տեսլականը չպետք է կառուցվի հավաքագրված գումարների վրա: Իհարկե, գողացածն ու թալանածը պետք է հետ բերել, բայց եթե դիտարկենք այդ թվերը, կտեսնենք, որ դրանք ընդամենը երկրի մի քանի օրվա բյուջետային միջոցներն են: Ընդ որում՝ դրանք դեռևս դատական կարգով պետք է հիմնավորումներ ստանան և գանձվեն պետական բյուջե: Այսինքն՝ սա չէ, որ պետք է լինի տնտեսական զարգացման հիմնական աղբյուրը: Երբ ես 10 տոկոս և մի քիչ ավելի ՀՆԱ-ի պայմաններում 2 միլիարդ դոլար ներդրումների մասին եմ խոսում, բնավ նկատի չունեմ այն միջոցները, որոնք հետ են բերվում տնտեսություն վերոնշյալ ուղիներով: Ես նկատի ունեմ ներդրումային գրավչության ապահովումը, որը կապահովի կապիտալի ներհոսք»,– ասաց մեր զրուցակիցը:

Ինչ վերաբերում է ժողովրդի բարեկեցությանը, իշխանափոխությունից հետո առկա լավ ապրելու սպասումներին, Հայկ Սարգսյանը նկատեց. «Շատ հստակ մեխանիզմների մշակման անհրաժեշտություն կա, որը հնարավորություն կտա հասարակության բոլոր շերտերին զգալ երկրի առաջընթացը: Այն այսօր ձևակերպված է «ներառական տնտեսական աճ» տերմինով: Այդ քաղաքականությունը որդեգրվել էր դեռ նախորդ իշխանությունների կողմից, բայց մենք չտեսանք որևէ գործուն մեխանիզմ, որը կկարողանար ապահովել այդ ներառականությունը: Վերջին հաշվով՝ ներառականությունը ապահովելու համար պետք է կարողանալ վերաբաշխումներն այնպես իրականացնել,

որ նախ՝ չնվազի արդյունավետությունը. երբ ստեղծված ներքին բարիքից անհարկի շատ եք տանում, այն չի կարող խթանել զարգացմանը: Մոտիվացիան փոխում է մոտիվացիան՝ հավելյալ արդյունքից ավելի շատ տանելը բացասական հետևանք կունենա: Մյուս կողմից՝ ինչ անեն սոցիալապես անապահով շերտերը, որոնք ներառական տնտեսական աճի կարիք ունեն՝ ստեղծված հավելյալ արդյունքից իրենց բաժինն ունենալու առումով»:

Տնտեսագետի խոսքով՝ սա մի խնդիր է, որի լուծման փորձը կա աշխարհում. «Այն ամրագրվում է վերաբաշխման առավել արդարացի մեխանիզմներով: Այդ հարցն այսօր խնդիր է իշխանությունների համար»:

ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԹԱՔՆՎԱԾ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԵՋ

1in.am, 23 նոյեմբերի, 2018

Առաջիկա տարիներին Հայաստանի տնտեսության շեշտակի վերելքն իրատեսական է: Երևանում անցկացվող «Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» թեմայով խորհրդաժողովի ժամանակ այս մասին նշեց պրոֆեսոր Հայկ Սարգսյանը՝ ներկայացնելով «Իշխանության գերխնդիրը սահմանադրականության մակարդակի բարձրացումն է» թեմայով զեկույցը:

«Վերելքի հասանելիությունը մեծապես կապված է լինելու վաղվա օրվա նկատմամբ վստահության ու արդյունավետ տնտեսավարման կարողունակության հետ: Երբ խոսում ենք սահմանադրականության մասին, ասեմ, որ այդ ճանապարհը հարթ չէ: Ունենալ գրված Սահմանադրություն՝ դեռ չի նշանակում ունենալ այդ նորմերի բարձր իրացվելիության իրավիճակ: Բոլոր նորմերը, որոնք ամրագրված են Սահմանադրության մեջ, պետք է գերակա լինեն, իսկ այդ ուղղությամբ լուրջ անելիքներ ունենք»,– ասաց բանախոսը:

Նա նշեց, որ անցումային 29 երկրների շարքում սահմանադրականության մակարդակով Հայաստանը գտնվում է միջին տեղում՝ Ալբանիայի, Բոսնիա և Հերցեգովինայի հետ: Ցածր մակարդակով բնութագրվում են Բելառուսը, Ղազախստանը, Տաջիկստանը, Ռուսաստանը: Բարձր մակարդակ ունեցողներն են Մերձբալթյան հանրապետությունները:

«Երբ փորձում ենք զատել ցուցիչները, վարկանիշային գնահատականները տեսնում ենք, որ դրանք երկու խմբով են ներկայանում՝ ժողովրդավարություն, ինստիտուցիոնալ զարգացում: Մենք կարող ենք, իսկապես, ներկայիս ժողովրդավարությանը զուգահեռ գործադրել ինստիտուտները, ընդ որում՝ ամենատարբեր բնույթի՝ քաղաքացիական հասարակություն, անկախ մեդիա, կառավարության գործունեության արդյունավետություն, իրավունքի գերակայություն և այլն: Այս իմաստով՝ իմ արձանագրումը հետևյալն է. սահմանադրականության բարձր ցուցիչները երաշխիք են առաջընթացի համար: Տնտեսական աճը թաքնված է սահմանադրականության բարձր մակարդակի մեջ»,– ասաց Հայկ Սարգսյանը:

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝ ԳԱՂԱՓԱՐԸ ԿԵՆՍԱԿԱՆ ԵՎ ՇԱՀԵԿԱՆ Է

168.am, 8 մարտի, 2019

Շուշիի տեխնոլոգիական համալսարանում հանդես ենք եկել դասախոսություններով և որոշակի կոնսուլտացիաներ ենք անցկացնում պրոֆեսորա-դասախոսական կազմի, ասպիրանտների ու մագիստրանտների հետ տնտեսագիտության և տեխնոլոգիաների համակցության հարցերի շուրջ, քանի որ այսօր տնտեսագիտությունը փոխել է իր ամբողջ բովանդակությունը այն առումով, որ դասական, ավանդական մեթոդները մղվում են երկրորդ պլան այն խնդիրների համեմատ, որոնք արդիական են:

Այս մասին «Արցախպրես»-ի թղթակցի հետ հարցազրույցում ասել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, ՀՀ հանրային խորհրդի անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը և ավելացրել, որ բուհի հետ ձևավորված է համագործակցության բավարար մակարդակ:

– Պարոն Սարգսյան, ինչ հարցեր են շոշափվել աշխատանքային այցի ընթացքում:

– Եթե նախկինում մենք քիչ գաղափար ունեինք տնտեսագիտության այն բնագավառների մասին, որոնք վերաբերում են ինստիտուցիոնալիզմին՝ որպես կառավարման շատ կարևոր օղակի, ապա այսօր այն դարձել է այնքան առաջնային, որ կարողանում ենք մեր հրապարակումներով դուրս գալ միջազգային ասպարեզ: Կարծում եմ՝ սա շատ շահեկան է լինելու տնտեսությունում կառավարման արդյունավետ մեթոդներ գործադրելու առումով: Այդ աշխատանքների շնորհիվ կարողացանք ունենալ մեթոդիկա, որը հնարավոր է դարձնում ախտորոշել ու կառավարել սահմանադրական դեֆիցիտը և երկրում ապահովել սահմանադրականության հնարավորինս բարձր մակարդակ: Պետք է կարողանանք, իսկապես, լուրջ ձեռքբերումներ ունենալ ժողովրդավարական ինստիտուտների գործադրման, քաղաքական համակարգերի կայացման և, ընդհանրապես, մեր կյանքը պայմանավորող բոլոր ասպեկտների ներառման ոլորտներում: Խնդիրների այս շրջանակը գիտական հետազոտությունների առարկա է, որը փորձում ենք ներդնել նաև կրթական համակարգում:

Ինչ վերաբերում է Արցախին, ապա նշեմ, որ այս խնդիրների հետ ծանոթացնում ենք մեր գործընկերներին: Այցի ընթացքում կարողանում ենք ունենալ նաև գիտագործնական հանդիպումներ:

– Պարոն Սարգսյան, ինչ կարծիք ունեք Արցախի կառավարության գործունեության, հատկապես վերջին տասնամյակում ունեցած ձեռքբերումների ու բացթողումների վերաբերյալ:

– Նկատենք, որ շատ տպավորիչ է այդ ժամանակահատվածում Արցախի կառավարության արձանագրած տնտեսական աճը, քանի որ, նախ և առաջ, այն գործադրվել է տնտեսության կառուցվածքային փոփոխությունների առկայության պայմաններում: Եվ եթե փորձում ենք համեմատել հայաստանյան մի ժամանակահատվածի հետ, երբ ունեցել ենք 10 և ավելի տոկոս տնտեսական աճ, կարելի է նկատել, որ այդ աճերը էապես տարբերվել են իրարից:

Արցախի դեպքում մենք ունեցանք դիվերսիֆիկացիոն աճ ներդրումների մուլտիպլիկատիվ էֆեկտով, ենթակառուցվածքների զարգացման զուգորդմամբ, մինչդեռ հայաստանյան տնտեսական աճը բնութագրվում էր շինարարության բումով:

Ձեռքբերումներին զուգահեռ կցանկանայի բարձրաձայնել նաև այն խնդիրների մասին, որոնք առաջացել են, և որոնք բնորոշ չեն միայն Արցախին: Այդ խնդիրները կարելի է դասել երեք խմբի: Առաջինը, թերևս, հարստության պոտենցիալի չգործադրումն է: Այն, ինչ այսօր կա Հայաստանում և Արցախում՝ հողը, ջուրը, մարդկային կապիտալը, դեռևս անթույլատրելի վատնում է: Մենք այսօր հետ ենք մնացել նաև մարդկային կապիտալի գործադրման առումով: Երբ փորձում ենք գտնել կապիտալի գործադրման սինդրոմը, հարկ է ուսումնասիրել այլ երկրներինը: Կարծում եմ՝ կրթությունը՝ որպես գերակա ռազմավարական մարտահրավեր, պետք է մղվի առաջին պլան, քանի որ սերտորեն առնչվում է տնտեսության օպտիմալ կառուցվածք ունենալու հիմնախնդրին: Սա գերխնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է գործադրվեն լավագույն կառավարման ջանքեր այն իմաստով, որ պետք է գիտակրթական համակարգի նկատմամբ վերաբերմունքը էապես փոխվի:

– Անդրադառնանք Արցախի նախկին վարչապետ Արայիկ Հարությունյանի՝ վերջերս հրապարակած հոդվածին, որով առաջարկ է արվում ՀՀ նոր կառավարությանը՝ մոտեցումները փոխել տնտեսության զարգացման առումով: Ձեր կարծիքով՝ այն ինչքանով է իրատեսական և հիմնավորված:

– Գաղափարը շատ լավն է, այն կրեատիվ հենք ունի: Այսօր Հայաստանում տարեկան 2,5-3 միլիարդ դոլարի ներդրումներ պետք է ունենանք, որպեսզի ապահովենք ընդլայնված վերարտադրություն և կարողանանք լուծել ենթակառուցվածքների խնդիրները, ինչը տնտեսության համար շարժիչ ազդակ է: Պետք է կարողանանք կառուցվածքային տեղաշարժերի նախադրյալներ ստեղծել: Նույն հարթության մեջ պետք է դիտարկել զբոսաշրջության և գյուղատնտեսության խնդիրները:

Այս առումով, կարծում եմ՝ գաղափարը կենսական և շահեկան է: Միաժամանակ կարևոր է, որ խնամքով վերաբերվենք այն մեխանիզմների մշակմանն ու գործադրմանը, որոնք հնարավորություն կտան այդ գաղափարը կյանքի կոչելու: Այդ ամենի հետ մեկտեղ կարևորում եմ մեր կառավարման համակարգի կատարելագործումը: Շատ դեպքերում մենք լավագույն կառավարման իմիտացիա ենք ստեղծում: Տնտեսագիտության առանցքային հիմնախնդիրներից է օպտիմալ կուտակման նորմայի հիմնախնդիրը:

«Սպառել, թե կուտակել» դիլեմայի օրինակով տնտեսագիտության և՛ միկրոմակարդակում, և՛ մակրոմակարդակում պետք է կարողանանք կայացնել ճշգրիտ որոշումներ: Կարծում եմ՝ պետք է նպաստավոր պայմաններ ստեղծել մասնակցային գործընթացների և, ընդհանրապես, երկրում բաժնետիրացման առումով: Շատ կարևոր հիմնախնդիր է նաև բաշխման արդար հարաբերությունների արմատավորումը: Պետական կառավարման համակարգի էֆեկտիվ ներդրումների ապահովման գերխնդիրը ռազմավարական ծրագրերի մշակումն ու իրագործումն է լինելու:

Հարցազրույցը՝ **Անի Ավանեսյանի**

ԳԵՐԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,
7 մայիսի, 2019

Սա է սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեծիր դուրս գալու ճանապարհը

Հունիսի 28-29-ը Սանկտ Պետերբուրգի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» գիտահետազոտական համալսարանում անցկացվել է Միջազգային գիտաժողով, որում քննարկվել են, մասնավորապես, տնտեսության սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները և դրա լուծումները երկրների զարգացման համատեքստում: Քննարկումներն ընթացել են երկու հիմնական ուղղությամբ՝ «Իրավունքի և ժողովրդավարության արդի ճգնաժամը» և «Տնտեսության սահմանադրական կարգավորումներ» թեմաներով: Գիտաժողովի զեկույցով հանդես է եկել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ «Սահմանադրական տնտեաագիտության գիտավերլուծական կենտրոնի» տնօրեն, ՀՀ Հանրային խորհրդի անդամ Հայկ Սարգսյանը: Գիտական միջոցառմանը ներկա են գտնվել ՌԴ Սահմանադրական դատարանի վեց դատավորներ, տարբեր բուհերի և գիտական կրթօջախների ներկայացուցիչներ:

Ընդունված տեսակետ է, որ երկրների բարեկեցությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպիսիք են՝ աշխարհագրական դիրքը, կլիման, բնական և մարդկային ռեսուրսները, կրոնը, պատմականորեն ձևավորված փոխհարաբերությունները հարևան երկրների հետ և այլն: Սակայն իրականացված փորձագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև մարդկանց վարքագծային նախընտրությունները, ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթները ու սահմանադրական կայունությունը:

2017 թվականին ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ստեղծվեց «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը», որտեղ մշակվում են սահմանադրականության ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման հիմնախնդիրները: Այն սերտորեն համագործակցում է «Սահմանադրական մշակույթ» միջազգային գիտավերլուծական կենտրոնի հետ, որի ղեկավարը պրոֆեսոր Գագիկ Հարությունյանն է:

Ներկայումս կենտրոնը զբաղվում է նաև վարքագծային խնդիրների ուսումնասիրությամբ: Ավանդական հարցադրումը, թե ինչ կապ կար երկրի բարեկեցության և ինստիտուցիոնալ զարգացման միջև, կենտրոնի փորձագետներն այլ դիտանկյունից են քննարկում՝ առանձնակի կարևորելով մարդկանց վարքագծային նախընտրությունները և բնակչության մեծամասնության կողմից ժողովրդավարական զարգացումներն ու ինստիտուտների ընկալումները: Այս բոլոր փոխհարաբերությունները դիտարկվում են սահմանադրության և սահմանադրական համակարգի կայունության համատեքստում:

Սահմանադրականություն և տնտեսական զարգացում

Սահմանադրականության և տնտեսական զարգացման առնչությունների շուրջ «ՀՀ»-ն զրուցել է Հայկ Սարգսյանի հետ: «Սահմանադրականության և տնտեսության կապն աներկբա է: Այսօր տնտեսագիտական միտքը եկել է այն համոզման, որ կառավարման ամենաարդյունավետ ձևն ինստիտուտների զարգացումն է: Ունես լավ ինստիտուտներ՝ ի դեմս, օրինակ, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կամ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և այլն, կունենաս լավ տնտեսություն: Չունես՝ չես կարողանալու գործադրել աճի պոտենցիալը: Դեռևս 4 տարի առաջ ներկայացրել եմ ներդրումային հիմնադրամի խնդիրը, որպես կարևորագույն մեխանիզմ՝ պոտենցիալ հնարավորությունները լավագույնս օգտագործելու համար: Այսօր մեր տնտեսագիտական համայնքի և կոնկրետ մեր ֆակուլտետի միտքն ինչ-որ չափով տեղ հասնում է: Լսելը՝ լսում են, բայց պետք է նաև հետևողական լինեն ռացիոնալ հարցադրումների կենսագործման առումով»,–ասաց նա:

Երկրում առաջնահերթություն է սահմանադրականության մակարդակի բարձրացումը: Այս առումով, պետք է ի նկատի ունենալ, որ Հայաստանում երկարաժամկետ կայուն սոցիալ-տնտեսական զարգացումն առաջիկա տարիներին ընթանալու է երկու խումբ սահամանափակումների պարագայում: Սահմանափակումների առաջին խումբը մեզ պարտադրված փաստացի պատերազմական իրավիճակն ու ցամաքային մասնակի շրջափակումն է: Այդ սահմանափակումները տնտեսագետը դիտարկում է որպես յուրօրինակ տրանսակցիոն ծախսեր, որոնք, ի դեպ, լրացուցիչ բեռ են նույն բիզնեսի համար: Երկրորդ խումբը սահմանադրականության ակնհայտ դեֆիցիտն է: «Իհարկե, դա միայն մեզ չէ բնորոշ: Տարբեր երկրներում այն տարբեր չափով է արտահայտվում: Նկատենք, որ այդ դեֆիցիտի կրճատումն առավելապես պայմանավորված է պետական կառավարման համակարգի արդյունավետությամբ: Սրա գիտակցումն ամենագլխավորն է»,– նշեց դեկանը:

Սահմանադրականության դեֆիցիտ

Եթե սահմանադրականությունը Սահմանադրության մեջ ամրագրված նորմերի կիրառումն է, ապա «սահմանադրականության դեֆիցիտը»՝ այդ նորմերի ոչ պատշաճ ձևով կյանքի կոչելը: Այդ դեֆիցիտը տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, տարիների ընթացքում մշտապես առկա է եղել՝ իհարկե, տարբեր չափով: Ինչ-որ չափով հենց այդ դեֆիցիտն է մարդկանց վստահության և լավատեսության կորստի պատճառը, որն էլ հանգեցնում է նրանց վարքագծային բոլոր բացասական հետևանքներին՝ անտարբերություն, քաղաքացիական և սոցիալական ակտիվության պակաս, աննախաձեռնողականություն և այլն: «Այսօր ամենակարևոր խնդիրներից է այդ դեֆիցիտի կրճատումը, քանի որ այստեղ է թաքնված սոցիալ-տնտեսական առաջընթացի երաշխիքը: Սահմանադրականության բարձր մակարդակն իրապես կարող է ստեղծել բավարար նախապայմաններ՝ բարձր տնտեսական աճ և տնտեսական զարգացում ապահովելու համար»,– ասաց Սարգսյանը՝ մեջբերելով բրիտանական բանկիրներից մեկի խոսքը, որ մարդուն խելքահան անող երեք բան կա, փառասիրությունը, սերը և դրամավարկային քաղաքականությունը: «Տնտեսագետի համար ևս կնշեի նաև չորրորդը՝ սահմանադրականության հիմնախնդիրները»,– հավելեց նա:

Սահմանադրականության ախտորոշում և գնահատում

Ինչպե՞ս կարող ենք չափել երկրում սահմանադրականության մակարդակը, և արդյոք այն չափելի՞ է: Տնտեսագիտության դոկտորը նշեց, որ կենտրոնի կողմից արդեն կան որոշակի մեթոդիկայով առանձին գնահատումներ:

Եթե փորձենք տարբեր ինդիկատորների միջոցով ներկայացնել սահմանադրականության մակարդակը, կարելի է խմբավորել այսպես՝ իրավունքի գերակայության նորմեր և կայուն զարգացման նորմեր: Մասնավորաբար, այս երկու ամփոփ բաղադրիչներով կարելի է խոսել սահմանադրականության մակարդակի մասին կոնկրետ երկրում: Հենց դա է եղել այն հիմնական նպատակներից մեկը, որի համար ստեղծվեց «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը»: «Կենտրոնի հիմնական նպատակը տնտեսահիրավական կարգավորումների և դրանց հետևանքների գնահատման մեխանիզմների մշակումն է և դեֆիցիտի կրճատման գործընթացների կառավարումը: Բնական է, պետք է նախ՝ դեֆիցիտի մակարդակը բացահայտվի, պետք է տեսնենք՝ որոնք են «նեղ տեղերը», և որոնք են սահմանադրականության «լոկոմոտիվ» նորմերը, որոնց վրա պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել: Գնահատման մեթոդիկայի ստեղծումը հնարավորություն է տալիս ոչ միայն լուծել սահմանադրականության ախտորոշման խնդիրը, այլև կառավարել երկրում դրա դեֆիցիտի հաղթահարման

գործընթացը: Այսինքն՝ ոչ միայն խնդիրը բացահայտել, այլ նաև տալ լուծումները: Դրա համար էլ սահմանադրականության հիմնախնդրի մասին խոսելիս մենք առանձնացնում ենք հետևյալ երեք բառերը՝ ախտորոշում, մշտադիտարկում և կառավարում»,– մանրամասնեց նա:

Այս համատեքստում արդարացված է գիտական հետազոտությունների պահանջը, քանի որ երկրներում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիրների համատեղ (այսինքն՝ ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ինդիկատորների համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Առանց պատշաճ գիտական սպասարկման ու հիմնավորման՝ չի կարելի ակնկալել լուրջ արդյունքներ: Հայաստանի պարագայում պետք է կարողանանք Արցախի հետ միասնաբար 40 և ավելի հազար քառ. կմ տարածքի վրա լավագույնս գործադրել մեր ներուժը: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանն ընդգծեց, որ բոլոր այն երկրներում՝ Սինգապուր, Չինաստան և այլն, որտեղ «հրաշք» է տեղի ունեցել, կատարվածը պայմանավորված է եղել սահմանադրականության մակարդակի բարձրացմամբ: Մեր երկրում տնտեսական զարգացման գերակա ուղղություններն են տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը և տուրիզմը: ՏՏ-ում Հայաստանը հետ չի մնում աշխարհի զարգացող տեմպերից, բայց անհրաժեշտ է, որ տնտեսության մեջ իրականացվեն կառուցվածքային փոփոխություններ, որպեսզի ՏՏ և հարակից ոլորտներում ախտորոշողները լինեն ոչ թե 20-25 հազար, ինչպես այսօր, այլ առաջիկա երեք-հինգ տարիների ընթացքում դրանց թիվը հասնի 150-180 հազարի: Սա կլինի կոնկրետ բնագիծ և լուրջ ձեռքբերում: Այդ ներուժը պետք է ներդրվի նաև ռազմարդյունաբերական ոլորտում:

Համաշխարհային զարգացման միտումներին անդրադառնալով՝ Սարգսյանը նշեց, որ տեղեկատվական և տելեկոմունիկացիոն ծառայություններում արտադրությունը կազմում է աշխարհի ՀՆԱ-ի 6,5 %-ը: Միայն 2010-2015 թթ. էլեկտրոնային առևտրի ոլորտում այս ծառայությունների արտադրությունը աշխարհում հասել է 25 տրիլիոն դոլարի: Թվայնացումը միանգամայն բարձրացնում է ընկերությունների մրցունակությունը, օգնում է օպտիմալացնել ծախսերը, մեծացնել ակտիվների եկամտաբերությունը և, վերջապես, օգնում է ավելի լավ գնահատել սպառողների պահանջները: Հաջորդ կարևոր խնդիրը ինովացիոն տնտեսության շեշտադրումն է: «Եվրաասոցացման հնարավորությունները զարկ կտան ՀՀ-ում ինովացիոն հենքով ընկերությունների հիմնմանը, և չենք սահմանափակվի ժամանակ առ ժամանակ երևացող էքսպոներով»,– կարծիք հայտնեց նա:

Տնտեսական հեղափոխության ընկալումները և գործարկման հնարավորությունները

Այսօր շրջանառվող եզրույթներից է «տնտեսական հեղափոխությունը», որի ակունքները հասնում են մինչև նեոլիթի ժամանակաշրջան (մ.թ.ա. 11-6-րդ հազարամյակ), երբ տեղի ունեցավ երկրագործության և անասնապահության՝ այսօրվա եզրաբանությամբ՝ գյուղատնտեսական հեղափոխությունը: Տնտեսագետի խոսքով՝ հետագայում արդյունաբերական (Անգլիա, 19-րդ դար), ներկայիս՝ չորրորդ արդյունաբերական և բոլոր այլ հեղափոխությունները բնույթով տնտեսական են, որոնք, սակայն, պարտադիր չէ շրջադարձեին, օրինակ՝ հիմնական սեփականատիրական հարաբերությունները: Համընդգրկուն տնտեսական հեղափոխության հիմք կարող են հանդիսանալ տեխնոլոգիական և կառուցվածքային խոր բարեփոխումները:

Այս տարվա սեպտեմբերին կենտրոնը նախաձեռնել է տնտեսական հեղափոխությանը նվիրված գիտաժողով, որի ժամանակ կքննարկվի տնտեսական հեղափոխության ընկալումների ու գործարկումների թեման: Այս թեմայով դա կլինի երկրորդ գիտաժողովը: Առաջինը անցկացվել էր Արդյունաբերողների և գործարարների միության հետ «Ինչ անել» խորագրով, որի ընթացքում քննարկվել են տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները:

Միջոցառմանը ներկա է եղել նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Եթե քաղաքական հեղափոխությունը սկիզբ առավ 2018-ի ապրիլի 23-ին և ավարտվեց, ապա տնտեսական հեղափոխության սկիզբը և ավարտը խիստ պայմանական են ժամկետի առումով, որովհետև տնտեսական համակարգը իներցիոն է, և նրա ավարտը պետք է իր ձևակերպումն ունենա:

Քաղաքական էլիտաների փոփոխման գործընթացը կարող է ընթանալ շատ արագ, իսկ տնտեսական էլիտաները և համակարգերը դեռ կարող են կենսունակ մնալ՝ չենթարկվելով առանձնապես լուրջ փոփոխությունների, հարմարվելով քաղաքական նոր համակարգին և ժամանակի ընթացքում հարմարացնելով նույն այդ համակարգը իրենց նպատակներին: Ներկա իրավիճակում սա ցանկացած բարեփոխումների, այդ թվում նաև անցումային արդարադատության գլխավոր մարտահրավերն է: Պետք է փաստել, որ այս խնդրի լուծումները չեն կարող լինել:

Լուծման գլխավոր ճանապարհը համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումն է»,– ասաց Սարգսյանը՝ շեշտելով, տնտեսական հեղափոխության համար անհրաժեշտ են օրենսդրական լուրջ բարեփոխումներ: Հետևաբար՝ տնտեսահիրավական կարգավորման ամբողջ զինանոցն այնպես պետք է գործադրվի, որ ուղղված լինի տնտեսական հեղափոխության իրականացմանը, այն է՝ զարգացման նոր ուղեգիծ դուրս գալու, տնտեսության և երկրի վերելքն ապահովելու համար որոշակի նախադրյալների ստեղծումը պահանջում է

լուծումների ինստիտուցիոնալացում: «Սա է տնտեսական զարգացման արդի օրակարգը Եթե մենք բարեփոխում ենք իրականացնում՝ կոտրելով գոյություն ունեցող կառույցը: Սա կարող է վերաբերել, օրինակ, դատական համակարգին, և դեռևս չունենալով հիմնական փոփոխությունների իրականացման առումով ամբողջական տեսլական՝ պետք է ստեղծենք ներկառուցված ինստիտուտներ, որոնք միջանկյալ դերակատարում կարող են ունենալ՝ կապակցելով գոյություն ունեցողը նորաստեղծին: Նման օրինակ է անցումային գիտակրթական համակարգի ներդրումը, որն աստիճանաբար կփոխի մարդկանց վերաբերմունքը, վարքագծային պայմանները և տնտեսությունը կդրվեն տեխնոլոգիական հիմքի վրա»,– բացատրեց զրուցակիցս:

Ռիսկերի կառավարում

Տնտեսագետների համար կարևոր հիմնախնդիրներից է ռիսկերի կառավարումը:

Օտարերկրյա ուղղակի և ներքին ռեսուրսներով ներդրումային հոսքեր ապահովելու համար միայն երկրի գրավչության մասին խոսակցությունները բավարար չեն, դրա համար անհրաժեշտ է, որ այդ գրավչությունն ամրագրված լինի գործուն մեխանիզմներով: Սարգսյանի խոսքով՝ ինստիտուցիոնալ բարեշրջումների էությունը ներդրումների կրճատման առումով պետք է արտահայտվի նրանում, որ ներդրողին օրենքով ամրագրված երաշխիքներ տրվեն գործարար բարենպաստ միջավայրի և պաշտպանվածության մասով, այլ ոչ թե, օրինակ, նախարարի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի հետ «ձեռքսեղմման երաշխիքով»: «Արդյունավետ տնտեսության կազմակերպումը հնարավոր է միայն ժողովրդավարական, ինստիտուցիոնալ զարգացումների առումով սահմանադրականության բարձր մակարդակ ունենալու պարագայում: Համաշխարհային զարգացումների օրինաչափությունների պրակտիկայում ընդունված է, որ 5-7 տոկոս հարաճուն տնտեսական աճ ունենալու համար պետք է ՀՆԱ-ի քառորդի չափով ներդրումներ ապահովել: Մենք պետք է խնդիր դնենք, որ ամենատարբեր աղբյուրներից գոյացող ներդրումները գերազանցեն շուրջ 2 մլրդ դոլարը»,– կարծիք հայտնեք ֆակուլտետի դեկանը:

Կոոուպցիա և սահմանադրական փոփոխություններ

Ներկայումս աշխատանքներ են տարվում հակակոոուպցիոն նոր մարմին ստեղծելու ուղղությամբ: Նման դեպքում շատ կարևոր է արձանագրել, թե ինչ գործառույթներ են ամրագրվելու, և ինչպիսին են լինելու իրացման կառուցակարգերը, որպեսզի պարզ դառնա, թե որքանով է կենսունակ լինելու այդ կառույցը: Այս առումով տնտեսագետը հորդորում է զերծ մնալ

պատրանքներից՝ հասարակության համար ձևավորվել արագ արդյունքների սպասումներ: Դա չափազանց վտանգավոր է և միայն կնվազեցնի վստահությունը կառավարության կատմամբ: Իրավունքի գերակայություն ու հակակշիռների զսպող մեխանիզմների ցուցիչների բարելավումը, ըստ նրա, կընթանա ոչ շուտ, քան 2-3 տարվա ընթացքում: Ի վերջո, հասարակության, մարդկանց մտածողությունը շատ արագ չի կարող փոխվել: Մայն հետևողական և անշրջելի բարեփոխումները կնպաստեն արդարության հասնելու և համակարգային կոռուպցիան իսպառ արմատախիլ անելու:

Խոսվում է նաև Սահմանադրությունը փոխելու անհրաժեշտության մասին:

«Երկրում սահմանադրական կարգը պետք է կանխորոշի արդարադատությունը: Անկախ դատական համակարգ, հասուն պառլամենտարիզմ, արդյունավետ կառավարում. այս եռամիասնությունը միայն կերաշխավորի երկրի առաջընթացը և դուրս կբերի այն զարգացման նոր ուղեծիր: Սահմանադրության փոփոխության դեպքում առաջնային եմ համարում զսպման և հակակշիռների մեխանիզմների հստակ տարանջատումը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,
21 սեպտեմբերի, 2019

Անկախության ձեռքբերումից ի վեր մեր երկիրը տնտեսական առումով լուրջ վայրիվերումների միջով անցավ՝ ունենալով թե՛ ձեռքբերումներ, թե՛ կորուստներ: Ամբողջատիրական, համայնավարական համակարգից փորձեցինք անցնել շուկայական համակարգի, որի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները արմատական էին, քանի որ ուղղված էին հասարակության տնտեսակարգի՝ սեփականության իրավունքի փոփոխությանը: Արդյունքում, այսպես կոչված համաժողովրդական սեփականությանը փոխարինելու եկավ մասնավոր սեփականությունը, որն էլ հիմք պիտի դներ ազատ շուկայական հարաբերություններին:

«Այդ անցումը բավականին հախուռն էր, ինչ-որ տեղ՝ նաև կորստաբեր: Փլուզվեց երկրի միասնական ժողովրդատնտեսական համալիրը, խզվեցին տնտեսական կապերը, ինչն էական ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա: Մեր երկրի համար այդ ազդեցության խորությունը պայմանավորված էր նրանով, որ սերտորեն էինք կապված Խորհրդային Միության միասնական ժողովրդատնտեսական համալիրին»,– «ՀՀ»-ի հետ զրույցում ասաց ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, ՀՀ հանրային խորհրդի անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

Խորհրդային Հայաստանի տնտեսության 70 տոկոսը կազմում էր արդյունաբերությունը, որի մեջ 30 տոկոսը մեքենաշինությունն էր: Եթե մետաղը, նյութերը ներկրվում էին դրսից, այստեղ պատրաստվում էին հաստոցներ և ուժային գեներատորներ, այնուհետև արտահանվում, ապա նման կառուցվածքով տնտեսությունը նոր պայմաններում հեռանկար չէր կարող ունենալ, քանի որ շատ նյութատար էր, էներգատար և քիչ գիտատար:

Նման պայմաններում կորցրինք քիմիական արտադրությունը, նաև արդյունաբերության այն ճյուղերը, որոնք վերաբերվում էին սարքաշինությանը, ճշգրիտ կապի և հեռահաղորդակցման համակարգերին, մասնավորապես՝ Աբովյանի «Սիրիուս» գործարանը, «Նաիրիտը», Վանաձորի քիմիական կոմբինատը, «Բազալտը», «Էլեկտրոնը», «Հայէլեկտրամեքենա» գիտաարտադրական միավորումը, Մերգելյան ինստիտուտը և այլն: Այդ ամենի

հետևանքով 400 հազարից ավելի արդյունաբերական աշխատատեղերից տարիներ հետո կարողացանք վերականգնել շուրջ հարյուր հազարը:

Հայաստանն առաջին հետխորհրդային երկիրն էր, որտեղ տեղի ունեցավ հողի մասնավորեցումը: Այն, ըստ Հայկ Սարգսյանի, չունեցավ իր տրամաբանական շարունակությունն ու ավարտը, ունեցանք ցածր արտադրողականությամբ 300 հազարից ավելի գյուղացիական տնտեսություններ: «Առայսօր մենք չկարողացանք լուծել մեր առջև ծառացած խնդիրները: Ըստ էության, դա զրկեց հողատիրոջը մեքենայական ապահովումից, պարարտացումից, խորհրդատվությունից, հնարավոր նոր տեխնոլոգիաներից: Արդյունքում գյուղացին դարձավ իր հողակտորի պատանդը, որի հետևանքները մինչև այժմ զգացվում են»,– ասաց նա: Կամ արդյոք անցումային շրջանից պակաս ցնցումներով դուրս գալու այլընտրանքային ճանապարհ: Տնտեսագիտության դոկտորի խոսքով՝ հատկապես գյուղատնտեսության ոլորտում ցանկալի էր մասնավորեցման գործընթացը կազմակերպել առավել համակարգված գյուղատնտեսական արտադրություն ապահովող ենթակառուցվածքների ամբողջության համատեքստում:

Տնտեսական հեղափոխությունը՝ ժամանակի հրամայական

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում գրեթե բոլոր երկրներում տեղի ունեցան տարբեր խորության և ուժգնության ինչպես քաղաքական, այնպես էլ, տնտեսական վերափոխումներ: Ժամանակակից առումով «տնտեսական հեղափոխություն» հասկացությունը ենթադրում է փոփոխություններ հանրային կյանքի բազմաթիվ ոլորտներում: Տնտեսական հեղափոխությունների անհրաժեշտությունն ամենից առաջ պայմանավորված է երկրում ձևավորված սոցիալական և տնտեսական այնպիսի իրողություններով, որոնց առկայությունից դժգոհ է բնակչության մեծ մասը: Դա պարարտ հող է ստեղծում և դառնում նախադրյալ նախ քաղաքական, ապա նաև՝ տնտեսական հեղափոխության իրականացման համար:

Հայաստանում 1,5 տարի առաջ տեղի ունեցած բեկումից հետո իշխանությունները նախաձեռնեցին տնտեսական հեղափոխության մարտավարություն, որը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է ունենալ տնտեսական հեղափոխության գործարկման հայեցակարգային, օրենսդրական և ծրագրա-նպատակային ապահովում՝ ըստ մի շարք բաղադրիչների՝ տնտեսահրավական կարգավորումների, ժամկետների ամրագրման, ներազդման գործիքակազմի և այլն:

Որոշ շրջանակներ, այդ թվում՝ մասնագիտական, վիճարկում են, թե կամ արդյոք տնտեսական հեղափոխություն ասվածը, թե՞ ոչ: Շատերն այն տեսնում են պարզապես բարեփոխումների տեսքով: Հ. Սարգսյանի խորին

համոզմամբ՝ այն գոյություն ունի, ավելին՝ այն համաշխարհային գործընթաց է: «Համաշխարհային տնտեսության մեջ ընթացող արմատական վերափոխումներն իրականանում են տեխնոլոգիական և կառուցվածքային խոր բարեփոխումների միջոցով: Այդ գործընթացներին Հայաստանի համընդգրկուն և խոր մասնակցությունը կարող է ազդարարել տնտեսական հեղափոխության գործարկումը:

Ներկա փուլում կարևորվում է թե՛ իշխանությունների և թե՛ հասարակության գիտակցումը, որ սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեգիծ դուրս գալու բավարար լուծումները չեն պարփակվում տնտեսական բաղադրիչներով: Համալիր լուծումները խարսխվում են նաև արտատնտեսական բաղադրիչների վրա, որոնց թվում են քաղաքականը, իրավականը, սոցիալականը, ինստիտուցիոնալը, բնապահպանականը, վարքագծայինը, ենթակառուցվածքայինը և այլն»,– մանրամասնեց պրոֆեսորը:

Գրավականը ինստիտուցիոնալ և արժեհամակարգային բարեփոխումներն են

Տնտեսական հեղափոխությունը կարող է կյանքի կոչվել, եթե բավարարվեն մի շարք պայմաններ: Մասնավորապես, պետք է արձանագրվի, որ 2018 թվականի իրադարձություններից հետո երկրում ձևավորված նոր իրավիճակը դեռ չի նշանակում, որ ինքնաբերաբար կփոխվեն տնտեսական որոշումների ընդունման կառուցակարգերը և ավանդույթները, ինչպես նաև տեղի կունենա արժեհամակարգի փոփոխություն: Փորձը ցույց է տալիս, որ քաղաքական էլիտաների փոփոխման գործընթացը կարող է ընթանալ շատ արագ, մինչդեռ տնտեսական էլիտաները և համակարգերը դեռ կարող են կենսունակ մնալ՝ չենթարկվելով առանձնապես լուրջ փոփոխությունների, հարմարվելով քաղաքական նոր համակարգին և ավելին՝ ժամանակի ընթացքում հարմարեցնելով նույն այդ համակարգը իրենց նպատակներին: «Ներկա իրավիճակում սա ցանկացած բարեփոխումների գլխավոր մարտահրավերն է, և պետք է փաստել, որ այդ խնդրի լուծումները միայն ուժային մեթոդները չեն կարող լինել: Լուծման գլխավոր ճանապարհը համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումն է»,– մեկնաբանեց զրուցակիցս:

Մյուս պայմանն այն է, որ քաղաքական էլիտան պետք է հետևողական կամք դրսևորի այդպիսի բարեփոխումներ իրականացնելու համար և ունենա երկարաժամկետ պլանավորման հնարավորություն: Այս երկու պայմանները խիստ փոխկապակցված են: Ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքները կարող են տեսանելի լինել միայն երկարաժամկետ կտրվածքով: Հետևաբար, քաղաքական էլիտան ոչ միայն քաղաքական կամք և պատրաստակամություն պետք է ունենա, այլև որոշակի վստահության քվե:

Բարեփոխումները կարող են հաջողություն արձանագրել միայն քաղաքական, տնտեսական և արժեհամակարգային փոփոխությունների միաժամանակյա իրականացման պայմաններում: Ներդաշնակեցման սկզբունքը հաջողության գլխավոր նախապայմանն է:

Հիմքում սահմանադրության մակարդակի բարձրացումն է

Հայկ Սարգսյանի դիտարկմամբ, որքան էլ վճռորոշ լինեն ձևավորված քաղաքական և տնտեսական ինստիտուտների որակն ու կարողությունները, միևնույն է, հասարակության բարեկեցության ապահովման համար կարևոր նշանակություն են ունենալու ինստիտուտների ընկալումները, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը: Տնտեսական հեղափոխության իրականացմանն ուղղված են երկրի շահերից բխող բարեփոխումները, տնտեսաիրավական կարգավորման ամբողջ զինանոցի գործադրումը պահանջում են լուծումների ինստիտուցիոնալացում: «Առաջընթացի փորձը ցույց է տալիս, որ բոլոր առաջավոր մոդելները խարսխվում են կոռուպցիայի գրեթե բացակայության, անկախ դատական համակարգի, ազատ և արդար ընտրությունների, խոսքի, մտքի ազատ դրսևորումների, իշխանությունների հակակշիռների և զսպման մեխանիզմների բավարար գործադրման, ազատ չորրորդ իշխանության և քաղհասարակության, քաղաքական համակարգի կայացվածության և այլնի վրա: Երկրի տնտեսական զարգացման արդի օրակարգի հիմքում դրված են ժողովրդավարությունը, ինստիտուցիոնալ զարգացումը, ինչպես նաև մտածողության և վարքագծային նորմերի փոփոխությունը»,– ասաց զրուցակիցս:

Սոցիալական և տնտեսական առաջընթաց կարող է երաշխավորվել միայն սահմանադրականության առկա դեֆիցիտի կրճատմանը համընթաց: Այսինքն՝ մեր գերխնդիրը պետք է լինի երկրում սահմանադրականության մակարդակի բարձրացումը, մասնավորապես՝ արդարադատության համակարգի հիմնովին բարեշրջումը: «Կասկածից վեր է, որ օր առաջ պետք է ազատվել արատավոր և մարդու կենսագործունեության բարոյահոգեբանական և բիզնես միջավայրը ապականած դատական համակարգից: Սակայն վերջինիս միջոցով անձերի գույքի տիրապետման, քաղաքական կապերի և մասնագիտական կարողությունների բացահայտման, ինչպես նաև արդյունավետ լուծումների առաջադրման ժամանակ չպետք է «չճմլվի» սեփականության անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական նորմը, և չկայացվեն ոչ արդար, պարզունակ լուծումներ»,– շեշտեց նա:

Երբ հարստության և եկամտի աղբյուրը կդառնա ինտելեկտը

Տեխնոլոգիական, տնտեսական, քաղաքական փոփոխությունները մարդկության պատմության ընթացքում այնպես չեն ցնցել հասարակությունները, ինչպես վերջին հարյուրամյակում և հատկապես տասնամյակում: 21-րդ դարում մարդկության զարգացման նախագծերը՝ ինչպես ստեղծարար, այնպես էլ՝ կործանարար, նպատակամղվում են Homo sapiens-ի վերափոխմանը Homo Dues-ի:

Եթե հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տնտեսական հեղափոխությունն այնպիսին էր, որ սեփականությունը դարձրին «համաժողովրդական», ապա Խորհրդային Միության փլուզումից հետո մեր անկախության առաջին տարիներին հակադարձ խնդիրը լուծեցինք՝ սոցիալիստական սեփականությունից անցում կատարելով մասնավորի՝ գյուղատնտեսության ոլորտում գրեթե ամբողջովին, իսկ մյուս ոլորտներում ժողովրդական ունեցվածքը մասնավորեցվրեց և ապա պետականացվեց 70-80 տոկոսի չափով: Փաստորեն, դա սեփականատիրական հարաբերությունների հեղափոխություն էր:

Ներկայիս հեղափոխությունը ևս պետք է ներառի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներն ու տարրերը՝ սոցիալականը (կրթություն, գիտություն և առողջապահություն), նյութական արտադրությունը և այլն: Մասնավորապես, գյուղատնտեսության ոլորտում մենք չպետք է խոսնեք միայն ոռոգման կաթիլային համակարգից: Տնտեսագիտության դոկտորը նկատեց, որ հաճախ սիրում ենք համեմատվել Իսրայելի տնտեսության հետ, մինչդեռ անհող, անապատների վրա գյուղատնտեսություն կառուցած այդ երկրում գյուղատնտեսական ապրանքների տասնյակ անգամ բարձր արտադրողականություն ունեն: Նրանց մոտ գյուղատնտեսությունը խարսխվում է անհող արտադրությունների, կենսատեխնոլոգիաների, հիդրոպոնիկայի և նորագույն տեխնոլոգիաների վրա, որի շնորհիվ կարողանում են գյուղատնտեսական արտադրության մասով ինքնաբավ տնտեսություն դառնալ: Մեզ մոտ նոր տեխնոլոգիաների ներդրմանը զուգընթաց պետք է արդյունավետ լուծումներ գտնվեն գյուղարտադրանքի իրացման և ապահովագրության առումներով: Բարձր տեխնոլոգիական հիմքի վրա ինդուստրիալ-ագրարային երկիր ունենալը պետք է լինի գերակա նպատակներից մեկը: «Մեր պարագայում պարադոքսալ իրավիճակ է ստեղծվել. այս ջրառատ երկրում՝ տարեկան մինչև 10 մլրդ խորանարդ մետր ջուր (ստորգետնյա և վերգետնյա ջրերի ամբողջ ծավալը) ունեցող երկրում, մենք օգտագործում ենք դրա 20 տոկոսը, իսկ մնացածը՝ կորցնում, «նվիրում» հարևաններին, որի հետևանքով այսօր մենք ոռոգման ջրի խնդիր ունենք և ձեռքներս մեկնում ենք Սևանին: Ցավոք, մենք չկարողացանք այս տարիների ընթացքում կառուցել անհրաժեշտ քանակությամբ ջրամբարներ: Երբ դիտարկում ենք գյուղատնտեսության ոլորտը, պարզ

է դառնում, որ այս բարեբեր, ջրառատ, արևոտ. աշխատատենչ մշակների երկրում մենք շատ հետ ենք գյուղատնտեսական արտադրողականության անհրաժեշտ մակարդակից»,– ասաց նա: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է գիտակցենք և անհրաժեշտ հետևություններ անենք այն իրողությունից, որ 21-րդ դարի տնտեսության արդյունքները լինելու են ոչ թե նյութական բարիքները, այլ՝ մարդկանց միտքը, ինտելեկտը և գաղափարները:

Լուսինե Մխիթարյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,
17 հոկտեմբերի, 2019

Տնտեսագիտական համայնքն առաջարկում է իր լուծումները

Հայաստանում 2018 թ. ապրիլին տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո մեկ տարի անց հայտարարվեց նաև տնտեսական հեղափոխության մեկնարկը: ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախաձեռնությամբ օրերս անցկացվել է տնտեսական հեղափոխության իրականացման ուղղությամբ անելիքներին նվիրված «Ի՞նչ անել-2. տնտեսական հեղափոխություն՝ ընկալումը և գործարկումը» գիտագործնական խորհրդաժողովը, որին մասնակցել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Կառավարությունն արդեն հոչակել է տնտեսության ճյուղային առաջնահերթությունները: Դա գյուղատնտեսությունն է, ես կավելացնեի՝ նաև գյուղի զարգացումը, նաև զբոսաշրջությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Մյուս կողմից՝ շատ կարևոր է հաշվի առնել, որ ճիշտ է, քանի որ տնտեսությունների կառուցվածքը և հանրային բարիքների նկատմամբ պահանջարկը շատ արագ են փոխվում: Տնտեսական հեղափոխության այս բնորոշումը, որ դա կառուցվածքային, տեխնոլոգիական փոփոխություններ է ենթադրում, վերաբերում է նաև ոլորտային գերակայություններին: Այսօր տնտեսական բարիքների բնույթը փոխվում է դրանց պահանջարկից կախված:

Խորհրդաժողովի ընթացքում ներկայացվել են զեկուցումներ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեգծի տեսլականի, ՀՀ-ում տնտեսական հեղափոխության նախադրյալների, պետական կառավարման որակի, ստվերային տնտեսության ազդեցության, ինստիտուցիոնալ, ագրարային, կրթության, գիտության համակարգերի զարգացման վերաբերյալ: Նախորդ տարվա նոյեմբերին կայացած: «Ի՞նչ անել-1» խորհրդաժողովը նվիրված էր տնտեսական հեղափոխության գաղափարական և հայեցակարգային դրույթներին: Թեմայի շուրջ «ՀՀ»-ն զրուցել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, ՀՀ հանրային խորհրդի անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանի հետ:

– Այս օրերին տեղի ունեցավ «Ինչ անել-2» խորհրդաժողովը: Ինչ արձանագրեց խորհրդաժողովը: Ի վերջո, ինչ է ենթադրում տնտեսական հեղափոխությունը:

– Խորհրդաժողովին մասնակցում էին տնտեսագիտական համայնքի ու բիզնես հանրության ներկայացուցիչներ, որոնք բազմակողմանիորեն ներկայացրին և քննարկեցին տնտեսության զարգացման հետ կապված հիմնախնդիրները, որոնք պետք է հետագայում հիմք դառնան երկարաժամկետ և կայուն տնտեսական զարգացման համար: Ցավոք, այս համաժողովին տնտեսագիտական համայնքի ներկայացվածությունն այնքան էլ բարձր չէր՝ ելնելով, թերևս, առաջադրված թեմայի նորությունից և բարդությունից:

Մասնագիտական շրջանակներում երբեմն վիճահարույց է տնտեսական հեղափոխության միանշանակ ընկալումը: Շատերն այն հասկանում են որպես բարեփոխումներով արդյունքի հասնելու ճանապարհ: Մինչդեռ ես այն կարծիքին եմ, որ տնտեսական հեղափոխությունը հնարավոր չէ իրականացնել մեկուսի, միայն մեկ երկրում: Այն համաշխարհային գործընթաց է, որին պետք է մասնակցենք տնտեսության մեջ տեխնոլոգիական և կառուցվածքային խոր վերափոխումներ իրականացնելու միջոցով: Սրանով է առանձնանում տնտեսական հեղափոխությունը և Հայաստանի համընդգրկուն ու գործուն մասնակցությունը համաշխարհային գործընթացին կարող է ազդարարել այդ հեղափոխության գործարկումը նաև մեր երկրում:

Շատերի մոտ հարց է առաջանում, թե շարքային քաղաքացին ինչպես է տեսնելու տնտեսական հեղափոխության արդյունքները: Արդյոք այն դրսևորվելու է աշխատավարձի բարձրացմամբ, աշխատատեղերի ավելացմամբ, թե՞ այլ ճանապարհներով:

Հարցի պատասխանը միանշանակ է. այո, տեխնոլոգիական և կառուցվածքային վերափոխումները հենք են ստեղծելու բարձր արտադրողականության համար, և այդ ճանապարհով լուծվելու են քաղաքացիների բարեկեցության բարձրացման, պատշաճ կենսամակարդակի ապահովման խնդիրները: Տնտեսական հեղափոխության համընդգրկունության մասին խոսելիս նկատի ունեմ տնտեսության բոլոր ոլորտները, ինչպես նաև մեր քաղաքացիական կյանքը, ակտիվությունը:

Խորհրդաժողովը կազմակերպել է տնտեսագիտական համայնքը, մասնակցել են գործարար համայնքի ներկայացուցիչներ, սակայն հիմնական «հասցեատերը» կառավարությունն է, քանի որ խորհրդաժողովի ուղերձները և առաջարկած լուծումները կառավարությունն է, որ պետք է կյանքի կոչի՝ ներգրավելով նաև հասարակությանը:

Շատ կարևոր է իշխանության գիտակցումը, որ անհրաժեշտ են նման ֆորումները, հետադարձ կապը գիտական համայնքի հետ: Տնտեսագիտական

համայնքը պատրաստ է գործուն և հետևողական աջակցություն ցուցաբերել կառավարությանը տնտեսական քաղաքականության իրականացման գիտական սպասարկման առումով:

– Ինչպե՞ս պետք է կառավարությունը գործարկի իր իսկ կողմից հայտարարված տնտեսական հեղափոխությունը:

– Այսօր մենք շատ ենք գործածում «վերելք», «թռիչքաձև զարգացում» տերմինները: Տնտեսական հեղափոխություն իրականացնելու ճանապարհին շրջանառության մեջ կդնեի «նոր ուղեծիր» գաղափարը, որը ենթադրում է զարգացման նոր հետագծերի նվաճում, բարձր և արդյունավետ տնտեսության հիմքերի ստեղծում: Այդ իմաստով շատ եմ կարևորում նման հավակնոտ ծրագիր ունենալու համար նմանակումներից զերծ մնալը:

Տնտեսական հեղափոխության գործարկման համար անհրաժեշտ է ունենալ հայեցակարգային, օրենսդրական և ծրագրանպատակային ապահովում ըստ ռեսուրսապահովման, ժամկետների ամրագրման, ներազդման գործիքակազմի, մեթոդների և մոդելների նախանշման, տնտեսաիրավական կարգավորումների և այլ բաղադրիչների: Այդ առումով կարևորվում է երեք ուղղություն՝ ինստիտուտների կայացում, օրենսդրական և նորմատիվային մակարդակում գործուն կառուցակարգերի ստեղծում և մարդկանց վարքագծային նորմերի վերափոխում: Այսպիսով, տնտեսական հեղափոխության գործարկումն ուղղված պետք է լինի երկրի անվտանգության ապահովմանը և առաջադեմ հասարակություններին խոր ինտեգրմանը, 21-րդ դարում ազգային ինքնության պահպանմանը, ինչպես նաև զարգացման նոր ուղեգծի ընտրությանը միտված խորքային վերափոխումների իրագործմանը:

– Ինչ խոչընդոտներ կարող են լինել տնտեսական հեղափոխության արդյունավետ իրականացման համար: Որո՞նք են դրանց հաղթահարման ուղիները:

– Հասարակության տարբեր խմբերի սպասումների իրականացմամբ են պայմանավորված իշխանության նկատմամբ ձևավորվող վերաբերմունքը, հեղափոխական փոփոխությունների հաջողությունը: Չհաշվարկված, չհիմնավորված գործողությունները կարող են հսկայական վնաս հասցնել պետության և իշխանության վարկանիշին: Այսօր սպասումների իրականացումից են կախված նաև տնտեսական հեղափոխության հաջողությունները: Ավել կամ պակաս սպասումներ ձևավորելու, դրանց իրատեսական լինելու խնդիրը պետք է լուծեն իշխանությունն ու քաղաքացիական հասարակությունը և ներկայացնեն հանրությանը: Հասարակությունը պետք է արձագանքի և տեսնի մինչև անգամ փոքր ձեռքբերումներն ու հաղթանակները:

– Բնականաբար չենք կարող բոլոր ոլորտներում մեծ քայլերով զարգացում ապահովել: Որո՞նք կարող են լինել մեր տնտեսության զարգացման հիմնասյունները:

– Կառավարությունն արդեն հոչակել է տնտեսության ճյուղային առաջնահերթությունները: Դա գյուղատնտեսությունն է, ես կավելացնեի նաև գյուղի զարգացումը, նաև զբոսաշրջությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Մյուս կողմից շատ կարևոր է հաշվի առնել, որ ճիշտ է, քանի որ տնտեսությունների կառուցվածքը և հանրային բարիքների նկատմամբ պահանջարկը շատ արագ են փոխվում: Տնտեսական հեղափոխության այս բնորոշումը, որ դա կառուցվածքային, տեխնոլոգիական փոփոխություններ է ենթադրում, վերաբերում է նաև ոլորտային գերակայություններին: Այսօր տնտեսական բարիքների բնույթը փոխվում է դրանց պահանջարկից կախված: Օրինակ՝ հինգ տարի հետո սպառազինությունների ամբողջ բնույթը կարող է էապես փոխվել, իսկ երկրի հիմնական արտադրանքը կարող է դառնալ ինֆորմացիան:

Անդրադառնանք ապակենտրոնացմանը, գյուղի զարգացումը ենթադրում է գյուղի վերափոխում, մինչդեռ այսօր մեր գյուղերը չեն համապատասխանում ժամանակակից աշխարհում տեղի ունեցող զարգացումներին: Գյուղի ինչպիսի մոդել կարող ենք ակնկալել՝ պայմանավորված տնտեսական հեղափոխությամբ:

Ովքեր շրջագայել են արևմուտքում, նկատած կլինեն, որ ագարակատերը կամ պարզապես գյուղացին իր ապրելակերպով գրեթե չի տարբերվում քաղաքային բնակչից: Նա զրկված չէ քաղաքային բնակչին ընձեռված բոլոր հնարավորություններից՝ սկսած կենցաղային, սանիտարահիգիենիկ պայմաններից, մինչև ժամանակակից կրթություն, բուժօգնություն ստանալու հնարավորություն: Մեր երկրում շատ լուրջ թնջուկ է կուտակված գյուղի զարգացման մասով:

– Խորհրդաժողովի արդյունքում ընդունվեց բանաձև: Ինչին է այն ուղղված և ինչ խնդիրներ է լուծելու:

– Նման բանաձևերը սովորաբար ուղեցույց են առաջիկա տարիների զարգացումների համար: Մեր ընդունած բանաձևը պարունակում է 11 կետ, որտեղ անդրադարձ կա գրեթե բոլոր հարցերին: Բանաձևը կառուցվել է գաղափարական այն հենքի վրա, որ տնտեսության զարգացումը պայմանավորված է նաև երկրի արտատնտեսական գործոններով: Արդեն իսկ նշված ինստիտուտների զարգացումը, մարդկանց մտածելակերպի և արժեհամակարգի փոփոխությունը, վարքաբանական նորմերի կենսագործումը չափազանց կարևոր պայմաններ են, որպեսզի մենք իսկապես բավարար լուծումներ ունենանք նոր ուղեծիր դուրս գալու համար: Այդ բանաձևը ոչ միայն ինստիտուտների գործարկման, այլև արտաքին հարաբերություններին էր վերաբերում: Այնտեղ անդրադարձ կա Արցախի հիմնախնդրին, մասնավորապես՝ Արցախի հիմնախնդրի լուծումը՝ անկախ կարգավորման եղանակից և ժամկետներից, պետք է դիտարկվի որպես գործարքային յուրօրինակ ծախս, որը

հատուկ է հայաստանյան բիզնեսին: Փակ սահմանների պայմաններում բիզնեսի համար դժվարանում են լոգիստիկ, արդյունավետ խնդիրների լուծումները բեռնափոխադրումների և այլ առումներով: Այդ ծախսի թեթևացման ուղիղ ճանապարհը տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններն են, ինչի հիմքում պետք է դրվի քիչ մետաղատար, շատ գիտատար և բարձր արտադրողականությամբ տնտեսություն ունենալու գաղափարը:

– Արտատնտեսական ինչ գործոններ ևս կառանձնացնեիք:

– Առաջնայիններից է արդարադատության համակարգի հիմնովին բարեշրջումը, որը Հայաստանի Հանրապետությունում օրակարգային խնդիրների շրջանակի ձևավորման առանցքն է: Կասկածից վեր է, որ օր առաջ պետք է ազատվել արատավոր, մարդու կենսագործունեության բարոյահոգեբանական և բիզնես միջավայրն ապականած դատական համակարգից: Միևնույն ժամանակ վերջինիս միջոցով անձերի գույքի տիրապետման, քաղաքական կապերի և մասնագիտական կարողությունների բացահայտման, ինչպես նաև արդյունավետ լուծումների առաջադրման ժամանակ չպետք է անտեսվի սեփականության իրավունքի սահմանադրական նորմը, չպետք է կայացվեն ոչ արդար, պարզագույն լուծումներ: Ներկառուցված ինստիտուտներով բարեփոխումները պետք է զերծ մնան հին դատական համակարգի՝ իր շահերին ծառայեցնելու իշխանության գայթակղությունից:

– Որոնք են լինելու հաջորդ քայլերը:

– Խորհրդաժողովի ընթացքում որոշվեց, որ հետագայում ունենալու ենք թեմատիկ համաժողովներ: Այսօրվանից պատրաստվում ենք հաջորդ՝ «Ինչ անել-3» խորհրդաժողովին, որի ընթացքում կանդրադառնանք տնտեսական հեղափոխության ընթացքին՝ գնահատելով կատարվածը և նախանշելով հետագա զարգացումներին միտված գործողությունները: Նախատեսում ենք մրցութային հիմունքներով ներգրավել նաև երիտասարդներին: Նոր ուղեծիր դուրս գալու ճեղքումն իրականացնելու համար մեզ անհրաժեշտ է ստեղծել կրեատիվ գաղափարների շտեմարան:

ԿՈՒՅՐ ՊԵՏՔ Է ԼԻՆԵԼ՝ ՉՏԵՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ, ԲԱՅՑ ՄԵՆՔ ՀԵՏ ԵՆՔ ՄՆՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԼԻԱՐԺԵՔ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ

1in.am, 28 նոյեմբերի, 2019

Թավշյա հեղափոխությունից արդեն անցել է մեկուկես տարի: Մեր երկիրն արդեն հաղթահարել է այն ֆինանսական, տնտեսական ռիսկերը, որոնք սովորաբար հաջորդում են նման փոփոխություններին. «Առաջին լրատվական»-ի հարցին ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը պատասխանեց. «Իսկապես, արդյունքների գոհունակության տեսակետից չէի ասի, որ հասարակության բոլոր շերտերը բավարարված են: Երկրում եղավ աննախադեպ, շատ լուրջ իրադարձություն՝ թավշյա հեղափոխություն, որի արդյունքում մենք ունենք շատ որոշակի սպասումներ, և պատահական չէ, որ հաջորդիվ խնդիր դրվեց տնտեսական հեղափոխության գաղափարը: Այդ գաղափարը պետք է կենսագործեր տնտեսական ոլորտի, մեր հանրային կյանքի ոլորտի սպասումները:

Ինչ վերաբերում է կոնկրետ արդյունքներին, այս մեկուկես տարին այն ժամանակահատվածը չէ, որի մասին մենք պետք է վերջնահաշվարկների լեզվով խոսենք, որովհետև դա այն ժամանակահատվածն է, որ պետք է այն ուղղված լիներ նախադրյալներ ստեղծելուն՝ նույն տնտեսական վերելքի, տնտեսական թռիչքի առումով: Իսկ դա, իմ կարծիքով, առկա է մեր երկրում»:

Իսկ ինչ արագությամբ են ստեղծվում այդ նախադրյալները. «Առաջին լրատվական»-ի հարցին Հայկ Սարգսյանը պատասխանեց. «Արագության կամ դանդաղկոտության հարցը լուսաբանման կարիք ունի, որովհետև մենք պետք է առարկայորեն տեսնենք դա՝ ըստ ոլորտների: Այդ հարցի հետ կապված կարևոր շեշտադրումը, որ ես կուզեի անել, այն է, որ այսօր կա քաղաքական կամք՝ իսկապես գնալ լուծումների, որոնք կարող են հասարակության շատ շերտերի հաճո չլինել: Ես մի առիթով ասել եմ, որ ընդվզումներին պետք է տեղի չտալ, եթե դա արդարացված է և հիմնավորված: Ինչ նկատի ունեմ: Ես, բնավ, իշխանությունների փաստաբանը չեմ, բայց ամեն դեպքում, կույր չպետք է լինել՝ տեսնել, որ շատ որոշակի ձեռքբերումներ կան: Այս նույն տնտեսական աճը 7-8 տոկոսի շրջանում՝ ձեռքբերում է»:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=dYsgeAJZmy4&t=3s

ՃԱՆԱՉՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐԸ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՊՏԱԿԻ, ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՋՈՂԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԱՍԻՄՊՏՈՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

«Առավոտ» օրաթերթ, 28 նոյեմբերի, 2019

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, Հանրային խորհրդի անդամ Հայկ Սարգսյանի հետ զրույցը՝ Aravot.am-ի «Հաջողության պատմություն» խորագրի ներքո, բավականին անկեղծ էր: Պարոն Սարգսյանը պատմեց, որ մանկությունը տպավորիչ դրվագներով լեցուն է եղել, սակայն նա առանձնացրեց հատկապես 8-րդ դասարանում իր հետ պատահած մի միջադեպ:

«Իմ ֆիզիկայի ուսուցիչն ինձ պատժեց, քանի որ ինչ-որ մեկը մատյանում թվանշան էր նշանակել: Նա ամբողջ դասարանին շարել ու փորձում էր պարզել ճշմարտությունը՝ ապտակելով տղաներին... Ես այդ պահին շատ վատ զգացի, թողեցի իմ դպրոցը և եկա քաղաք: Վրդովված էի. հայրս դպրոցի տնօրենն էր, ու հանկարծ իր դպրոցի ուսուցիչն ինձ այդ ձևով պատժում է: Եկա քաղաք, ընդունվեցի Հաշվիչ մեքենաների տեխնիկում, հետագայում իմ կյանքը դասավորվեց այդ՝ ըստ էության սկզբունքով, երբ չկարողացա շարունակել ուսումս հանրակրթությունում և ստիպված եղա երեկոյան դպրոցում սովորել ու նույնիսկ մեդալով ավարտել»,– հիշում է պրոֆեսորը: Ասում է, որ այդ դրվագը, փաստորեն, ճակատագրական նշանակություն է ունեցել իր կյանքում, եթե չլիներ, չէր հայտնվի երեկոյան դպրոցում, չէր պայքարի մեդալ ստանալու համար:

Հայկ Սարգսյանն ասում է, որ մի ժամանակ մտածում էր, թե ինքը երեկոյան դպրոց ավարտած միակ մեդալակիրն է, սակայն նախկին կրթության նախկին փոխնախարար Արա Ավետիսյանը հավաստիացրել է, որ Հայաստանում երեկոյան դպրոց ավարտած ևս մեկ մեդալակիր կա: Մեր զրուցակիցը հիշեց իր ուսումնառության տարիները ԵՊՀ-ում, ապա՝ Նովոսիբիրսկում, հետագայում՝ Լոմոնոսովի անվան համալսարանում, որտեղ նաև ասպիրանտուրա է սովորել, պաշտպանել թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

«Արդեն ավելի քան 4 տասնամյակ կրթության և պետական կառավարման համակարգում եմ»,– փաստում է մեր զրուցակիցը, որը 10 տարի աշխատել է նաև ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում: Նաև ժամանակին եղել է էկոնոմիկայի պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալի

պաշտոնում: Հայկ Սարգսյանն ասաց, որ չի վարանում խոսել կյանքի այն հատվածի մասին, երբ դատապարտված է եղել. «Այո, ես դատապարտված եմ եղել, մեկ տարի, մեկ ամիս, 28 օր շատ ծանր պայմաններում եմ անցկացրել, մեկուսարանում... Դա 1993 թվականն էր... Բայց ես այն բարձրաստիճան պաշտոնյան եմ եղել, որը հետագայում արդարացվել է»:

Պրոֆեսորից հետաքրքրվեցինք՝ ինքը բազմաթիվ պաշտոնյաների ու հայտնի մարդկանց գիտական ղեկավարն է, դա իրեն ուժեղացնո՞ւմ է: «Հայտնի մարդիկ են եղել, նախարարներ, ամբիոնի վարիչներ, որոնք պաշտպանել են իմ գիտական ղեկավարությամբ, ներկայումս էլ ինտենսիվ շարունակվում է այդ գործընթացը... Ես միայն հպարտանում եմ իմ սաներով, որովհետև նրանք լավ աշխատանք են կատարում: Այսօր գիտական աշխատանքով զբաղվելն առնվազն հերոսություն է, իրենք չեն ընկրկում, ինչպես իրենց գիտական ղեկավարը չի ընկրկել երբևէ»,– պատասխանեց մեր զրուցակիցը:

Ինչ վերաբերում է կրթության համակարգին, Հայկ Սարգսյանն ասում է, որ այն, ինչպես և տնտեսությունը, ինտերցիոն համակարգ է. «Կրթության ոլորտն առանձնանում է իր դոմինանտ արժեքով. յուրաքանչյուր ժամանակահատվածում գերխնդիրը մեկն է՝ ունենալ անհատի՝ կրթության ոլորտում, որը զարգացած պետք է լինի, մտածող, ստեղծարար, և այդ անհատի ձևավորմանը պետք է կարողանանք մեր մասնակցությունը բերել: Կրթված քաղաքացին պետք է մեր ազգային ինքնության կրողը լինի, նա չպետք է դառնա պատանդ ինչ-ինչ տեղեկատվական շտեմարանների: Մտածելուն զուգահեռ այդ քաղաքացին պետք է կարողանա օգտվել ժամանակակից տեխնիկայի հնարավորությունից»:

Հայկ Սարգսյանը մշտապես մասնակցում է մշակութային միջոցառումներին, վերջինը Ռոբերտ Ամիրխանյանի հոբելյանական երեկոն էր: Մեզ հետ զրույցում, ի թիվս այլոց, նա Միքայել Թարիվերդիևին էլ հիշեց, որի հետ շատ է շփվել ժամանակին: Ինչ վերաբերում է գեղարվեստական գրականությանը, ցավում է, որ կարդալու ժամանակ համարյա չի մնում: Բայց մի մեջբերում, այնուամենայնիվ, արեց Հակոբ Պարոնյանից, որին վերջերս վերընթերցել է ու հիացել Սահմանադրության մասին նրա հայացքով. «Սահմանադրությունը ծույլ մարդու մը կը նմանի, որ եթե ձեռքեն չբռնես, չքալեր, նստած տեղը կը մնա, օր քան զօր կը տկարանա և կը մեռնի: Սահմանադրությունն ի՞նչ կրնա ընել ինք իր գլխուն, ոտ չունի, որ քալե, երեսփոխանները պետք է զանիկա քալեցնեն, անոնց ալ մեծ մասը տարին անգամ մը միայն ժողովքին ներկա կը գտնվին»: Հայկ Սարգսյանին հարցրինք նաև, թե իրեն հաջողակ համարո՞ւմ է: «Մաթեմատիկայում մի տերմին կա՝ ասիմպտոտիկա, որին ձգտում ես ու չես հասնում... Մղումները, ձգտումները կան, և շատ

բան հաջողվել է, բայց ակնկալիքները դեռ առջևում են»,– ասաց պրոֆեսորը:

Գոհար Հակոբյան

Ամբողջական հոդվածը՝
https://www.aravot.am/2019/11/28/1080337/
հասցեով
Հարցազրույցն ամբողջությամբ՝
https://www.youtube.com/watch?v=PI6cjOSWZeQ
տեսանյութում

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՏԱՐԱՆՋԱՏԵՆՔ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՇԵՐՏԻՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԵՐՏԻՑ

ArmLur.am, 28 ապրիլի, 2020

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ղեկավար Է. Մարուքյանն առաջարկում է մայիսի համար յուրաքանչյուր ընտանիքի հատկացնել 100 հազար դրամ, իսկ յուրաքանչյուր թոշակառուի տալ կրկնակի թոշակ: Ընդդիմադիր պատգամավորը նաև նշում է, թե որտեղից կարող են իշխանությունները վերցնել այդ գումարը:

«Փող կա, այդ փողը Կենտրոնական բանկի գանձապետական համապատասխան հաշվեհամարին դրված է, 300 մլրդ դրամից ավելի փող կա: Փառք Աստծո, Հայաստանն այս ճգնաժամի մեջ մտել է համապատասխան խնայողություններով»,– նշել էր նա:

ArmLur.am-ը Է. Մարուքյանի առաջարկի և այլ հարցերի շուրջ զրուցել է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, Հանրային խորհրդի անդամ Հ. Սարգսյանի հետ:

«Պայմանավորված ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակով, որ սպասվում է, չեմ կարծում, որ արդարացված է: Ինչո՞ւ: Այսօրվա գազոնային համահարթեցման քաղաքականությունը շատ դեպքերում բնորոշ է եղել նախկին սովետական համակարգին, երբ բոլորին հավասար եկամուտներ էին ապահովվում: Դա կորցնում էր ամեն կարգի խթան և մոտիվացիա, որպեսզի մարդիկ շահագրգռված լինեին շատ եկամուտներ ստանալ: Եթե մենք մեր հասարակությունը պայմանականորեն շերտավորենք հինգ շերտերի, ապա ավելի քան համոզված եմ, որ առաջին երեք շերտին 100 հազարական դրամ նվիրաբերումն այս պարագայում նպատակահարմար չէ: Իսկ այդ միջոցների առկայության պարագայում մենք կարող ենք ավելի թիրախային խնդիրներ լուծել այն մյուս երկու շերտի համար: Մենք պետք է տարանջատենք ապահովված շերտին: Թիրախային մոտեցումով՝ վերջին երկու շերտին կարող ենք, գրեթե կրկնակի՝ 200 հազար դրամ տրամադրել, որն արդեն արդարացված կլինի»,– ընդգծեց մեր զրուցակիցը:

Մեր այն հարցին, թե ինչպե՞ս եք վերաբերվում այսօրվա Կառավարության աջակցման ծրագրերի փաթեթներին Հ. Սարգսյանը պատասխանեց. «Սոցիալական ուղղվածության ծրագրերի 15 փաթեթների գերակշիռ մասը կամ սոցիալական աջակցության ծրագրերի հիմնական ուղղվածությունը

սոցիալականն է, մինչդեռ, իմ կարծիքով, շեշտադրումը պետք է տեղափոխել ավելի շատ փոքր ու միջին ձեռնարկությունների աջակցման ծրագրերի վրա»:

Լիդա Եղիազարյան

ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԵՆՔ. ՊԵՏՔ Է ՀԱՆԳԻՍՏ ԼԻՆԵԼ, ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ Է

«Առաջին լրատվական», 17 ապրիլի, 2020

Հայաստանի Հանրապետությունում շարունակվում է արտակարգ դրության և խիստ սահմանափակումների ռեժիմը: Նոր կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ այդպիսի իրավիճակում են աշխարհի շատ երկրներ: Ցավոք, համաճարակից բացի, համաշխարհային հանրությունը բախվում է նաև ֆինանսատնտեսական լուրջ խնդիրների հետ: Առաջատար վերլուծական կենտրոնների կանխատեսմամբ՝ ճգնաժամը դեռ խորանալու է:

Ինչ իրավիճակ է այսօր Հայաստանում՝ մասնավորապես տնտեսության մասով. «Առաջին լրատվական»-ի հարցին պրոֆեսոր Հայկ Սարգսյանը պատասխանեց. «Եթե հակիրճ բնութագրենք, ապա ես կասեի, որ տուրբուլենտային իրավիճակ է, որում հայտնվել են պետություններ, հասարակություններ: Տուրբուլենտ վիճակը տարբեր աստիճանի ցնցումներ են, և այսօր այդ ցնցումները պատել են երկրներին: Իսկապես, այս իմաստով պետք է ասել, որ աշխարհը, կարծես թե փոթորկվել է և իր կենսագործունեության օրբիտայից դուրս է եկել: Այս պայմաններում երկրների ղեկավարները, իշխանությունները մարդկանց ասում են՝ մնացեք տանը, ինքնամեկուսացեք, սահմանափակում են տեղաշարժերը: Այդուհանդերձ, դա մասշտաբային է, որը մենք ապրում ենք ամիսուկես, և արդյունքները, կարծես թե, հուսադրող են: Պետք է արձանագրել նաև մի շատ կարևոր բան, որ գործընթացը կառավարվում է. դա վերաբերում է բնակչության առողջությանը:

Վարակի հետ կապված մահերի մասով չասեմ, թե դրանք քիչ են, որովհետև յուրաքանչյուր մահ մեծ կորուստ է հանգուցյալի հարազատների համար, մեզ համար: Սակայն եթե վիճակագրությունից խոսենք, ապա պետք է ասեմ, որ վերջին տարիներին օրական ունենում ենք միջինը 70 և ավելի մահ: Բայց այս ամենին զուգահեռ ամենամեծ կորուստը, որ մենք այս օրերին ունենք, դա նյարդային իրավիճակն է, որ մարդիկ ապրում են: Առաջին հերթին այ սրանից պետք է դուրս գալ: Հասարակությանը, կարծես թե, ընկճախտ է պատել, և այդ իրավիճակը խնդիր է, որտեղ նույնպես գործ ունենք անելու»:

Մանրամասները՝ տեսանյութում. https://www.1in.am/2735943.html

ՉԱՓԱԶԱՆՑՎԱԾ ԵՆ ԱՅՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ, ԹԵ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈԼԱՊՍ ԿԱՐՈՂ Է ԱՌԱՋԱՆԱԼ

«Առաջին լրատվական», 27 ապրիլի, 2020

Առաջին եռամսյակում պետական բյուջեի փաստացի կատարողականը կազմել է 349 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 299,5 միլիարդի համեմատ: Ծրագրային ցուցանիշը առաջին կիսամյակի համար նախատեսված է 340 մլրդ դրամ: Գերակատարումը կազմել է 9,5 մլրդ դրամ: Այս մասին կառավարությունում հրավիրած ասուլիսում ասել է Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանը:

«Առաջին լրատվական»-ի հետ զրույցում ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը կարծում է, որ այս եռամսյակի տվյալներն ինչ-որ իմաստով վստահություն են ներշնչում, որ ամբողջ տարվա կտրվածքով մեծ կորուստներ չենք ունենա: Տնտեսագետի համոզմամբ՝ Հայաստանը տարին տնտեսական աճով կփակի:

– Պարոն Սարգսյան, ինչպես կգնահատեք 2020 թվականի առաջին եռամսյակի տնտեսական ցուցանիշները, հարկային հավաքագրումները:

– Առաջին եռամսյակի ցուցանիշները վստահություն են ներշնչում, որ ամբողջ տարվա կտրվածքով մենք մեծ կորուստներ չենք ունենա: Բայց քանի որ առաջին եռամսյակի վերջին ամիսը փաստորեն պարապուրդային էր, դա ամբողջ թափով իրեն զգալ կտա արդեն երկրորդ եռամսյակում: Տնտեսությունը կոշտ սահմանափակումների տակ հայտնվեց, և այժմ նկատվող թուլացումները վկայում են այն մասին, որ, թերևս, անկումը ավելի մեծ չափեր կունենա: Մենք ունենք ապրիլ ամիս, անորոշ է մայիս ամիսը: Սակայն ես ավելի լավատես եմ: Կարծում եմ՝ այս տնտեսական սահմանափակումների թուլացման ֆոնին տնտեսական արդյունքներն այնքան էլ տխրեցնող չեն լինի, քան գուժում են որոշ կանխատեսողներ: Ես տարեվերջի ամփոփումը գնահատում եմ լավատեսական սցենարով: Մենք կունենանք ընդհուպ 3 տոկոսի չափով տնտեսական աճ: Պլանավորված էր 4,9 տոկոս տնտեսական աճ, բնական է՝ կորուստներ կլինեն: Շատ միջազգային կազմակերպություններ իրենց գնահատականներում ավելի չափավոր են: Նրանք կանխատեսում են 1-1,5 տոկոս տնտեսական աճ:

– Պարոն Սարգսյան, իսկ այդ բացը, որի մասին խոսում եք, ինչպես է հնարավոր լինելու վերականգնել ու ինչ ճանապարհներով:

– Գիտեք, վերականգնումը հետևյալ ձևով է: Նախ՝ պետք է տնտեսությունն հնարավորինս արագ ամբողջ թափով գործարկել: Օրինակ՝ գյուղատնտեսությունը շատ ավելի մեծ երաշխիքներ կստեղծի հաջորդ տարիների համար: Այսօր մենք պետք է ձեռնամուխ լինենք ոլորտում շեշտակի աճի, որովհետև հույսը դնել միայն տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսությունը տեխնոլոգիական հիմքի վրա բերելու վրա, չեմ կարծում, որ արդարացված է: Լուրջ տեղեկատվական տեխնոլոգիաներին զարկ տալը պահանջում է նաև լուրջ կրթություն, գիտություն, որը պետք է դեռևս ստեղծենք:

– Անդրադառնալով ՊԵԿ պաշտոնական տվյալներին՝ այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանի 17 առևտրային բանկերը պետական բյուջե են վճարել ընդհանուր առմամբ 12,5 մլրդ դրամի հարկեր, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 1,4 մլրդ ՀՀ դրամով կամ 12,6 %-ով: Պարոն Սարգսյան, ինչ գործոններով է պայմանավորված այդ աճը: Արդյոք կառավարության կողմից տարբեր սոցիալական, աջակցման ծրագրերով կատարված ֆինանսական ներարկումները ոլորտում իրավիճակ կփոխեն:

– Բանկային մասով կարող եմ ասել, որ այստեղ օգնեցին մինչև 300 մլն դոլարի հասնող ներարկումները, որոնք կառավարությունն իրականացրեց բանկային ոլորտում: Կառավարության մասնակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բյուջեից ներարկումներ: Կառավարությունն իրավացիորեն գնաց այդ քայլին, ու դա ճշգրիտ որոշում էր: Ես ակնկալում էի, որ կարելի էր շատ ավելի մեծ չափերով կատարել այդ ներարկումները: Ստեղծված իրավիճակում արդարացված պետք է լիներ բյուջեի դեֆիցիտի մեծացումը, որ մենք ունեցանք 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո 2009 թվականի բյուջեն ձևավորելիս: Մենք այդ ժամանակ ունեցանք շատ լուրջ անկում՝ 14 տոկոսի չափով: Բյուջեում պլանավորվեց մինչև 7,5 տոկոս դեֆիցիտ: Ես կարծում եմ, որ այս տարի ևս պետք է գործադրվի նմանատիպ մեխանիզմ: Հատկապես տնտեսության իրական հատվածի աջակցման ծրագրերով մենք պետք է կարողանանք ամբողջովին գործարկել մեր տնտեսական կարողությունները: Ինձ մոտ տնտեսական գնահատականները մի փոքր տարբեր են ու հիմնված են մանրակրկիտ հաշվարկային մեթոդիկայի վրա, որը պարունակում է հնարավոր ռիսկերի գնահատում, երկրի վճարային հաշվի վերաբերյալ գնահատումներ, շոկային ազդեցություններ և այլն: Իհարկե, իմ լավատեսական սցենարը պայմանավորված է նրանով, որ այս իրավիճակի ավարտից հետո մենք այլ ցնցումների առաջ չենք կանգնելու: Այնպես որ, ինքս մի փոքր չափազանցված եմ գնահատում այն տեսակետները, թե սա տնտեսական կոլապսի կարող է բերել: Իմ կանխատեսումներով՝ տարին կեզրափակվի դրական տնտեսական աճով:

ՈՐԴԵԳՐՎԱԾ ԿՈՒՐՍԸ ՃԻՇՏ Է, ԱՅՆ ՊԵՏՔ Է ԱՆՇՐՋԵԼԻ ԼԻՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«ԳՈՐԾ ԵՎ ԱՐԱՐ» հաղորդաշար, 2020

Կորոնավիրուսային շփոթից Հայաստանը, կարծես, դուրս է գալիս, և ուշադրության կենտրոնում կրկին տնտեսությունն է: Հարցազրույցն անդրադառնում է այնպիսի հարցերի, թե տնտեսագիտության իմաստով որտեղ է գտնվում Հայաստանը, ինչ անել, ինչ կարևոր կետեր կան այս գործընթացում, որոնց պետք է լրացուցիչ ուշադրություն դարձնել:

Բնորոշելով հետհեղափոխական շրջանը որպես ինչ-որ իմաստով «անցումային»՝ պրոֆեսոր Սարգսյանը կարևորում է ռեֆորմների արագ իրագործումը, տնտեսության կառուցվածքի բարելավումը, զարգացման ուղեգծի բեկումը դեպի տնտեսական հեղափոխություն:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=XP5pNx1YRAk

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՉԿԱՆ ՏՆՏԵՍԱՀՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

«ԳՈՐԾ ԵՎ ԱՐԱՐ» հաղորդաշար, 2020

Տարիներ առաջ մենք մի հետազոտություն իրականացրինք, երբ փորձեցինք, մի կողմից, տեսնել, թե որոնք են բարձր կենսամակարդակ, բարձր շնչային ՀՆԱ ունեցող և բարձր սահմանադրականության մակարդակ ապահովող երկրները, քանի որ, ի վերջո, սահմանադրականության այդ բարձր մակարդակով են պայմանաորված մնացած՝ բարձր կենսամակարդակ ապահովող ցուցանիշները, և պարզվեց, որ թաքնված փոփոխականների շարքում առաջին պլան է մղվում սեփականության իրավունքի պաշտպանությունը: Իսկ մեր երկիրը տասից ավել անգամ խզում ուներ այդ ցուցանիշով բարձր սահմանադրականության մակարդակ ունեցող համախմբի երկրներից: Երբ խոսում ենք ներդրումների բացակայությունից, ահա այս տնտեսահրավական խնդիրների կարգավորումը նկատի ունենք:

Այս կարծիքն է հայտնել պրոֆեսոր Հ. Սարգսյանը Ա. Մարտիրոսյանի հետ զրույցում:

Քննարկվել են նաև ինչպե՞ս պետք է տնտեսվարողը, ՀՀ իրավաբանական անձը պաշտպանեն իրեն տարբեր տեսակի ոտնձգություններից, ո՞րն է մեր երկրի ներդրումային գրավչությունը և այլ հարցեր:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=8SbezJGl3Q4

«ԽԵԼՔՆԵՐՍ ԳԼՈՒԽՆԵՐՍ ՊԵՏՔ Է ՀԱՎԱՔԵՆՔ». ԻՆՉՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՉԿՈՉՎԵՑ

«Հոծ գիծ» հաղորդաշար, 2020

Ինչ ունենք հետպատերազմյան իրավիճակում: Մեծ անորոշություններ, որոնք պատված են տարբեր, այդ թվում՝ քաղաքական, հումանիտար, բարոյահոգեբանական, տնտեսական, սոցիալական ճգնաժամերով, որոնք անշուշտ փոխկապակցված են: Հարցազրույցում պրոֆեսորներ Հ. Սարգսյանն ու Ա. Մարկոսյանը անդրադառնում են հետպատերազմյան ճգնաժամերի՝ առանց ցնցումների հանգուցալուծման, անվտանգային և կայունության հիմնախնդիրներին՝ որպես տնտեսական կայունության երաշխիքների:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=fJsF7WXiJd8

ԲԵԿՎԱԾ ԿՈՐԸ ԴԵՌ ԿԱՐՈՂ Է ՇՏԿՎԵԼ. ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈԿԱՈՒՏԻ ՄԵՋ Է

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,
16 դեկտեմբերի, 2020

«Խնդրում ենք միանշանակ պատասխանել՝ այո կամ ոչ, Հայաստանն այսօր տնտեսական կոլապսի մեջ է: «ՀՀ»-ի այս հարցին ի պատասխան՝ պրոֆեսոր Հայկ Սարգսյանը նշեց. «Կոլապս, ռեցեսիա, անկում. սրանք հոմանիշներ են՝ անկման տարբեր չափերով: Միանշանակ կարող ենք այդպես բնութագրել. այո, որովհետև մենք տարին փակելու ենք մոտ 8 տոկոս տնտեսական անկումով: Մինչև 10 տոկոսը իրողություն է, որը մեծ թիվ է, և որը հետևանք է երեք գործոնի՝ մարտից սկսած համավարակի՝ ցայսօր ընթացող, 44-օրյա պատերազմի և մեր տնտեսական քաղաքականության անկազմակերպվածության՝ մեր կարողությունների ոչ լրիվ չափով գործադրման: Ահա այս գործոնները մեզ կանգնեցրին կոտրած տաշտակի առջև»:

Մեր տնտեսությունը նոկաուտի մեջ է, մեր պետության պարտքն ավելանում է, արտաքին պարտքը՝ նույնպես, և ՀՆԱ/արտաքին պարտք հարաբերակցությունն արդեն վտանգավոր շեմին է՝ գերազանցել ենք 60 տոկոսի ցուցանիշը: Նոկաուտի մեջ գտնվող երկիրը արտաքին պարտավորություններն ինչպե՞ս է սպասարկելու:

Պրոֆեսորը շեշտում է՝ պարտքային ճնշումները, այո, արդեն մեծ են: Եվ դա լուրջ ծանրաբեռնվածություն է, ճնշում բյուջեի վրա: «Սակայն պետք է ասեմ նաև,– հավելում է նա,– որ այդ 60 տոկոսի գերազանցումը՝ ընդհուպ մինչև 10 տոկոսով, շատ վտանգավոր չեմ համարում: Ավելին՝ այլընտրանքը չունենք մենք: Վատ բան չէ պարտքը: Դա որոշակի եկամուտներ է բերելու՝ ռացիոնալ կառավարման պարագայում իհարկե...»:

– Այդ ինչ կարողություններ ունեինք, որ չենք գործադրել:

– Շատ հստակ է՝ գործի չենք դրել ռացիոնալ կառավարման կարողությունը, որը կարող է շատ ավելի լավը լինել, քան առկա էր ամբողջ ընթացքում: Մինչ Covid-19-ը, մի ամբողջ եռամսյակ կար, և հետագա ընթացքում, ինչպես համավարակի դեմ պայքարում, մենք ունեցանք լոքդաուն, որը մի առիթով ասացի՝ եթե հանկարծ այդ պրոցեսն ավելի շարունակվեր, ապա դա տնտեսության կանգի կհանգեցներ, ըստ էության, ինչը կարող էր վերաճել նոկաուտի: Բառացիորեն տվեցի բնորոշում. լոքդաունը բերեց նոքդաունի, բայց պատերազմն արդեն հասցրեց մեզ նոկաուտի: Ես կոլապս,

ռեցեսիա, անկում բառերին կավելացնեի այսօր՝ նոկաուտի ենթարկված տնտեսությունԱյսպիսի պայմաններում փլատակների տակ մնացած տնտեսություններ կան, որոնք վերականգնվել են, ընդ որում՝ շատ կարճ ժամանակահատվածում, երբ գործադրվել են հակաճգնաժամային կառավարման հստակ մեխանիզմներ: Մենք այսօր այդ ուղղությամբ քայլ չենք կատարում: Որովհետև 2021 թ. պետական բյուջեն ունենք արդեն, և ...կարծես այս երկրում արտառոց որևէ բան չի եղել:

Գործադրվեց բյուջետային գործընթացների հաստատման նույն իներցիան: Մինչդեռ կարող էին մտածել, օրինակ, թե ինչպես կարելի է վերաձևել այդ բյուջեն, այն 30-40 տոկոս ճեղքը, որը գոյություն ունի, որը մշտապես կարելի է վերանայել, վերահասցեագրել՝ այսօրվա տնտեսության պահանջներն ունենալով: Դա չարվեց: Այս իմաստով մենք, ըստ էության, անգործության ենք մատնվում: Եվ հակաճգնաժամային իրագործելիության խնդիրը ո՛չ առաջադրում ենք, ոչ էլ, կարծես, ցանկություն կա լուծելու:

Այն դեպքում, երբ երկրում քաղաքական հումանիտար, սոցիալական, տնտեսական լուրջ ճգնաժամ է, որը պատված է անորոշություններով՝ հետագա լուծումների առումով: Շատ ուսուցողական է հայտնի տնտեսագետ Ալֆրեդ Մարշալի հետևյալ բնորոշումը. «Տնտեսագիտությունն ուսումնասիրում է, թե ինչպես են մարդիկ գոյատևում, զարգանում, ինչի մասին են մտածում իրենց առօրյա գործունեության ընթացքում»...

– Դատելով մեր բյուջեից ու Մարշալի ձևակերպումից՝ փաստորեն մենք ուղի կանգնելու մասին չենք մտածում:

– Իմ բնույթով ես օպտիպեսիմիստ եմ: Եթե ինչ-որ վատ բաներ էլ եմ տեսնում, ապա այն պատում եմ լավատեսական թաղանթով, դրական պարկուճի մեջ: Բայց եթե այդպիսին էլ է գործելակերպը, չեմ կարողանում մնալ այդ պարկուճի մեջ, դուրս եմ գալիս: Եվ ահա այս ընկալումը՝ գործերը լավ չեն գնա, եթե այսպես շարունակենք:

– Մեր տնտեսությունը նոկաուտի մեջ է, մեր պետության պարտքն ավելանում է, արտաքին պարտքը՝ նույնպես, և ՀՆԱ/արտաքին պարտք հարաբերակցությունն արդեն վտանգավոր շեմին է, գերազանցել են 60 տոկոսի ցուցանիշը: Նոկաուտի մեջ գտնվող երկիրն արտաքին պարտավորություններն ինչպես է սպասարկելու:

– Պարտքային ճնշումները, այո, արդեն մեծ են: Եվ դա լուրջ ծանրաբեռնվածություն է, ճնշում բյուջեի վրա: Սակայն պետք է ասեմ նաև, որ այդ 60 տոկոսի գերազանցումը՝ ընդհուպ մինչև 10 տոկոսով, շատ վտանգավոր չեմ համարում: Ավելին՝ այլընտրանք չունենք մենք: Վատ բան չէ պարտքը: Դա որոշակի եկամուտներ է բերելու ռացիոնալ կառավարման պարագայում:

– Հասկանալի է, որ պարտքը վատ բան չէ: Բայց պարտք վերցնողը պարտքը սպասարկելու հնարավորություն պետք է ունենա: Պարտքի սպասարկման ուղիներ ունենք:

– Արդյունավետ ուղիներ պետք է գտնենք: Դրանք են՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և տեխնոլոգիական հենքի վրա բարձրացող արտադրությունները: Սա շատ կարևոր հանգամանք է: Ես տնտեսական հեղափոխության նախաձեռնողներից մեկն եմ եղել, և դրա քաղաքականությունը, գաղափարախոսությունը խարսխվում էին հենց նշածս ուղիների վրա: Այս ամենը, սակայն, այսօր կորսված է: Բայց անդառնալի չէ կորցվածը: Բեկված կորը դեռ կարող է շտկվել տարիներ հետո՝ գուցե 2-3 տարի: Այո, պարտքի սպասարկումը դժվար է լինելու: Չմոռանանք, որ հիմա սոցիալական բեռի հավելաճ ունենք: Այնուամենայնիվ, այս ամենը հաղթահարելի է, եթե կառավարությունը լրջամիտ խնդիրներ կարողանա առաջադրել և կարողանա մշակել համարժեք տնտեսական քաղաքականություն: Դրա հնարավորությունները տեսնում եմ: Կփորձեմ այն ներկայացնել երկու համալիր խնդիրների համատեղ դիտարկմամբ: Երբ խոսում ենք ապագայի մասին՝ ռազմավարական տեսակետից, ինձ համար՝ որպես տնտեսագետի, առաջնահերթությունները երկուսն են՝ անվտանգային խնդիրը և կայունության խնդիրը: Անվտանգային խնդիրը ամենալայն սպեկտրով՝ պաշտպանական, պարենային, էներգետիկ, տեղեկատվական: Կայունության առաջնահերթությունը նույնպես ամենատարբեր ոլորտներում եմ դիտարկում, օրինակ՝ ֆինանսական: Ահա այս խնդիրների լուծման համար իմ դեղատոմսն ունեմ, որ տարիներ շարունակ կրկնում եմ: Լուծման համադարմանը սահմանադրականության մակարդակի բարձրացումն է: Սա բոլորին չէ, որ հասու է: Այս թեմայով խոսակցություններ եմ ունեցել երկրի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, և ցավոք, նկատել եմ, որ ընկալումը համարժեք չէ:

– Այսինքն՝ տնտեսական խնդիրների լուծումը սահմանադրականության հուն եք բերում:

– Որովհետև այստեղ է տնտեսական, սոցիալական, անվտանգության և քաղաքական ամենատարբեր խնդիրների լուծումը: «Սահմանադրականություն» բառը միջածանց ունի՝ սակայն...

– Ծանոթ եմ Ձեր այս, այսպես ասեմ «ոսկե կանոնին». երբ սահմանադրականության այդ միջածանց «ական»-ը չի գործում կամ պայթում է և այլն, այն իսկական ական է դառնում՝ երկրի տակ դրված:

– Այո, այո: Եվ դա էլ դառնում է մեր դժբախտությունների պատճառը: Սահմանադրությունը հարյուրավոր նորմեր ունի: Նորմ ունենք, չէ՞, որ վերաբերում է բնօգտագործմանը, պետք է ռացիոնալ օգտագործենք բնությունը, ընդերքը, որը ժողովրդինն է, պետությանը, ոչ թե ինչ-որ այլ խավի և այլն:

Երբ այս նորմը չենք գործածում, կամ խափանում կա, նշանակում է՝ ունենք նորմի իրացման դեֆիցիտ կամ սահմանադրականության պակաս՝ այդ նորմի հետ կապված: Կամ երկրում պետք է գները կայուն լինեն, ֆինանսական կայունություն լինի, և չունենանք լուրջ շոկեր, գների լուրջ փոփոխություններ չպետք է լինեն: Այդ նորմը նույնպես ամրագրված է Սահմանադրության մեջ: Եվ այդ նորմի պահպանումը սահմանադրականության մակարդակով է որոշվում: Մեկ այլ օրինակ է սեփականության իրավունքի նորմը: Եթե դա խախտվել է, ապա կարող են բռնել քո թևից, շպրտել՝ չհարգելով քո սեփականության անձեռնմխելիության իրավունքը: Ուրեմն այս նորմն էլ խախտվեց: Ասել է թե՝ կա սահմանադրականության դեֆիցիտ: Նկարագրածս տիրույթը մեր կյանքն է՝ երկրի անվտանգային անձեռնմխելիության իրավունքից սկսած մինչև ամենատարբեր ոլորտներում իրավունք, օրինակ՝ մրցակցային իրավունք և այլն: Եթե այս ամենն իրագործվում է, ուրեմն երկրում կա սահմանադրականություն:

– Ասել կուզի՝ եթե չկա սահմանադրականություն, չկա տնտեսության զարգացում:

– Եթե չկա սահմանադրականություն, երկի տնտեսության զարգացումը վտանգված է այն չափով, ինչ չափով ցածր է սահմանադրականության մակարդակը, կամ որքան բարձր են խզումները այդ նորմերի առումով:

– Հայաստանը չպետք է փոխի իր տնտեսական կառուցակարգի որակը:

– Երբ խոսում եմ ճգնաժամի հաղթահարման հավելյալ ջանքերի մասին, նկատի եմ ունենում լուրջ կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը: Մենք այսօր, օրինակ, զբոսաշրջության վրա չենք կարող խարսխել մեր զարգացումը... Այսօր առաջնահերթությունների էական վերանայման, վերաիմաստավորման անհրաժեշտություն կա: Մենք պետք է ուշադրություն դարձնենք բարձր տեխնոլոգիաների ոլորտի, ռազմարդյունաբերական համալիրին, որը, ըստ էության, տապալված է եղել:

Այդ ոլորտը պետք է խարսխված լինի կրթության և գիտության ոլորտի վրա: Իսկ գիտությունն ու կրթությունը մեզ մոտ մայթեզրից այն կողմ են գցված եղել, ոտնակոխ ենք արել, ոտատակ ենք տվել: Այդ ոլորտների զարգացման նկատմամբ մնացորդային մոտեցում ենք ցուցաբերել: Այսինքն՝ տակը բան մնաց, կտանք, չէ՝ «յոլա» կգնանք: Մինչդեռ կրթությունն ու գիտությունը չպետք է արհամարհվեն, եթե դրանք չկան, չի կարող լինել ռազմարդյունաբերական համալիրը, չեն կարող լինել բարձր տեխնոլոգիաները, բարձր արտադրողականությունը, որը և անվտանգային խնդիրների լուծման ուղիղ ճանապարհն է: Եթե կրթությունն ու գիտությունը վտանգում ենք, ապա վտանգում ենք մեր անվտանգային խնդիրների լուծումները: Պետք է զարգացնենք մեր

կրթություն-գիտություն-հետազոտություն-արտադրություն-փորձարարա-կան-կոնստրուկտորական շղթան:

– Այս մասով արդեն պետք է խոսենք մարդկային կապիտալի մասին:

– Երբ այս մասին խոսել ենք, միշտ զուգահեռներ ենք անցկացրել նախկին համակարգի հետ: Ունեցել ենք «Բազալտ», որը 5-6 հազար աշխատող է ունեցել և սուզանավերի «ուղեղ» է արտադրել: Ունեցել ենք Աբովյանի «Սիրիուսը», որը պլատաներ է արտադրել: Կամ՝ արբանյակների կցահանգույցներ ենք արտադրել ամենատարբեր բարձր տեխնոլոգիաներով: Այդ բարձր տեխնոլոգիաները մեզ համար նորություն չեն: Այսօր պետք է տեղափոխվենք այս ռելսերին: ԱԹՍ-ները խոցող ռադիոկապի և այլ համակարգեր պետք է ունենանք: Փորձարարական-կոնստրուկտորական միտքը, որ պետք է դառնա բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության հիմքը, խարսխվում է գիտության և կրթության վրա: Պետք է զարկ տանք սրան: Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը շղթայական արդյունավետություն կունենա, այդ թվում և՝ գյուղատնտեսության ոլորտի մասով: Մեզ ամեն ոլորտում որակական փոփոխություններ են պետք: Պետք է կարողանանք ռացիոնալ աշխատեցնել ինստիտուտները՝ դատական, պայմանագրային, մրցակցային, որոնք երաշխիք են, որ վաղը երկրում ներդրումներ ունենանք:

– Փաստորեն՝ սահմանադրականություն և սահմանադրականության բարձր մակարդակի պարագայում ինստիտուտների լիարժեք գործարկում. չեղան սրանք, ներդրումներ չեն լինի:

– Իհարկե, չեն լինի, ինչ մակարդակի ձեռքսեղմումներ էլ որ լինեն: Սա երաշխիք չէ: Ներդրողը կգա Հայաստան, եթե տեսնի, որ այստեղ աշխատում են ինստիտուտները, ստեղծված է բիզնես բավարար միջավայր: Մենք ժամանակ չունենք, պետք է շատ արագ գործենք՝ մեր կորացած մեջքը շտկելու համար: Մեր երկրին անհրաժեշտ են պրոֆեսիոնալներ՝ բոլոր ոլորտներում: Այս դեպքում արդեն չեն լինի չլուծվող խնդիրներ:

– Այլ կերպ՝ եթե ուզում ենք հաղթել, կհաղթենք:

– Միանշանակ՝ այո:

ԽԱԹԱՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԻՑ ԵԼՔ ԳՏՆԵԼՈՒ ԹԵԼԱԴՐԱՆՔԸ

«Առավոտ» օրաթերթ, 20 հունվարի, 2021

«Առավոտը» պրոֆեսոր Հայկ Սարգսյանի հետ զրուցել է մեզ պատուհասած ճգնաժամի և այն հաղթահարելու հայեցակարգային լուծումների շուրջ:

– Պարոն Սարգսյան, դուք ի սկզբանե խանդավառված էիք և գործուն մասնակցություն ունեցաք տնտեսական հեղափոխության գաղափարի ընկալման և գործարկման հարցում, սակայն հետագայում արձանագրեցիք, որ հեղափոխության ուղեծիրը բեկվեց՝ հայտնի պատճառներով: Մի առիթով էլ ասել եք, որ խոր ճգնաժամի մեջ ենք: Կմանրամասնե՞ք՝ ինչ նկատի ունեք:

– Չեմ խոսի հումանիտար, դիվանագիտական, բարոյահոգեբանական ճգնաժամերի մասին, բայց մեր երկրին պատուհասած անորոշություններն ու անվտանգային առկա ազդակները, որքան էլ լավատես լինենք, սթափեցնող են: Մեզ պարտադրվում է խորամուխ լինել իրողությունների ախտորոշման հարցում և նախանշել ճգնաժամից դուրս գալու ելքերը: Ավելին՝ նման հարցադրման անտեսումն ու խնդիրների լուծման հետաձգումը գործնականում կարող է կործանարար լինել: Ողբերգականը՝ COVID-19-ի և հետպատերազմյան հոգեմաշ իրավիճակի չգիտակցումն է իշխանության և հասարակության որոշ շերտերի կողմից: **Դա հաստատվում է գնալով խորացող ատելության ու թշնամանքի իրողություններով, ինչը ամենացավագինն է: Սա՝ մի կողմից: Մյուս կողմից՝ գրեթե բացակայում են հասարակության համախմբմանն ուղղված ռեալ գործողությունները, որոնք կարող են իրականացվել ընդունելի գաղափարի շուրջ ամրագրված ծրագրերով: Վերջիններս, ցավոք, նույնպես չկան հրապարակի վրա: Շրջանառվող տարբեր գաղափարները կա՛մ սաղմնավորման փուլում են, կա՛մ դեռևս քողարկված են: Խոսվում է երկիրը ինչ-որ միությունների կազմ տանելու՝ գուբեռնիական խառնածին կամ մաքուր կարգավիճակներով, խոսվում է քաղաքակիրթ, ապաբլոկավորված խաչմերուկում դիրքավորվելու նպատակադրումների մասին և այլն: Սակայն ինչեցվող նպատակային ծրագրերը դեռևս հրահեղուկ են,** որոնց հիմնական պատճառներն են.

ա) իշխանությունները գրեթե չունեն նպատակային խելամիտ գործելակերպ (առնվազն լուրջ չեն ոչ վաղ անցյալում երկչոտ հռչակումները՝ 30 տարում ՀՆԱ-ն տասնհինգապատկելու, բնակչությունը 5 մլն-ի հասցնելու, այսքան օլիմպիական մեդալակիրներ թողարկելու և այլ բնագծերը, եթե դրանք

չեն ամրագրվում իրատեսական ծրագրերով). բ) ընդդիմությունը, այդ թվում՝ արտախորհրդարանական, չի ձևակերպում գաղափարաբանական այն առանցքային վեկտորը, որի շուրջ կարող էին համախմբել հասարակության լայն շերտերին՝ արտահերթ ընտրություններում մեծաթիվ քվե ստանալու համար: Արդյունավետ կառավարման, մասնավորաբար, ճգնաժամի հաղթահարմանն ուղղված գործելակերպը դիտարկելիս ակներև է դառնում հետևյալը. գործող իշխանական բուրգը չի լուծել երկրի զարգացման առաջնահերթ խնդիրները: Նոր Ազգային ժողովի ձևավորումը պետք է իրականացվի հնարավորինս արագ: Կառավարության՝ ընդամենը կառավարման իմիտացիա ստեղծելու գործելակերպը պետք է հիմնովին վերափոխվի: Բերեմ ընդունած որոշումներից մեկ օրինակ, որը, ճիշտ է, մասշտաբային էֆեկտ չուներ, սակայն տիպիկ է: Սպանդանոցների գործարկման կառավարության որոշումը «հետողորմյա» եղանակով հետաձգվեց կես տարով, որն էլ ամբողջովին չիրագործվեց: Առկա են բազում այլ օրինակներ:

Գործող իշխանությունները իրականացնելով իշխանափոխությունը «թալանածի հետբերում», հընթացս՝ «արդար ընտրություններ» պլյուս «կոռուպցիայի վերացում» կարգախոսներով, չհաջողեցին: Կոռուպցիայի վերացման իրագործելիությունը, մեր խորին համոզմամբ, խաթարվեց ինստիտուտների՝ մասնավորապես դատական համակարգի արդյունավետ չգործարկման հետևանքով, իսկ ապագա արդար ընտրությունների շուրջ նորից հառնում է կասկածամտությունը առնվազն բնակչության ոչ պատշաճ կենսամակարդակի պատճառով: Ավելին՝ իշխանությունները էյֆորիայի ալիքի վրա հռչակեցին տնտեսական հեղափոխության օրակարգը, որին, ի դեպ, ջանասիրաբար արձագանքեց տնտեսագիտական համայնքը, սակայն, ինչպես պարզվեց հետագայում, այդ հարցում հանդես չբերվեց որևէ հետևողականություն, եթե չասենք, որ, ըստ էության, այդ գաղափարը կաղապարվեց:

– Ո՞րն է այն հայեցակարգային տեսլականը, որի միջոցով հնարավոր կլինի մշակել կոնկրետ ծրագրեր և դուրս գալ ստեղծված իրավիճակից՝ սոցիալ-տնտեսական ճգնաժամի «մասով»: Հատկապես, կարծում եք, որ տնտեսական անկումը դոլարային գնահատականով հասնելու է շուրջ 20 տոկոսի (10 տոկոս տնտեսական անկումը, 10 տոկոս՝ փոխարժեքինը):

– Հակիրճ կներկայացնեմ, թե ինչ պետք է արվի, կամ որն է իրողություններից բխող թելադրանքը: Հայաստանի գոյաբանական և հետճգնաժամային կառավարման խնդիրների լուծումն ու հեռանկարում անվտանգ ու բարեկեցիկ երկիր ունենալը իրագործելի են դառնում հետևյալ եռամիասնական խնդիրների լուծմամբ.

1. Երկրում սահմանադրականության մակարդակի բարձրացմամբ: Կենսական ու առաջնահերթ այս դրույթը, զուտ ակադեմիական ձևակերպումներից

եթե դուրս գանք, ավելի պարզ կնշանակի, որ գրավոր Սահմանադրությունում ամրագրած նորմերը, որոնք վերաբերում են մեր հանրային կյանքը բովանդակող, այդ թվում՝ տնտեսական հարաբերությունների սահմանադրական-ինստիտուցիոնալ սկզբունքներին ու կանոններին, բավարար չեն կենսագործվում: Սկզբունքներն ու կանոնները կարող են վերաբերել պատշաճ կենսամակարդակին, սեփականության իրավունքին, բնօգտագործմանը, զսպման ու հակակշիռների մեխանիզմներին, ժողովրդավարությանը, ֆինանսական կայունությանը և ամենատարբեր այլ բնագավառներին, որոնք իրական կյանքում լրիվ չեն իրացվում: Այդ նորմերի չիրացման չափերը (դեֆիցիտները) պետք է էապես կրճատվեն, ինչն իրականանալի է միայն խոր իրավատնտեսական ռեֆորմների ու կարգավորումների շրջանակում: Այստեղ է, որ ամբողջ թափով պետք է առաջադրվեն լուծումներ նորընտիր պառլամենտում:

2. Դիվանագիտության, մտածողության ու վարքագծային վերափոխումներով: Խաղաղության և անվտանգության կոնցեպտի հարցում ճիշտ կողմնորոշումների գործելակերպի որդեգրում այն հաշվով, որ ապահովվի առնվազն համակեցությունը տարածաշրջանի հարևանների հետ, և անորոշությունները մաքսիմալ չեզոքացվեն ապաշրջափակումների ու կոմպլեմենտարության, խելամիտ արտաքին քաղաքականության, մարդկանց մտածողության ու վարքագծային վերաիմաստավորումների միջոցով:

3. Ռեսուրսային ապահովմամբ ու զարգացման նոր ուղեգծի որդեգրմամբ: Ճգնաժամի արագ հաղթահարման դիմակայության և զարգացման համադարմանը պետք է տեսնել տնտեսության, առողջապահության, գիտակրթական և ռազմարդյունաբերական համակարգերին զարկ տալու, ինչպես նաև սփյուռքի ներուժի համախմբման՝ նյութական աջակցման մասով ցանցային էֆեկտիվ մեխանիզմների գործադրմամբ, երկրում ներդրումային հոսքերի ապահովմանն ուղղված համալիր գործողությունների ու նախադրյալների ստեղծմամբ:

Վերը բերված կոնցեպտուալ մոտեցումները հիմնավորված ու մշակված են մեր տնտեսագիտական համայնքի գիտական հրապարակումներում, և համոզված եմ, որ պահանջված կլինեն ապագա իշխանությունների ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացում:

Հարցազրույցը՝ **Գոհար Հակոբյանի**

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՒՆԻ ԳԻՏԱԿՑՈՒՄ, ՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ Է

«Առաջին լրատվական», «Նարատիվ» հաղորդաշար

Պատերազմում ծանր պարտությունից հետո, երբ երկրում բարոյահոգեբանական իրավիճակը, մեղմ ասած, լավ չէ, խոսվում է նաև արտահերթ համապետական ընտրությունների մասին, և հսկայական խնդիրներ կան նաև տնտեսությունում: Ինչ պետք է անել, և ինչից պետք է սկսել, եթե մենք ուզում ենք կենսունակ, մրցունակ պետություն, որտեղ կապրենք բարեկեցիկ և արժանապատիվ: Որոնք են այն առանցքային քայլերը, որ այս ճգնաժամային պայմաններում տնտեսությունում պետք է իրականացվեն:

Պրոֆեսոր Հ. Սարգսյանի հետ հարցազրույցում խոսվում է այս և այլ հարցերի շուրջ, այդ թվում՝ անորոշությունների հնարավորինս չեզոքացման, անվտանգային խնդիրների լուծումների մասին, որոնք կպայմանավորեն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումները և նախադրյալներ կստեղծեն վաղվա ավելի բարեկեցիկ, ուժեղ տնտեսություն ունենալու համար:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=43T9yA639Ww

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՃԳՆԱԺԱՄ Է

«News.am», 6 փետրվարի, 2021

Հարցազրույցում պրոֆեսոր Սարգսյանը բնութագրում է երկրում առկա խոր ճգնաժամային իրավիճակը, որը դրսևորվում է մի շարք ոլորտներում, և դրա աստիճանակարգման պարագայում, չնայած տնտեսագետ լինելուն, առաջին տեղում տեսնում է բարոյահոգեբանական ճգնաժամը, իսկ որպես ճգնաժամային իրավիճակի գլխավոր «մեղավոր» տեսնում է խոստացված ռեֆորմների բացակայությունը:

«Ես չեմ կորցնում իմ լավատեսությունը, որ մենք այս հարցում ունենալու ենք շարունակականություն, որովհետև ոչ մեկ անգամ ենք մենք նախորդ երեք տասնամյակների ընթացքում նման ճգնաճամեր հաղթահարել, կարծում եմ, որ այս ճգնաժամը ևս կհաղթահարվի, և մեր տնտեսությունը կկարողանա տեղափոխվել բարձր աճի փուլ»,– նշում է տնտեսագետը:

Մանրամասները՝ տեսանյութում.

https://news.am/arm/videos/42385.html?fbclid=IwAR022K6mTZkPYiu4AnMzdv-j9pDg7bwbngyx8ttQ3xJO2SJ45tmkK6OXfj8

ԱՎԵԼԻ ԼԱՎ Է՝ ՋԵՐԾ ՄՆԱՆՔ ՊՍԵՎԴՈԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻՑ

«Հրապարակ» օրաթերթ, 8 մայիսի, 2021

Նախօրեին ԵՊՀ գիտական խորհուրդն արտահերթ նիստ է հրավիրել որի ընթացքում քննարկել է մայիսի 4-ին կառավարության՝ բուհերի կառավարման խորհուրդների ձևավորման կարգի մեջ փոփոխություն անելու որոշումը, համաձայն որի՝ բուհերի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 32-ից դառնում է 20, ըստ այդմ՝ կառավարության կողմից կապահովվի 11 անդամ (55%), ԿԳՄՍ նախարարության կողմից՝ 2 (10%), հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից՝ 2 (10%), ուսանողական համակազմից 5 անդամ (25%): Դատապարտելով ՀՀ կառավարության նման գործելակերպը՝ ԵՊՀ գիտական խորհուրդն արձանագրել է, որ կառավարության որոշումն անընդունելի է իրավական և բարոյական նորմերը խախտելու տեսանկյունից, դրա կիրառումը խիստ վտանգավոր ազդեցություն կունենա հանրապետության գիտակրթական միջավայրի վրա և անդառնալի վնաս կպատճառի բուհերի բնականոն գործունեությանը:

«Մեր խորին համոզմամբ՝ որոշումը հակասահմանադրական է և հակաօրինական՝ ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի տեսանկյունից, քանի որ ուղղված է բացառապես մեկ ոչ իրավաչափ նպատակի՝ իշխանությունների կողմից անսահմանափակ վերահսկողություն սահմանել բուհերի, մասնավորապես և առաջին հերթին՝ ԵՊՀ-ի նկատմամբ: Խորհուրդը որոշումը դիտարկում է որպես ԵՊՀ-ի դեմ վերջին տարիներին իշխանությունների կողմից տարվող հետևողական և անթաքույց պայքարի հերթական դրսևորում: Որոշման ընդունումը համարում ենք նաև բարոյական նորմերի կոպիտ խախտում՝ նկատի ունենալով այն, որ Սահմանադրական դատարանի վարույթում է Հանրապետության նախագահի կողմից վիճարկվող «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի՝ բուհերի ինքնավարության իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ: Որոշման ընդունումն ուղեկցվել է իրավական և էթիկայի նորմերի կոպիտ խախտումներով, 2021թ. ապրիլի 26-ին «e-draft.am» կայքում հրապարակելով նախագիծը և հանրային քննարկման ժամկետ սահմանելով մինչև մայիսի 14-ը՝ ՀՀ կառավարությունը մայիսի 4-ին գաղտնի, առանց նիստ հրավիրելու, գրավոր ընթացակարգով ընդունել է որոշում՝ փաստի առջև կանգնեցնելով բուհական ողջ համայնքին. որոշման նախագիծը չի քննարկվել բուհերում»,– մասնավորապես նշված է հայտարարության մեջ:

Թե օրինական դաշտում այս որոշմանը հակազդելու ինչ մեխանիզմներ կան, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը նկատում է, որ կառավարության որոշմանը հակազդելու մեխանիզմները տրվել են ԵՊՀ գիտական նիստում ընդունված հայտարարության մեջ: «Նախ՝ դիմել Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարանում ՀՀ կառավարության նշված որոշման սահմանադրականությունն անհապաղ վիճարկելու խնդրանքով, և երկրորդ՝ միջոցներ ձեռնարկել՝ վարչական դատարանում վիճարկելու կառավարության որոշման իրավաչափությունները»,– ասում է գիտխորհրդի անդամ Հ. Սարգսյանն ու նշում, որ կառավարության առաջարկած լուծումը չի կարող նպաստել բուհերում ճգնաժամի հաղթահարմանը, ավելին՝ կարող է ավելի խորացնել այդ ճգնաժամը:

Ինչ վերաբերվում է խորհրդի ձևավորման համամասնությանը, կարծում է, որ շատ ավելի ազնիվ կլիներ՝ անցնել նշանակումների ինստիտուտին. «Այս պարագայում սա լավագույն լուծումներից մեկը կարող է լինել, որովհետև այս փոփոխությունների մնացած ամբողջ ընթացքը, հոգաբարձուների խորհրդի չգործունեությանը միտված այդ քաղաքականությունը, որը իրականացվել է լիազոր մարմնի կողմից, սա է նշանակում: Նախկին հոգաբարձուների խորհրդի անդամների կեսը, որոնք լիազոր մարմնի կողմից են եղել նշանակված, միանգամից դուրս են գալիս խորհրդից, ըստ էության կազմալուծում խորհրդի գործունեությունը: Ուստի հանգուցալուծումը տեսնում եմ նշանակումների ինստիտուտը վերականգնելու մեջ՝ առանց իմիտացիոն գործելակերպի, որ, իբր, տեսեք՝ ուզում ենք պահպանել ակադեմիական ազատությունը, չենք շեղվում խնդրի դեմոկրատական լուծումներից: Ու, որպեսզի զերծ մնանք պսեվդոդեմոկրատական գործելակերպերից, ազնիվ կերպով կատարեք նշանակում և ասեք՝ սա է այսօրվա հանգուցալուծման ուղին: Այս պարագայում լավագույն ազատությունը ոչ պսեվդոլուծումներն են, այլ ուղիղ նշանակման ինստիտուտի գործադրումը»: Հ. Սարգսյանը չի կարողանում հասկանալ այս հապշտապությունը, այն էլ այս շրջանում, չնայած ենթադրություններ ունի, թե ինչու հիմա. «Երկու տարուց ավելի է՝ համալսարանն ամենատարբեր մեթոդներով և մեխանիզմներով ասպատակվում է, ու այս պահին հապշտապ լուծումների փնտրումն ընդամենը կոնյունկտուրայի խնդիրներ է լուծելու, որովհետև կարելի էր հարգել թե նախագահի, թե ՍԴ-ի ինստիտուտը մեր երկրում, ու մինչ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը գտնվում է առանձին դրույթների վիճարկման փուլում, ընդունվում է կառավարության որոշում, որն ինչ-ինչ հետին նպատակներ է հետապնդում»:

Սոնա Ադամյան

ԽՈՍՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼ Է ՊՐՈՖԵՍՈՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆԸ

Շավարշ Գևորգյանի հետ հարցազրույցի ընթացքում քննարկվում են Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, տնտեսական հեղափոխության հնարավորությունը, կառավարության որոշումները և դրանց չիրականացումը, տնտեսական աճի մասին միֆոլոգիկ թվերը, ներդրումները, որոնք չկան, 1998-2008-ի երկնիշ տնտեսական աճը, թունելի վերջում լույսի առկայությունը:

Մանրամասները՝ տեսանյությում.
https://www.youtube.com/watch?v=op7974UxPaY

ԵՊՀ-Ի ՎԻՃԱԿԸ ԵՐԿՐԻ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է

«Հրապարակ» օրաթերթ, 26 օգոստոսի, 2021

Մոտ 20 օր առաջ ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը համալսարանականներին ներկայացրեց ԵՊՀ ռեկտորի նոր ժամանակավոր պաշտոնակատարին՝ Հովհաննես Հովհաննիսյանին, որը Նիկոլ Փաշինյանի իշխանության ժամանակ եղել է ԿԳ փոխնախարար և ԱԺ պատգամավոր: Ռեկտորի ԺՊ-ի պաշտոնում Հ. Հովհաննիսյանի նշանակումը ոչ ոքի չզարմացրեց, չնայած վերջին 3 տարիների ընթացքում վերջինս պարբերաբար և համառորեն հերքում էր ռեկտորի պաշտոնում իր հնարավոր նշանակման մասին լուրերը, և չնայած ակնհայտ էր նաև, որ օրենքում պրոֆեսորի կոչման պահանջը խմբագրում են հենց նրա համար: Հ. Հովհաննիսյանն այդ օրը կարճ խոսեց, քանի որ ծրագրում էր առանձին հանդիպումներ ունենալ ամբիոնների վարիչների, դեկանների հետ և լսել նրանց մտահոգություններն ու խնդիրները: Ինչ վերաբերում է համալսարանականներին, ապա երկու տարվա ընթացքում իշխանություններին կարծես հաջողվեց կոտրել ԵՊՀ-ի դիմադրությունը, քանի որ ներկաները Հ. Հովհաննիսյանի նշանակումը լսեցին լուռ, արձագանքեցին ժպիտով:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանից հետաքրքրվեցինք՝ այս ընթացքում նորանշանակ ռեկտորի ԺՊ-ն հանդիպումներ ունեցե՞լ է իրենց՝ դեկանների հետ, և ի՞նչ վիճակ է հիմա ԵՊՀ-ում: «ԵՊՀ-ի վիճակը երկրի վիճակին համահունչ է, ես կասեի՝ մի փոքր ավելի լավ, տեսնելով հատկապես այս օրերին մեր խորհրդարանում կառավարության ծրագրի քննարկումը և այն, ինչ կատարվում է այնտեղ»,– ասաց Հ. Սարգսյանը:

Ինչ վերաբերում է Հովհաննես Հովհաննիսյանին, ապա, «քանի որ իրեն ճանաչում եմ, իմ տպավորությունը լավ է»,– ասում է Սարգսյանն ու հավելում, որ նշանակումից ի վեր, երբ նախարարը նրան ներկայացրեց համալսարանականներին, այլ հանդիպում չեն ունեցել ռեկտորի ԺՊ-ի հետ, քանի որ հաջորդ օրվանից բոլորը գնացել են արձակուրդ, և միայն վաղվանից ողջ կազմով համալսարանը կսկսի աշխատել. «Կարծում եմ՝ առաջիկայում կլինեն այդ հանդիպումներն ու քննարկումները, ինչ վերաբերում է հոգաբարձուների խորհրդին, ապա, որքանով տեղյակ եմ, դեռ չի ձևավորվել»:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի կարծիքով, ներկա իրավիճակով պայմանավորված, ճիշտ կլիներ նշանակումը, ոչ թե ընտրությունը. «Մենք պսևդոդեմոկրատական գործընթացների տիրույթում

ենք և այդ պատրանքներով՝ կապված ուսանողակենտրոնության, ինքնաբավության հետ, որոնք ինքնավարությունը կարող են կեղծ ձևով բարելավել, քան եթե իրականում նշանակված լիներ ռեկտոր և այդպիսով իր վրա վերցներ պատասխանատվությունը: Ի վերջո, եթե բոլոր այդ մեխանիզմները մենք նայում ենք, ապա տեսնում ենք, որ իշխանությունը կարողանում է անցկացնել իր ցանկալի անձին: Պսևդոդեմոկրատիա ասելով՝ հենց սա նկատի ունեմ, ինչու՞ ենք մենք պատրանք ստեղծում, թե, ահա, տեսեք՝ հոգաբարձուների անդամները դեմոկրատական մեխանիզմով ընտրեցին: Ուրիշ լուրջ գործառույթներ կան, որոնցով պետք է զբաղվեն հոգաբարձուները, բայց մենք այսօր դեռևս բավարար չափով այդ մեխանիզմները չունենք, հետևաբար, նշանակում է՝ նշանակումների մեխանիզմն արդարացված կարող է լինել»:

Ստացվում է՝ Հ. Հովհաննիսյանի դեպքն էլ կարելի է նշանակում համարել, ինչի հետ համաձայնում է Սարգսյանը. «Եթե 3 հոգուց բաղկացած ժամանակավոր խորհուրդ է ստեղծվում, և 3-ով են որոշում, որոնց մեջ են իշխանության ներկայացուցիչները՝ փոխվարչապետը, նախարարը և վարչապետի խորհրդականը, դա արդեն նշանակում է»:

Հարցին, թե ինչու, երբ նախարարը ներկայացրեց ռեկտորի նոր ԺՊ-ին, համալսարանականներից և ոչ մեկը չարձագանքեց, Սարգսյանն ասաց. «Եթե մենք առաջնորդվենք օրենքով, կանոնակարգերով, ապա նախատեսվում է ընտրություն, դա որևէ մեկը դեռ չի չեղարկել: Կարծում եմ՝ առաջիկայում կակտիվանան այդ գործընթացները, և ներկայիս ռեկտորի ԺՊ-ն, համոզված եմ, որ կդիմի և կունենա մրցակիցներ: Եթե այդ պահին բերել ներկայացնում են մի անձի, ով պետք է փոխարինի նախկին ռեկտորի ԺՊ-ին՝ իմ կողմից շատ հարգված Գեղամ Գևորգյանին, ով գրեթե 2 տարի եղավ պաշտոնակատար և այդպես էլ չկարողացավ լուրջ և երկարաժամկետ ծրագրերի առումով առաջընթաց ունենալ, դա նորմալ չէր, և մարդը թողեց գնաց, հիմա բերել են նոր պաշտոնակատար, որի դեմ պայքարել-չպայքարելու հարց չկա, քանի որ չեմ կարծում, որ դա խրամատ է, բլինդաժ, որ պետք է վեր կենանք, ասենք՝ էս ռմ բերեցիք: Այսօրվա իրավիճակով, կարծում եմ, ամեն ինչ նորմալ է և տեղավորվում է մեր կանոնակարգերի, այսպես կոչված, տրամաբանության մեջ»:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

«Հայկական ժամանակ» օրաթերթ,
19 հունվարի, 2021

2021 թվականին ՀՀ կառավարության կարևոր քայլերից մեկը տնտեսական ակտիվության միջավայրի վերականգնումն է լինելու: Սա մատնանշված է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2020 թ. նոյեմբերի 17-ին հրապարակած ճանապարհային քարտեզի կետերից մեկով: Հունվարի 15-ին վարչապետը հերթական քննարկումն է ունեցել համապատասխան ոլորտների ղեկավարների հետ և նշել, որ 2021 թ. պետք է դառնա մեր տնտեսական ամբիցիաների վերականգնման տարի:

Տնտեսագետ **Հայկ Սարգսյանը,** մեր զրույցում անդրադառնալով վարչապետի ճանապարհային քարտեզով նախանշված տնտեսական ակտիվության միջավայրի վերականգնմանը, կարծիք հայտնեց, որ տնտեսական առումով բացվածք չկա, փաստաթուղթը շատ սեղմ է, և շատ հարցերի պատասխաններ պետք է ստանալ:

«Բնական է, որ այդ ճանապարհային քարտեզում հնարավոր չէր լինի ունենալ համապարփակ գնահատական միջավայրի ձևավորման առումով, որովհետև տնտեսական զարգացումը այսօր բեկվել է, էապես փոխվել է: Առաջին պլան են մղված հակաճգնաժամային միջոցառումների ծրագրերը, որն այդ ճանապարհային քարտեզում չէր կարող մեկնաբանվել»,– ասաց նա:

Նրա խոսքով՝ դեռևս պետք է քննարկման առարկա դառնա, թե ինչպես է տնտեսական զարգացման բեկված կորը իր բնականոն հիմքին բերվելու և տնտեսական ակտիվությունը իրագործվելու:

«Վարչապետը վերջերս ասաց, որ կառավարման որակը էապես պետք է փոխվի և բարելավվի: Ես կարծում եմ, որ պետք է կոնկրետ նշվեն այն միջոցառումները, թիրախները, ռիսկերի չեզոքացման այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնք հնարավոր կդարձնեն տնտեսական ակտիվության մեծացումը»,– նշեց Սարգսյանը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐ.

տնտեսական խնդիրները չեն լուծվի, եթե չլուծվեն անվտանգային խնդիրները

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,
21 սեպտեմբերի, 2021

Վերջին պատերազմից հետո մենք բոլորովին այլ իրականությունում ենք ապրում, տարածաշրջանում աշխարհաքաղաքական կտրուկ փոփոխություններ են եղել: Կյանքը բազմիցս ապացուցել է, որ այս տարածաշրջանը առանձնահատուկ է՝ դաժանության առումով: Այս տարածաշրջանը (ոչ միայն, բայց հիմա սա է մեր խնդրո առարկան) վառ, առանց այլևայլության ցույց է տվել, որ թույլերին տրորում են, իսկ հաղթողին չեն դատում, եթե նույնիսկ այդ հաղթողը խախտել է նույն «առաջադեմ» կոչված աշխարհի բոլոր նորմերը՝ մարդու իրավունքներից սկսած մինչև արգելված զինատեսակների գործածում և այլն: Այս տարածաշրջանում ամեն օր հաստատվում է աշխարհի «արդարության» սկզբունքը:

Հիմա որոշողը մենք ենք՝ հաշտվում ենք ու մնում թույլ՝ իբրև թյուրքական տարրի ոտքի կոխան, թե սթափվում ենք ու գնում հաղթության ճանապարհով: Բայց հաղթելու համար մեզ պետք է շատ արագ ոտքի կանգնել: Տնտեսության այս վիճակով հազիվ թե կարող ենք: Մեզ վերակառուցվել է պետք, շատ բան վերանայել՝ մեր հաղթելու նպատակը ոելսերին դնելու համար:

Սեպտեմբերի 21-ը յուրօրինակ հաշվետվության օր դարձնենք: Քանի որ մեզ հիմա պետք է ճիշտ հաշվարկված տնտեսաքաղաքականություն՝ արագ ու որակյալ ոտքի կանգնելու համար (դանդաղ կայունի ժամանակը չունենք), հակիրճ փորձենք հասկանալ մեր 30 տարվա ապրածը, քաղած դասերն ու անելիքները:

«ՀՀ»-ի զրուցակիցներն են ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, տնտեսագիտության թեկնածու Համազասպ Գալստյանը, տնտեսագետ, կառավարման փորձագետ, տ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Կառավարում» ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանը:

Տնտեսական խնդիրները հիմնարար չեն լուծվի, եթե չլուծվեն անվտանգության խնդիրները

«Վերջերս Արցախում մի գիտաժողովի էի մասնակցում, այնտեղ հանդես եկա «ՀՀ տնտեսության դիմագծի բարեփոխումները և մարտահրավերները» զեկույցով: Նույն ձեր հարցի՝ 30 տարվա մասով է. եթե հակիրճ, ապա անկախությունից ի վեր վարվող տնտեսական քաղաքականության արդյունքում և՛ մեր տնտեսությունը, և՛ հասարակությունը հայտնվել են անցանկալի իրավիճակում, եթե, իհարկե, ավելի խիստ որակումներ չտամ: Այսօր դեռևս ունենք չհաղթահարված ճգնաժամեր, որոնցից պետք է կարողանանք դուրս բերել մեր տնտեսությունը նոր ուղեծիր»,– «ՀՀ»-ի հետ զրույցում նշեց Հայկ Սարգսյանը:

Պրոֆեսորի խոսքերով՝ տարիներ շարունակ մեր տնտեսական քաղաքականությունը վայրիվերումներով է եղել, և չի իրականացվել կրթական ու գիտաարտադրական միասնական համակարգի առաջանցիկ զարգացում: Չի արվել մարդկային կապիտալի և մեր ռեսուրսների (հող, ջուր և այլն) ու այլ բաղադրիչների օպտիմալ ռեսուրսօգտագործում: Տնտեսական ամենատարբեր՝ աճին միտված ծրագրերն ամրագրված չեն եղել մեր պոտենցիալ հնարավորությունների բացահայտման, այնուհետև այդ հնարավորությունների գործադրման բավարար պայմաններով: Մի խոսքով՝ ներկայումս ձևավորվել է մի տնտեսություն, որը լուրջ կառուցվածքային և տեխնոլոգիական փոփոխությունների անհրաժեշտություն ունի. «Օրինակ՝ մենք պետք է լրջագույն ուշադրություն դարձնենք գյուղատնտեսության ոլորտին և երբ խոսում ենք նոր տեխնոլոգիաների մասին, դա պետք է վերաբերի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներին, այդ թվում՝ գյուղատնտեսությանը: Պետք է կարողանանք այս ոլորտում հիմնովին լուծել պարենային անվտանգության, ջրոռոգման անհրաժեշտ ենթակառուցվածքների, գյուղկոոպերացիայի, խորհրդատվության, ապահովագրության և այլ խնդիրները: Այսօր պետք է կարողանանք նոր հնարավորություններ գտնել»:

Հայկ Սարգսյանը կարևորագույն մի հանգամանք շեշտադրեց. «Տնտեսությունն ինքնին առանձին չի զարգանում: Մենք պետք է կարողանանք լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են երկրի անվտանգությունն ապահովող պետական կառավարման համակարգի անխափան ու արդյունավետ աշխատանքը, տեխնոլոգիական բարեփոխումների տնտեսական քաղաքականության բարելավումը և այս հենքի վրա ռեսուրսների լավագույնս օգտագործման չափանիշների ներդրումը: Եվ, վերջապես, այս ամենին հավելենք դատահիրավական համակարգի գործունեության շեշտակի՝ իրապես բարեփոխումը, քաղաքական իշխանություն-բիզնես տարանջատումը, պետություն-մասնավոր հատված սերտ համագործակցությունը:

Ընդհանրապես մենք ինստիտուտների դիսֆունկցիա ունենք, խաթարում, ու սա հիմնախնդիր է: Այն անպայման պետք է շտկվի: Տնտեսական խնդիրները բավարար չեն լուծվի, եթե չհաղթահարվեն անվտանգության, քաղաքական, բարոյահոգեբանական, դիվանագիտական և այլ խնդիրներ»:

Եվ, իբրև հակիրճ ամփոփում կարևորեց. մեր երկրին անհրաժեշտ է սահմանադրականության մակարդակի բարձրացում, որ ոլորտին էլ ուզում է խոսքը վերաբերի. «Նախորդ 30 տարում մեր տնտեսությունում, ըստ իս ամենաբարձիթողի ոլորտը եղել է գիտակրթական համակարգը: Բացասական հետևանքները տեսնում ենք այսօր, դրանք երկարաժամկետ են: Մինչդեռ մեր երկրի իմիջը, այդ թվում անվտանգության խնդիրները պետք է պայմանավորված լինեն նախևառաջ հենց այս հատվածի զարգացմամբ»:

ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԱՆԿԱՐԱՅԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՅԼԸ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ,
15 դեկտեմբերի, 2021

Հայ-թուրքական վերսկսվող հարաբերություններում Ադրբեջանի գործոնի հիշատակումը, թերևս, կարող է մեկ բացասական միտում ունենալ, այն է՝ որպես հարաբերությունների վերսկսման պայման բանակցային սեղանին Թուրքիայի կողմից ադրբեջանական շահերի լոբբինգը: Եթե Անկարան նման քաղաքականություն որդեգրի, ապա դա կնշանակի նույն նախապայմաններով երկխոսելու տարբերակը, իսկ այդ տրամաբանության ներքո Թուրքիային ուղղված հայկական կողմերի նախապայմաններն անհամեմատ ավելի ծանրակշիռ ու հիմնավոր կլինեն: Մյուս կողմից էլ այնպես չէ, որ Հայաստանը մեծ խանդավառությամբ է բացում իր տնտեսության դռները Թուրքիայի բազմապատիկ մեծ տնտեսական շուկայի առաջ: Այստեղ հավանականությունը մեծ է, որ այն շատ արագ կկլանի հայկական տնտեսությունը, եթե մեր կողմից մինչև սահմանների բացումը համապատասխան մեխանիզմներ չներդրվեն: Մեր աչքի առաջ են Սիրիայի և Լիբանանի օրինակները, երբ Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունների սերտացման հետևանքով այդ երկրներում որոշ արտադրություններ կանգ առան՝ չկարողանալով դիմակայել թուրքական էժան, թեկուզ և անորակ արտադրանքի ներխուժմանը: Սրանք հարցեր են, որոնք այսօր հուզում են հայ տնտեսավարողներին և քաղաքացիներին:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերսկսման տնտեսական բաղադրիչի խնդիրների շուրջ «ՀՀ»-ի հետ զրույցում իր կարծիքն արտահայտեց ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

– Կա ըմբռնում, գիտակցում, ընկալում այն բոլոր հարցերի շուրջ,– ասաց նա,– որոնք վերջին տարում և մի քիչ ավելի երկար ժամանակահատվածում հասարակության բուռն քննարկման առարկա են դարձել: Կան նաև աքսիոմատիկ ճշմարտություններ, որ ավելի լավ է ապրել բաց, ազատ, քան փակ, կաղապարված, քանի որ այսօր ընդհանրապես աշխարհը թույլ չի տալիս ունենալ փակ տնտեսություններ: Մեր պարագայում տնտեսության գրեթե կեսն արտահանման ու ներմուծման վրա է կառուցված, և մենք պետք է կարողանանք ՀՆԱ-ի՝ փաստորեն, կեսի չափով այդ չափաբաժինն իրականացնել

հնարավորինս փոքր ծախսերով: Տվյալ նպատակադրումն ակներև վկայում է այն մասին, որ լոգիստիկ խնդիրների լավագույն լուծումը, տարբեր հաղորդակցությունները, բաց հնարավորությունները միայն նպաստավոր են լինելու: Այս հարցում առարկություն չկա՝ այն անմիտ կլինի: Բայց կարևոր է դրա գինը՝ այսպես կոչված բաց հաղորդակցությունների գործարկումն ինչ ձևով է իրականացվելու, ինչ հնարավոր զիջումների վրա է կառուցվելու, արդյունքում մենք այդ բալանսում ինչ ենք ունենալու: Տնտեսությունում, հասարակությունում պետք է մի քիչ ավելի լայն կաղապարով նայել այս ամեն ինչին, որովհետև պարփակվել միայն բեռնափոխադրումների ծախսումներով, ըստ իս, ընդունելի չէ:

Խնդրի լուծումը շատ խորքային է, ինչպես ես պնդեցի, պետք է «բացվել», բայց պետք է գտնել հնարավոր այլընտրանքային այն ճանապարհները, որոնք քիչ կորուստներ կբերեն, մասնավորապես, արտաքին առևտրաշրջանառության և այլ խնդիրների առումով:

– Պետությունն արդյոք պետք է օրենսդրական գործիքակազմով համապատասխան մեխանիզմներ ներդնի՝ հայկական արտադրությունը պաշտպանելու համար:

– Բնականաբար, ազատական տնտեսական կողմնորոշում ունեցող սուբյեկտի համար հարիր չէ հովանավորչական քաղաքականության ողջ գործիքակազմի կիրառումը, բայց այստեղ պետք է գտնել օպտիմալ համակցությունն այն արգելքների համար, որոնք հնարավորություն կտան, որ այսօր արտաքինը վայրագ չներխուժի՝ դուրս շպրտելով այն ավանդական առավելությունները, որոնք ունեցել ենք, օրինակ՝ արտահանման առումով: Ես կոնկրետ օրինակ բերեմ՝ գյուղատնտեսության, անասնապահության բնագավառում շատ զգայուն պետք է լինենք, կարողանանք չափել, հավասարակշռել էժան լոլիկի, բաճկոնի արտադրությունները, թե ինչպես պետք է կարողանանք այն փոխհատուցել մեր արտադրողականության բարձրացմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ և այլն: Եթե դրանք հավասարակշռվեն, ապա խնդիր չեմ տեսնում:

– Իսկ Հայաստանի տնտեսությունն ունի հավասարակշռելու այդ ներուժը:

– Միանշանակ այդ ներուժն ունենք, միայն պետք է դա գործադրել: Ես ինքս եղել և մնում եմ մեր երկրում ու տարածաշրջանում տնտեսական հեղափոխության գործարկման գաղափարախոսներից մեկը, բայց այդ հարցերի քննարկումը չպետք է պարփակվի զուտ տնտեսագիտական պարկուճում: Այն և՛ տնտեսական, և՛ քաղաքագիտական, և՛ իրավական և՛ էթնոմշակութային ու այլ առումներ ունի, ինչը պետք է ամբողջության մեջ դիտարկել:

«ԻՆՉ ԱՆԵԼ»-Ի ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ. ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՈԳԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄ

Գաղափարի հղացումն երկրի իրական բարեփոխումներին նպաստ բերելն էր: «Ինչ անել» խորագրով խորհրդատվությունը 2018 թ. հեղափոխության առաջին երկու տարիներին նախաձեռնվեց տնտեսագիտական համայնքի և ՀՀ արդյունաբերողների ու գործարարների միության ջանքերով: Գիտական զեկուցումները ուղղված էին երկրի սոցիալ-տնտեսական ամբողջական հայեցակարգերի ու ոլորտային զարգացումների վերաբերյալ ՀՀ կառավարությանը աջակցելուն: Այդ նպատակով գումարվեցին գիտագործնական երկու խորհրդաժողովներ, հրատարակվեցին ժողովածուներ: «Ինչ անել» հարցի շրջանակում քննարկման առարկա դարձան ՀՀ տնտեսության ձեռքբերումների ու զարգացումների արդյունավետ ու ինստիտուցիոնալ լուծումներին վերաբերող տասնյակ զեկուցումներ:

Ստորև ներկայացվում են պրոֆեսոր Հ. Սարգսյանի երկու զեկույց-հրապարակումները:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԻԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է[1]

ՀՀ իշխանությունների օրակարգային խնդիրների շրջանակը առաջիկա տարիներին մեզ պատկերվում է հետևյալ առաջնահերթ գործողություններով.

- արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո իշխանությունները ձեռնամուխ են լինում սահմանադրական անհրաժեշտ բարեփոխումներին,
- ամբողջացվում և համակարգվում են երկրում թռիչքաձև, երկարատև ու կայուն տնտեսական զարգացմանը միտված գործողությունները:

Համոզված ենք, որ վերոնշյալ նախապայմանների լիիրավ և հետևողական իրագործումը բավարար հիմքեր կստեղծեն բարեկեցիկ և հզոր Հայաստան ունենալու համար: Բարեկեցիկ ու հզոր Հայաստանի տեսլականը կյանքի կոչելուն ուղղված նպատակադրումները ենթադրում են որդեգրել *նորովի մոտեցումներ նաև տնտեսության կառավարման հայեցակարգերում*

[1] Ինչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները: Գիտագործնական խորհրդաժողով, Երևան, Անտարես, 2018:

և ծրագրերում: Այսօր փոխվում ու վերաիմաստավորվում են պետական միջամտության ձևերի ու եղանակների, տնտեսաիրավական կարգավորումների վերաբերյալ գիտական ձեռքբերումները: Այդ մասին են վկայում տնտեսագիտության ոլորտում շնորհվող Նոբելյան մրցանակները: Կուտակված առաջատար փորձի հետ հաշվի նստելն անխուսափելի է: Հասարակության կազմակերպման առանձնահատուկ ինստիտուտի՝ պետության զինանոցի գործադրման հնարավորությունների համակողմանի բացահայտումն անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրության միջգիտակարգային՝ իրավագիտական, քաղաքագիտական, տնտեսագիտական հատույթներով ամբողջացող տիրույթում: Առավել բարդ են հատկապես պետության կայացվածության աստիճանի գնահատմանն ուղղված ուսումնասիրությունները, որոնք նույնպես բազմասպեկտ են: Պետության կայացվածության բնութագրական ցուցանիշների վրա հենվող վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ *պետության կայացվածության* և սահմանադրականության մակարդակը բնութագրող ցուցիչների միջև առկա է ուղիղ ֆունկցիոնալ կապ: Պետության կայացվածության աստիճանը և սահմանադրականության մակարդակը ինչ-որ տեղ հանդես են գալիս որպես համարժեք իրողություններ:

Տնտեսագետներն իրազեկ են, թե տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում ինչ եղանակներով ու գործիքակազմով են կառավարողները կարողանում պայմաններ ստեղծել հանրության, նրա տարբեր շերտերի անհատների պահանջմունքների բավարարման համար, ինչպես են, ըստ այդմ, գործել մարդու կողմից ստեղծված սահմանափակումները կամ, այլ կերպ՝ «խաղի կանոնները» թելադրող ինստիտուտները: Հայտնի է, որ այդ կանոններն ու նորմերը ամրագրվում են երկրների սահմանադրություններում ու մայր օրենքներում: Ամրագրվում են, սակայն ոչ ամբողջությամբ իրացվում կյանքում: Եթե երկրի սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքները, նորմերը պատշաճ ձևով կյանքի չեն կոչվում, ապա դրա արդյունքում ունենում ենք սահմանադրականության դեֆիցիտ, որը հանգեցնում է մարդկանց վստահության և լավատեսության կորստի, անտարբերության, քաղաքացիական և սոցիալական ակտիվության պակասի, հուսահատության, իսկ դեֆիցիտի վառ արտահայտվածությունն արդեն բերում է հասարակության ընդվզմանը, որի ականատեսները մենք եղանք 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին: Գիտակցելով խնդրի կարևորությունը՝ մի առիթով գրել եմ, որ կառավարության «ռադարային էկրանի» վրա պետք է լինեն սահմանադրականության վիճակի բնութագրիչները: Այդ գերխնդիրը մեր կողմից լայնորեն լուսաբանվել է նաև այլ հրապարակումներում[1]:

---

[1] Հիմնախնդրին առնչվող հարցադրումներն արծարծվել են նաև զանգվածային

Մասնագիտական գրականության մեջ պետության կայացվածության առանձնացվող չափորոշիչներից են պաշտպանունակությունը, իրավունքի գերակայությունը, կայուն զարգացումը, մեկ այլ դեպքում համադրվում են ռազմական ուժը, քաղաքական ինստիտուտների կենսունակությունը, վարչարարական կարողությունները, արտադրողականությունը և այլն: Չենք սխալվի, եթե վերը թվարկված և բազմապիսի այլ չափորոշիչներով կանխորոշվող պետության կայացվածության ինտեգրալ գնահատականն ամփոփենք երկրի բարեկեցության ցուցիչով:

Դիտարկված անցումային երկրների ցուցչակազմում ժողովրդավարական զարգացումների և ինստիտուցիոնալ զարգացման ցուցիչների կարևորության փաստը վկայում է այն մասին, որ զարգացման տվյալ փուլում անցումային երկրների միջև հիմնական տարբերությունները պայմանավորված չեն սոցիալ-տնտեսական զարգացումներով: Իսկ թե ինչպես է բազում հայտանիշերով որոշվում երկրի բարեկեցության ցուցիչ- սահմանադրականության մակարդակը բնութագրող ինդիկատորը, մանրամասն ներկայացված է Մեթոդիկայում[1] (էջ 189-206):

Սահմանադրականության մակարդակի բնութագրիչները դիտարկվող երկրներում 2014 թ. տվյալներով

Սահմանադրականության բարձր մակարդակով քլաստերի միջինի համեմատ առավել մեծ տարբերություններ առկա են ինստիտուցիոնալ զարգացումների և քաղաքական կայունության ցուցիչների մասով: Դրանք համեմատական քլաստերային վերլուծության օգնությամբ որոշված հենց այն ցուցիչներն են, որոնց պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել քաղաքականության գերակայությունների մշակման ժամանակ:

լրատվամիջոցներում՝ «**Տնտեսական աճի գաղտնիքը թաքնված է Սահմանադրականության մեջ**», http://b4b.am/archives/news, 28.07.2017, «**Մեկնարկից տնտեսական վերելք տանող ճանապարհները**», http://armtimes.com/hy/article/139508, 19.06.2018, «**Հայաստանում պատշաճ կենսամակարդակ կլինի, եթե լավ ընտրություններ և լավ ԱԺ ունենանք**», https://www.1in.am/2252897.html, 28.11.2017, «**Սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համադրմանը սահմանադրականության մակարդակի բարձրացման ապահովումն է,** http://gortsq.am2018:

[1] Տես, Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը: Եր., Զանգակ հրատ., 2018, 208 էջ:



Սահմանադրականության միջին մակարդակ ունեցող երկրների քլաստերում է նաև Հայաստանը, որը ժողովրդավարական զարգացումների ինդիկատորի համար ունի տվյալ քլաստերի միջինից բավական ցածր ցուցիչ:





Նկատենք, որ այս գնահատումները վերաբերում են 2014-ին, որում ներառված չէ 2018 թ. ապրիլ-մայիսը՝ ՀՀ քաղաքացիական հասարակության ընդվզումը: Կարևորության առավել ցածր մակարդակ ունեն սոցիալ-տնտեսական ցուցիչները՝ աղքատության մակարդակ և Ջինի գործակից:

Քլաստերային վերլուծությունը թույլ է տալիս հետազոտել սահմանադրականության համեմատական մակարդակն առանձին երկրի համար և հետևություններ անել, թե տվյալ քլաստերը որ գործոններն է ընդգրկում, որոնք պետք է հատկապես կարևորվեն սահմանադրական կարգավորման ոլորտում քաղաքականության մշակման պատասխանատուների կողմից: Օգտվելով տեղեկատվական մի շարք աղբյուրներից[1]՝ վերը հիշատակված մեթոդիկայով սահմանադրականության մակարդակի ախտորոշումը փորձարկվել է

[1] Համաշխարհային բանկի World Development Indicators, Անցումային տնտեսությունների համար Ֆրիդըմ Հաուսի Nations in Transit, Կառավարման որակի World Governence Indicators, Թրանսփերենսի ինթերնեյշնլի Corruption Perseption Index, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի Human Development Index և այլ շտեմարաններ:

նախկին ԽՍՀՄ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի անցումային 29 երկրների կտրվածքով և իրականացվել է նշված երկրների քլաստերացում: Հիշատակված քլաստերացման համատեքստում առավել մեծ կարևորություն են ստացել ժողովրդավարական և ինստիտուցիոնալ զարգացումների[1], այնուհետև՝ մարդկային կապիտալի զարգացման և քաղաքական կայունության գործոնները: Գրեթե համանման հետևություններ մեր կողմից արվել են մեկ այլ ուսումնասիրության մեջ[2], որտեղ օգտագործվել է բացատրող փոփոխականների այլ համախումբ: Սա խոսում է բացատրող փոփոխականների համախմբի փոփոխման դեպքում ստացված արդյունքների հավաստիության մասին:

Գործոնների վարկանիշային գնահատականները



Սոցիալ-տնտեսական ցուցիչների բարելավման նպա տակադրումը, ինչպես նաև իրագործումը, մեծ մասամբ սահմանափակված է ինստիտուտների, ժողովրդավարական գործընթացների անբավարար զարգացվածությամբ:

---

1 Ժողովրդավարական և ինստիտուցիոնալ զարգացումների բնութագրիչները, որոնք «զտվել են» ավելի ընդգրկուն ցուցչակազմից, հետևյալն են՝ քաղաքացիական հասարակություն, քաղաքական բազմակարծություն, խոսքի ազատություն, կազմակերպությունների իրավունք, ընտրական գործընթացներ, դավանանքի ազատություն, անհատական ինքնավարություն, անկախ մեդիա, կառավարության գործունեության արդյունավետություն, ունեցվածքի իրավունք, կոռուպցիայի ընկալման համաթիվ, իրավունքի գերակայություն և կարգավորման որակ:

2 Տես, Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ: Եր., Զանգակ հրատ., 2017, 139 էջ:

Այս հետևությունը տվյալ հետազոտության առավել կարևոր արդյունքներից է՝ երկրում սահմանադրականության մակարդակի բարելավման ուղղությամբ քաղաքականություն վարելու առաջարկների տեսանկյունից: Որպես վարկած կարելի է ենթադրել, որ անցումային երկրներում տնտեսության հետագա վերելքը, որն այլևս «վերականգնվող» չէ, մեծապես պետք է կանխորոշվի ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարելավումներով:

Այն պնդումը, որ ժողովրդավարական և ինստիտուցիոնալ գործոնների թերզարգացվածությունը վերաճում է սոցիալ-տնտեսական զարգացման վճռորոշ խոչընդոտի, միշտ չէ, որ միանշանակ է ընդունվում: Հակադարձվում է, որ ակներև է՝ մինչև չվերացվի կոռուպցիան, չլավացվի մրցակցությունը, չբարելավվի դատաիրավական համակարգը, կշարունակենք դոփել տեղում: Այդ ամենը ճշմարիտ է, սակայն խնդիրը այն է, թե իրավիճակ փոխելու առումով ի՞նչ են հուշում գիտական հետազոտությունները տվյալ ոլորտում: Ինչի՞ց պետք է սկսել և ի՞նչ ու ինչպե՞ս անել: Պատասխանը՝ մեկ պարզ օրինակով: Խնձորի՝ ծառից վայր ընկնելու պատճառը հայտնի է, բայց երբ այդ նույն խնձորը տեղադրում են օդապարիկում, այն վեր է բարձրանում: Երկու դեպքում էլ կա գիտական բացատրություն: Մասնավորաբար, ինչ անել, որ գործընթացը կառավարվի: Երկրներում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիրների համատեղ (ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ցուցիչների (ինդիկատորների) համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Առանց պատշաճ գիտական սպասարկման ու հիմնավորման՝ չի կարելի ակնկալել լուրջ արդյունքներ: Ի վերջո, պատճառահետևանքային կապերի հանգույցում պետք է բացահայտվեն առաջընթացի խոչընդոտներն ու խթանիչները, դրանց դիրքավորումները և մշակվեն իրավատնտեսական կարգավորումների գործուն մեխանիզմներ:

Ընդունված տեսակետ է, որ երկրների բարեկեցությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպիսիք են աշխարհագրական դիրքը, կլիման, բնական և մարդկային ռեսուրսները, կրոնը, պատմականորեն ձևավորված փոխհարաբերությունները հարևան երկրների հետ և այլն: Սակայն Դ. Աճեմօղլուն և Ջ. Ռոբինսոնն ապացուցել են, որ երկրների բարեկեցության մակարդակը ոչ միշտ է բացատրվում միայն այդ գործոններով: Նրանք ցույց տվեցին, որ երկրների ծաղկումն ու անկումը առնվազն պայմանավորված են նաև ձևակարգված քաղաքական և տնտեսական ինստիտուտների որակով և կարողունակությամբ: Մեր կողմից իրականացված էմպիրիկ վերլուծությունների արդյունքում ցույց է տրվել նաև, որ կարևոր նշանակություն կարող են ունենալ մարդկանց վարքագծային նախադրյալները, ինստիտուտների

ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սոցիալական և տնտեսական առաջընթաց կարող ենք երաշխավորել միայն սահմանադրականության դեֆիցիտի հնարավորինս կրճատմանը համընթաց: Պատրանքներից զերծ մնանք, որ իրավունքի գերակայության ու կայուն զարգացման, հակակշիռների ու զսպող մեխանիզմների ցուցիչների բարելավումը կընթանա շատ արագ և կփոխվի մեր մտածողությունը: Հետևողական ու անշրջելի բարեփոխումները կնպաստեն արդարության հասնելուն և կոռուպցիան իսպառ արմատախիլ անելուն:

Վերը շարադրված հայեցակարգային ու ռազմավարական հարցադրումների համատեքստում նախանշենք երկարատև կայուն տնտեսական զարգացումն ապահովող որոշ առաջնահերթություններ, որոնք, անշուշտ, կնպաստեն սահմանադրականության մակարդակի բարձրացմանը:

1. **Միաժամանակյա և փոխկապակցված բարեփոխումների իրագործում քաղաքական ու տնտեսական ինստիտուտների կտրվածքով՝** սկսելով քաղաքացիների ամենօրյա շահերը սպասարկելուն միտված պետական ծառայությունների ոլորտից: Այդ բարեփոխումների ներկապնակը ընդգրկուն է: Այն վերաբերելու է տնտեսությունում կառուցվածքային փոփոխություններին (հատկապես իրական հատվածում), դատական համակարգին և այլն:

2. **Անցում հաստատված տնտեսակարգից իրական ազատական տնտեսակարգին:** Որո՞նք են ակնկալիքներն այդ ասպարեզում: Նախ, հիմնովին պետք է փոխվեն իրական ազատական տնտեսական հարաբերությունների մասին մեր ընկալումները: Այսօր առկա են այն բոլոր արատավոր սահմանափակումները, որոնց մասին ավելի քան երկու տասնամյակ բարձրաձայնվել է: Իրական ազատական տնտեսակարգի մասին կառավարող էլիտայի պատկերացումներն ու ընկալումները պետք է խարսխվեն կատարյալին մոտ մրցակցության ձևավորման, ինչպես նաև մտածողության այնպիսի համակարգերի վրա, որոնց պարագայում խորթ կլինի օրինազանցության որևէ դրսևորում և երկրի բյուջեից գողանալու՝ կոռուպցիայի երևույթը: Բոլորին պետք է հասու լինի, որ կոռուպցիան նույնն է, ինչ ծնողներից ու երեխաներից գողանալու անբացատրելի ու արգահատելի երևույթը:

3. **Տնտեսության արդյունավետ կառավարման հաջորդ գերակայությունը որոշումների կայացման ու լուծումների կենսագործման վերակազմակերպումն է բոլոր մակարդակներում ու ոլորտներում:** Նորովի մոտեցումները պետք է նպատակաուղղվեն կոռուպցիայի հնարավորության չեզոքացմանը: Եթե դրան ուղղված մտածողության համակարգի

փոփոխությունը երկարատև պրոցես է, կարևոր է առաջին քայլերի հարցում ճիշտ կողմնորոշումը, որը հետագա բարեհաջող ընթացքի նախապայման է: Մի բան պետք է հստակ ընդունենք, որ կարճաժամկետ էֆեկտները երբեմն վերաճում են երկարաժամկետ կորուստների: Զարգացման տեսլականը պետք է կառուցվի հարաճուն ներդրումային հոսքերի վրա: Արդյունավետ տնտեսություն ունենալուն միտված որոշումների կայացման բոլոր ճանապարհները տանում են տարեկան մոտավորապես 2 մլրդ դոլարին համարժեք ներդրումային հոսքերի փնտրտուքին: Գիտելիքահենք կառավարումը նախևառաջ ուղղորդված պետք է լինի հանրային միջոցների յուրացման ամենատարբեր սողանցք- ների վերացմանը: Դրանցից ամենաէականը օրենքներում տեղ գտած տարընթերցման հնարավորությունների բացառումն է: Ոչ արդյունավետ բաշխման ու վերաբաշխման, անհարկի թույլտվությունների վրա կառուցված կառուցակարգերն ու ընթացակարգերը պարարտ հող են ստեղծում միջոցների փոշիացման ու արդյունքների յուրացման հարցում, որը, միով բանիվ, հանգեցնում է անարդյունավետ տնտեսվարման:

4. Կրթություն ստանալուց մինչև ձեռնարկատիրությամբ զբաղվելու տնտեսական հնարավորությունների վերաբաշխում: Սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում գոյություն ունեցող մոտեցումների վերաիմաստավորումն ու զարգացման ծրագրերում տնտեսական հնարավորությունների ամրագրումը վերաբերում է պայմանագրային էկոնոմիկային: Դժվար չէ տեսնել, որ տնտեսությունն, ի վերջո, տնտեսվարող սուբյեկտների միջև պայմանագրերով ներկայացվող մի ամբողջական ցանց է, պայմանագրերի մի մեծ համախումբ: Շուկան, տվյալ պարագայում, ներկայացնում է մի իրավիճակ, որտեղ պայմանավորվում են: Ընդ որում, պայմանավորվում են ինչպես արդյունքի ստեղծման, այնպես էլ դրա բաշխման, վերաբաշխման (հարկման) տեղաբաշխման (այդ թվում՝ արտահանման), արտադրության ընդլայնման և ամենատարբեր հարցերում:

5. Տնտեսագետ կառավարողները (այդ թվում՝ մակրոմակարդակում) ուսումնասիրելով այդ պայմանավորվածությունները, ձգտում են, որ առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեն այդ գործընթացի իրագործման համար: Դրա համար ստեղծվում են բավարար տնտեսահիրավական կարգավորումներ ձեռնարկությունների միջև, գործատու-աշխատող հարաբերություններում և այլն:

6. Առաջադրված խնդրի համատեքստում կարևորվում է պայմանագրերի լուծման կամ վիճարկման դատահիրավական ինստիտուտի, մասնավորաբար, 2019 թ. հունվարի 1-ից սնանկացման գործերով դատարանների կայացումը: Իսկ խնդիրը գերարդիական է: 2016 թ. ՀՀ խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների պարտավորությունները գերազանցում են 3

տրիլիոն դրամը: Փաստենք, որ 2017 թ. դատարան դիմած սնանկության գործերի թիվը շուրջ 10 հազար է, որոնցից սնանկ է ճանաչվել 3171-ը:

7. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում է անցումը թվային էկոնոմիկային: Համաշխարհային զարգացման միտումները վկայում են, որ տեղեկատվական ու հեռահաղորդակցության ծառայությունների արտադրությունը կազմում է աշխարհի ՀՆԱ-ի շուրջ 7%-ը: Թվայնացումը միանգամայն բարձրացնում է ընկերությունների մրցունակությունը, օգնում է օպտիմալացնել ծախսերը, մեծացնել ակտիվների եկամտաբերությունը, օգնում՝ լավագույնս գնահատել սպառողների պահանջարկը: Տնտեսական բարեփոխումներին միտված վերոնշյալ հիմնուղիները բնավ չեն ծածկում կառուցվածքային ու ինստիտուցիոնալ անհրաժեշտ փոփոխությունների ողջ տիրույթը: Եվ, ընդհանրապես, համակարգը հիմնովին փոխելու հնարավորությունները, որտեղ կա դրա անհրաժեշտությունը, միաժամանակ իրականացնելը ռիսկային է: Վերջինիս մեղմման ռիսկը ինստիտուցիոնալ տեսության մեջ հայտնի մոտեցմամբ՝ միջանկյալ ինստիտուտների կառուցումն է: Կարելի է բերել օրինակներ, որոնք ինքնուրույն քննարկման առարկա են:

8. Այսպիսով, արտաքին ուժերի շահերի սպասարկումից ձերբազատված քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ բարեփոխումները և, վերջապես, տնտեսահիրավական կարգավորման ողջ զինանոցի գործադրումը, որն ուղղված է սահմանադրականության մակարդակի բարձրացմանը, կարող է իրական երաշխիք հանդիսանալ բարեկեցիկ ու հզոր Հայաստանի կերտման գործում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՈՒՂԵԳԾԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ[1]

Նախաբան: Մեր երկրի սոցիալական և տնտեսական իրողությունների համարժեք բացահայտումը, դրանց համադրումը պոտենցիալ հնարավորությունների հետ անբավարար է իրագործված, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է պատճառահետևանքային կապերի ողջ շղթայով նեգատիվի կուտակման ու բացթողնված հնարավորությունների վերծանմանը:

Այս առումով առնվազն դեստրուկտիվ պետք է որակել հանդուրժողականությունը տնտեսական պոպուլիզմին, որը դրսևորվում է ինչպես ԶԼՄ-ներում, այնպես էլ երկրի պառլամենտում՝ տարբեր իրավատնտեսական կարգավորումների մասով օրենքների ընդունման ընթացքում: Տնտեսական պոպուլիզմի անթույլատրելի գործընթացը նախևառաջ լուրջ հարված է հասցնում (վնասում է) բիզնեսի նկատմամբ պետության արդյունավետ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Իր հերթին, տնտեսական պոպուլիզմը չի նպաստում տնտեսական հեղափոխության, վերելքի ու թռիչքաձև զարգացման իրական նախադրյալների առկայության վերաբերյալ բոլոր լավատեսական պնդումների կյանքի կոչմանը[2]: Ավելին՝ այն նյարդայնացնում է հասարակության իրազեկ շերտին, ընդհուպ որոշ մասնագիտական շրջանակներին, որի հարուցիչը երկրում տիրապետող գաղջ մթնոլորտն էր: Վերջինիս մասին ժամանակին եղավ բարձրաձայնում, սակայն ոչ երբեք գործուն քայլեր՝ ուղղված այդ «գաղջությունը նոսրացնելուն», որն էլ նպաստեց 2018 թ. ապրիլ-մայիսի հեղափոխական զանգվածի ձևավորմանը: Գաղջության բաղադրության բացահայտումը և այդ երևույթի վերացմանն ուղղված գործուն քայլերը, թերևս կարող էին միայն հետաձգել հեղափոխությունը: Սակայն ոչ ավելին:

---

1 Ինչ անել-2. Տնտեսական հեղափոխություն. ընկալումը և գործարկումը: Գիտագործնական խորհրդաժողով, Երևան, Անտարես, 2019:

2 Տնտեսական հեղափոխության հասկացութային ապարատի ակունքները և ընկալումները մեզ տանում են դեռևս նեոլիթի ժամանակաշրջան (Քրիստոսից առաջ XI-VI հազարամյակ), երբ տեղի ունեցավ երկրագործության և անասնապահության, այսօրվա եզրաբանությամբ՝ գյուղատնտեսական հեղափոխությունը: Մեր կարծիքով՝ հետագայում արդյունաբերական (Անգլիա՝ 19-րդ դար) ներկայիս՝ 4-րդ արդյունաբերական և բոլոր այլ հեղափոխությունները՝ իրենց բնույթով տնտեսական հեղափոխություններ են, որոնք պարտադիր չէ, որ շրջադարձեին, դիցուք, հիմնական սեփականատիրական հարաբերությունները: Տեխնոլոգիական և կառուցվածքային խորը ռեֆորմացիան, ինքնին, կարող է համընդգրկուն տնտեսական հեղափոխության հիմք հանդիսանալ:

Երկրում կուտակված տնտեսական խնդիրների խորը լուսաբանումն ու մտահոգությունները՝ տնտեսական հեղափոխության մեթոդաբանությամբ դրանք լուծելու առումով արմատական վերափոխումների անհրաժեշտություն են առաջացրել:

Առաջնահերթ փոփոխությունների շարքում են՝

1. Քաղաքական համակարգի հնարավոր դեֆոլտի կանխումը, որն իրագործելի է անհրաժեշտ սահմանադրական փոփոխությունների՝ առնվազն զսպման ու հակազդման կառուցակարգերի բարելավման մասով:
2. Հարստության ներուժի չվատնումն ու արդյունավետ գործադրումը:
3. Կրթության դերի բավարար չարժևորումը[1]:
4. Լավագույնս կառավարման սոսկ իմիտացիայից զերծ մնալը[2]:
5. Անորոշությունների կանխարգելմանը առավելագույն նպաստումը[3]:

1. Մուտք, խնդրի առաջադրում: Սոցիալ-տնտեսական «բարեշրջված» զարգացումների առումով շուրջ երեք տասնամյակ «լավ օրի չենք»: Իրավիճակի նման ախտորոշման բոլոր հիմքերն ակնառու են: Այդ մասին քննական վերլուծությունների պակաս չկա, բազում են գիտավերլուծական հրապարակումները:

---

[1] Կրթությունը որպես գերակա ռազմավարական մարտահրավեր սերտորեն առնչվում է տնտեսության օպտիմալ կառուցվածք ունենալու խնդրին:

[2] Պետական կառավարման արդյունավետ համակարգի ներդրումը պահանջում է չառաջնորդվել երկարաժամկետ ակնկալվելիք արդյունքների ստորադասմամբ կարճաժամկետ արդյունքներին, որը շատ հաճախ կորստաբեր է լինում: Այն ակներև է «կուտակում-սպառում» դիլեմայի առումով, որը դրսևորվում է ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ առևտրային կազմակերպություններում:

Օպտիմալ կառավարումը պետք է ուղղվի.

- մասնակցային գործընթացների ու բաժնետիրացման նպաստավոր պայմանների ստեղծմանը.
- բաշխման արդարացի հարաբերությունների արմատավորմանը «բաժանիր-ընտրիր» սկզբունքի գործադրման կառուցակարգերի ստեղծմամբ (բաժանողը դիմացինին է տալիս ընտրության հնարավորությունը, որն էլ արդարացի բաշխման չափանիշ է դառնում).
- Խուսափումը բարդ խնդիրների լուծումը պարզունակ սխեմաներում տեղադրելուց ու առաջ տանելու համառ փորձեր կատարելուց:

[3] Անորոշություններն առաջացել են ամենատարբեր ոլորտներում, մասնավորապես, բնակչության սպասումների իրականացման առումով: Որպես կանխատեսելիության և անորոշությունների չեզոքացման ինդիկատոր կարող է հանդես գալ, օրինակ, առաջիկա 5 տարիների կտրվածքով 150-200 հազար ներգաղթյալների պլանավորած ցուցանիշը ու դրան ուղղված տեսանելի ու բավարար միջոցների նախանշումը ծրագրային փաստաթղթերում:

Ելակետային նման իրողությունները խիստ պահանջարկված են դարձնում «ինչ անելը» և «ինչպես անելը»՝ հոռետեսական սպասումները կանխարգելելու համար: Իրավիճակից հնարավորինս շուտ դուրս բերելուն ուղղված ծրագրային հիմնադրույթների մշակումից զատ, որևէ կերպ չպետք է հետաձգվեն խորքային բարեփոխումները, որի համար ստեղծված են առավելագույն նպաստավոր պայմաններ՝ իշխանությունների ձգտումը և ժողովրդավարության ձեռքբերումները:

Երկարատև՝ մինչև 2040 թ. ժամանակահատվածի համար մշակվելիք ծրագրային հիմնադրույթներում, որի հանձնառությունը մենք ստանձնում ենք, ներառված կլինեն մակրոտնտեսական ցուցանիշների հաշվեկշռված համակարգը՝ զարգացման իր 12 բաղադրիչներով՝ տնտեսության իրական և ֆինանսական, արտաքին հատվածների մակրոբնութագրերը, սոցիալական ցուցանիշները և այլն: Ծրագրային հիմնադրույթներում ներառված կլինեն նաև.

- զարգացման սցենարները՝ հնարավոր ռիսկերի գնահատմամբ (պատերազմական գործողություններով ուղեկցվող հնարավոր համապարփակ շրջափակման իրավիճակից մինչև «լիարժեք խաչմերուկում» դիրքավորվելը),
- երկարաժամկետ կայուն զարգացմանը միտված կառուցվածքային ու ինստիտուցիոնալ բարեփոխումների վրա հիմնված տնտեսական քաղաքականության ուղենիշները[1],
- ինստիտուտների կայացվածության հետ մեկտեղ դիտարկվելու են ներկառուցված (встроенные) ոչ ֆորմալ ինստիտուտները, մարդկանց վարքագծային նախադրյալները և հասարակության կողմից

[1] Բարեփոխումների ձեռագիրը և բնույթը պետք է վերափոխվեն հիմնովին: Պետք է զերծ մնալ ռեֆորմատորների այն սխալների կրկնությունից, երբ փորձ է արվում ոչ նպաստավոր առաջավորը կուլտիվացնել, որը չի բավարարում հայկական տեխնոլոգիական, ռեսուրսային, մշակութային, ինստիտուցիոնալ ու երկրաքաղաքական սահմանափակումներին՝ մի կողմից, և իմպլանտների ներդրումից՝ մյուս կողմից. ինչպես, օրինակ, Արագածի փեշերին չպետք է փորձել աճեցնել մերձարևադարձային կուլտուրաներ: Չպետք է առանց բավարար ենթակառուցվածքների՝ կրթության ոլորտում ներդնել բոլոնյան գործընթաց, առանց կայանատեղիների նախագծել բնակելի շենքեր, առանց ոռոգման և խմելաջրերի համակարգերի լիարժեք գործարկման՝ զարգացնել գյուղը և գյուղատնտեսությունը, առանց «բժշկակենտրոն միջավայրի» չկառավարել կլինիկաներ և այլն, և այլն: Գոյություն ունեցող սահմանափակումներին բավարարող բարեփոխումների ունիվերսալ ալգորիթմներ գոյություն չունեն: Վերջնանպատակներին (օրինակ՝ արդար դատական համակարգ) տանող ճանապարհին կարող են ստեղծվել միջանկյալ ինստիտուտներ (մեր օրինակում՝ անցումային դատարաններ): Սահմանափակումները տարաբնույթ են՝ կապված քաղաքացիական մշակույթի, ապապետականացման և այլ խնդիրների հետ:

ինստիտուտների ընկալումը բնակչության բարեկեցության բարձրացման համատեքստում[1]:

2. Ինչ է կատարվել առ այսօր: ՀՀ կառավարությունները, խորհրդարանները միջազգային կազմակերպությունների գործելակերպին համահունչ, «կայունություն-զարգացում» երկընտրանքում նախապատվությունը տվել են կայունությանը՝ չդնելով երկարաժամկետ կայուն զարգացման նախադրյալների ստեղծման խնդիրը: ՀՀ տնտեսական քաղաքականությունը տարվել է նախագծված սոցիալ-տնտեսական զարգացման բնագծերի ներառմամբ, որոնք հիմնականում չեն նվաճվել, և ընդգրկվել են խոշորամասշտաբ ծրագրեր, որոնք հիմնականում չեն իրագործվել:

Ծրագրային ժամկետների ավարտից հետո գրեթե բացակայել են հաշվետվությունները ծրագրերի, ըստ էության, չկատարման մասին, բացակայել են վերլուծությունները տնտեսահիրավական կարգավորումների հետևանքների գնահատման առումով՝ սկսած փորձաքննություն չանցած, սակայն ընդունված օրենքների որակից մինչև դրանց կիրարկումը: Չեն բացահայտվել խորքային պատճառները, որոնք արգելակել են զարգացումը:

3. Սոցիալ-տնտեսական զարգացման օրակարգը: Տնտեսական զարգացումը պլանավորելիս ներկայումս չպետք է սահմանափակվել ճյուղային առաջնահերթությունների թվարկմամբ, քանի որ դրանք շատ արագ և հիմնովին կարող են վերափոխվել:

Ազգային մրցունակ տնտեսություն ունենալու առաջնահերթ գերակայությունների թվում պետք է լինեն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ուղղված օրակարգային խնդիրների լուծումները[2]:

Օրակարգային խնդիրների շրջանակը ձևավորվելու է առաջնահերթ հետևյալ գործողություններով. ձեռնամուխ լինելով սահմանադրական անհրաժեշտ բարեփոխումներին՝ ծրագրային հիմնադրույթների հենքի վրա պետք է մշակվի **ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացումը նոր ուղեծիր դուրս բերելուն միտված գործողությունների համապարփակ ծրագիրը:**

---

1 Саргсян Г. Л., Геворгян Р. А., Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран, Вестник Московского университета. Серия 6. Экономика, N 1, 2019:

2 Հիմնավոր օպտիմալացման պարագայում չպետք է տեղի տալ ընդհուպ գործադուլային սպառնալիքներով դիմակայությանը (օրինակ՝ Սփյուռքի և Մշակույթի նախարարությունների աշխատակիցների բողոքները) և չառաջնորդվել հրապարակ նետված այնպիսի սին թեզով, ըստ որի՝ «կրճատելով աշխատողներին՝ մենք կրճատում ենք համախառն սպառումը և էլ ավելի իջեցնում ՀՆԱ աճի տեմպը»: «Վիճակը վատ է», 168 ժամ, դեկտեմբերի 22-24, 2018, https://168.am/2018/12/21/1060222.html:

Տնտեսական զարգացման ներուժի ձևավորման ու գործադրման կառուցակարգերում վճռորոշ են դառնալու ինստիտուտների, տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձրորակ մարդկային կապիտալի գործոնները: Տարիներ շարունակ կարևորվել է, հաճախ նաև գերագնահատվել մարդկային կապիտալը՝ ՀՀ քաղաքացին՝ իր հարուստ փորձով, գիտելիքներով ու ունակություններով[1]:

Զարգացման ներուժի բացահայտման ու առավելագույնս կենսագործման հարցում որևէ կերպ չպետք է ստորադասվի գիտությունն ու կրթությունը, մինչդեռ, երկրում դեռևս տարանջատված ու համակարգված չեն գիտության արդյունավետ կազմակերպման կառուցակարգերը: Գիտական ու կրթական համակարգերի մասշտաբային և մեր տնտեսության համար հիմնասյուն հանդիսացող խնդիրների արմատական լուծումները պահանջում են կոնցեպտուալ նորովի մոտեցումների առաջադրում:

«Բարձրագույն կրթության և գիտատեխնիկական գործունեության մասին» միասնականացված և հետապնդվող նպատակներին ուղղված իրատեսական օրենքի ընդունումը նաև նախադրյալներ պետք է ստեղծի կենսական անհրաժեշտություն ունեցող գիտատար ռազմարդյունաբերական համալիրի գործարկման ու զարգացման հիմնախնդիրների լուծման համար:

4. Մնուցման աղբյուրը բազմահարթակ ներդրումային համակարգն է: Հայաստանի հզորացմանն ուղղված ներդրումային ակտիվների համախումբը կարող է իրագործվել բազմահարթակ (եռաստիճան) ներդրումային ֆոնդերի միջոցով[2]: Համակարգի մասնակիցներն են լինելու՝

- Հայաստանի սուվերեն ֆոնդը.
- Համահայկական ներդրումային ֆոնդը (Pan-Armenian Investment Fund).
- Հատուկ նպատակների համար ստեղծվող և մասնագիտացված ֆոնդերը:

Այս ֆոնդերը լինելու են փոխկապակցված և գործելու են փոխլրացման ու մասնագիտացման սկզբունքներով: Թիրախը լինելու է մի համակարգ, որի ակտիվները հեղինակների գնահատմամբ ապահովելու է Հայաստանի ՀՆԱ-ի լրացուցիչ 1,5-2,0% տարեկան հավելաճ:

---

[1] Մեթոդիկաներից մեկով (The Human Capital Project, WB 2018) Հայաստանի համար մարդկային կապիտալի համաթիվը 57 է, այսինքն՝ մեր մարդկային կապիտալը 43 %-ով ոչ արտադրողական է (մեթոդիկայի հիմքում ընկած են ամբողջական կրթության և լիարժեք առողջության հաշվարկային բնութագրերը):

[2] Ներդրումային ֆոնդերի կառուցվածքի ու գործադրման կառուցակարգերի մոտեցումները մշակվելու են «կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի կողմից:

Հայաստանի պարագայում, որտեղ առկա է բյուջետային պակասուրդ և պետական պարտք, սուվերեն ֆոնդի ստեղծման և ակտիվների գեներացման կառուցակարգերը տարբերվելու են միջազգային ֆինանսական շուկաներում շրջանառվող 8,0 տրլն ԱՄՆ դոլարին հասնող ակտիվներին տիրապետող երկրների կառուցակարգերից:

Հայաստանի Սուվերեն ֆոնդի սկզբնական ակտիվների ձևավորման աղբյուր են հանդիսանալու «հանրային նշանակության ձեռնարկությունները», որոնց կարգավիճակը սահմանվելու է օրենքով և ներառելու է հանքարդյունաբերության ձեռնարկությունները, ֆինանսական և մենաշնորհային դիրք ունեցող կազմակերպությունները, ընկերությունները, որոնց արժեթղթերը ցուցակված են ֆոնդային բորսայում:

Pan-Armenian Investment Fund-ի խնդիրը սփյուռքի ֆինանսական ներուժի վերափոխումն է՝ զգայական հայրենասիրությունից դեպի ինստիտուցիոնալ լուծումներ:

Առանցքային քննարկման առարկա պետք է հանդիսանան նպատակային և մասնագիտացված ներդրումային ֆոնդերի ձևավորման, ունեցվածքի կապիտալացման և համակարգի կառավարման հիմնահարցերը, որոնց կարևորագույն պայմանը բարեփոխումներն են:

Ինստիտուցիոնալ բարեշրջումների էությունը ներդրումների ռիսկայնության կրճատման առումով պետք է արտահայտվի նրանում, որ ներդրողը գործ ունենա բարենպաստ գործելու ու իր պաշտպանվածության օրենքով տրվող երաշխիքի և ոչ, դիցուք, նախարարի ու այլ բարձրաստիճան պաշտոնյայի հետ «ձեռքսեղմման երաշխիքի» հետ:

5. Նոր ուղեծիր դուրս գալու գրավականները ինստիտուցիոնալ և արժեհամակարգային բարեփոխումներն են: Տնտեսական հեղափոխությունը կարող է տեղի ունենալ, եթե բավարարվեն մի շարք պայմաններ:

· Արձանագրվի, որ երբ 2018 թվականը երկրում ձևավորեց նոր իրավիճակ, բնավ չի նշանակում, որ ինքնաբերաբար փոխվեցին նաև տնտեսական որոշումների ընդունման կառուցակարգերը և ավանդույթները, ինչպես նաև տեղի ունեցավ արժեհամակարգի փոփոխություն:

Քաղաքական էլիտաների փոփոխման գործընթացը կարող է ընթանալ շատ արագ, իսկ տնտեսական էլիտաները և համակարգերը դեռ կարող են մնալ կենսունակ՝ չենթարկվելով առանձնապես լուրջ փոփոխությունների, հարմարվելով քաղաքական նոր համակարգին՝ ժամանակի ընթացքում հարմարեցնելով հենց նույն համակարգը իրենց նպատակներին: Ներկա իրավիճակում սա ցանկացած բարեփոխումների գլխավոր մարտահրավերն է, և պետք է փաստել, որ սույն խնդրի լուծումները միայն ուժային մեթոդները

լինել չեն կարող: Լուծման գլխավոր ճանապարհը համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումն է:

· Արձանագրվի, որ այն ինստիտուտները և արժեհամակարգը, որոնք այսօր մեր երկրում գոյություն ունեն, ձևավորվել են խորհրդային հզոր կայսրության փլուզման պայմաններում և փաստացի պատերազմական իրավիճակում ու շրջափակումներով պայմանավորված, լրացուցիչ տրանսակցիոն ծախսերը բնավ չեն նպաստում սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեծիր դուրս գալու նպատակին[1]:

· Քաղաքական էլիտան պետք է կամք դրսևորի՝ այդպիսի բարեփոխումներ իրականացնելու համար և ունենա երկարաժամկետ պլանավորման հնարավորություն: Այս երկու պայմանները խիստ փոխկապակցված են, քանի որ ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքները կարող են տեսանելի լինել միայն երկարաժամկետ կտրվածքով: Հետևաբար, քաղաքական էլիտան ոչ միայն կամք և պատրաստակամություն պետք է ունենա, այլ նաև որոշակի վստահության քվե: Այսօր վստահաբար կարելի է փաստել, որ սա հենց այն պահն է, երբ այդ երկու պայմանները մեր երկրում կարող են արդյունավետ մեկտեղվել:

· Այս բարեփոխումները կարող են հաջողություն արձանագրել միայն քաղաքական, տնտեսական և արժեհամակարգային փոփոխությունների միաժամանակյա իրականացման պայմաններում: Ներդաշնակեցման սկզբունքը հաջողության գլխավոր նախապայմանն է: Բացի դրանից՝ գործողություններից՝ կարևոր նախապայման է նաև ինստիտուցիոնալ սահմանափակումների և պարտադրանքի կառուցակարգերի համադրության սկզբունքը:

· Անհրաժեշտ է գտնել ճիշտ համադրություն կառավարության ամենօրյա օպերատիվ աշխատանքների և երկարաժամկետ բարեփոխումների իրականացման միջև: Հաճախ այդ նպատակները կարող են ունենալ շահերի բախումներ և հակասել միմյանց, որոնցից խուսափելու կամ գոնե մեղմացնելու համար որոշ երկրներում ստեղծվում են փորձագիտական խմբեր, որոնք օժտված են խորհրդատվական և մշտադիտարկում իրականացնելու գործառույթներով:

6. Օրակարգային գերխնդիրը պետության կայացվածությունն է սահմանադրականության մակարդակի բարձրացմամբ: Պետության կայացվածության առանձնացվող չափորոշիչներից են պաշտպանունակությունն ու

[1] Հայտնի է, որ «ոչ արդյունավետ» ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներն ունեն երկար գոյատևելու հատկություն: Ինստիտուցիոնալ հետազոտություններում դա հաճախ անվանում են QWERTY էֆեկտ կամ «ուղեծրի» էֆեկտ: Նոր ուղեծիր դուրս գալու իրական հնարավորությունը ենթադրում է արդյունավետ ինստիտուտների ձևափոխումը՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և գոյություն ունեցող արժեհամակարգը:

անվտանգային խնդիրների բավարար լուծումները, իրավունքի գերակայությունը, քաղաքական ինստիտուտների կենսունակությունը, աշխատանքի արտադրողականությունը, վարչարարական կարողությունների մեծացումը և այլն: Ինտեգրալ, ամփոփ չափորոշիչի դերում կարող է հավակնել երկրի բարեկեցության ցուցիչը:

Հայաստանի տնտեսության հետագա վերելքը, որն այլևս «վերականգնողական» չէ, մեծապես պետք է կանխորոշվի ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարելավումներով: Սոցիալական և տնտեսական առաջընթաց կարող է երաշխավորվել միայն սահմանադրականության դեֆիցիտի հնարավորինս կրճատմանը համընթաց[1]:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիր ների համատեղ (ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ինստիտուտների համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Պատճառահետևանքային կապերի հանգույցում պետք է բացահայտվեն առաջընթացի խոչընդոտներն ու խթանիչները, դրանց դիրքավորումները և մշակվեն իրավատնտեսական կարգավորումների գործուն կառուցակարգեր: Մեր կողմից արդեն իսկ իրականացված վերլուծությունները ցույց են տվել, որ հանրապետության բարեկեցության ապահովման համար, որքան էլ վճռորոշ լինեն ձևավորված քաղաքական և տնտեսական ինստիտուտների որակն ու կարողունակությունը, միևնույն է, կարևոր նշանակություն ունենալու են ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը:

Այսպիսով, արտաքին ուժերի շահերի սպասարկումից ձերբազատված բարեփոխումները և, վերջապես, տնտեսաիրավական կարգավորման ողջ զինանոցի գործադրումը, որն ուղղված է տնտեսական հեղափոխության իրականացմանը, այն է՝ զարգացման նոր ուղեգիծ դուրս գալու որոշակի նախադրյալների ստեղծմանը, պահանջում է լուծումների ինստիտուցիոնալացում: Սա է տնտեսական զարգացման արդի օրակարգը:

Սահմանադրականության մակարդակի բարձրացումը կարող է իրական երաշխիք հանդիսանալ բարեկեցիկ ու հզոր Հայաստանի կերտման գործում:

---

[1] Պատրանքներից զերծ պետք է մնալ և հասարակության համար չձևավորել արագ արդյունքների սպասումներ, որը միայն կնվազեցնի վստահությունը կառավարության նկատմամբ: Իրավունքի գերակայությունն ու հակակշիռների, զսպող մեխանիզմների ցուցիչների բարելավումը կընթանա ոչ շուտ քան 2-3 տարում: Մեր մտածողությունը ի վերջո կփոխվի ոչ շատ արագ: Հետևողական ու անշրջելի բարեփոխումները միայն կնպաստեն արդարության հասնելուն և կոռուպցիան իսպառ արմատախիլ անելուն:

ԻՆՉ ԱՆԵԼ ԵՎ ԻՆՉ ՉԱՆԵԼ

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանի և գործարար Արմեն Մարտիրոսյանի մտորումները[1]

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ.– Անժխտելի է, որ հայաստանաբնակներին առնվազն ապակողմնորոշում, ապագայի նկատմամբ անորոշության է մատնում, բայց երբեք չի զգաստացնում կամ հուսադրում իրենց ապագայի վերաբերյալ շրջանառվող տեսակետների բևեռվածությունը՝ զորեղ ու բարգավաճող երկրի մասին հայտարարություններից մինչև պետականության կորստի չարագուշակ կանխատեսումները: Ակներև է, որ այդ տեսակետները դիպաշարեր (սցենարներ) են հանրությանը ոչ հասու տեղեկատվության պայմաններում: Անորոշություններն ու տեղեկատվության պակասը վերաբերում են այն հարցին, թե աշխարհաքաղաքական ինչ գործընթացներ են ընթանում մեր շուրջը (ընդհուպ մեզ առուծախի հանած բանակցային և այլ առումներով), ինչ գործընթացների մեջ ենք ներքաշված: Սցենարները կվերաճեն իրողությունների, մասամբ կամ ամբողջովին, կախված է մեր գործելակերպից՝ լինել այդ ամենի մասնակիցը դիտորդի կարգավիճակո՞ւմ, թե՞ ակտիվ միջամտողի դերում (քանզի չի լինում այնպես, որ երկրի, մարդու սուբյեկտայնությունը ի չիք դառնա, և քեզանից ոչինչ կախված չլինի): Եթե այդպես է, ապա սնանկ է դառնում քո գոյի բովանդակությունը: Այդ անցուդարձում որևէ արդարացում չի կարող ունենալ կրավորական կեցվածքով էլիտայի (իրական իշխանությամբ օժտված կամ քաղաքական որոշումների վրա ազդեցություն ունեցող խմբերի՝ քաղաքական վերնախավի և նրան սպասարկող մտավորականության, սեփականատերերի) պահվածքը՝ ընդամենը պատրվակ բերելով այն պատճառաբանումը, որ «արտահերթ ընտրությունները տվել են բոլոր հարցերի պատասխանները», և, այն վկայակոչելով, մի կողմ քաշվել:

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.– Նորավանքի Տեր Հոր պատմած անեկդոտը հիշեցի: Մի օր ասաց.

– Արմեն, գիտե՞ս ինչ է էլիտան, ովքե՞ր են նրանք:

– Տեր Հայր, երևի գիտեմ, էլի:

– Դժվար դու ճիշտը իմանաս: Էլիտան այն մարդիկ են, որոնք ուզում են, որ պետությունը իրեն էլի տա, էլի տա ու էլի տա:

---

[1] Տե՛ս http://consteconom.ysu.am/images/products/pdf/0%D4%BB%D5%86%D5%89%20%D4%B1%D5%86%D4%B5%D4%BC%20%D6%87%20%D4%BB%D5%86%D5%89%20%D5%89%D4%B1%D5%86%D4%B5%D4%BC.PDF

Հ.Ս.– Երկրի բարեկեցիկ ապագայի կերտմանը միտված իշխանությունների ձեռնարկումները «խաղաղության դարաշրջանի» 3 խորագրով պետք է բաց/փակ, շիտակ քննարկումների, զարգացման սցենարների մանրակրկիտ դիտարկման առարկա դառնան: Համոզված ենք, որ փողոց դուրս գալով, ապավինելով արտա- և խորհրդարանական ընդդիմությանը, իրենց սպասել տվող հարցերը միանգամից չեն լուծվելու: Բարորակ ելքերի համադարմանը, բանալին հնարավոր լայն ընդգրկմամբ դիսկուրսներն են լինելու ամենատարբեր հարթակներում: Շատ կարևոր է՝ ինչ հարցերի շուրջ է լինելու «ինչ անել»-ը:

Ա.Մ.– Այո, համաձայն եմ, սակայն իշխանությունը, ֆորմալ բաց լինելով երկխոսության համար, իրականում փակ է. նա ոչ թե մերժում է երկխոսության առաջարկը, այլ համաձայնում, որ կլսի, սակայն չի լսում: Անգամ եթե երբեմն լսում է՝ չի պատասխանում, իսկ անգամ եթե շատ երբեմն պատասխանում է, ապա դա քո հնչեցրած հարցի պատասխանը չէ: Լիդերը երբեք չպետք է ասի, որ նա լիդեր է, ընտրված, և իշխանության եկած ուժը կարիք չունի ասելու, որ նա ընտրվել է: Եթե տղամարդն անընդհատ հիշեցնում է, որ տղամարդ է՝ ուրեմն ինչ-որ բան այն չէ: Երբ որ մարդ անընդհատ Աստծո անունն է տալիս՝ նույնպես խնդիր կա՝ հակասում է պատվիրաններին:

Հ.Ս.– Զթողնելով սոսկ իշխանությունների պատասխանատվությանը (երբ պասիվ ենք հետևում իրադարձությունների զարգացմանը) էլիտա-իշխանություն-ընդդիմություն տարաբնույթ ֆորմատներով կազմակերպվող կլոր սեղաններ-դիսպուտներում կպահանջվի քննության առնել ու հստակ ձևակերպումներ տալ առաջիկա անելիքների շուրջ, մասնավորաբար.

- մեզ ո՞ւր կտանի զուտ ՌԴ և ԵԱՏՄ կողմնորոշվածության մակույկը.
- ինչպե՞ս են զուգորդվելու ԵՄ-ում և ԵԱՏՄ-ում մեր մասնակցային գործընթացները.
- որո՞նք են արտաքին քաղաքական կողմնորոշումների հնարավոր այլընտրանքները, այդ թվում՝ նաև Արցախի Հանրապետության համար.
- ի՞նչ չափով են ներազդելու և կանխորոշելու արտաքին հարաբերություններում կողմնորոշումները ՀՀ տնտեսական զարգացման վրա: Արտաքին քաղաքական վեկտորի այս կամ այն սցենարի գործարկման պայմաններում ՀՀ երկարաժամկետ ու կայուն տնտեսական զարգացման մոդելի ուղենիշների ընտրության հիմնահարցը առանցքային է մնալու:

Ա.Մ.– 1980-ականների վերջերին գործող էլիտան, որը մասամբ դարձավ Հայոց համազգային շարժում, առաջ բերեց 3-րդ ուժի բացառման սկզբունքը՝ որպես քաղաքական բաղադրիչ: Առնվազն վերջին 25 տարվա ընթացքում Ռուսաստանի գործոնը քաղաքական գործընթացներում գնալով մեծանում է, և, կարծում եմ, այդ գործոնը հավասարակշռելու համար անհրաժեշտ է

ակտիվացնել հարաբերությունները աշխարհի այլ պետությունների հետ՝ փոխշահավետության սկզբունքով, և որ այդ փոխգործակցությունը առնվազն մեզ համար լինի հանուն Հայաստանի և ուղղված չլինի որևէ այլ պետության դեմ: Ինչ վերաբերում է տնտեսությանը, ապա այստեղ երևի ավելի հեշտ է: Ինչպես ասում են՝ փողը ազգություն չունի, և Հայաստան ուղղված ցանկացած ներդրում, որը կնպաստի ավելացված արժեքի ստեղծմանը, նոր աշխատատեղերի բացմանը, ոլորտային բիզնես-մշակույթների զարգացմանը, կրթության և գիտության պահանջարկի մեծացմանը և այնուհետև՝ դրանց բավարարման մեխանիզմների ստեղծմանը, անշուշտ, գովելի է, ընդունելի:

Հ.Ս.– Զարգացման մոդելի դիմագիծը պարզելու և առաջացող մարտահրավերները ներկայացնելու համար պետք է առանձնացնել «ինչ անել»-ի օրակարգային շրջանակը: Հետճգնաժամային հորձանուտների խաղաղեցումից հետո, այնուամենայնիվ, գլխավոր և գերագույն ուղենիշը լինելու է տնտեսական հեղափոխություն կոչվող համաշխարհային առաջադիմական իրողության բացահայտումն ու դրա գործարկումը: 44-օրյա պատերազմը և COVID-19-ի իրողություններից հետո տնտեսական հեղափոխության կանխադրույթը մեր երկրում ենթարկվեց լուրջ տրանսֆորմացիայի՝ նկատի ունենալով ելակետի փոփոխությունը և հետճգնաժամային իրավիճակի բարելավումը: Տնտեսական զարգացման բեկված ուղեգծի շտկումը պայմանավորված է լինելու ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հավելյալ ջանքերի (ճգնելու) ու ծախսերի ներդրումով: Ամբողջ թափով տնտեսական հեղափոխության իրագործելիությունը մեծապես պայմանավորված է լինելու նրանով, թե որքանով մեզ կհաջողվի երկրում սկիզբ առած (նկատենք՝ ձգձգումներով ընթացող) ժողովրդավարական, ինստիտուցիոնալ, քաղաքական ու իրավատնտեսական բարեփոխումներն ու կարգավորումներն ուղղորդել էֆեկտիվ տնտեսություն ունենալուն: Տնտեսական հեղափոխության տրանսֆորմացիային պետք է հետևի նոր հնարավորությունների բացահայտման փնտրտուքը: Որքան էլ տարբեր լինեն նոր միջավայրի ու հնարավորությունների դրսևորումները, օպերատիվ կառավարմանը պետք է ամեն կերպ վերադասվեն այնպիսի ռազմավարական խնդիրների վերաբերյալ լուծումները, ինչպիսիք են.

- երկրի անվտանգությունն ապահովող պետական կառավարման համակարգի անխափան ու էֆեկտիվ աշխատանքը.
- տնտեսական հեղափոխության մոդելի արմատավորումը, որքան էլ դժվարին լինի:

Տնտեսական հեղափոխության մոդելը ենթադրում է կառուցվածքային ու նորարարական բարեփոխումների հիման վրա տնտեսական քաղաքականության բարելավումը՝ նոր միջավայրում ռեսուրսների օպտիմալ օգտագործման ու արտադրողականության շեշտակի բարձրացման չափանիշներով, բիզնեսի

պայմանների բարելավումը նախևառաջ դատաիրավական համակարգի գործունեության շեշտակի բարեփոխումների, «քաղաքական իշխանություն-բիզնես» տարանջատման, «պետություն–մասնավոր հատված» սերտ համագործակցության և այլ ուղղություններով:

Ա.Մ.- Կարծում եմ՝ մինչ այս պետք է Հայաստանի բաճկոնից մաքրել, լվանալ այն բոլոր բծերը, որոնք փչացնում են նրա իմիջը. գործադիր և դատական իշխանության կողմից կատարված հանցանքները Մարտի 1-ի շուրջ, նախկին սեփականատերերից ունեցվածքը խլելու, փոքր բաժնետերերի իրավունքների ոտնահարման գործերը, Ամուլսարի թնջուկը: Բացահայտել և մաքրել իշխանություն-բիզնես փոխկապակցվածության հանցավոր կապերը և ստեղծել միջավայր, որ այս իշխանությունը հնի հիվանդությամբ չվարակվի:

Հ.Ս.- Սրանք սոսկ ներքին խնդիրներն են, որով պետք է ներբեռնվի տնտեսական հեղափոխության լոկոմոտիվը: Վերջինս կլինի այնքան հզոր ու արագընթաց, և բոլոր խնդրահարույց հանգույցներում կհաղթահարվեն «դժվարանցանելի բարձունքներն ու ոլորանները», որքանով որ լավորակ կլինի Սահմանադրությունը:

Ա.Մ.- Այստեղ կուզենայի պատասխանել Բրոդսկու բառերով՝ «Ամեն կերպ խուսափեք ինքներդ ձեզ զոհի կարգավիճակ վերագրելուց: Ինչքան էլ անտանելի լինի ձեր վիճակը, աշխատեք չմեղադրել դրսի ուժերին՝ պատմությանը, պետությանը, ղեկավարությանը, ռասաներին, ծնողներին, լուսնային ցիկլին, մանկությանը, անժամանակ գիշերաթասին նստելուն և այլն: Ճաշացանկը ծավալուն է ու ձանձրալի: Մեղքն ինչ-որ բանի վրա գցելու պահին դուք կորցնում եք սեփական ուժերով հարց լուծելու վստահությունը: Եթե այս փաստարկը դիպուկ չեք համարում, մտածեք գոնե անպատասխանատվության այն վակուումի մասին, որը հեշտությամբ լցնում են չարքերն ու դատարկախոսները. չէ՞ որ կաթվածահար կամքը հրեշտակներին սիրելի չէ: Ընդհանրապես սովորեք կյանքը հարգել ոչ միայն դրա գեղեցկությունների, այլև դժվարությունների համար: Դրանք խաղի մի մասն են, ու լավն այն է, որ սուտ չեն: Ամեն անգամ, երբ դուք տագնապի մեջ եք, երբ ձեզ մոտ խնդիրներ ու դժվարություններ են առաջանում, հիշեք. կյանքն է, որը ձեզ հետ խոսում է իրեն հասկանալի միակ լեզվով»:

Հ.Ս. - Որքան լավորակ է գրավոր սահմանադրությունը նրանում ամրագրված սկզբունքներով, դրույթներով ու նորմերով, որ վերաբերում են իշխանությունների տարանջատմանը, զսպման ու հակակշիռների կառուցակարգերին, ներքին ու արտաքին սպառնալիքների դիմակայությանը, հանրային կյանքին ու տնտեսությանը, այնքան դյուրին են հաղթահարվելու տարաբնույթ դժվարությունները: Քանի որ սահմանադրություններում կատարվող հիմնարար փոփոխությունները հաճախ չեն նպաստում մարդկային զարգացման 7

ցուցչի բարելավմանը (այն ցույց է տրվել էմպիրիկ հետազոտություններով), հետևաբար հաճախակի փոփոխությունները միշտ չէ, որ արդարացված են: Մեր պարագայում սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը աներկբա է: Սուբյեկտիվ գործոնի դերի ու կամայականությունների շրջանակի նվազեցումը, տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումը, քաղաքական ու տնտեսական հնարավոր մենիշխանության կանխումը, ընթացիկ ու հեռանկարային առաջնահերթությունների հստակեցումն ու դրանց համարժեք ծրագրանպատակային քաղաքականությանը միտված առաջարկությունների մշակումն այլընտրանք չունի: Գործող սահմանադրության օրակարգում տնտեսական հեղափոխության ուղեգիծ դուրս գալու հնարավորությունները պետք է փնտրել առաջընթացի խոչընդոտներ ու խթանիչներ առաջացնող հանգույցներում՝ մատնանշելով դրանց իրագործման իրավատնտեսական գործուն կառուցակարգերը: Տնտեսական հեղափոխության գործարկման մոդելների առանձնահատկությունը միջգիտակարգային թնջուկների բացահայտումն է: Դրա էությունը խնդրի զուտ տնտեսագիտական պարկուճից դուրսբերումն ու նման մոտեցումից ձերբազատումն է: Որպես միջգիտակարգային խնդրի օրինակ կարող է լինել գիտակրթական, նորարարությունների, մշակութային, վարքագծային խնդիրների համալուծ դիտարկումը: Երկրի հեղափոխական զարգացման նշմարվող կաշկանդումը (հուսով ենք, որ այն չի ուժգնանա. նկատի չունենք կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված անխուսափելի ազդեցությամբ)՝ պայմանավորված զարգացման սցենարների «հիմնավորումով», չի կարելի քննարկել նեղ տնտեսագիտական դիտանկյունից՝ ստորադասելով երկրաքաղաքական, ժողովրդավարական, դիվանագիտական, ինստիտուցիոնալ, բարոյահոգեբանական, մշակութային ներազդման միջոցները: Զարգացման սցենարների տեսանկյունից այդ խնդիրների շարքում առանցքային են լինելու զուգահեռաբար գործող երկու միություններում ինտեգրման ճշգրիտ կողմնորոշումները: Ակներև է, որ դրանք խնդիրներ են առաջացնելու, քանզի ԵՄ հարևանության ու գործընկերության (այս ծրագրերով ակնկալվում է 2,6 մլրդ եվրոյի 8 աջակցություն) և ԵԱՏՄ ծրագրերը միշտ չէ, որ ներդաշնակ են պարտավորությունների, կանոնակարգերի, սերտիֆիկատների և այլ հարցերում:

Ա.Մ.- Մինչև Սահմանադրությունը փոխելը մենք պետք է մի քանի պայմանավորվածություն ձեռք բերենք, որոնք եթե կուզեք՝ կասենք՝ չգրված օրենք, թե կուզեք՝ կգրենք՝ սահմանադրություն: Հայաստանում Հաջողության ճանապարհը պետք է պայմանավորված լինի բացառապես գիտելիքներով, հմտություններով, շնորհքով, թափանցիկությամբ, ճշմարտության փնտրտուքով և ձգտմամբ: Մենք, որպես հանրույթ (ազգ, էթնոս, սոցիալական խումբ) պիտի պայմանավորվենք, որ ծանոթ-բարեկամ, քավոր, սանիկ, կուրսեցի,

բաջանաղ, զոքանչ գործելաոճը պետք է ստորադասվի ռազմավարական մտածողությանը, փոխվեն ավանդույթներն ու սովորույթները: ԽԾԲ-ն պետք է դառնա ՄԵՂՔ ԵՎ ԱՄՈԹ, քանի որ սրանք են, որ քանդել են մեր ՏՈՒՆԸ: Ու եթե չպայմանավորվենք, նոր փորձանքներ ենք բերելու մեր գլխին, մեր ՏՈՒՆ:

Հ.Ս.- Տնտեսական հեղափոխության օրակարգի հարցերի շրջանակը բազմաթիվ է, սակայն դրանցում առանձնանում է այդ օրակարգի՝ մեր կողմից շեշտադրվող, որոշիչ հարցադրումներից մեկը, որն է գիտության գիտելիքահենք կառավարումը: Երկրի զարգացման, նրա տնտեսությունը լճացումից դուրս բերելու և այնուհետ հզորացնելու գործում, գիտության արդյունավետ, տնտեսագիտահենք կառավարումը բացառիկ նշանակություն ունի, որում առանձնացվում են մի շարք առաջնահերթ հիմնախնդիրներ: Առաջինը վերաբերում է ՀՀ գիտության կառավարման բարեփոխման մոդելի ընտրությանը: Այն կոչված է լինելու առավելագույնս նպաստելու տնտեսության կառուցվածքային և տեխնոլոգիական արդյունավետ բարելավումների իրականացմանը: Բարելավված կառուցվածքում իր ուրույն տեղը պետք է ունենա ռազմարդյունաբերական համալիրը (ՌԱՀ):

Ա.Մ.- Կարծում եմ, որ գիտությունը ակադեմիական տիրույթից պետք է քայլ կատարի դեպի համալսարանական և ձեռնարկատիրական տիրույթներ: Համալսարանների ամբիոնները պետք է վերածվեն գիտության օջախների: Ամբիոնների աշխատանքը պետք է չափվի փողով, այո, գիտական աշխատանքով վաստակած փողով: Ոչ կիրառական գիտությունների դեպքում մենք կարող ենք գիտական հեղինակավոր ամսագրերում տպված հոդվածները նույնպես վերածել փողի: Ու այս դեպքում մենք կարող ենք համեմատել արտասահմանյան գրականության ամբիոնի արդյունավետությունը, ենթադրենք՝ տեսական ֆիզիկայի ամբիոնի արդյունավետության հետ: Մի կողմից՝ ձեռնարկությունները պետք է մտնեն կրթական տարածք, ներգրավեն գիտնականներին և գիտնականների խմբերը և դուրս գան նոր մակարդակի վրա: Մյուս կողմից՝ գիտնականների և ձեռներեցների կողմից նոր ստեղծվող ստարտափները կստեղծեն գիտահենք տնտեսության ևս մեկ գիտահենք օղակ:

Հ.Ս.- Տնտեսության կառուցվածքում ՌԱՀ-ի հիմնավորված «կոնֆիգուրացիայի» մեխանիզմը կարող է խարսխվել հետևյալ համալուծ օղակների փոխգործակցման վրա.

· ռազմական գերատեսչության պետական պատվերով նախանշվում է առաջիկա տարիների սպառազինությունների պահանջարկը՝ հնարավոր պատերազմական իրավիճակներում պաշտպանական ու հարձակողական զինանոցների արդիականացման ու համալրման հնարավորինս մանրակրկիտ

հաշվառմամբ, «ռազմական տնտեսություն» գիտակարգի պահանջներին համապատասխան,

· պետական պատվերը «իջեցվում է» շահառու գիտահետազոտական կազմակերպություններին՝ համապատասխան նկարագրիչների՝ ռազմական «պրոդուկտի» բաղադրիչների կազմի ու ծավալների մասին տեղեկատվությամբ,

· անվտանգային խնդիրների լուծման մշակումները երկրի, այդ նպատակներով ստեղծված ռազմաքաղաքական կառույցի հավանությանն արժանանալուց հետո հասցեագրվում են փորձարարական-կոնստրուկտորական ստորաբաժանումներին և արտադրությանը:

Ա.Մ.- Որպեսզի Հայաստանյան ՌԱՀ հիմնարկները կարողանան տալ մասսայական հոսքագծային արտադրանք, պետք է ստեղծվի մասնավոր-պետություն օղակ, որը կարող է ունենալ թե՛ բաժնետիրական ընկերության տեսք՝ պետական և մասնավոր մասնաբաժիններով, թե՛ մասնավոր ընկերության, որտեղ կաշխատեն պետական կառույցների ներկայացուցիչներ (արտաքին գործերի, ազգային անվտանգության): Կարծում եմ՝ նման օրինակ է ցանկացած բանկի աշխատանքը, որտեղ այդ աշխատանքին հետևում է թե՛ Կենտրոնական բանկը և հուսով եմ՝ Ազգային անվտանգության ծառայությունը: Այս օղակը կնպաստի, որ Հայաստանում արտադրվող ռազմարդյունաբերական արտադրանքը գտնի արտերկրի նոր շուկաներ, քանի որ միայն Հայաստանի զինված ուժերը չեն կարող տալ այնքան պատվեր, որ այս արտադրությունները ունենան «հոսքագծային արտադրանք»: Մյուս կողմից՝ այս օղակը կարող է նպաստել, որ բանակում եղած բարոյապես և արդյունավետությամբ հին զենքերը վաճառվեն այլ երկրներում, և փոխարենը ձեռք բերվի նոր սպառազինություն:

Հ.Ս.- Երկրորդ հիմնախնդիրը ՀՀ գիտության արդյունավետ կառավարման ամբողջական և համապարփակ ցանկի բացահայտումն է: Դա ինքնին բարդ խնդիր է, որը ներկայումս լուծվում է. բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ առաջադրվում է հետազոտական կազմակերպություններին ու խմբերին: Ընդ որում՝ այդ միջոցների առաջանցիկ չափերը պետք է ամրագրվեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մինչև 15-20 տարվա հեռանկարային ու միջնաժամկետ ծրագրերում, նորմատիվային այլ փաստաթղթերում: Երրորդ հիմնախնդիրը գիտությանը հատկացվող միջոցների (այսօր մոտ 30 մլն ԱՄՆ դոլարի չափով) բաշխման չափանիշների հստակեցումն է գիտության զարգացման հայեցակարգերում ու օրենսդրական-նորմատիվային տարբեր փաստաթղթերում, որն ստեղծել է ինստիտուցիոնալ լուրջ ճեղքվածք: Այսուհանդերձ, միջոցների արդարացի բաշխման «ճեղքվածքը»

կարող է մեղմվել, եթե «ինչպես բաշխելը» ստորադասվի այն կանխարգելող հետևյալ խնդիրների լուծմանը.

· ճշգրտվի անվտանգային խնդիրների լուծման հնարավորությունները, տարածաշրջանում պատերազմական գործողություններում մեկուսի և/կամ դաշնակցային եղանակներով դիմակայելու հարցը (առանց այս խնդրի լուծման կարևորությունն ընդգծելու՝ նկատենք, որ այն երկրի կառավարման ռազմաքաղաքական համատեքստում է):

· ճշգրտվեն ՀՀ-ում իրականացվելիք հետազոտություններից կառավարության սպասելիքները (սպառնալիքների կանխման արագ արձագանքման համակարգեր և այլն).

· սահմանվեն գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները և ծավալները (հիմնարար և կիրառական հատվածներով՝ ըստ ոլորտների հնարավոր մաքսիմալ տարբերակմամբ).

· սահմանվեն հետազոտությունների վերջնարդյունքների նկատմամբ պահանջները՝ դրանց իրականացման ժամկետների նախանշմամբ:

Գիտական արդյունքների շահառուների ցանկի կազմավորումը ինքնին բարդ խնդիր է, որի ձևավորումը կարող է ներկայացվել հայտատուների և պատվիրատուի նախաձեռնության զուգորդմամբ: Հետազոտությունների ցանկի ընտրության, կառուցակարգերի, ծավալների և այլ բնութագրերի ձևավորման հնարավոր դրվագներից մեկը տեսնենք ՌԱՀ-ի օրինակով: Որոշումների կայացման նկարագրված սխեմայով առաջնորդվելիս, որքան էլ պարադոքսալ հնչի, գիտական հիմնավորվածությունը կարող է հանգեցնել այնպիսի եզրահանգման, որ ՌԱՀ-ի լայնամասշտաբ գործարկումը նպատակահարմար չհամարվի, և որ անհրաժեշտ սպառազինությունները կամ դրանց ճնշող մասը գնվի պետական պատվերով՝ միջոցներն ուղղելով առավել մրցունակ ճյուղերի զարգացմանը և հավելյալ եկամուտներով ՌԱՀ-ին հատկացվելիք ֆինանսական միջոցների համալրմանը: Չի բացառվում նաև, որ գիտական հիմնավորվածությամբ կարող է հաստատվել տեսակետ, ըստ որի՝ ՌԱՀ-ը կարող է առանձին պրոդուկտների մասով ծավալվել և դառնալ ՀՆԱ-ի արտահանման զգալի բաղադրիչ: Բարձրացված հիմնահարցերի վերաբերյալ լիարժեք պատասխանների ակնկալիքը, պաշտպանական համակարգերի ինստիտուցիոնալ արդյունավետության տեսանկյունից, պահանջում է գիտության բազմասպեկտ հիմնախնդիրները քննության առնել կառավարման «բարձր դիրքերի» համատեքստում: Նկատի ունենալով մշակումների և դրանց արդյունաբերական նմուշների, փորձակոնստրուկտորական աշխատանքների, նախագծման և փորձնական արտադրանքի նոր տեսակների և զանգվածային արտադրություններում ներդրման բարդ և աշխատատար գործընթացը՝ հիմնավորված է թվում ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության

կողմից «Գիտության և տեխնիկայի, տեխնոլոգիական նորարարական ուղղությունների» 10-15-ամյա ծրագրի մշակումն ու դրա հետագա գործարկումը: Այդ ծրագիրը կարող է մանրամասնվել հնգամյա կամ եռամյա կտրվածքով, որոնք օրենքի տեսքով հաստատվելուց հետո կարող են դառնալ կատարման համար պարտադիր՝ ամենամյա հաշվետվությունը ներկայացնելով Ազգային ժողովի հաստատմանը: Նշված օրենքների նախագծերը մասնագիտական հանրության քննարկումից հետո պետք է վերաճեն ու դառնան ոլորտի զարգացման համալիր նպատակային ծրագրեր:

Ա.Մ.- Աշխարհում արդեն վաղուց գիտության լոկոմոտիվ են դարձել մասնավոր ընկերությունները: Intel, IBM, Dupont, Samsung, Amazon, Virgin, Space X, Apple, Microsoft, Google, Meta և այլ ընկերություններ: Կարծում եմ՝ Հայաստանը պետք է անցնի նույն ճանապարհը: Համալսարաններում և մասնավոր ընկերություններում վերը նշված օրինակով պետք է զարգացնել գիտական ներուժը և մասնավոր ընկերությունները, համոզված եմ, այս դերը պատվով կկատարեն: Բայց այս ճանապարհով անցնելու համար պետք է ամրապնդել կրթությունը: Բուհական կրթության պատվիրատուն պիտի դառնա գործատուն՝ մասնավոր ընկերությունը, գիտական հիմնարկը, պետությունը: Գործատուն պետք է կարողանա ձևակերպել պահանջարկը՝ ապագա մասնագետների ցանկը, և իրավունք ունենա մասնակցել բուհի պատվերը ձևակերպելիս՝ մասնակցի ծրագրի կազմմանը, վերահսկի դասապրոցեսի որակը, մասնակցի ընթացիկ և ավարտական քննական հանձնաժողովներում: Սա նաև ենթադրում է հանրակրթության որակի բարձրացում, քանի որ, եթե բուհը չունենա լավ «հումք»՝ չի կարող տալ որակյալ «արտադրանք»: Հանրակրթության որակի ապահովման համար, բացի այն բոլոր ձեռնարկներից, որոնք իրագործվում են կամ կիրագործվեն, պետք է ստեղծվի գիտելիքի և հմտությունների ձեռքբերման, երազանքների իրականացման, երազելու կարողության՝ համապատասխան մշակութային մթնոլորտ: Վերջերս Արցախում կատարված հարցումները երեխաների շրջանում բացահայտել են, որ տղաների մեծ մասը ուզում է դառնալ վարորդ, աղջիկների մեծ մասը՝ մատնահարդար: Մենք մեր երեխաների մեջ ոչնչացրել ենք երազելու կարողությունը: Որպեսզի դա վերականգնենք, պետք է ստեղծենք այնպիսի միջավայր, որը յուրաքանչյուր ընտանիքում կամ գոնե ընտանիքների զգալի մասում կապահովի ծնողի ու երեխայի միջև տեղի ունեցող զրույցի մակարդակի բարձրացում: Մշակույթը միայն երգն ու պարը չեն. իրական մշակույթը պետության երկու քաղաքացիների միջև զրույցի մակարդակն է. թե ինչի մասին են խոսում, ինչից են խոսում երկու ցանկացած քաղաքացի: Կարծում եմ՝ այս խնդրի լուծման բանալիներից մեկը գրադարանների վերականգնումն է, ժամանակակից գրքերով համալրումը և գրադարանավարների մակարդակի բարձրացումը: Նոբելյան մրցանակները սահմանված

են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ոլորտների համար: Պարզ է, որ մաթեմատիկան այս ամենի հիմքն է, մնացած հումանիտար բնագավառը (և ոչ միայն) արտահայտված է գրականության մրցանակով: Գիրքն է, որ պետք է հանդիսանա այլոց փորձի ընկալման, նրանց սխալների բացառման, գիտելիքի և հմտությունների ձեռքբերման աղբյուր: Գիրքը՝ իր բոլոր տրանսֆորմացիաներով հանդերձ՝ էլեկտրոնային գիրք, աուդիոգիրք, յութուբ, նեթլֆիքս, թատրոն, համակարգչային խաղեր և, իհարկե, ավանդական գիրք: Մենք պիտի ստեղծենք այնպիսի միջավայր, որտեղ նոր՝ մինչ այդ չարած սխալն անելը խրախուսելի է, ամոթ չէ, դատապարտելի չէ: Միայն սխալը խրախուսող հանրությունը կարող է դառնալ ինովացիոն, նոր սխալ խթանող: Իսկ հին սխալները պետք է բացառել՝ էլ չանել: Այս ամենին կավելացնեի ակնհայտ չկատարվող հրահանգներ չարձակելը:

Այժմ հակիրճ «ինչ չանել»-ի մասին:

Հ.Ս.- Ոչ ստանդարտ իրավիճակից դեպի զարգացում անցման շրջանը պահանջում է համարժեք, ոչ ստանդարտ, ընդհուպ էքստրաօրդինար մոտեցումներ: Առաջացած խնդիրների գաղափարական վերաիմաստավորումը, ինստիտուցիոնալ լուծումներն ու 14 վարքագծային պահվածքը վերաբերում են իշխանություններին, տնտեսվարող սուբյեկտներին ու քաղաքացիներին: «Ինչ չանել» խորագրով ձեռնարկվելիք քայլերի ոչ ամբողջական ցանկը պատկերվում է հետևյալ կերպ.

· Չհապաղել ՀՀ Սահմանադրության բարեփոխման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների հետևողական իրականացման հարցում:

· Չընդունել չհամակարգված ու վատորակ օրենքներ ու նորմատիվային որոշումներ, որոնք կյանքի չեն կոչվում և չեն լավարկում իրավիճակը:

· Չվարանել գործադրել ամենախիստ օրինական միջոցներ կարգազանց տնտեսվարող սուբյեկտների ու քաղաքացիների նկատմամբ:

· Չչարաշահել ու դրոշ չդարձնել ամեն կարգի ընտրության արդյունքների վկայակոչումը, հատկապես երբ ապացուցված է, որ մեծամասնության ընտրությունը, որոշակի իմաստով, միշտ չէ, որ խելամիտ է (այս պնդման հիմնավորումը կարելի է տեսնել Էրրոուի թեորեմի միջոցով):

· Չազդարարել «խաղաղության դարաշրջանի» մեկնարկը մինչ դրա իրական ու իրատեսական նախադրյալների ստեղծումն ու գործարկումը, այլապես այն կարող է վերաճել վտանգավոր թմբիրի:

· Չստեղծել ֆեյք կայքեր, պսևդոբարեպաշտական հիմնադրամներ և այլն, եղածներն էլ տեղորոշել ու հօդս ցնդեցնել (արմատախիլ անել):

· Չհանդուրժել արտերկրում երեխաներ ծննդաբերելու ծրագրավորված գործելակերպը, հատկապես պաշտոնյաների ընտանիքների մասով այդ նպատակով մշակել ու կիրառել սանկցիաներ:

· Զապավինել ամբոխավարությանն ու իրողությունների տարաբնույթ խեղաթյուրումներին՝ շահարկելով մարդկանց աղքատությունն ու ոչ բավարար կրթվածությունը և իրազեկվածությունը:

· Զվարանել, առավել ևս չթաքնվել տեսակետ (դիրքորոշում) հայտնելուց և որևէ կերպ չխանգարել մարդկանց, որոնք իրենց գործը լավ են կատարում, ավելին՝ խրախուսել համարձակ, կրեատիվ լուծումներ առաջադրողներին:

· Զկայացնել պահի թելադրանքով լուծումներ հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում՝ ընդհուպ ընդլայնելով երկրների միությանը, վերազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակը:

Այս համատեքստում արտահայտել բաց/փակ քննարկումներով Հայաստանի դիրքորոշումը Արցախի հարցի խաղաղ կարգավորման վերաբերյալ (Մինսկի խումբ, «Երեք պլյուս երեք»...): Կարևոր է դառնալու մասնագիտական պատճառաբանությունների հիմքով քաղաքական որոշումների ընդունումը:

· Զտրվել քաղաքացիների գույքի ու կապիտալի վերաբաշխման ու վերաբաժանման գործընթացներին՝ տուրք տալով անհարկի սպասումների սպասարկման գայթակղություններին: Ապօրինի գույքի բռնագանձումը կիրարկել «դանդաղ շտապելու» սկզբունքով՝ պիլոտային ոլորտներում ու տեղամասերում հաշվարկելով միջոցառումների սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական հետևանքները:

· Զխախտել սեփականության իրավունքը որպես հասարակության շահերը ցեմենտող (ամրացնող) ինստիտուտ, քանզի այն երկրի ներքին ու արտաքին ներդրումային գրավչության գրավականն է:

Ցանկը շարունակելի է: Շատ կարևոր է նորմատիվային բազայով ամրագրել յուրաքանչյուր «Զ» ժխտական նախածանցի իմպլիմենտացիան:

Քննարկված հիմնահարցերի վերաբերյալ մեր արձանագրումների շատ հիմնավորումներ լուսաբանված են գրավոր հրապարակումներում: Դրանցից կնշեի առանձին վերտառություններ՝ «Էժան կրթությունը ապագա չէ», «Առանց գիտության կարող ենք խարխլել մեր անվտանգությունը» և այլն: Կավարտեի հետևյալ կերպ՝ կրթությունը և գիտությունը պետք է դառնան մեր առաջնահերթություններից առաջնահերթը, մեր իմիջը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԲԽԵՆ ԵՐԿՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՑ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 29 ապրիլի, 2022
https://hhpress.am/hanrapetutyun/2022/10729/

Տնտեսական անվտանգությունը չպետք է տարանջատել ազգային անտանգության համատեքստից, որովհետև այն չի կարող մեկուսի դիտարկվել: Անվտանգությունն անպայմանորեն պայմանավորված է մեր քաղաքական, իրավական, էթնոմշակութային, ռազմական, պաշտպանական, դիվանագիտական ոլորտներում գործելաոճով ու հմտություններով: Այս համոզմունքին է «ՀՀ»-ի «Հյուրասրահի» հյուրը՝ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը: Տնտեսական անվտանգությունը, իբրև ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, ունի իր ենթաբաղադրիչները՝ էներգետիկ, պարենային, ենթակառուցվածքային, լոգիստիկ, տեղեկատվական, կիբեռանվտանգային:

«Ընդհանուր առմամբ՝ տնտեսական անվտանգությունը պայմանավորված է մեր երկրի տեղորոշմամբ անվտանգային համակարգերում: Ինչ է դա նշանակում: Որտե՞ղ ենք հայտնվելու տարիներ հետո, երբ աշխարհում լուրջ հեղաբեկումներ, պատերազմներ, երկրների մասնատումներ ու միավորումներ լինեն: Ինչ ճանապարհ ենք ընտրում մենք՝ Հայաստանն ու Արցախը: Չեմ տարանջատում, որովհետև համոզմունքս միայն զգացական տիրույթում չէ: Անվտանգային, պաշտպանական, ռազմական, տնտեսական հնարավորությունների տիրույթում է: Ինչևէ, հենց նշածս հեղաբեկումների պարագայում որոշարկելով մեր տեղն ու դերը ժամանակակից աշխարհում՝ պետք է կարողանանք նաև տնտեսական անվտանգության խնդիրները լուծել»,– նշում է Հայկ Սարգսյանը: Դրանցից լրջագույններից մեկն այսօր, մասնագետի խոսքով, պարենայինն է, ինչպես աշխարհում: Մեզ մոտ խնդիրն ավելի է սրվում, եթե հաշվի առնենք, որ, օրինակ, հացահատիկով ինքնաբավ երկիր չենք և մեծամասամբ ներկրում ենք: «Չեմ խոսում, որ ներկրում ենք կարագը, բուսայուղը... Պարենային ապահովության առումով հարցեր ունենք, որովհետև տասնամյակներով չենք լուծել շատ խնդիրներ, չենք մտածել գյուղատնտեսական արտադրողականության, արդյունավետության բարձրացման մասին: Այն տեմպը, որով փորձում ենք պարենային ապահովության հարց լուծել, բավարար չէ: Որովհետև մենք մի երկիր ենք,

որն ունի բավարար ջրային, հողային պաշարներ, արև, ինչո՞ւ ենք 10 և ավելի անգամ զիջում արտադրողականությամբ այն երկրներին, որոնք թեև հող չունեն, ջուր չունեն, բայց ինքնաբավ են շատ հարցերում: Սա լուրջ խնդիր է»,– ընդգծեց նա:

«ՀՀ»-ի հյուրը մատնանշում է նաև էներգետիկ անվտանգության խնդիրները: «Ձեր թերթը դրանց մասին մանրամասն խոսում է մշտապես, ուստի չեմ ծավալվի,– ասում է մասնագետը՝ ուշադրություն հրավիրելով միայն մեկ հանգամանքի.– մենք շատ ոգևորված ենք ոչ ավանդական էներգետիկայով, բայց պետք է այդ հատվածին խնամքով վերաբերվենք: ՀԷԿ-երով ուրախանում ենք, թեև զուգահեռ շատ խնդիրներ են ծագում՝ գետերի ջրային պաշարների, ձկնաշխարհի, շրջակա միջավայրի պահպանության առումներով»: Տեղեկատվական անվտանգության կարևորությունից խոսելով՝ տնտեսագետն ընդգծում է. «Տեղեկատվական պատերազմները տանուլ չտալը լրջագույն խնդիր է: Սա բոլոր պատերազմներում կարևորագույն խնդիր է՝ բոլոր ոլորտները ներառած՝ տնտեսությունը՝ հատկապես, ֆինանսական բնագավառը՝ նույնպես»: Լոգիստիկ հարցերը չմոռանանք. սրանք ուղղակիորեն կապված են քաղաքական, դիվանագիտական, ենթակառուցվածքային մի ամբողջ թնջուկի հետ: «Միանգամից շեշտեմ,– նշում է մեր հյուրը,– որպես տնտեսագետ՝ ես այն կարծիքին չեմ, որ կարճ ուղիները երկու կետերը միացնող այն կոորդինատներն են, որոնք դյուրին են և, հետևաբար, ձեռնտու: Մինչդեռ այստեղ անվտանգային խնդիրներ կան: Երաշխավորված երկաթուղամկետայնության խնդիր կա: Տեխնիկական-տնտեսական շատ այլ հարցերին զուգահեռ (նոր մագիստրալներ, միացումներ, կցահանգույցներ) նպատակի խնդիր կա. լավ, գնացքը եղավ, իսկ ի՞նչ ենք արտահանելու: Խնդիրն էապես պայմանավորված է մեր տնտեսության կառուցվածքով»:

Անդրադառնալով վերջինիս, դրա արդյունավետությանը, բարենպաստությանը, բարձր արտադրողականությանն առնչվող հարցին՝ մասնագետը նկատում է, որ այն կարող է այդպիսին լինել, եթե խարսխվի գիտության ձեռքբերումների վրա. «Տնտեսության խնդիրների լուծումը պետք է իրավիճակին համահունչ լինի: Պաշտպանական խնդիրներից ենք խոսում, ուրեմն պետք է գործելակերպն էլ համահունչ լինի, բյուջեի բաշխմանն էլ պետք է նորովի մոտենանք: Ռազմարդյունաբերական համալիրի զարգացումի՞ց ենք խոսում, ուրեմն վերաբերմունքն էլ համապատասխան պետք է լինի»:

Միով բանիվ, ինչպես եզրափակում է Հայկ Սարգսյանը. «Անվտանգության լրջագույն խնդիրներ ունենք: Այսօր Արցախը պետք է ամեն գնով կարողանանք պահել: Մեր գոյապահպանությունը ես սրա մեջ եմ տեսնում: Եվ մեր երկրի տնտեսական տրամաբանությունն ու քաղաքականությունն անպայման պետք է բխեն հենց սրանից»:

Կրթությունն ու գիտությունը՝ գլխավոր առաջնահերթություններ

– Պրն Սարգսյան, Դուք չտարանջատեցիք Հայաստանն ու Արցախը, որովհետև ժողովրդի տարբեր հատվածները չեն բաժանվում, ինչպես և, իհարկե, սփյուռքը...

– Բարեկամներս, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը պետք է լինի ոչ թե անհատական կարծիք, այլ ժողովրդական հավաքական տեսակետ: Չպետք է տարանջատել այս երեք բաղադրիչները, որոնք նպատակաուղղված են միևնույն գաղափարին: Դա հիմնականում ձևավորվում է ժողովուրդների բարեկեցության նպատակի շուրջ: Հաջորդ կարևոր գաղափարը կառուցվում է Արցախի գոյության շուրջ, որով էլ պայմանավորված է Հայաստանի գոյությունը: Տարիներ շարունակ խուսափել են Արցախի կարգավիճակի հիմնախնդրի լուծումից, ինչը հանգեցրել է այսօրվա օրհասական իրավիճակին: Այս թեմայի շուրջ կմտաբերեմ ուսուցչիս խոսքերը՝ կարևոր են վերջնարդյունքները: Իսկ ո՞րն է այդ վերջնարդյունքը. ժողովրդի ինքնորոշման սկզբունքով անկախ պետություն ունենալը: Դա, անխոս, կնպաստի հայապահպանությանը և հայրենազրկման կանխմանը: Արցախն ամեն գնով պետք է պահել. եթե այն կորցնենք, դա ողբերգություն կլինի բոլորիս համար:

– Դուք նախաձեռնել եք սեմինարների շարք, որի նպատակը հայեցակարգային փաստաթղթի մշակումն է: Այդ քննարկումները վեց ուղղությամբ են ընթանում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին գիտական ղեկավարը: Կինդրեի անդրադառնալ սեմինարների վերջնարդյունքին: Ձևավորումից հետո ինչ տեսք կունենա փաստաթուղթը, և, որ ամենակարևորն է, ինչպիսին կլինի նրա կիրառական նշանակությունը:

– Հարցն ի սկզբանե էր մտահոգում մեզ: Երկրի կառավարությունը, խորհրդարանը, մտավորականությունը պետք է լծվեն այդ հայրենանվեր գործին և մեթոդաբանական առումով գտնեն ճիշտ ուղղությունները, որոնք լուծում կտան մեր ազգային խնդիրներին: Սեմինարների նպատակը դա էր: Ընդհանուր լուծում չի գտնվի, եթե այդ խնդիրները մեկուսի դիտարկվեն: Հասարակության մի ստվար զանգված կողմ է ինքնիշխան պետություն ունենալուն և այն պահպանելուն. ես այդ խմբի գաղափարակիցն եմ: Կասկածի տակ առնել, զիջել, վիճարկել ինքնիշխանությունը՝ նշանակում է դանդաղ քայլերով «սպանել» երկիրդ: Իսկ դա կանխելու համար պետք է, որքան հնարավոր է, պաշտպանել պետությունն արտաքին գործոններից ու դերակատարներից, որոնք ստիպում են զիջումներ անել ինքնիշխանության ու պետականության հաշվին: Վերջերս մեր երկրին տրվել էր հատուկ կարգավիճակ, այսինքն՝ կամուրջ էինք համարվում եվրոպական մի շարք երկրների և ԵԱՏՄ-ի միջև:

Որքան էլ գրավիչ է այն, չպետք է դադարել աշխատել ինքնիշխանության պահպանման ուղղությամբ, հատկապես երբ դա զիջելու նախադեպը որոշ դեպքերում ունեցել ենք: Ցավալին այն է, որ հասարակությունը պատրաստակամ չէ մասնակից լինելու այդ գործին: Դրա վառ ապացույցն ընտրություններն են, գլխավորապես՝ վերջինը, որը ցույց տվեց, որ մեծամասնությունն ուղղակի չմասնակցեց ընտրություններին: Դա հղի է անորոշություններով ու ռիսկերով:

Մեր մեթոդական տեսակետի համաձայն՝ նման ազգային-պետական խնդիրները մեկուսի չենք դիտարկում, այլ ընդհանրական ձևաչափով: Քաղաքագիտական վերլուծությունների մեջ, եթե բացակայի իրավական բաղադրիչը, ապա հայեցակարգը կարելի է համարել լուծարված: Դրանք փոխկապակցված են: Հայեցակարգային փաստաթղթի կիրառական վերջնարդյունքներն ավելի նկատելի կլինեն հիմնականում տնտեսական, քաղաքական, իրավական, էթնոմշակութային անվտանգության ոլորտներում: Առանձնահատուկ ցանկանում են նշել ռազմական անվտանգության բաղադրիչը, որում ներառված է երկու ենթաբաժին՝ պաշտպանական (բանակ) և դիվանագիտական (արտգործնախարարություն): Այս երկուսի պրոդուկտներն ինչ-որ իմաստով փոխլրացնում են, փոխարինում միմյանց: Թույլ կամ ճիշտ չմշակված դիվանագիտությունը կարող է այդքան կորստաբեր չլինել, եթե ռազմական առումով երկիրն ուժեղ է ու պաշտպանված, և հակառակը: Այսպիսով՝ կատարյալ վերջնարդյունքի համար շատ կարևոր է դիվանագիտության ու ռազմական ոլորտների զուգահեռ ճիշտ աշխատանքը: Ցավոք, այս առումով խոր հիասթափություն կա, որն սկիզբ առավ դեռևս 44-օրյա պատերազմի առաջին օրերից: Ամբողջ քրիստոնեական աշխարհը միայն վշտակցություն էր հայտնում և անարդյունք կոչերով հանդես գալիս, սակայն այլ պատկեր պետք է լիներ: Սա ես վերագրում եմ դիվանագիտության ոչ լիարժեք աշխատանքին:

– Հիմա մենք գտնվում ենք աշխարհաքաղաքական վերադասավորումների կիզակետում: Հայաստանն ինչ մոտեցումներ պետք է ունենա:

– Կարծում եմ՝ հնարավոր սցենարների համատեքստում պետք է դիտարկել մեր տեղն ու դիրքը: Ինքս, լինելով ինքնիշխան պետության ջատագովը, չեմ բացառում ոչինչ: Պատմությունը, ցավոք, կրկնվում է: Վատագույնից խուսափելու համար պետք է քննարկման առարկա դարձնել ավելի իրատեսական սցենարները և գործել դրանց համաձայն: Կանխատեսական վերլուծությունների շնորհիվ ռազմաքաղաքական ղեկավարության համար ավելի է դյուրին դառնում որոշումներ կայացնելու գործընթացը: Շատ կարևոր է քննարկումներին մասնակից դարձնել երկրի էլիտային, քանի որ այս առումով տեսակետների փոխանակումը նույնպես անվտանգության բաղադրիչ է:

Փրկությունը հավաքական ուժի մեջ է: Հույն փիլիսոփա Ստրաբոնն այսպիսի մի միտք ունի, որը կարծես հենց մեզ համար է ասվել. «Յուրաքանչյուրին թվում է՝ ինքը խորամանկ աղվես է, բայց հենց միավորվում են, դառնում են ոչխարի հոտ»: Աստված հեռու պահի մեզ նման միավորումից: Կեցության որակը պետք է միաբանության վրա խարսխվի: Այս դեպքում ևս կարևոր է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռակողմ սերտ համագործակցությունը: Հասկանալի է, որ բանակցային գործընթացներում շատ որոշումներ չեն հանրայնացվում, բայց վերջնարդյունքին մոտենալու առումով հանգամանքները պետք է պարզորոշվեն՝ ո՞ւմ անունից է կայացվում որոշումը, ի՞նչ անդրադարձ կարող է ունենալ այն ապագայում...

Այստեղ միայն լիազորությունների խնդիրը չէ, այլ պատասխանատվության, որը պետք է դառնա իշխանությունների և ժողովրդի սեփականությունը:

– Պրն Սարգսյան, Դուք իրավացի եք՝ 44-օրյա պատերազմի ծանրագույն շրջանում քրիստոնեական պետությունները դեկլարատիվ խոսքերից այն կողմ չանցան: Կարծում եմ՝ այդ առումով էլ գաղափարախոսական խնդիրներ ունենք այն իմաստով, որ պետք է քրիստոնեական աշխարհի ներկայացուցիչներին, ովքեր ապրում են հավատքով, դիտարկել մի հարթության մեջ, իսկ մնացածը՝ ռեալ պոլիտիկի շրջանակներում: Այսօր Եվրոպայի ամենամեծ քրիստոնեական երկիր Ուկրաինան օգնության է դիմում մուսուլմանական, պանթյուրքիզմով, պանիսլամիզմով սնվող Թուրքիային: Իշխանությունները չունեն հավատքի չափորոշիչներ, որը հատուկ է միայն հավատացյալ հանրույթին: Ստացվում է՝ ինչպես մնացյալ բոլոր պետությունները, այնպես էլ մենք պետք է փորձենք շարժվել քաղաքական, տնտեսական, ռազմական շահերով...

– Ես լիովին համաձայն եմ Ձեր մոտեցման հետ: Պատմությունը ցույց է տալիս, որ մենք քաղաքակրթությունների թնջուկում ոչ սովորական, բայց և ոչ արտասովոր դեր ունենք: Ուստի պետք է ջանալ իրագործելու մեր ազգային իղձերն ու նպատակները, չպետք է ընկնենք էյֆորիայի մեջ, չպետք է ակնկալենք, որ կարճաժամկետ հատվածում կլուծվեն որոշ խնդիրներ, չպետք է սին հույսեր ձևավորենք: Պետք է օրենքի դաշտը կարգավորել, որով, կարծում եմ, կկրթվեն մարդիկ: Կրթությունը որոշ չափով երաշխիք է ճիշտ ընտրություն կատարելու և պատճառաբանված որոշումներ կայացնելու համար: Իսկ ճիշտ ընտրությանը կհետևեն արդեն լավ օրենքները, դա կհանգեցնի սահմանադրական նորմերի հարգմանն ու կատարմանը: Սա գաղափար է, որի շուրջ պետք է միավորվել: Իսկ թե ինչպե՞ս, դա արդեն իշխանությունների ու հասարակության գործողությունների արգասիքը պետք է լինի: Այս տեսլականին հասնելու ճանապարհին ո՞րն է գիտության ու կրթության դերը:

Առանց գիտության կարող ենք խարխլել մեր անվտանգությունը: Կարող են առանձին խնդիրներ առաջանալ՝ կանխորոշված մեր ներքին գործոններով, օրինակ՝ ընտրազանգվածի անվստահություն և այլն: Սրանք ևս անվտանգային լուրջ խնդիրներ են: Կրթությունն ու գիտությունը պետք է դառնան մեր գլխավոր առաջնահերթությունները:

Հարցազրույցը՝
Արմենուհի Մելքոնյանի
Մարիամ Ավագյանի

ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԵԼԻ ՉԷ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՀԵՏ

«Հրապարակ» օրաթերթ, 4 հունիսի, 2022

Հարցազրույց տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանի հետ.

– Պարոն Սարգսյան, նախօրեին ԱԺ-ում՝ 2021 թվականի բյուջեի կատարողականի հաշվետվության քննարկումների ժամանակ, վարչապետն իր խոսքում նշեց, որ ապրիլին ունեցել ենք Հայաստանի Հանրապետությունում գրանցված աշխատատեղերի բացարձակ ռեկորդ: «Ապրիլին աշխատատեղերի թիվը 664 հազար 736 է, որը 2018 թվականի նկատմամբ ավելի է 123 հազար 308-ով, այսինքն՝ 2018 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում ի հայտ է եկել 123 հազար 308 նոր աշխատատեղ»: Դուք տեսնո՞ւմ եք մեր երկրում «աշխատատեղերի բացարձակ ռեկորդ»:

– Խնդիրը հետևյալն է. աշխատատեղերի հաշվարկը պետք է իրականացվի այն վիճակագրության հիման վրա, որով ամփոփվում է տարին, իսկ դա կազմակերպությունների ներկայացրած թվերն են: Ես չեմ կարծում, որ այդ թվերի կտրվածքով լինեն հավելագրումներ, և թվաքանակը մեծացնեն արհեստականորեն, որովհետև դա իր հետ բերելու է նաև ամենատարբեր ոլորտներում՝ հարկային, վիճակագրական ծառայություններում, թվերի անհամապատասխանության: Խնդիրը լրիվ ուրիշ տեղ է. ինչպիսի՞ն է այդ աշխատատեղերի որակական կազմը, և ի՞նչ գործոնների հաշվին են այդ ավելացումները տեղի ունեցել: Մասնավորապես, այս ամիսների ընթացքում՝ ռուս-ուկրաինական պատերազմի և տարածաշրջանային այլ հանգամանքներով պայմանավորված, մենք ունեցել ենք միգրացիոն հոսքեր, որի արդյունքում տեղի է ունեցել աշխատատեղերի ավելացում, որի հաշվառումը կարող է լինել մի քանի ուղղությամբ: Նախ՝ որ պարզապես տրոհվել է մեկ հաստիքային աշխատատեղը, և այսօր 2 հոգի կատարում են աշխատանքներ՝ ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ և ոչ ամբողջական հաստիքով: Ահա, այս ճանապարհով նույնպես կարող է ավելանալ աշխատատեղերի թիվը:

– Ըստ վարչապետի՝ կա նաև աշխատավարձի աճ, և «2018 թվականի ապրիլի նկատմամբ Հայաստանում աշխատող բոլոր մարդկանց վճարված աշխատավարձն ավելացել է 61 մլրդ 319 մլն դրամով կամ 65 տոկոսով»: Բացի դրանից՝ «ապրիլին հունվարի նկատմամբ միջին աշխատավարձի աճ

ունենք 15 հազար 674 դրամով կամ 7,1 տոկոսով, որը որոշակիորեն հավասարակշռում է գնաճը»: Այդպես է արդյոք:

– Աշխատավարձերի բարձրացումը, եթե փորձում ենք առաջընթացի դիտակետից նայել, պետք է մշտապես կարողանանք գնաճը համադրել տնտեսական ցուցանիշի հետ, որովհետև եկամուտների ավելացումը պետք է ծածկի այն ռեալ սպառողական բարիքների ծավալը, որը, պարենից սկսած մինչև կոմունալ վճարումներ, ամենատարբեր տուրքեր, ակներև հավելյալ աճ են ապահովել: Այնպես որ, եթե մենք խնդրին նայում ենք բարեկեցության դիտակետից, ես չէի ասի, որ մենք նման ձեռքբերումներով պետք է իսկապես առաջընթաց արձանագրենք: Դրանք մոտավոր թվեր են՝ ռեալ առաջընթացը չներկայացնող, և նման հատվածային, եռամսյակային թվերը չեն կարող տնտեսական պատկերն արտահայտել ու միտվել բարեկեցության բարձրացմանը: Ինձ համար ակներև է այս տարվա ընդհանուր բարեկեցության անկումը, որը չի կարող համադրելի լինել տնտեսական աճի ցուցանիշի հետ:

– Ի դեպ, 2021 թվականի բյուջեից, ինչպես ընդգծեց վարչապետը, 120 մլրդ դրամ է հատկացվել 2021 թվականի ընթացքում Արցախի հետ կապված ծրագրերին, և ցցուն կերպով նշեց, որ 2021 թվականին Արցախի ողջ բնակչության ամբողջ կոմունալ ծախսերը վճարվել են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

– Իմ արձագանքը հետևյալն է՝ հետպատերազմական շրջանում շատ մեծ կորուստներ են եղել Արցախում. տնտեսություն, սոցիալական պայմաններ, բնակարանաշինություն, այդ ծախսերը, բնականաբար, ավելացած պետք է լինեին, որը չգիտեմ ինչքանով է «յարա» բուժում՝ կներեք այդ տերմինի գործածման համար:

– Վարչապետն ընթացիկ տնտեսական վիճակը համարել էր լավատեսական, այն է՝ «առաջին եռամսյակի տվյալներով, մենք 8,6 տոկոս տնտեսական աճ ունենք, իրական աճ, իսկ առաջին 4 ամսվա տվյալներով՝ 9,4 տոկոս տնտեսական ակտիվության ցուցանիշ, որը շատ լավատեսական ցուցանիշ է»:

– Այսօր բավարարվել համախառն ներքին արդյունքի տնտեսական աճի ցուցանիշով, բավարարվել տնտեսական ակտիվության ցուցանիշով, այն էլ՝ եռամսյակի կտրվածքով, չի կարելի՝ շատ պարզ պատճառով, որ այդ պրոցեսները շոկային են իրենց բնույթով, և պետք է տնտեսական աճը դիտարկել շարունակականության մեջ՝ առնվազն մեկ տարվա կտրվածքով: Ավելին՝ ես կասեի՝ տնտեսական աճն այսօր ՀՆԱ-ի ցուցանիշով անբավարար է, այդ մասին տարիներ առաջ դեռևս Դավոսի կոնֆերանսում համապատասխան ռեզոլյուցիան կյանքի կոչվեց, այն առումով, որ մենք պետք է անցում կատարենք

և ռեալ գնահատականներ ունենանք ինքլյուզիվ՝ ներառական տնտեսական աճի բնութագրով, իսկ ներառական տնտեսական աճն ընդհուպ մինչև սերունդների համերաշխություն է իր մեջ ներառում, արտադրողականության շատ կարևոր ցուցանիշ և այլն բաղադրիչները շատ են՝ մեկ տասնյակից ավելի: Եվ եթե մենք իսկապես փորձում ենք լուրջ գնահատական տալ տնտեսական իրողություններին, պետք է առաջնորդվենք այդ ցուցանիշներով և տնտեսության մասին համապարփակ ու ընդհանրական նկարագիր ունենալու համար կարողանանք առաջնորդվել նման ինդիկատորներով ու գործիքներով, որովհետև այսօր բավարար չէ ասել՝ 8 և ավելի տոկոս տնտեսական աճ ունենք և բարեկեցության համադրելի ցուցանիշ, դա առնվազն ազնիվ չէ՝ տնտեսագետի դիրքորոշումներից ելնելով:

– Համաձայն 2021 թվականի բյուջեի կատարողականի՝ «դեպի Հայաստան ուղևորահոսքերն էականորեն աճում են, և արդեն բավական լավատեսական ցուցանիշներ են ի հայտ գալիս, երբ Հայաստան ժամանողների և մեկնողների սալդոն դրական է՝ հօգուտ ժամանողների»:

– Մենք անցած տարի ունեցել ենք շատ վատ պատկեր, եթե խոսքն «աննախադեպի» մասին է, մենք պետք է հիշենք, որ անցած տարի՝ հետպատերազմյան շրջանում, միգրանտների թվաքանակի 70 հազարից ավելի բացասական սալդո ենք ունեցել, որը որևէ կերպ չի կարող ունենալ բացատրություն, երբ մենք պետք է պայմաններ ստեղծեինք երկիր մարդկանց ներհոսքի համար: Հիշենք բոլոր նախընտրական ծրագրերը՝ իհարկե, հաշվի առնելով նախա- և հետպատերազմյան իրավիճակները: Եվ եթե մենք մտահոգված ենք տնտեսությունում իրական պատկերը գրանցելով, չպետք է եռամսյակների կտրվածքով, հատվածային ինչ-որ թվերի մեջբերումներ կատարենք: Մենք պետք է կարողանանք միտումները, նախադրյալները տեսնել, որոնք կապահովեն հարաճուն տնտեսական աճ, որը պայմանավորված կլինի ներդրումներով տնտեսությունում, կառուցվածքային փոփոխություններով և արտադրողականության բարձրացմամբ:

– Բայց վարչապետն ասում է, որ մենք տնտեսական կոլապս չենք էլ ունեցել: Ըստ նրա՝ դա պայմանավորված է նրանով, որ «մենք կառավարություն ենք, որ, ըստ էության, տնտեսությունից չենք կորզում գումարներ, այլ, հակառակը, հնարավորինս շատ գումար ենք վերադարձնում»:

– Առանձին գործոնները կարող են ունենալ ընդամենը հատվածային դերակատարում, և դրանցով երբեք չպետք է խոսել միտումների կամ նախադրյալների մասին: Թե որքանով են կայուն այդ դրսևորումները և միտումները, որքանով դրանք կլինեն շարունակական՝ էապես պայմանավորված է լինելու վերը թվարկված հանգամանքներով: Մենք որքանով կկարողանանք այդ նախադրյալները ստեղծել՝ դրանով պայմանավորված կլինեն վաղվա

տնտեսական աճն ու բարեկեցությունը: Մենք այսօր տնտեսական աճի հետ մեկտեղ շատ ինտենսիվ քննարկման առարկա պետք է դարձնենք մեր անվտանգային խնդիրները, ես կասեի՝ ընդհուպ մինչև տնտեսական աճը ստորադասելով նման խնդիրներին:

Այսօր անվտանգային գործոնն աննախադեպ մեծ կարևորություն է ստացել, մենք պետք է կարողանանք ամբողջական սպեկտրով անվտանգային խնդիրները դիտարկել և ո՛չ մեկուսի, դիցուք, այսօր չենք կարող տնտեսական անվտանգության մասին խոսել, եթե քննարկման առարկա չենք դարձնում քաղաքական, իրավական, էթնո-մշակութային և ռազմական անվտանգությունը, այդ թվում՝ դիվանագիտությունը, որը կարող է ռազմական անվտանգության բաղադրիչներից մեկը դիտարկվել: Խնդրի համապարփակ դիտարկումն այսօր դարձել է կոնկրետ մեզ՝ համալսարանական տնտեսագետներիս համար կարևոր խնդիր, և այդ նպատակով տարբեր ֆոկուս խմբերով իրականացնում ենք պարբերական քննարկումներ:

Հարցազրույցը՝ **Սոնա Ադամյանի**

ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ԱՐԱԳ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՑՈՐԵՆԻ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 25 մարտի, 2022
https://hhpress.am/hanrapetutyun/2022/9865/

Հայաստանը ցորենով ինքնաբավ երկիր չէ: Տարիներ են եղել, երբ ինքնաբավության տոկոսն ավելացել է, բայց հիմա, պաշտոնական տվյալներով, այդ ցուցանիշը 30 տոկոսից էլ ցածր է՝ 26,4 տոկոս 2021 թ. տվյալներով (էկոնոմիկայի նախարարության օպերատիվ վերլուծության հիմամբ): Նախկինում՝ Արցախյան վերջին պատերազմից առաջ, մենք հիմնականում ցորեն էինք ներկրում Արցախից և Ռուսաստանից: Հիմա, ցավալի պատճառներով, Արցախից ներկրել չենք կարող, իսկ ռուսական կողմից որոշակի սահմանափակումներ կան՝ հասկանալի պատճառներով: Ռուս-ուկրաինական աճող լարվածությունը շատ երկրների, այդ թվում և մեզ, պարենային ապահովության ռիսկերի առաջ է կանգնեցրել: Խնդրի լուծումը Հայաստանում հացահատիկի արտադրությունը զարգացնելն է: Բայց ինչ չափով և ինչպես. այս հարցի շուրջ մասնագետների տեսակետները տարբեր են: Ինչ պետք է անի հիմա Հայաստանը այդ ռիսկերը՝ մասնավորապես հենց ցորենի մասով, հնարավորինս նվազեցնելու նպատակով: Պարզաբանումների համար «ՀՀ»-ն դիմեց ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանին, ով ասաց.

– Ընդհանրապես տնտեսական անվտանգությունը մեր ազգային անվտանգության բաղադրիչներից է, որն ունի ենթաբաղադրիչներ, այդ թվում՝ պարենային ապահովությունը: Եթե հիմա հակիրճ խոսեմ թեմայից, ապա՝ տնտեսական առումով անմտություն է, որ ՀՀ-ն ինքնաբավ լինի ցորենի արտադրության առումով: Հասկանալի է, Արցախից ցորեն ներմուծել հիմա չենք կարող: Բայց ռուսական կողմից, որքան տեղյակ եմ, լրիվ արգելքի մասին չէ խոսքը: Այնտեղ սահմանափակումը վերարտահանման կտրվածքով է, այսինքն՝ Հայաստանը կարող է իր պահանջարկը բավարարել, բայց վերարտահանում անել չի կարող: Այսինքն՝ այս իմաստով մեզ վտանգ չի սպառնում:

– *Այսինքն՝ ըստ Ձեզ, խուճապի կարիք չկա:*

– Այո, խուճապ չպետք է լինի, բայց և, այո, մենք չգիտենք, թե վաղն ինչ կլինի, ինչ զարգացում կստանա ռուս-ուկրաինական ճգնաժամը, կամ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ինչ տեղաշարժեր կլինեն: Հայաստանը պետք է, չէ՞, մի բան մտածի այդ տեղաշարժերից անընդհատ

կախված չլինելու կամ գոնե այդ կախվածությունը հնարավորինս նվազեցնելու համար:

– Ձեր դիտարկումը ճիշտ է: Ասել կուզի՝ խնդրին պետք է նայենք ոչ միայն բիզնես արդյունավետության տեսանկյունից, այլև՝ հենց որպես ազգային անվտանգության բաղադրիչի:

– Անշուշտ, և հենց դրա համար էլ պետք է մտածենք ու հնարավորինս խելամիտ, կրկնում եմ, խելամիտ շրջանակներում բարձրացնենք մեր՝ ցորենի արտադրության ինքնաբավության մակարդակը: Դա երկու ճանապարհ ունի: Առաջինը՝ էապես բարձրացնել արտադրողականության մակարդակը: Դրա համար տարբեր լուծումներ և եղանակներ կան՝ ոռոգման ջրի, ամբարման խնդրի լուծում: Այսօր մեր ջրերը դուրս են հոսում: Տարիներ շարունակ ջրամբարների մասին ենք խոսում, մինչդեռ նախագծված 4 ջրամբարները պետք է արդեն շահագործված լինեին... Երկրորդը՝ ընդհանրապես գյուղարտադրությունում տարբեր տեխնոլոգիաների կիրառման ու տեխնիկական ապահովվածության խնդիրը լուծվի: Երկրներ կան, որ հեկտարից 60-70 ցենտներ ցորեն են ստանում (ընտրասերված սորտերից և արտադրողականության հաշվին): Իսկ մեր ցուցանիշը բավականին ցածր է: Այստեղ մեր զրույցին միացավ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի նորարարության տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը՝ մեջբերելով Սինգապուրի օրինակը: Եվ նշեց, թե Սինգապուրն աշխարհում համարվում է պարենային առումով ապահովված թիվ մեկ երկիրը, թեև ոչ մի ռեսուրս չունի: «Նույնիսկ ոռոգման ջուրը 200 կմ հեռվից է բերվում: Իմաստը գիտեք որն է. փոխանակելու բան ունի: Դրա համար մենք պետք է արդյունաբերության ու բարձր տեխնոլոգիաների ոլորտը զարգացնենք ու դա փոխանակենք: Որովհետև մեր գյուղատնտեսական ռեսուրսները սահմանափակ են, անսահման չենք կարող ավելացնել: Սա պետք է լինի զարգացման ուղին»:

– Հեռանկարի առումով սա ենք ուզում բացատրել,– եզրափակեց Հայկ Սարգսյանը,– իսկ իրավիճակի առումով՝ այո, պետք է բարձրացնենք ինքնաբավության մակարդակը: Եվ այսօրվանից պետք է միջոցներ ձեռնարկենք: Ընդ որում՝ դա պետք է անենք անմշակ հողերի հաշվին, ոչ թե, ասենք, խաղողը հանենք, ցորեն դնենք: Խնդրի լուծումը անպայման պետք է տալ բացառապես մտածված քայլերով: Ինչպես ասացիք, դեռ չգիտենք՝ աշխարհի գլխին ինչ կգա: Մենք պետք է պատրաստ լինենք հնարավոր վատագույն սցենարներին: Պետությունը պետք է ունենա իր պաշարները:

Արմենուհի Մելքոնյան

ԱՊՐԱԾ ԿՅԱՆՔԸ ԼԻ ԷՐ ԱՐԱՐՈՒՄՈՎ[1]

25 հունիսի, 2022

Գրեթե քառորդդարյա հետահայացը վկայում է, որ Միքայել Քոթանյանի ամբողջ կյանքը մաքառումի ու արարման վառ դրսևորումներով է ուղեկցվել: Արարումն էլ բազմավեկտոր է եղել. անվերապահ նվիրում գիտությանը, գործին, մարդկային հարաբերություններին:

Գիտությունը ներսից էր թակել ՀԽՍՀ ԳԱ ապագա ակադեմիկոսի, պրոֆեսորի դուռը: Տնտեսական պրոցեսների ու երևույթների վերլուծությանն ու գաղափարական խոր եզրահանգումներին գալը Մ.Քոթանյանի դեպքում բնատուր էին: Ընդհանրացումներն ու բացահայտումներն ունեցել են այնպիսի իմաստասիրական արժեք, որը զարմանք է պատճառել գիտական մետրոպոլիայի ակադեմիական համայնքի շատ կարկառուն ներկայացուցիչների: «Զարմանքը» վերաբերում էր տնտեսագիտության հիմնարար հասկացություններից մեկի՝ արժեքի ու ընդհանրապես արժեստեղծման գործընթացի նորովի մեկնաբանությանը, գիտատեխնիկական առաջընթացի անշրջելի առաջնահերթությանը արդյունավետ տնտեսության կառուցման հարցում:

Աներկբա կարելի է պնդել, որ արդի տնտեսագիտության շատ օրինաչափությունների բացահայտումն ու պարզաբանումը ոչ միայն գիտական, այլև քաղաքացիական քաջություն էին պահանջում անցյալ դարի 70-80-ականներին: Այդպիսի հետազոտող-տնտեսագետների շարքում Մ. Քոթանյանն էր:

Գիտնականը, լինելով ակադեմիական հետազոտությունների նվիրյալ, երբեք անհաղորդ չմնաց մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործնական խնդիրներին: Նրա ղեկավարությամբ մշակվում էին հանրապետության տնտեսական կյանքի բարելավմանն ուղղված համալիր ծրագրեր: Առաջադրված շատ ծրագրեր ու հիմնախնդիրներ, որքան էլ պարադոքսալ հնչի, դեռևս պահպանել են իրենց կենսունակությունը: Ծրագրերի մի մասը իր արտացոլումը գտավ այդ տարիներին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների կտրվածքով լույս տեսած ամփոփ փաստաթղթում: Այն վերնագրված էր. Комплексная программа научно-технического прогресса на 1986-2005 годы (региональный раздел 4.3. КП НТП Армянской ССР). М. 1983 г., 490 стр., որի ընդհանուր գիտական ղեկավարումն իրականացրել էին ԽՍՀՄ ակադեմիկոս Վ.Հ. Համբարձումյանը և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա.Ղ. Իոսիֆյանը:

---

[1] Կյանքի հավերժության խորհրդանիշը, Խորհրդաժողով, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2022:

Անուրանալի է Մ. Քոթանյանի ներդրումը ամփոփ այդ փաստաթղթի ստեղծման գործում:

Միքայել Խաչիկիչի հետ ունեցած իմ ջերմ հարաբերություններում շատ են դիպվածները, որոնցից մեկ-երկուսը կհիշատակեմ:

Լինելով կենսախինդ, բայցև երկրի վաղվա օրով շատ մտահոգ անձնավորություն՝ շիտակ ու պարզ, ըմբռնելի կերպով իր գործընկերներին, մտերիմներին ներկայացնում էր իր մտածմունքները ամենատարբեր խնդրահարույց հարցերի շուրջ՝ սկսած հայ-թուրքական հարաբերություններից մինչև երկրի լեռնային ու նախալեռնային շրջանների զարգացում և այլն: Նրա դիտարկումներին շատ հաճախ հաղորդակից էի լինում ինստիտուտի իր աշխատասենյակում մի փոքր երկարող ընդմիջումների ժամերին: Խնդրում էի թույլատրեր, որ ծխեի (ինքը թողել էր ծխելը ծանր վիրահատությունից հետո): Ստանում էի այդ թույլտվությունը: Ավելին՝ մի անգամ կատակեց. ծխիր այնպես, որ ծխի քուլաները գան իմ կողմ...

Հաճախակի տնից ընդմիջման համար բերում էր տիկին Արշալույսի պատրաստած համեղ բրդուջները: Մեր քննարկում-զրույցների ընթացքում այդ ուտեստներից բաժին էր հասնում նաև ինձ...

1999 թ. հոկտեմբերի 27-ի չարաբաստիկ օրվա առավոտյան ժամը 10:00-ին մենք ունեցանք հեռախոսազրույց: Պրն Քոթանյանը իր շնորհակալությունն էր հայտնում մի ձեռնարկիս կապակցությամբ, որով նպաստել էի իր մասնակցությանը միջազգային շատ կարևոր գիտաժողովի, որը այդ օրերին պետք է կայանար Գավրիիլ Խարիտոնովի հրավերով՝ Հունաստանում: Հիշում եմ՝ ասաց. կգնամ, կկտրվեմ, խորհրդաժողովում մասնակցությանս հետ մի փոքր էլ կհանգստանամ: Ուրախացա նրա գոհունակությունից, որ ես այդ ճամփորդության ֆինանսական ապահովության նպաստս էի բերել՝ ի դեպ, դիմելով իրեն լավ իմացող մեկ-երկու բանկիրների: Ավելացրի, որ ժամը 4-5-ի մոտ կգնամ իրենց տուն՝ բարի ճանապարհ մաղթելու: Առարկեց, թե այդ ժամերին լինելու է պառլամենտի հարցուպատասխանին: Ասացի կատակով՝ էդ ո՞ր և ի՞նչ հարցերի պատասխանն եք ակնկալում, որ չգիտեք, և լսեցի պատասխանը՝ վարչապետի հետ խոսելիք ունեմ: Այդպես կանխվեց մեր հնարավոր հանդիպումը այդ ժամերին...

Իսկ աշխատանքային օրվա վերջում աշխատասենյակիս ցածր միացված ռադիոընդունիչից լսելի դարձան կրակոցի ձայները և մարդկանց իրարանցում նաև կառավարության շենքի 4-րդ հարկի միջանցքում: Դուրս եկա, դիմացս էր Գագիկ Մարտիրոսյանի կաբինետը, ուր շտապում էին շատերը: Ներս մտա, այնտեղ էր մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարար, գրող Ռոլանդ Շառոյանը, ումից տեղեկացանք, որ գնդակը խոցել էր նաև Մ. Քոթանյանին, որը որովայնի շրջանում արյունահոսում էր...

Հետագայում վիրաբույժ, պրոֆեսոր, մեր հայրենակից Սասուն Գրիգորյանը պատմում էր, որ կես ժամ շուտ հասցնելու պարագայում պատրաստ էին անհետաձգելի վիրահատության: Փայծաղի հրազենային վիրավորումից ներորովայնային սուր արյունահոսությունը չկանխվեց...

Միքայել Քոթանյանը իր ապրած կյանքում հպարտանալու շատ բաներ ուներ: Մեկ այլ անանց աղբյուր էլ ուներ. իր երեք դուստրերի հետ իր Տիգրան որդին էր և իր հայրենիքը, իհարկե:

ԵԱՏՄ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ՄԵՐ 13 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ Ի ՉԻՔ ԿԴԱՐՁՆԻ

«Հրապարակ օրաթերթ», 4 հոկտեմբերի, 2022

https://hraparak.am/post/66d13f5c2daedb05ee5861a9febaa00c?fbclid=IwAR0gr1752r0JwUg9anStV5fppgX9AXnbSpzEzt2TECoXU5ChSEpqEll0Bvs

Վերջին շաբաթներին ՀԱՊԿ-ից և անգամ ԵԱՏՄ-ից դուրս գալու կոչերն ավելի ու ավելի հաճախ են հնչում տարբեր արևմտամետ շրջանակներից, որոնք Հայաստանն ուզում են տեսնել Եվրամիության և ՆԱՏՕ-ի կազմում: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանից հետաքրքրվեցինք, թե Հայաստանի՝ ՀԱՊԿ-ից և ԵԱՏՄ-ից դուրս գալը տնտեսական ինչ հետևանքներ կարող է ունենալ մեր երկրի ու նրա տնտեսության վրա:

Հ. Սարգսյանի դիտարկմամբ՝ դրանք տարբեր բաներ են և տարբեր հետևանքներ կարող են ունենալ, եթե ՀԱՊԿ-ից դուրս գալը կարող է ռազմաքաղաքական առումով անդրադառնալ մեզ վրա, ապա ԵԱՏՄ-ից՝ տնտեսական: «ՀԱՊԿ-ից դուրս գալը միանգամյա ակտ չէ»,– ասում է Հ. Սարգսյանն ու հավելում՝ քանի դեռ անձնապես խորամուխ չի եղել այն ընթացակարգերի մեջ, որոնք թույլատրում են անդամ կառույցների, երկրների դուրս գալը, չի կարող հստակ մատնանշել հետևանքները, «բԲայց, միևնույն ժամանակ, փոխարինել ռազմաքաղաքական անվտանգության ինչ-որ մի կառույց՝ այն լքելով, և հայտնի չէ, թե որ կառույցի համար, թեպետ դա կարող է լինել ՆԱՏՕ-ն կամ ինչ-որ մի երկիր, մեկ ուրիշ ռազմաքաղաքական ալյանս՝ խելամիտ չէ: Ուկրաինային թվում էր, թե ինքն արագացված ընթացակարգով կհայտնվի ՆԱՏՕ-ի գրկում, բայց, ինչպես շատերն էին կանխատեսում, դա չի կատարվում, որովհետև ինքը՝ ՆԱՏՕ-ն, ունի իր պայմանները և խնդրին համակողմանի մոտենալու պայմաններում այդպես արագ չի ընդգրկի Ուկրաինային իր կազմում: Այստեղ շահերը բազմակողմ են, բազմաասպեկտ, իսկ կողմնորոշումներն էլ՝ բազմաբևեռ: Ահա, այդ «բազմա»-ների միջակայքում պետք է ճիշտ կողմնորոշվել՝ ճշգրիտ հաշվարկելով ռիսկերը և չխարխափել անորոշությունների մեջ, ինչպես ժողովուրդն է ասում՝ մրից դուրս գալով՝ մրջուրը չընկնել»:

Տնտեսագիտության դոկտորի դիտարկմամբ, ՀԱՊԿ-ի հետ մեր պայմանագիրը զուտ ռազմաքաղաքական բնույթի է, և ինքը ներկայումս չի տեսնում այն ալտերնատիվը, որից դուրս գալու դեպքում մենք կհայտնվենք ավելի բարենպաստ իրավիճակում: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ին, ապա «այստեղից

դուրս գալու հետևանքները մեզ վրա ոչ միայն տնտեսական են լինելու, այլ նաև՝ սոցիալական, իրավական, անգամ՝ մշակութային և, իհարկե, էներգետիկ անվտանգության առումով: Այսօր այդ կառույցից դուրս գալու կամ այդ կառույցին անդամակցությունը դադարեցնելու ապագան ես չեմ տեսնում՝ շատ պարզ պատճառով. առաջինը՝ այսօր ՀՀ սեփականության 70 տոկոսի շրջակայքում, այս կամ այն կերպ գտնվում է Ռուսաստանի կառավարման, տիրապետության, տնօրինման և օգտագործման տակ: Սեփականության ատրիբուտներով ռուսները մեր հանրապետության ընդերքը, էներգետիկ ռեսուրսները՝ դա և՛ միջուկային վառելիքն է, և՛ հիդրոկայաններն են, և՛ գազամուղն է, որը, կապերը խզելու պայմաններում, կոնտր պայմաններ կարող են առաջացնել, որի պատճառով միայն գազի բաղադրիչով՝ մեր 14 տոկոս տնտեսական աճն ի չիք կարող է դառնալ: Ես դեռ չեմ խոսում մյուս ռեսուրսների հետ կապված»: Զրուցակիցս նկատում է, որ գումարային առումով դա ահավոր մեծ թիվ կլինի, և տնտեսական աճ չենք ունենա: «Ինչո՞ւ. որովհետև եթե այսօրվա 14 տոկոս տնտեսական աճը կառուցվում է նախորդ տարիների՝ 2019, 2020 թթ. տնտեսական աճերի վրա, այդ աճը մենք չենք ունենա վերջին մեկուկես տարվա կտրվածքով, չեն հավաքագրվի բյուջեի մուտքեր, չենք կարողանա կատարել սոցիալական ծախսեր, և ինչ պլանավորվում է լրացուցիչ բյուջե, դա չի իրագործվի հենց տնտեսական պլանավորված աճ չունենալու պարագայում»,– ասում է տնտեսագետը:

Հ. Մարգսյանն ընդգծում է, որ սեփականության իրավունքը պետք չէ դիտարկել միայն ուղղակի իմաստով. «Ի դեպ, երբ խոսում էի սեփականության մասին, բնավ պարտադիր չէ, որ սեփականությունն իրենցը՝ ռուսներինը լինի, պետք է հաշվի առնել նաև այն, ինչ տրվեց իրենց կառավարմանը, ինչպես փոխանցեցին «Մարս» ընկերությունը, 300 մլն դոլար միայն կառուցման համար անգլիացիներն ու հարավսլավացիները ներդրում կատարեցին ՀՀ-ում, Նյութագիտության ինստիտուտը, Մերգելյանը և այլն, և այլն: Այսինքն՝ եթե ուղիղ իրենց սեփականությունը չէ, ապա տրվեցին իրենց կառավարմանը. օրինակ՝ երկաթուղին տրվել է իրենց կառավարմանը, ընդերքից մինչև վերգետնյա կարևոր ռեսուրսներ տրվել են իրենց: Այսօր Հայաստանի 30 տոկոս արտահանումը և ընդհանրապես ապրանքաշրջանառությունը գտնվում է եվրասիական տարածքում: Մենք չենք կարող ավտոմատ տեղափոխվել ուրիշ տնտեսական տարածք: Եվրոպան այսօր մեզնից միայն խտանյութեր է վերցնում, ուրիշ ապրանքներ մենք գրեթե չունենք»:

Ինչպե՞ս կբացատրի դոկտոր, պրոֆեսորն ամիսներ առաջ վարչապետի այն հայտարարությունը, թե մեր երկրի ընթացիկ տնտեսական վիճակը լավատեսական է, և միայն առաջին եռամսյակի տվյալներով, մենք 8,6 տոկոս տնտեսական իրական աճ ունենք: «Խոսքն այն մասին է, որ եթե մենք

ընդհատում ենք այդ կապերը եվրասիական տարածքի հետ և հայտնվում ենք նշածս պայմաններում, դա փոխում է ամբողջ իրավիճակը»:

«Եկեք չմտնեմ այդ տիրույթ, որովհետև ունեմ իմ սեփական վերաբերմունքը մեր իշխանությունների գործելակերպի վերաբերյալ, այն առումով, որ ես չեմ կարող բավարարվել այն արժեքներով, որոնցով մենք հեղափոխություն իրականացրինք և ականատեսն ենք դառնում դրանց համարժեք գործողություններին: Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ աղքատ և ոչ շատ կրթված ժողովրդի ընտրազանգվածից միշտ չէ, որ կարող ենք ակնկալել լավագույն ընտրություններ: Այդ ընտրությունները շղթայապես շատ ավելի մեծ վնաս են պատճառում, քան տնտեսական աճը՝ այն պարզ պատճառով, որ վատ ընտրությունը բերում է վատ օրենքի, իսկ օրենքը երկրի համար ամենակարևոր ինստիտուտն է»:

Սոնա Ադամյան

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ. ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ «ԱՌԵՐԵՍՈՒՄ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐՈՒՄ

«Նոր մոտեցումներ ՀՀ ազգային անվտանգության խնդրին» սեմինարների գիտական ղեկավար պրոֆեսոր Հ. Սարգսյանը իր գործընկեր, պրոֆեսոր Ռ. Գևորգյանի հետ «Առերեսում» հաղորդաշարում ներկայացնում են անվտանգության հիմնախնդրի նոր մոտեցումների ձևավորման մեթոդաբանությունը, լուսաբանում են փորձագիտական հանրույթի պատկերացումները խնդիրների լուծման վերաբերյալ: Առանձնակի քննարկման առարկա են դառնում անվտանգության հնարավոր զարգացումների և երկրների հետ նախընտրելի համագործակցության ուղիների մատնանշմամբ հնարավոր ելքերը:

Նշվում է, որ պահանջված հետազոտությունը ավարտուն փուլին հասցնելու համար անհրաժեշտություն է առաջացել այն դնել ինստիտուցիոնալ հիմքերի վրա՝ ընդգրկելով մասնագետների ավելի լայն շրջանակ՝ արդի զարգացումների համատեքստում անվտանգային խնդիրների օպտիմալ լուծումներ գտնելու առումով:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.youtube.com/watch?v=Ho46AhHLLoo

ՎՏԱՆԳՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսոր Հայկ Սարգսյանը խոսել է աշխարհաքաղաքական վերափոխումների, կոնֆլիկտային և պատերազմական իրավիճակների խորապատկերի շրջանակներում ռուս-ուկրաինական պատերազմի տնտեսական հետեվանքների ազդեցության մասին:

Անդրադարձ է կատարվել կուտակված այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են ՀՀ ազգային անվտանգության հիմնախնդիրների բացահայտումը ու հնարավոր սցենարներով լուծումների առաջադրումը, մասնավորաբար անվտանգային այնպիսի բաղադրիչների շրջանակներում, որոնց թվում են տնտեսական, քաղաքական, իրավական, էթնոմշակութային և ռազմական անվտանգության հիմնահարցերը: Շեշտադրվել է, որ այդ հիմնահարցերը պետք է դիտարկվեն մեկ ամբողջության մեջ՝ տարաբնույթ սցենարներով:

Մանրամասները՝ տեսանյութում.
https://www.1in.am/3092830.html

ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻՆ

Երկրի անվտանգային խնդիրների լուծման համար պետք է գործադրել բազմաչափանիշային նախագծերի մշակման տրամաբանությունն ու անալոգիան: Այդպիսի մոտեցումը նկատելի է 2005 թվականի և, որոշ չափով, նաև 2020 թվականին հուլիսի 10-ին հաստատված անվտանգության ռազմավարություններում: Հետագայում դրանց ոչ կենսունակությունը զգալ տվեց:

Երկարաժամկետ խաղաղության հայեցակարգը մշակելիս ներկայիս word disorder-ի պարագայում պետությունը պետք է կարողանա.

- ճշգրտորեն հաշվարկել իր տեղը պատմական ժառանգության, լոգիստիկ միջավայրի, որոշումների կայացման հետևանքների գնահատման և այլ դիրքերից՝ դիտարկելով «խաչմերուկային» հնարավորությունների գործադրման տեսլականը որպես նպատակային բնագիծ;
- առավելագույնս հաշվի նստել այն իրողության հետ, որ աշխարհում ոչ միայն չեն ավարտվել կապիտալի վերաբաշխման ու երկրների հարաբերությունների վերանայման գործընթացները, այլև դրանք ավելի են թեժացել՝ հանգեցնելով նաև ազդեցության ոլորտների նորովի վերաձևման:

Փոքր ու «հրապուրիչ» երկրները, հայտնվելով տարածաշրջանային փոխակերպումների հորձանուտում, պետք է մաքսիմալ ջանքեր գործադրեն գոյաբանական ու կաշկանդող առանցքներով տարածքներից երկիրը կայուն զարգացման ուղեծիր դուրս բերելու համար:

Պետությունը որպես բնակչության բարեկեցիկ ու անվտանգ կյանքի պայմաններ ապահովող ինստիտուտ, ստեղծված իրավիճակում, պարտավոր է նոր մոտեցումներով ապահովել ՀՀ ազգային անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետությունն այսօր կանգնած է անվտանգային չափազանց լուրջ մարտահրավերների առջև: 2022 թ. ընթացքում ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Սահմանադրական տնտեսագիտության» գիտավերլուծական կենտրոնը նախաձեռնեց այս կարևորագույն ոլորտի հարցերի վերաբերյալ քննարկումների և սեմինարների շարք, որում ընդգրկվեցին տարբեր բնագավառների փորձագետներ՝ քաղաքագետներ, իրավաբաններ, տնտեսագետներ, մշակութաբաններ, ռազմական գործի մասնագետներ և այլն:

Շուրջ մեկ տարվա քննարկումների և հետազոտությունների արդյունքում ստեղծվեց անվտանգային հարցերին նվիրված հաշվետվություն, որի առանձնահատկությունը և կարևորությունը նրանում է, որ այն հիմնված էր

փորձագետների և գիտնականների գնահատականների վրա: Դրանք այս կամ այն չափով առնչվում են անվտանգային հարցերի գիտական հետազոտություններին՝ հնարավորինս զերծ մնալով քաղաքական նախասիրություններից: Հաշվետվությունում ներկայացված են այդ հետազոտության մանրամասն արդյունքները և այդ թվերը, գրաֆիկները և կարծիքների բազմազանությունը վկայում են կարևոր եզրահանգման մասին, այն է՝ **Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգը և ճարտարապետությունն անհապաղ վերանայման կարիք ունեն**: **Ավելին՝ ակնհայտ է, որ եթե չձեռնարկվեն հրատապ քայլեր, ապա անվտանգային համակարգի և ճարտարապետության փոփոխությունները թե՛ տարածաշրջանում, թե՛ ավելի գլոբալ մակարդակում կընթանան առանց Հայաստանի Հանրապետության մասնակցության**:

Այս պահի գլխավոր հարցը այն գնահատականների որոշարկումն է, թե այդ փոփոխություններն ինչ ռիսկեր են պարունակում, և ինչպես կարելի է դրանք չեզոքացնել կամ գոնե նվազեցնել դրանց վտանգավոր հետևանքները: Անհրաժեշտ կլինի նշել այն գործիքակազմը, որը ստեղծված իրավիճակում հասանելի է Հայաստանի կառավարությանը: Այս հարցերի պատասխանը պահանջում է անհապաղ համալիր գիտական հետազոտություններ, որոնք զերծ կլինեն փորձագիտական համայնքին այդքան բնորոշ զգացմունքային տարրերից:

«Սահմանադրական տնտեսագիտության» գիտավերլուծական կենտրոնը ձեռնամուխ է լինելու այս հետազոտությունների իրականացմանը, ներգրավելով տարբեր ոլորտների գիտնականների խումբ, որը ձևավորվել է վերը նշված սեմինարների և քննարկումների արդյունքում:

Բազմավեկտոր արտաքին քաղաքականությունն այլևս չի կարող նույն բովանդակությունն ունենալ: **Գլոբալ անվտանգության նոր համակարգի և ճարտարապետության համար պահանջվում են ավելի իրատեսական հարաբերությունների ստեղծում՝ նոր շեշտադրումներով և առաջնահերթություններով:**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Լևոնի Սարգսյան

№	Աշխատանքի վերնագիրը	Գրականության աղբյուր, համար, հրատարակության տեղ, տարեթիվ	Էջերի քանակ	Համահեղինակ
	Մ Ե Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր			
1. (1)	Эффективность и оптимальность экономического развития	Ереван, Изд-во АН Арм. ССР, 1982	7.34	Манукян К. К.
2. (2)	Планирование и механизм регионального управления	Ереван. Изд-во АН Арм. ССР, 1988	8.5	
3. (3)	Հայաստանի տնտեսական քաղաքականությունը. պետության դերը	ՌԱՀՀԿ, Ե., 2001	69 էջ	
4. (4)	Վերափոխումները անցումային տնտեսություն ունեցող երկրներում	Տիգրան մեծ, Երևան, 2003	600 էջ	Մարկոսյան Ա. Խ., Դավոյան Ս. Ա.
5. (5)	Որակի ապահովման ներքին համակարգը Ճարտարապետաշինարարական ԲՈՒՀ-երում	ԵՊՃԾՀ հրատ., Երևան, 2013	246 էջ	Մարկոսյան Ա., Թոքմաջյան Ս., Իվանյան Գ.
6. (6)	Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները	Զանգակ, Երևան, 2014	552 էջ	Մարկոսյան Ա. Խ.
7. (7)	Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները (ընդլայնված ամփոփում, եռալեզու)	Զանգակ, Երևան, 2014	220 էջ	Մարկոսյան Ա. Խ.
8. (8)	Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում	Զանգակ, Երևան, 2015	54 էջ	Տոնոյան Գ. Պ., Քոչինյան Ն. Ս.
9. (9)	Трансформационные аспекты феномена рыночного хозяйства	Զանգակ, Երևան, 2016	595 էջ	Маркосян А., Сидоров В., Ядгаров Я.
10. (10)	Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ	Զանգակ, Երևան, 2017	9.0	Հարությունյան Գ., Գևորգյան Ռ.
11. (11)	Социально-институциональные признаки разграничения уровня конституционализма стран с переходной экономикой	Республика Адыгея, г. Майкоп, ул. Пионерская, 2018	12 / 554 147-158	Геворгян Р.А., Кочинян Н.С.

12. (12)	Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը	Զանգակ, Երևան, 2018	208	Հարությունյան Գ., Գևորգյան Ռ.
13. (13)	ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները	ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ 2020	162	Գևորգյան Ռ., Մինասյան Կ., Մխիթարյան Ժ., Զաքարյան Հ.
				ԸՆԴԱՄԵՆԸ՝ 13

Դ Ա Ս Ա Գ Ր Ք Ե Ր				
1. (14)	Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակները	Երևան, 1997	2.5 (գլուխ 1)	Սահակյան Մ. և ուրիշներ
2. (15)	Տնտեսական իրավիճակների մոդելավորում	Ոսկան Երևանցի, Երևան, 2004	318 էջ	Գլխավոր խմբագիր
3. (16)	Տնտեսագիտություն. դասագիրք ավագ դպրոցի աշակերտների համար	Երևան, 2004	227 էջ	Ղարիբյան Գ. և ուրիշներ
4. (17)	Basics of human developement	Textbook for postgraduate students, Noyan Tapan PH, 2004	40 էջ	Chief editor
5. (18)	Տնտեսական իրավիճակների մոդելավորում	Երևան, 2009	165 էջ	Առաքելյան Ա. և ուրիշներ
6. (19)	Տնտեսագիտության տեսություն	Երևան, ԵՊՀ հրատ., 2012	310 էջ	Մարգարյան Հ. Գ.
7. (20)	Տնտեսագիտության տեսություն	Երևան, ԵՊՀ հրատ., 2017 (լրամշակված վերահրատարակություն)	318 էջ	Մարգարյան Հ. Գ.
8. (21)	Տնտեսական իրավիճակների մոդելավորում	Երևան, 2017	285 էջ	Առաքելյան Ա. և ուրիշներ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1. (22)	Վերափոխումային գործընթացը և սոցիալական իրադրությունը ՀՀ անցումային տնտեսությունում	«Կայուն մարդկային զարգացում» ժողովածու, Երևան, 1997	30 էջ	Դանիելյան Կ. և ուրիշներ
2. (23)	Թաքնված զբաղվածությունը և քողարկված գործազրկությունը ՀՀ-ում և նրանց ծավալների նվազեցման ուղիները	ԳՀ աշխատանք, ԵՊՀ հրատ. 2000	112 էջ	հեղ. կոլեկտիվ
3. (24)	Национальный доклад по оценочному процессу	РИО+10", Е., 2001	0.2	հեղ. կոլեկտիվ
4. (25)	Концепция устойчивого развития РА	Ереван, 2002	53 стр.	Даниелян К., Ходжабекян В. и др.
5. (26)	Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները	ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տարեգիրք 2011	18 էջ	Հարությունյան Խ. Մ., Մանասյան Վ. Գ.
6. (27)	Անցումային երկու տասնամյակը Հայաստանի Հանրապետությունում	Ներկայացված և զեկուցված է ՀՀ ԿԲ գիտական սեմինարում, 2011	14 էջ	
7. (28)	«Четырехсекторная модель структурных узменений на рынке труда переходных экономик»	Գիտական զեկուցում ԵՊՀ գիտ. սեմինարում, Նոյեմբեր, 2011	16 էջ	Գևորգյան Ռ.
8. (29)	«Аналитическая модель структурных преобразований на рынке труда»	Գիտական զեկուցում ԵՊՀ գիտական սեմինարում, Նոյեմբեր, 2011	12 էջ	Գևորգյան Ռ., Սարգսյան Ն.
9. (30)	Ճգնաժամի ակունքները և դրանց հաղթահարման ուղիները	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակ, Հայաստանի բնակչության թվի անկումը, հետազոտական աշխատանք, հոկտեմբեր, 2013	26 էջ	Խաչատրյան Կ., Անտոնյան Ք.
10. (31)	Применение методов классификации и распознавания к задачам определения уровня конституционализма	IX-я Международная школа-семинар «Многомерный статистический анализ и эконометрика». Цахкадзор, 2016	էջ 44-46	Գևորգյան Ռ., Սարգսյան Ն.
11. (32)	Երկրի սահմանադրականության սոցիալական և տնտեսական կողմերը	«Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ, Երևան, 2017	էջ 21-27	

12. (33)	Оценка технологического развития государств – членов ЕАЭС и стран других региональных экономических объединений	Международная торговля и торговая политика, 2018	стр. 124-134 1 (13)	Матевосян Э.Н.

ԹԵԶԻՍՆԵՐ				
1. (34)	Вопросы моделирования защиты окружающей среды от производственного загрязнения	Тезисы докладов I-ой научной сессии профессорско-преподавательского состава ЕрИНХ, Ереван, 1976	0. 1	
2. (35)	Вопросы защиты окружающей среды в модели оптимального планирования грузоперевозок в регионе	Тезисы докладов 2-ой научной сессии профессорско-преподавательского состава ЕрИНХ. Ереван, 1977	0. 1	Хачикян С. Н. Чибухчян А. В.
3. (36)	Об организации контроля и управления за состоянием окружающей среды	Тезисы докладов 3-ей сессии профессорско-преподавательского состава ЕрИНХ, Ереван, 1978	0. 1	
4. (37)	Влияние контроля за состоянием среды на эффективность социально-экономических решений	Тезисы докладов научно-практической конференции «Охрана окружающей среды», Ереван 1981	0. 1	Манукян К. К.
5. (38)	Проблемы совершенствования пропорций экономического и социального развития союзной республики	Тезисы докладов Всесоюзной научно-практической конференции, посвященной 60-летию комсомола Армении, Ереван, 1981	0. 1	Саркисян С. Д. Манукян К. К. Матевосян А. А., Меликян Г. С.
6. (39)	Оценка социально-экономических факторов миграции населения из горных районов Арм. ССР	Тезиси докл. Закавказской научн. Конференции. В сб. «Проблемы социально-экономического развития горных районов, Ереван, 1985	0.1	Акопян З.Р.
7. (40)	Повышение эффективности общественного производства в условиях его интенсификации (аспект управления)	ДСП. Тезиси научно-практической конференции партийно-хозяйственного актива работников сферы материального производства. Ереван. Изд-во АН Арм. ССР, 1986	0.2	
8. (41)	Совершенствование экономического механизма регионального управления на современном этапе	Сб. Проблемы регионального планирования. Тезисы докладов V Всесоюзной научной школы ученных экономистов. Владимир, 1987	0.1	

9. (42)	Пути повышения регионального вклада в единый народнохозяйственный комплекс	Материалы научно-практич. конференции (Совершенствов планирования и всего хоз. механизма в свете решений XXVII съезда КПСС) т. II., М. 1987	0.2	Ханикян Г.Г., Селвиназян Б.С.
10. (43)	К совершенствованию экономического механизма регионального управления	там же, т. I, ч.I	0.2	Меликян Г.С.
11. (44)	Региональные предпосылки повышения трудовой активности	Сб. ИЭ АН СССР, М. 1987	0.2	Арутюнян Г.Г.
12. (45)	Хозрасчетные формы развития территориально-отраслевых хозрасчетных взаимоотношений	Проблемы перестройки упр. нар. хоз. Молдовской ССР в свете решен. июньского (1987) пленума ЦК КПСС тезисы докл. респ. научн.пр.конференции 25-26 октября 1988, Кишинев	0.2	Меликян Г.С.
13. (46)	Управление распределением дохода в системе хозрасчетных взаимоотношений "регион-отрасль"	Материалы всесоюзной конференции Проблемы управления народным хозяйством союзных республик, Секция 3. Общие проблемы регионального управления Талин 1989.	0.3	
14. (47)	Economic Model of the Transitional Period and the Role of The Government	Միջազգային գիտաժողովի նյութեր. «Economic Education and Policy Analisis During a Time of National Transition», Երևան, 1995	0.1	
15. (48)	Evaluation of the sotial & the hidden economy scale estimation in the Republic of Armenia	«Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 1999	6 էջ	Սահակյան Հ.
16. (49)	Национальный доклад по оценочному процессу	«РИО+10» Ереван, 2001	12 стр.	Даниелян К. и др.
17. (50)	Բանկային համակարգի զարգացման հիմնախնդիրները	Թեքեյան կենտրոն, հարակից զեկուցում 20 ապրիլի, 2002	8 էջ	Սարգսյան Տ.
18. (51)	Public-private cooperatioin in enchancing the competitiveness of economies in transition. Государственное управление в XXI веке: традиции и инновации.	Материалы 4-й международной конференции факультета государственного управления МГУ им. М.В. Ломоносова (24-26 мая 2006)	стр. 1066-1072	Զայիմցյան Հ.Գ., Անտոնյան Ք. Ա.
19. (52)	«Применение принципа максимума энтропии в прогнозировании структуры ресурсов страны»	Международная школа-семинар,«Многомерный статистический анализ и эконометрика», Цахкадзор, Республика Армения, Труды, Москва, 2012 г., стр. 189	4 էջ	Саакян М. А., Геворгян Р. А.

20. (53)	Տնտեսական վերափոխումների ընթացքը և ճգնաժամը Հայաստանում	Արդարություն Մատենաշար թիվ 6, խորհրդաժողովի նյութեր, Երևան, 2010	8 էջ	Գևորգյան Ռ.
21. (54)	Կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ տնտեսությունում	ՀՏՄ տարեկան գիտաժողով, հոկտեմբեր 22-24, Ե., 2011	6 էջ	
22. (55)	Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները	ՀՊՏՀ 22-րդ գիտական նստաշրջան, 16-19 նոյեմբերի 2012	10 էջ	
23. (56)	ՀՀ տնտեսության կառուցվածքի բարելավումը՝ որպես մրցունակության գերակա մարտահրավեր	ՀՏՄ տարեկան գիտաժողով, հոկտեմբեր 13-15, Ե., 2012	8 էջ	
24. (57)	Ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը	ՀՏՄ տարեկան գիտաժողով, հոկտեմբեր 18-21, Ե., 2013	7 էջ	
25. (58)	Բնական ռեսուրսների արժեչափման և օգտագործման հիմնախնդիրները ՀՀ տնտեսությունում	ՀՏՄ տարեկան գիտաժողով, հունիս 20-23, Ե., 2014	18 էջ	Գևորգյան Ռ., Քոչինյան Ն., Սարգսյան Ս.
26. (59)	Переходный период в РА и проблемы развития	Материалы III междухородной конференции «Феномен рыночного хозяйства». Краснодар, 2015	стр. 246-256	Маркосян А. Х., Галстян Г. С., Кочинян Н. С.
27. (60)	The trends of energetic security and liberalization of energetic market in the republic of armenia	Էներգաարդյունավետության և էներգախնայողության հիմնախնդիրները	Էջ 53-54	Ashot Markosyan, Elyanora Matevosyan

ՀՈԴՎԱԾՆԵՐ				
1. (61)	Оптимальный рост экономики и некоторые глобальные показатели	В кн. «Вопросы экономико-математического моделирования» М., Изд. МГУ 1972	0. 35 п. л	
2. (62)	Межотраслевые связи в сводной экономической таблице союзной республики	В сб. «Вопросы применения межотраслевых балансов в практике планирования», Ереван, 1974	0. 35	
3. (63)	Имитационная система моделей как средство принятия альтернативных социально-экономических решений	В сб. «Математическое моделироваиие в экономике» Научные труды НИИЭП Ереван, 1974	0. 8	
4. (64)	Экономико-математический анализ и имитация процессов оптимального роста экономики	В кн. «Автоматизированные системы планирования и управления», вып. 2, изд. Айастан, 1974	0. 8	Егиазарян А.Б.
5. (65)	Проблемы построения интегрированного модельного комплекса социально-экономических решений	Материалы международной научной конференции «Математика и кебернетика в экономике» Берлин, 1977	0.4	

6. (66)	Вопросы построения интегрированного комплекса моделей оптимального планирования развития народного хозяйства экономического района	В сб. «Второй всесоюзный симпозиум по имитационному моделированию экономических систем» Москва, 1977	0.4	Саргсян С. М.
7. (67)	О критериях оптимальных решений в системе комплексного планирования	ЕГУ. Молодой научный работник, N I(25) Ереван, 1977	0. 8	
8. (68)	Моделирование финансово-кредитных потоков в интегрированной системе комплексного планирования региона	Сборник трудов НИИЭП при Госплане Грузинской ССР, Тбилиси, 1979	I.0	Шарикадзе В. А.
9. (69)	Формирование территориально-отраслевых пропорций на современном этапе экономического развития	В журнале «Вестник общественных наук»АН Арм. ССР, 1981(4)	0. 8	
10. (70)	Математические методы в экономике	Армянская советская энциклопедия, т. 7, Ереван, 1981	0. 1	
11. (71)	Моделирование в экономике	Армянская советская энциклопедия, т. 7, Ереван, 1981	0. 05	
12. (72)	Микро- и макроэкономика	Армянская советская энциклопедия, т. 7, Ереван, 1981	0. 05	
13. (73)	Мультипликатор	Армянская советская энциклопедия, т. 8, Ереван, 1983	0. 05	
14. (74)	Плановые показатели	Армянская советская энциклопедия, т. 9, Ереван, 1984	0. 05	
15. (75)	Социальные проблемы, повышение народного благосостояния и развитие культуры	Раздел в кн. «Комплексная программа научно-технического прогресса СССР на 1986-2005 годы (по пятилетиям)», Регион. раздел 4. 3 Копм. пропр НТП Арм. ССР М. 1983	1. 8	Аванесян Р. В., Акопян А. Ж. и др.
16. (76)	Социльно-экономические проблемы расселения, градостроительство и жилищно-гражданское строительство	там же	1. 0	Адонц В. М., Адонц М. А.и др.
17. (77)	Проблемы совершенствования планирования и управления народным хозяйством	там же	1. 0	Аванесян А. Е., Айвазян С. Н. и др.
18. (78)	Транспортный комплекс	там же	0. 5	Григорян Г. А., Ерусагимян Ю. П.
19. (79)	Территориальные и отраслевые пропорции в системе централизованных плановых решений	Материалы Всесоюзной научно-практической конф. «Совершенствование управления экономикой развитого социализма», Т. 4, М., 1984	0.3	

20. (80)	Концепция интересов	«Коммунист», 16 сентября 1984		
21. (81)	Математические модели в математике	В журн. «Гитутюн ев техника», 1984, N6 (на арм. языке)	0.5	
22. (82)	Макроэкономическое моделирование в системе прогнозирования развития народного хозяйства союзной республики	Материалы Всесоюзной научной конференции по проблемам макроэконометрического моделирования, М., 1984	0.4	Манукян К.К.
23. (83)	Моделирование экономического механизма регионального управления	В журн. «Вестник общественных наук» АН Арм. ССР, 1984 N7	0.8	Саркисян С.Д.
24. (84)	Оценка социально-экономических факторов предпочтительности местожительства в региональных подсистемах	В журн. «Вестник общественных наук», АН Арм. ССР, 1985, N5	0.8	Акопян З.Р.
25. (85)	Проблемы прогнозирования социально-экономических характеристик на основе структуры причинных зависимостей	Глава в сб. «Формирование социально-экономического комплекса бассейна оз. Севан», Ереван, изд-во АН Арм. ССР, 1983	1.0	Матевосян А. А., Акопян З. Р.
26. (86)	НТП и социально-экономическое развитие Армянской ССР на перспективу	Руководитель научной темы. Научный отчет инвент. N03840022631 N гос. Регистр. 81028814	0.5	Манукян К.К. и др.
27. (87)	Совершенствование экономического механизма управления региональным социально-экономическим развитием	Глава в кн. Проблемы воспроизводства в условиях НТП. Ереван. Изд-во АН Арм. ССР, 1985	1.0	
28. (88)	Системное прогнозирование пропорций регионального экономического развития	Сб. «Методы исследования региональных экономических систем» Ереван. Изд-во АН Арм. ССР, 1986	I.0	
29. (89)	Ռեգիոնալ զարգացման հիմնախնդիրները (մասնագետի ամբիոն)	«Սովետական Հայաստան», 22 նոյեմբեր, 1986	6 էջ	Հարությունյան Գ. Գ.
30. (90)	Поможет хозрасчет	«Известия», 3 февраля, 1986	2 էջ	
31. (91)	Макромоделирование и прогнозирование пропорций регионального экономического развития	там же	2.5	Манукян К.К.
32. (92)	Вопросы совершенствования экономического механизма регионального управления	В журнале «Айастани жоговрдакан тнтесутюн», 1986, N 8	0.8	Сафарян П.Д., Меликян Г.С.
33. (93)	Хозяйственно-договорные отношения в системе террионального управления	В журнале «Айастани жоговрдакан тнтесутюн» (на армянском языке), Ереван, 1987, N 2	0.75	Ханикян Г.Г., Селвиназян Б.С.

34. (94)	Совершенствование управления региональной экономикой в условиях интенсификации	В сборнике научных трудов «Интенсифика»	0.75	
35. (95)	Некоторые аспекты совершенствования управления экономического региона	Препринт. ЦЭМИ АН СССР М., 1987	0.5	Бархударян Л.В., Меликян Г.С., Сафарян П.Д.
36. (96)	Управление региональной экономикой: проблемы перестройки	В журнале «По Ленинскому пути», Ереван, 1987, N 12	0.5	Бархударян Л.В, Меликян Г.С. Сафарян П.Д.
37. (97)	Региональное экономическое самоуправление: цели и принципы	В журнале «Вестник АН Арм. ССР», Ереван, 1987, N II	0.8	
38. (98)	Формирование местных бюджетов в системе регионального экономического самоуправления	В журнале «Народное хозяйство Армении», 1988, N 10	0.7	Меликян Г.С.
39. (99)	Основные направления социального и экономического развития	КП НТП на1991-2010 годы. Региональный раздел 4.13-Армянская ССР М., 1989	стр. 27-42	Аветисян В.С и др.
40. (100)	Основные положения комплексных программ научно-технического прогресса союзных республик 6.13 Армянская ССР	Региональные проблемы научно-технического прогресса СССР, М., КЭПС АН СССР, 1989	стр. 576-585	Асланян А.Т. и др.
41. (101)	Հայաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացման նախադրյալները	ՀԳԱ, ՏԻ, Ե., 1992	0.3	Քոթանյան Մ.
42. (102)	Բնակչության եկամուտները և սպառման կառուցվածքը անցման շրջանում	«Էկոնոմիկա» ամսագիր, Երևան, 1997	0.4	
43. (103)	Մակրոտնտեսության չորս հիմնական դասերը և չորս հիմնական խնդիրները	«Տնտեսագիտություն և լրագրության» ՀԺՄ, 1997	էջ 27-31	
44. (104)	Տնտեսական բարեփոխումների մեկնարկային ընթացքը ԱՊՀ երկրներում	«Տնտեսագիտություն և լրագրության» ՀԺՄ, 1997	էջ 24-27	
45. (105)	Ստվերային տնտեսության գնահատման մեթոդները	Մարդը և հասարակությունը, Երևան, 1998	0.8	Սահակյան Հ.
46. (106)	Սոցիալ-տնտեսական վերափոխումների կառավարման հիմ-նահարցերը ՀՀ-ում	«ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, «Նահապետ» հրատ., Երևան, 1999	էջ 15-19	Դավոյան Ս.

47. (107)	ՀՀ սոցիալ-տնտեսական բարեփոխումների հարցի շուրջ	Տնտեսագետների միության գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 1999	0.2	
48. (108)	Արտահանման խթանումը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների համատեքստում	«Կառավարում» ամսագիր, թիվ 3, Երևան, 2000	էջ 49-54	
49. (109)	Ստվերային տնտեսության գնահատման որոշ հիմնախնդիրներ	«Գոշ» հրատարակչություն, Երևան, 2000	էջ 155-172	
50. (110)	Պահպանենք մեր գիտական ներուժը	«Ժամանակ» 27 սեպտեմբերի 2001	2 էջ	
51. (111)	ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը երկրի մակրոտնտեսական միջավայրում	«Рынок капитала в Армении», аналитический журнал, Ноябрь, 2001	стр. 18-22	Գալոյան Ա.
52. (112)	Պրոբլեմը անհամատեղելիության սինդրոմն է	«Օրրան», 22 հունիսի, 2002	2 էջ	
53. (113)	Концепция устойчивого развития РА	Ереван, 2002	53 էջ	Դանիելյան Կ., Խոջաբեկյան Վ.
54. (114)	Շատ ավելին կարող ենք ստեղծել	«Օրրան», 10 հուլիսի, 2002	2 էջ	
55. (115)	Տնտեսական քաղաքականության հիմնահարցեր	Հայաստանի զարգացման ուղվագծեր, «Զանգակ», Երևան, 2002	էջ 114-118	
56. (116)	Խնդիրը վերելքի ռազմավարությունն է	«Օրրան», 3 դեկտեմբերի, 2002	2 էջ	
57. (117)	Հայաստանի զարգացման ուրվագծեր: ՀՀ սոցիալ-տնտեսական վերելքի ռազմավարությունը	Հայաստան 2020. Զարգացման և անվտանգության ռազմավարություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2003	էջ 229-234	
58. (118)	Առևտրային կազմակեր-պությունների ֆինանսական առողջացման հիմնահարցերը ՀՀ-ում	«Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան», թիվ 4-5, Ե. 2003	էջ 58-64	Հարությունյան Ն.
59. (119)	Տնտեսագիտությունը և անցումային գործընթացները ՀՀ-ում	«ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի հիմնադրման 70- և վերաբացման 20-ամյակները», Ձեռնարկ, Երևան, 2004	էջ 42-54	
60. (120)	Տնտեսության և կրթության փոխգործակցման որոշ հիմնահարցեր	Բանբեր, ԵՊՏՀ, թիվ 2 Երևան, 2006	էջ 29-42	Բարխուդարյան Գ.
61. (121)	Անցումային գործընթացները Հայաստանում	Բանբեր Երևանի համալսարանի, N 3(117), Երևան, 2006	էջ 126-134	Հ.Գ. Զայիմցյան
62. (122)	Հիփոթեքի վարկավորմամբ բնակտարածքների ձեռքբերման հասանե-լիության մոդելային գնահատումը	Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N 2, 2006	էջ 175-199	Վարդանյան Մ.Ռ., Ղուկասյան Գ.Մ., Քոչարյան Ս.Ռ.

63. (123)	Государственное регулирование страховой деятельности в Армении: приоритеты развития	Вестник МАНЭБ, СПБ, 2008	стр. 88-92.	Զայիմցյան Հ.Գ.
64. (124)	Финансовый аспект развития интеграционных процессов в рамках ОЧ ЭС. Проблемы и перспективы сотрудничества между странами Юго-Восточной Европы.	Сборник научных трудов, Одесса-Донецк, 2008	Стр. 34-38	Ավանեսովա Ի. Բ.
65. (125)	Ապահովագրական գործունեության պետական կարգավորման տեսամեթոդական հարցերի շուրջ	Բանբեր Երևանի համալսարանի, 3 (126), ԵՊՀ հրատ., Երևան, 2008	էջ 19-30	Հարությունյան Ռ. Խ., Զայիմցյան Հ. Գ.
66. (126)	Տնտեսության հանրային հատվածի ընդհանուր բնութագիրը	Հանրային կառավարում գիտական հանդես, N 2, 2009	էջ 59-82	Գաբրիելյան Վ.
67. (127)	Государственное управление в XXI веке: традиции и инновации.	Материалы 4-й международной конференции факультета государственного управления МГУ им. М. В. Ломоносова (24-26 мая 2006)	стр. 1066-1072	Заимцян А.
68. (128)	Структурные сдвиги и экономический рост: закономерности и перспективы	Տարեգիրք 2012, ԵՊՀ հրատ., 2013	16 էջ	Геворгян Р., Саргсян Н., Оганисян Л.
69. (129)	«ՀՀ վճարային հաշվեկշռի բարելավման հիմնախնդիրները»	Տարեգիրք 2012, ԵՊՀ հրատ., 2013	19 էջ	Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է.
70. (130)	Հարավկովկասյան երկրների արտաքին առևտրի համեմատական առավելությունների առանձնահատկություն	Տարեգիրք 2012, ԵՊՀ հրատ., 2013	11 էջ	Մարկոսյան Ա., Ավագյան Բ.
71. (131)	«Հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային ծրագրի մշակման հարցի շուրջ»	Տարեգիրք, 2013, ԵՊՀ հրատ., 2014	15 էջ	
72. (132)	«ՀՀ բնակչության արտագաղթի հակվածության գործոնային վերլուծություն»	Տարեգիրք, 2013, ԵՊՀ հրատ., 2014	20 էջ	Անտոնյան Ք., Խաչատրյան Ք.
73. (133)	«ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցությունների հիմնախնդիրները»	Տարեգիրք, 2013, ԵՊՀ հրատ., 2014	28 էջ	Մարկոսյան Ա., Ավագյան Բ.
74. (134)	«Ներքին շուկայի պաշտպանության և մրցակցության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում (պարենամթերքի առանձին տեսակների օրինակով)»	Տարեգիրք, 2013, ԵՊՀ հրատ., 2014	43 էջ	Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ.

75. (135)	«Պարենի առանձին տեսակների արտադրության, արտահանման և գնագոյացման միտումները համաշխարհային շուկայում»	Տարեգիրք, 2013, ԵՊՀ հրատ., 2014	34 էջ	Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ.
76. (136)	Անցումային երկու տասնամյակը Հայաստանի Հանրապետությունում. իրողություններ և մարտահրավերներ	Տարեգիրք, 2013, ԵՊՀ հրատ., 2014	18 էջ	
77. (137)	Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները	ԵՊՀ հրատ., Երևան, 2011	15 էջ	Հարությունյան Խ. Մ., Մանասյան Վ. Գ.
78. (138)	Տնտեսության բազմատեսակայնացումը՝ տնտեսական աճի նախապայման	«Հայացք», 28 նոյեմբեր, 2011	2 էջ	
79. (139)	Ինքնության հիմնախնդիրը	Կլոր սեղան, ԷԿՈՆոմիկա հունվար 2012	3 էջ	
80. (140)	Необходима новая программа развития сельского хозяхства и армянского села	«Деловой экспресс», 8-15 ноября, 2013	5 էջ	
81. (141)	Էժան կրթությունը լավագույնը չէ	«Առավոտ», 1 հունվարի, 2014	2 էջ	
82. (142)	Տնտեսական վերելք որոշակի շերտի զրկանքների գնով	«Հրապարակ», 19 դեկտեմբերի, 2014	2 էջ	
83. (143)	Սահմանադրականության հարացույցը. Տնտեսագիտական առումները, գնահատման հիմնահարցերը	Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, N2 (17), 2015	էջ 36-51	Մխիթարյան Ժ., Նահապետյան Ս.
84. (144)	Конституционализм в контексте конституционной экономики	Актуальные проблемы экономической теории и практики, N19, 2015	էջ 33-42	Мхитарян Ж. Нагапетян С.
85. (145)	Սահմանադրականության մակարդակի գնահատման մեթոդական որոշ մոտեցումներ	«Հանրային կառավարում» հանդես, N2, 2016	էջ 104-113	Գևորգյան Ռ. Ա. Մխիթարյան Ժ. Ս.
86. (146)	Конституционная диагностика на основе сравнительного анализа характеристик демократического развития стран с переходной экономикой	Актуальные проблемы экономической теории и практики N 20, 2016	էջ 35-49	Геворгян Р. А. Кочинян Н. С.
87. (147)	Некоторые подходы к разработке инструментария и методов реализации конституционной диагностики	Альманах (Almanac), Հայաստան, 2016	էջ 78-93	

88. (148)	Конституционная диагностика и мониторинг: инструментарий и методы реализации	Конституционное Правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, N 4 (74), 2016	էջ 56-75	Геворгян Р. А. Кочинян Н. С.
89. (149)	Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies	Journal of Advanced Research in Law and Economics Volume VIII Issue 4(26). p. 1126-1135, 2017	pp. 1126-1135	Harutyunyan G. Gevorgyan R.
90. (150)	Конституционализм: проблемы диагностики, мониторинга и управления	Конституционное Правосудие, p. 5-44, 2017		Арутюнян Г. Геворгян Р.
91. (151)	Տնտեսական աճի գաղտնիքը թաքնված է Սահմանադրականության մեջ	Հարցազրույց, 2017 B4b.amhttp://b4b.am/archives/news/%d5%af%d5%a1%d5%bc%d5%a1%d5%be%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%bc%d5%a1%d5%a4%d5%a1%d6%80%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a7%d5%af%d6%80%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%be		
92. (152)	2018 թ. բյուջեի արդյունքներով չենք կարող ակնկալել բարեկեցության մակարդակի բարձրացում	Հարցազրույց, 2017, Aysor.am https://www.aysor.am/am/news/2017/10/30/Հայկ-Սարգսյան/1330709		
93. (153)	Социально-институциональные признаки разграничения уровня конституционализма стран с переходной экономикой	Феномен рыночного хозяйства: проблема трансформации. историко-экономический анализ бизнеса инноваций, 2018	pp. 147-158,	Геворгян Р.А. Кочинян Н.С.
94. (154)	Իշխանության գերխնդիրը սահմանադրականության մակարդակի բարձրացումն է:	Ինչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները, գիտագործնական խորհրդաժողով, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն, Երևան, 2018	էջ 9-16	
95. (155)	Պետության կայացվածության և սահմանադրականության փոխառնչությունները	Գիտական Արցախ, N1, 2018	էջ 283-290	
96. (156)	Diagnostics and Monitoring of Constitutionalism in Transition Economies	LAP LAMBERT Academic Publishing, 2018	59 էջ	Հարությունյան Գ., Գևորգյան Ռ.
97. (157)	Հայաստանում բնակչության 1/3 մասն աղքատ է, առկա է եկամուտների գերբևեռացում, որը հաստատագրվում է.	Հարցազրույց, 2018 Tert.am https://www.tert.am/am/news/2018/01/23/Hayk-Sargsyan/2595452		

98. (158)	Գների կայունությունը և կենտրոնական բանկի անկախությունը	Հարցազրույց, 2018 B4b.am http://b4b.am/archives/news/%D5%A3%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D6%87-%D5%AF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2		Գևորգյան Ռ.
99. (159)	Տնտեսագետը կոնցեպտուալ նոր իրադրություն է համարում ՀՀ Նախագահի կողմից տնտեսական աճի ներառական լինելու մասին շեշտադրումը:	Հարցազրույց, 2018, Armenpress.am https://armenpress.am/arm/news/924366/tntesagety-konceptual-nor-iradrutyun-e-hamarum-hh.html		
100. (160)	Մեկնարկից տնտեսական վերելք տանող ճանապարհները	Հարցազրույց, 2018, Armtimes.com https://armtimes.com/hy/article/139508		
101. (161)	Թալանածը պետք է հետ բերել, բայց զարգացման տեսլականը չպետք է կառուցվի հավաքագրած գումարների վրա	Հարցազրույց, 2018, Past.am https://past.am/?p=195706&l=am		
102. (162)	Երկրի տնտեսական աճը թաքնված է սահմանադրականության բարձր մակարդակի մեջ	Հարցազրույց, 2018 1in.am https://www.1in.am/2465086.html?fbclid=IwAR2v_TUKh-Ueu5Ivh9DH-IjRu8Pw0yGes9EFE4KH2ATUal1Ýy0_Z61d1Ixg		
103. (163)	Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран	Вестник Московского Университета. Серия 6. Экономика. N1, 2019	стр. 30-49	Գևորգյան Ռ.
104. (164)	Некоторые подходы к разработке методов мониторинга конституционализма	Российско-Армянский (Славянский) университет (Ереван), 2017	стр. 180-185	Геворгян Р.А., Кочинян Н.С.
105. (165)	Ներկառուցված ոչ ֆորմալ ինստիտուտների գործառնումը սահմանադրականության համատեքստում	ԷԿՈՆՈՄԻԿԱ գիտական հանդես, N1, 2019	էջ 15-28	Գևորգյան Ռ.
106. (166)	Կարծում եմ՝ գաղափարը կենսական և շահեկան է. Արայիկ Հարությունյանի հոդվածի մասին	Հարցազրույց, 2019, 168.am, https://168.am/2019/03/08/1092014.html		
107. (167)	Գերխնդիրը սահմանադրականության մակարդակի բարձրացումն է	Հարցազրույց, 2019, ՀՀ օրաթերթ, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20190705_2&flag=am&fbclid=IwAR1ÜXPY_PHwbzMcJrPIq2erJkNqYHu58Fmm9J3SDhgxgmm-xvOjnpDFsATgc		

108. (168)	Տնտեսական հեղափոխության ընկալումներն ու իրագործումը	Հարցազրույց, 2019, ՀՀ օրաթերթ, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20190921_11&flag=am&fbclid=IwAR30GXUQvbXeLWP0Ie3Udr9NLbDa_MIAE2OLR1dB8kU1uNVdVZ-0tAxu_80		
109. (169)	Հայաստանի Հանրապետության Սոցիալական և տնտեսական զարգացման նոր ուղեգծի տեսլականը	Ինչ անել-2. Տնտեսական հեղափոխություն. ընկալումը և գործարկումը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն, 9 հոկտեմբերի, 2019, Երևան, գիտագործնական խորհրդաժողով	էջ 10-17	
110. (170)	Տնտեսական հեղափոխության իրականացման հիմքերը	Հարցազրույց, 2019, ՀՀ օրաթերթ, http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20191017_4&flag=am		
111. (171)	Экономическая революция в контексте трасформационных процессов рыночного хозяйства армении	Феномен рыночного хозяйства: от истоков до наших дней партнерство в условиях риска и неопределенности, Узбекистан, 2020	стр. 223-233	Кочинян Н.С.
112. (172)	Передаточные механизмы воздействия конституционных изменений на социо-экономические показатели	Многомерный статистический анализ, эконометрика и моделирование реальных процессов, 2020 (1)	стр. 127-129	Геворгян Р.А., Кочинян Н.С.
113. (173)	Տնտեսական հեղափոխության գաղափարական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում	Բանբեր Երևանի համալսարանի, 2020 (1)	էջ 3-15	
114. (174)	Մենք պետք է տարանջատենք ապահովված շերտին՝ թիրախային շերտից. տնտեսագետը՝ Էդմոն Մարուքյանի առաջարկի մասին	Հարցազրույց, 2020, **ArmLur.am** https://armlur.am/994541/?fbclid=IwAR0TjKmd6IAJqLBnAAsdBjYeJCq64pWN37W8zag7j2pVGfi47BrhnRP4i0U		
115. (175)	Չափազանցված են այն տեսակետները, թե տնտեսական կոլապս կարող է առաջանալ. տարին դրական ցուցանիշով կավարտվի	Հարցազրույց, 2020, «**Առաջին լրատվական**» https://www.1in.am/2740892.html?fbclid=IwAR06BQoYwtqqdmwt_G8FqC-7-HSGVYuJxR-ErDmxK7Ivb6jzQqGkU6Txij0		
116. (176)	Տուրբուլենտ իրավիճակում ենք. պետք է հանգիստ լինել, գործընթացը կառավարելի է	Հարցազրույց, 2020, «Առաջին լրատվական» https://www.1in.am/2735943.html		
117. (177)	«Գործ և արար». որդեգրված կուրսը ճիշտ է, այն պետք է անշրջելի լինի Հայաստանի համար	Հարցազրույց, 2020, https://www.youtube.com/watch?v=XP5pNx1YRAk		

118. (178)	«Գործ և արար». Ներդրումներ չկան տնտեսաիրավական կարգավորումների և անհետևողականության պատճառով	Հարցազրույց, 2020, https://www.youtube.com/watch?v=8SbezJGl3Q4&fbclid=IwAR3CE-CQRvtP9MdK0rFpbhiMuw9y_q5Wxp43SrBwgEU4EMUQ8wXsICo1Gaw		
119. (179)	«Խելքներս գլուխներս պետք է հավաքենք». ինչու տնտեսական հեղափոխությունը կյանքի չկոչվեց	Հարցազրույց, 2020, 1in.am, https://www.youtube.com/watch?v=fJsF7WXiJd8&feature=share&fbclid=IwAR0RH_nPTSHRfiL7exf6wKbUk2QAiG72RspoQwzEpsrFb3nPAxFoXyIF0Vw		
120. (180)	Մեր տնտեսությունը նոկաուտի մեջ է	Հարցազրույց, 2020, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, https://armenpress.am/arm/news/1037939.html		
121. (181)	Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումը սոցիալական պետությունում (ՀՀ օրինակով)	Բանբեր Երևանի համալսարանի, 2020 (3)	էջ 3-20	Մխիթարյան Ժ.
122. (182)	Խաթարված ներկայից ելք գտնելու թելադրանքը	Հարցազրույց, 2021, https://www.aravot.am/2021/01/20/1165590/?fbclid=IwAR05FiKdX3FYGXlqp3-6SkGQPETd7ejXyFL8xP8_Zg58_GRK7crJH4i7eBk		
123. (183)	Իշխանության մոտ չկա գիտակցում, որ իրավիճակը կրիտիկական է	Հարցազրույց, 2021, https://www.youtube.com/watch?fbclid=IwAR0Ssf5tchGNkihkDXQTLpomYvcKdCapqDqDuewxLuQzkYd8rA0TRLhIFJI&v=43T9yA639Ww&feature=youtu.be		
124. (184)	Հայաստանում սոցիալ-տնտեսական լուրջ ճգնաժամ է	Հարցազրույց, 2021, https://news.am/arm/videos/42385.html?fbclid=IwAR022K6mTZkPYiu4AnMzdv-j9pDg7bwbngyx8ttQ3xJO2SJ45tmkK6OXfj8#.YB7ks1b8g8g.facebook		
125. (185)	Проблемы конституционализации экономических отношений	Рыночные трансформации: новые бизнес-модели, инновационные технологии, практика решений, 2021	էջ 58-71	Кочинян Н. Мхитарян Ж.
126. (186)	ԵՊՀ-ի վիճակը երկրի վիճակին համահունչ է. «Հրապարակ օրաթերթ»	Հարցազրույց, 2021, ԵՊՀ-ի վիճակը երկրի վիճակին համահունչ է - Հրապարակ (hraparak.am)		
127. (187)	Տնտեսական խնդիրները չեն լուծվի, եթե չլուծվեն անվտանգության խնդիրները	Հարցազրույց, 2021, Սեպտեմբերի 21-ը՝ հաշվետվության օր – Հայաստանի Հանրապետություն (hhpress.am)		
128. (188)	Ինչ անել և ինչ չանել	Անտարես, 2021	15 էջ	Արմեն Մարտիրոսյան

129. (189)	ՀՀ տնտեսության դիմագիծը և բարեփոխումների մարտահրավերները	Գիտական Արցախ, 3 (10), 2021	250-264	Նարինե Քոչինյան
130. (190)	ՀՀ անվտանգության հիմնախնդիրները	ԵՊՀ Բանբեր. տնտեսագիտություն, 2022 № 1 (37), ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	64-80	
131. (191)	Թվայնացումը, էլեկտրոնային կառավարման համակարգերը և ինստիտուտների փոխակերպումը	Գիտական Արցախ, 2022, № 1 (12)	205-221	Գևորգ-յան Ռուբեն, Մինասյան Կարինե
132. (192)	Проблемы безопасности и состоятельности в контексте Устойчивого развития страны	Феномен рыночного хозяйства: От истоков до наших дней Трансформация экономических систем в контексте турбулентного развития https://cloud.mail.ru/public/5h6n/1gyME25Xs	254-264	Хачатрян К.Г., Кочинян Н.С

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Պրոյեկտի ղեկավար՝	Տաթևիկ Դավթյան
Տեխն. խմբագիր՝	Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝	Անժելա Ավագյան
Էջադրող՝	Նարինե Հովհաննիսյան
Կազմի ձևավորումը՝	Վիտալի Ասրիևի

Ակնարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պող. 50 ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am